Էջմիածին

Թ
2006

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Սեպտեմբեր

2006

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՈՒՖԹԻ ՇԵՅԽ ԱՀՄԱԴ ԲԱԴՐ ԱԼ-ԴԻՆ ՀԱՍՍՈՒՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Սեպտեմբերի 2-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով Հայաստան ժամանեց Սիրիայի Արաբական Հանրապետության մուֆթի Շեյխ Ահմադ Բադր Ալ-Դին Հասսունի գլխավորած պատվիրակությունը՝ կրոնների միջև երկխոսության և համագործակցության շրջագծում:

Սիրիայի մուֆթիին այցի ընթացքում ուղեկցում էին Դամասկոսի մուֆթի շեյխ Աբդուլ Ֆաթթահ ալ Բիզեմը, շեյխ Մուհամմադ Աբիր Հասսունը, մուֆթիի գրասենյակի քարտուղար Ֆաուդ ալ Շաբշը, քրիստոնեական-իսլամական կապերի քարտուղար Բասել Կաս Նասրալլան և Ջորջ Պապյանը՝ որպես թարգմանիչ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նույն օրը տեղի ունեցավ Վեհափառ Հայրապետի և Սիրիայի Արաբական Հանրապետության մուֆթիի ու նրա գլխավորած պատվիրակության հանդիպումը:

Ողջունելով Սիրիայի Հանրապետության մուֆթիի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Ամենայն Հայոց Հայրապետը գոհունակություն հայտնեց, որ ժամանակ առաջ ծրագրված այցելությունն իրականացավ. «*Ուրախ ենք, որ այդուհանդերձ Ձեր այցը Հայաստան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին կատարվել է, և մենք առիթ ունենք մեր սերը, հարգանքը վերանորոգելու միմյանց հանդեպ*»8,- ասաց Վեհափառը: Նորին Սրբությունը մեծապես կարևորեց նմանատիպ հանդիպումները՝ հատկապես արդի աշխարհի խառնակ պայմաններում, երբ հաճախ փորձ է արվում տարբեր աշխարհաքաղաքական նպատակներով կրոնները հակադրել միմյանց:

Հայոց Հովվապետը վերհիշեց 2001 թվականին կատարած այցը Հալեպ՝ քաղցրությամբ վերահաստատելով այն ջերմ ընդունելությունը, որ ցուցաբերվել էր Հալեպի ողջ բնակչության կողմից. «*Գոհունակություն էր տեսնել դարերի կնիքն ու դրոշմն ունեցող այն ջերմ բարեկամական, եղբայրական հարաբերությունները, որ առկա էին մեր ժողովուրդների միջև: Նաև մեծ մխիթարություն ապրեցինք՝ տեսնելով, թե ինչպիսի սեր և հարգանք է տածվում Դեր Զորի՝ Հայոց Մեծ եղեռնի ողբերգական այդ խորհրդանիշի և այնտեղ գտնվող հուշարձանի ու մատուռի հանդեպ և՛ պետական, և՛ ժողովրդական մակարդակով*»8,- նշեց Նորին Սրբությունը՝ աղոթք բարձրացնելով, որ Աստված խաղաղ պահի Միջին Արևելքը և համայն աշխարհը, որպեսզի ազգերը և պետություններն ապրեն սիրո և եղբայրության մեջ: Շեյխ Հասսունին Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Տերը զորացնի նրան և պտղաբեր դարձնի նրա ծառայությունն իր ազգի և աշխարհի համար:

«Երբ Հայաստան եկա, հավատացե՛ք, բնավ, երբեք ինձ օտար չզգացի»8,- իր հերթին ասաց Սիրիայի Արաբական Հանրապետության մուֆթին՝ ուրախություն հայտնելով հանդիպման և ջերմ ընդունելության համար և շնորհավորելով նաև առաջի-

կային նշվելիք Հայաստանի անկախության 15-ամյակի առիթով: Իր խոսքում Սիրիայի մուֆթին անդրադարձավ երկու ժողովուրդների միջև առկա բարեկամական կապերին և ընդհանրություններին՝ նշելով, որ Սիրիայի ժողովուրդը հայորդիներին երբեք չընդունեց իբրև գաղթականների, այլ որպես եղբայրների:

Սիրիայի հոգևոր առաջնորդը հանգամանորեն խոսեց աշխարհում խաղաղության վերահաստատման և այդ գործում բոլոր կրոնների հոգևոր առաջնորդների ջանքերի մեկտեղման և համագործակցության անհրաժեշտության մասին: «Անցյալը, որ արյունահեղության և տառապանքի պատմություն է, պետք է սովորեցնի, թե ինչպես ապրենք ապագայում»8,- ասաց շեյխ Հասսունը:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպս. Պետրոսյանը, Մայր Աթոռի վարչակազմակերպական գործերի կառավարիչ Տ. Փառեն եպս. Ավետիքյանը, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպս. Նալբանդյանը, վանքերի տեսուչ Տ. Արարատ ծ. վրդ. Գալթագճյանը, Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի պատասխանատու Տ. Հովակիմ վրդ. Մանուկյանը, Սիրիայի Արաբական Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար դոկտ. Մուխլիս Ֆարառնը, Ալժիրում և Թունիսում ՀՀ դեսպան Լևոն Սարգսյանը, ՀՀ ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի վարչության խորհրդական Արմեն Մելքոնյանը և վարչության պետ Արտյոմ Ազնավուրյանը:

Հայաստան այցելության ընթացքում Սիրիայի Արաբական հանրապետության մուֆթին հանդիպեց նաև ՀՀ ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանի և ՀՀ Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի հետ:

Սեպտեմբերի 3-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Սիրիայի Արաբական Հանրապետության մուֆթի Շեյխ Ահմադ Բադր Ալ-Դին Հասսունը և նրա գլխավորած պատվիրակության անդամները ներկա գտնվեցին Սուրբ Պատարագի արարողությանը:

Պատարագի սկզբնավորությանը, եկեղեցականների մեծաշուք թափորի ուղեկցությամբ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Սիրիայի Արաբական Հանրապետության մուֆթին առաջնորդվեցին դեպի Մայր Տաճար: Պատարագիչն էր Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը:

«Ողջույն»8-ից առաջ ներկա հավատավոր ժողովրդին խոսքով դիմեց պատարագիչ Սրբազանը: «...20-րդ դարը դարձավ դար ողջագուրման քրիստոնյաների միջև: 21-րդ դարի սկզբին տարբեր կրոնների ներկայացուցիչներ արդեն առաջ են քաշում այն գաղափարը, որ աշխարհի վրա ապրող բոլոր մարդիկ եղբայրներ են և բոլորը պիտի ողջագուրվեն:

Այս օրը մեզ համար առանձնահատուկ նշանակություն ունի, քանզի այսօր մեզ հետ է Վեհափառ Հայրապետի պաշտոնական հրավերով և պաշտոնական այցով Սուրբ Էջմիածին և Հայաստան ժամանած Սիրիայի գլխավոր մուֆթի Շեյխ Ահմադ Բադր Ալ-Դին Հասսունն իր պատվիրակության հետ միասին, որպեսզի ողջունի Վեհափառ Հայրապետին ու ձեզ և վկայի, որ բոլորս իրար եղբայրներ ենք»8,- նշեց Սրբազան Հայրն իր խոսքում:

Ապա թափորի ուղեկցությամբ երկու կրոնապետերը վերադարձան Վեհարան, ուր տեղի ունեցավ երկու պատվիրակությունների հանդիպումը: Հանդիպման ընթացքին Սիրիայի մուֆթին Նորին Սրբությանը փոխանցեց Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահ Բաշար ալ Ասադի ողջույններն ու բարեմաղթանքները:

Իր հերթին Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհակալություն հայտնեց այն հոգատար վերաբերմունքի համար, որ Սիրիայի նախագահի և նրա նախորդների կողմից մշտապես դրսևորվել է հայ ժողովրդի զավակների նկատմամբ: Նորին Սրբությունը ի դեմս շեյխ Հասսունի նաև շնորհակալություն հայտնեց Սիրիայի իշխանություններին և բոլոր կրոնապետերին, որ ամեն ճիգ ու ջանք ի գործ են դնում, որպեսզի եղբայրական սերն ուղեկից լինի Սիրիայում ապրող բոլոր ժողովուրդներին:

Հանդիպմանը կարևորվեց նման փոխայցելությունների կազմակերպումը և միջկրոնական երկխոսության և համագործակցության խթանումը:

Հանդիպմանը ներկա էին նաև ՀՀ-ում Լիբանանի Հանրապետության դեսպան Գաբրիել Ջիարան և ՀՀ-ում Սիրիայի Արաբական Հանրապետության գործերի հավատարմատար դոկտ. Մուխլիս Ֆարառնը:

Սիրիայի Արաբական Հանրապետության մուֆթի Շեյխ Ահմադ Բադր Ալ-Դին Հասսունի գլխավորած պատվիրակությունը, ուղեկցությամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանի, Տ. Արարատ ծ. վրդ. Գալթագճյանի և Տ. Հովակիմ վրդ. Մանուկյանի, օրվա երկրորդ կեսին այցելեցին Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

Շեյխ Հասսունը եղավ Ցեղասպանության թանգարանում, ուր գրառում կատարեց թանգարանի հուշամատյանում: Այնուհետև Սիրիայի մուֆթին Հայոց եղեռնի զոհերի հուշարձանին ծաղկեպսակ զետեղեց և իր հարգանքը մատուցեց ցեղասպանության զոհերի հիշատակին:

«...Եթե ժողովուրդներն իրապես հետևեին իրենց կրոններին՝ ...այս ջարդերը չէին լինի: Ցավի այս պահերից հայ ժողովուրդը պետք է վերականգնվի և կյանք առնի, շենացնի և կառուցի Հայաստանը խաղաղությամբ»8,- մասնավորաբար ասաց Շեյխ Ահմադ Բադր Ալ-Դին Հասսունը՝ վստահություն հայտնելով, որ հայ ժողովուրդը, ուր էլ որ լինի Սփյուռքում, պիտի օգնության ձեռք պարզի՝ վերականգնելու իր Հայրենիքը:

Սիրիայի Հանրապետության մուֆթին նշեց, որ մեր ցավերը մեզ ատելություն չսովորեցրեցին, այլ ուղղություն ցույց տվեցին մեր ժողովուրդներին՝ հետևելու աստվածային ճանապարհին:

Սեպտեմբերի 5-ին Սիրիայի Արաբական Հանրապետության մուֆթի Շեյխ Ահմադ Բադր Ալ-Դին Հասսունի գլխավորած պատվիրակությունն այցելեց Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետ, որտեղ վսեմափայլ շեյխին դիմավորեցին ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Անուշավան վրդ. Ժամկոչյանը, ֆակուլտետի դասախոսները և ուսանողները:

Հանդիպումն ուսանողության հետ սկսվեց աշխարհի խաղաղության համար Սիրիայի մուֆթիի աղոթքով:

Սիրիայի Հանրապետության մուֆթիին նախ ողջունեց ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը՝ ԵՊՀ դասախոսական կազմի և ուսանողության անունից բարի գալուստ մաղթելով Հայաստանի Մայր բուհ: «Պատվիրակությունը ներկայացնում է մեզ համար հարազատ մի երկիր և ժողովուրդ, որի նկատմամբ սիրո և հարգանքի զգացում կա յուրաքանչյուր հայի սրտում»8,- մասնավորաբար նշեց պրն Սիմոնյանը՝ երախտագիտություն հայտնելով Սիրիայի արաբ ժողովրդին հայորդիների նկատմամբ դրսևորած հյուրընկալ ոգու համար:

Ապա ուսանողներին ողջունեց Շեյխ Ահմադ Բադր Ալ-Դին Հասսունը: «Հայաստանը հարուստ է ձեզանով և իր ժողովրդով, որը կյանք սիրող ժողովուրդ է»8,- ասաց մուֆթին՝ մաղթելով, որ Հայաստանն իր երիտասարդների բազուկներով և ուժերով շենանա: Շեյխ Հասսունը նաև ներկայացրեց Հայաստան այցի իր տպավորությունները, անդրադարձավ երկու ժողովուրդների հարաբերություններին:

Ողջույնից հետո Սիրիայի մուֆթին հանդես եկավ դասախոսությամբ Աստծո արարչագործության և մարդու սրբության, աստվածային սիրո և եղբայրասիրության մասին: «Խաղաղությունն է սուրբ»8,- ասաց շեյխը՝ խոսելով խաղաղության մասին և հորդորելով չվստահել այն մարդկանց, ովքեր կրոնների անունով են պատերազմում:

Դասախոսության ավարտին Սիրիայի Արաբական Հանրապետության մուֆթին պատասխանեց ուսանողների հարցերին:

Նույն օրը պատվիրակությունն այցելեց Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանի ուղեկցությամբ ծանոթացավ հաստատության գործունեությանը, դիտեց ցուցադրված ձեռագրերը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընկերակցությամբ Շեյխ Ահմադ Հասունիի գլխավորած պատվիրակությունը եղավ նաև Արաբկիրի Հայորդյաց տանը:

Նույն օրը, երեկոյան, լավագույն տպավորություններով թողնելով Հայաստանը՝ Սիրիայի Արաբական Հանրապետության Մուֆթիի գլխավորած պատվիրակությունը վերադարձավ հայրենիք:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԸ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ԵՎ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Սեպտեմբերի 8-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Սիդնեյ, ուր Հայրապետական իր օրհնությունը բաշխեց ավստրալահայ հավատավոր հայ համայնքին և մասնակցեց Համազգայինի Արշակ և Սոֆի Գոլստան դպրոցի հիմնադրման 20-ամյակի առիթով կազմակերպված միջոցառումներին: Այցի ընթացքում Նորին Սրբությանն ուղեկցում էին Մայր Աթոռի միաբաններ Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը և Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը:

Սեպտեմբերի 9-ին Սիդնեյի միջազգային օդանավակայանում Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմավորեցին Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիոզյանը, թեմական և ծխական խորհուրդների անդամները, Համազգայինի Արշակ և Սոֆի Գոլստան դպրոցի տնօրինությունը, ինչպես նաև հայկական համայնքային կազմակերպությունների ղեկավարները:

Երեկոյան համայնքային ընդունելություն տեղի ունեցավ Սիդնեյի «Մերկյուրի» հյուրանոցում, որտեղ ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կազմակերպվել էր բարիգալստյան ճաշկերույթ՝ մասնակցությամբ հայ համայնքի անդամների:

Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսքով դիմեց տիկին Նորա Սևակյանը՝ համայնքի անդամներին կոչ անելով իրենց զորակցությունը բերել Հայոց Եկեղեցուն և Սիդնեյի հայոց վարժարանին:

Վարժարանի գործունեության առիթով այնուհետև գնահատանքի իր խոսքը ասաց թեմակալ առաջնորդ Աղան Սրբազանը, ապա Ամենայն Հայոց Կաթողիկոսին հրավիրեց հայրապետական իր խոսքն ու օրհնությունը ուղղելու հավաքվածներին:

Իր խոսքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը ուրախություն հայտնեց Սիդնեյի հայության հետ վերստին հանդիպելու համար և նշեց, որ չնայած Ավստրալիայի և Մայր Աթոռի միջև եղած աշխարհագրական հեռավորությանը՝ Ավստրալիայի հայ համայնքը մշտապես Հայոց Հայրապետի սրտում և մտքում է:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Սիրելի բարեպաշտ զավակներ մեր Սուրբ Եկեղեցու,

Փառք ենք վերառաքում առ Ամենակալն Աստված, որ շնորհը պարգևեց՝ վերստին լինելու ավստրալահայ բարեպաշտ հայորդիներիդ հետ և, սիրո սեղանի շուրջ համախմբված՝ կիսելու մեր հանդիպման ուրախությունն ու բերկրանքը: Այսօր, երբ Հայրապետ ու ժողովուրդ միասին ենք վերստին, մեր շուրթերին սաղմոսի գոհաբանական խոսքերն են. «Քաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն Նորա, ազգէ մինչեւ յազգ է ճշմարտութիւն Նորա» (Սղմ. ՂԹ 5):

Արդարև, Հայրապետական Մեր այցելությունների ընթացքին, ականատես լինելով մեր հավատավոր հայորդյաց եկեղեցանվեր ոգուն ու հայրենասիրությանը, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հովանու ներքո բարգավաճող հայ համայնքներին, փառք ենք վերառաքում առ Բարձրյալն Աստված, որ Իր անբավ ողորմությունը հեղում է «ի վերայ ազգիս հայոց»:

Իր սիրով ու ողորմությամբ Աստված ճշմարիտ հավատքի լույսը ծագեցրեց հայոց ազգի համար և արժանացրեց լինելու «ժողովուրդ սեպհական՝ նախանձաւոր գործոց բարութեան» (Տիտ. Բ 14): Աստծուն ուղղված հանապազ փառաբանությամբ մեր ժողովուրդը բազում փորձություններ հաղթահարեց, ծաղկեցրեց մեր մշակույթը և հավատով լուսավորյալ՝ հաղթանակներով զարդարեց էջերը մեր նորօրյա պատմության: Մեր հավատքից բխող գործերով էր, որ մենք վերահաստատեցինք անկախ պետականությունը Մայր Հայրենիքի և ծաղկեցրինք ազգային-եկեղեցական կյանքը աշխարհասփյուռ հայության:

Փառք մեր Տիրոջն ու Փրկչին, որ հնարավոր դարձրեց Մեր այցելությունը Ավստրալիա՝ մխիթարությամբ ու քաջալերությամբ աղոթական օրեր ապրելու ձեզ հետ միասին, Սուրբ Էջմիածնի օրհնությունը բերելու կարոտագին ու սիրառատ ձեր հոգիներին, Մեր պատգամն ու հորդորը՝ հավատի նորոգության ու միասնականության, Մեր հրավերը, որ նույն հավատքով ու նախանձախնդրությամբ շարունակեք ձեր ջանքերը բերել մեր Եկեղեցու և Հայրենիքի կյանքին:

Մեզ համար այսօր անսահման ուրախություն է այս դահլիճում հավաքված տեսնել ձեզ, որ նվիրյալ անդամներն եք մեր Սուրբ Եկեղեցու, հարազատ զավակները Սուրբ Էջմիածնի: Բարձր ենք գնահատում ձեր եկեղեցասիրությունն ու հայրենասիրությունը, որ ժառանգել եք բարեպաշտ ձեր հայրերից, ովքեր նաև ձեզ փոխանցեցին ազատ ու անկախ Հայրենիքի իրենց երազը: Այդ երազն այսօր իրականություն է ամենքիս համար, և այդ իրականությունը դուք բարեզարդում եք ձեր և հանուր հայության աջակցությամբ ու սատարումով Հայրենիքի բարօրությանը, հետագա առաջընթացին ու բարգավաճմանը: Գոհություն Երկնավորին, հայրենի մեր սրբություններին հավատարիմ մնալու և հայ լեզուն ու ոգին ամուր պահելու նախանձախնդրությամբ, ձեր պապերի ու հայրերի օրինակով շարունակում եք ապրել ու ստեղծել հայ ոգով և սիրով մեր Մայր Հայրենիքի ու Եկեղեցու, մեր ժառանգության ու ավանդների հանդեպ:

Այսօր, իրավամբ, կարող ենք խոսել Հայրենիքում և Սփյուռքում մեր հաջողությունների ու ձեռքբերումների մասին: Այսօր մենք կանգնած ենք Հայաստանի և Արցախի, մեր համայն ժողովրդի նոր, բարգավաճ կյանքի ու պայծառ ապագայի շեմին, որից այն կողմ պիտի քայլենք աներեր, միասնաբար ու համախումբ, քանզի ազգային մեր կյանքում միաբանության բացակայությունը արգելք պիտի լինի համայն հայության առաջընթացին: Սուրբ Էջմիածինը հավատքի և միաբանության ոգին է զորացնում մեր ժողովրդի՝ Լուսավորչահաստատ Սուրբ Աթոռից բաշխելով այն օրհնաբեր զորությունը, որով մեր ժողովուրդը դեռ բազում ձեռքբերումներով պիտի բարեզարդի իր գալիքի ճանապարհները:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությունը Տիրոջ հավիտյան ողորմությամբ արդյունավորվում է միջեկեղեցական, քարոզչական, կրթական, եկեղեցաշինական,

բարեսիրական, հրատարակչական ոլորտներում: Կառուցվում են նոր եկեղեցիներ, նորոգվում են մեր հինավուրց աղոթատներն ու վանքերը, Տիրոջ հունձքի համար (Մատթ. Թ 37) հոգևոր-կրթական մեր հաստատություններում հասունանում են նոր սերնդի բանիմաց և ժողովրդանվեր ու ծառայասեր հոգևորականներ, հրատարակվում են հոգևոր բովանդակությամբ գրքեր, ուսումնասիրություններ, թերթեր, լրագրեր ու ամսագրեր, և կարիքավոր մեր հայորդիները միսիթարվում են բարեսիրական ծառայություններով մեր Սուրբ Եկեղեցու:

Մեր Սուրբ Եկեղեցու առաքելությունն իրականացվում է նաև աղոթական աջակցությամբ ու ազնիվ նվիրատվություններով մեր բարեպաշտ հայորդիների: Փառք Տիրոջը, որ արթուն է պահում աղոթքի ու բարեգործության ոգին, եկեղեցանվիրումն ու հայրենասիրությունը մեր զավակների: Հավատում ենք, որ մեր Սուրբ Եկեղեցին և հավատավոր ժողովուրդը նորանոր իրագործումներով պիտի շարունակեն եռանդ ու ջանքեր ներդնել իրենց ազգային կյանքում՝ միասնական ոգով, գալիքի հանդեպ հաստատուն հավատով և հայության ու Հայրենիքի վաղվա օրը առավել պայծառ ու շեն դարձնելու տեսիլքով:

Այսօր առիթն ունենք Հայրապետական Մեր օրհնությունն ու գնահատանքը բերելու Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիոզյանին, հոգևոր դասին, թեմին և մեր Սուրբ Եկեղեցուն աջակից բարեպաշտ զավակաց:

Աղոթք ենք բարձրացնում երկինք՝ հայցելով, որ Տիրոջ «յաւիտեան ողորմութիւնը» միշտ լինի մեր Սուրբ Եկեղեցու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և աստվածապաշտ մեր ժողովրդի վրա: Թող Տերը Իր օրհնության ներքո պահպանի Ավստրալիո պետությունը, միշտ հավատքով զորացյալ և համախումբ՝ ազգս հայոց, և օրհնի եկեղեցաշեն ու հայրենանվեր բոլոր գործերը. ամեն:

Կիրակի, սեպտեմբերի 10-ին, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Հրաշափառ»-ի երգեցողության ներքո առաջնորդվեց Սիդնեյի Ս. Հարություն եկեղեցի, որտեղ Նորին Սրբությանը ողջունեց Գերաշնորհ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիոզյանը: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայրապետական իր պատգամն ուղղեց բարեպաշտ ժողովրդին: Նշելով, որ Հայոց Եկեղեցին և լեզուն անբաժան են միմյանցից՝ Նորին Սրբությունը ընդգծեց Համազգայինի դպրոցի 20-ամյակի առիթով կազմակերպված միջոցառումների կարևորությունը, որոնց բերած իր մասնակցությունը նշանն է գնահատանքի և այն ուշադրության, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ընծայում է հայոց լեզվի պահպանությանն ու զորացմանը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՍԻԴՆԵՅԻ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

«Հաստատուն կալ եւ մնալ ի հաւատ, ի յոյս, ի սէր»

(Ժամագիրք)

Սիրելի Սրբազան,

Սիրեցյալ հավատացյալներ Ավստրալիո հայոց թեմի,

Այսօր մեր միասնական հոգևոր բերկրանքն է լցնում Սիդնեյի Սուրբ Հարություն եկեղեցու նվիրական և օրհնյալ հարկը, և մեր սրտագին գոհաբանական աղոթքներն են բարձրանում առ Ամենակալն Աստված: Ուրախություն է Մեզ համար կրկին այցելել Ավստրալիայում բնակություն հաստատած բարեպաշտ հայորդիներիդ, վերստին ականատես լինել ձեր եկեղեցանվիրումին ու հայրենասիրությանը և լուսավորչապսակ Մայր Աթոռի լույսն ու Հայրապետական Մեր օրհնությունները փոխանցել ձեզ, որպեսզի նախանձախնդիր ոգով դուք շարունակեք «հաստատուն կալ եւ մնալ ի հաւատ, ի յոյս, ի սէր»:

Անհուն գոհունակություն է Հայրապետիս համար, որ Ավստրալիայի հավատավոր հայորդիներդ լույս հավատքի արդյունավոր գործերի դրսևորումով մշտապես նախանձախնդիր եք համայնքի հոգևոր-եկեղեցական կյանքի բարգավաճմանը և գովելի ընթացքով ու անհուն սիրով դեպ Հայրենիք ու Եկեղեցի, ձեր կյանքը բարեզարդում եք նորանոր եկեղեցաշեն ու հայրենանվեր իրագործումներով: Այսօր Սիդնեյի Սուրբ Հարություն եկեղեցում համախմբված հայորդյացդ մեջ վերստին տեսնում ենք համայն մեր ժողովրդին ու մեր Մայր Եկեղեցուն ու Հայրենիքին ծառայելու, գալիք սերնդի հոգում նույն հավատքն ու ոգին կերտելու, քրիստոնեական հավատքի լուսաշող ճառագայթներով ազգային կյանքը խմորելու գովարժան նախանձախնդրությունը:

Հայրապետական Մեր այցելությունների ընթացքին ամեն անգամ ականատես ենք լինում մեր ժողովրդի զավակաց նոր իրագործումների ու հավատավոր ոգու վկայության, որ զորացյալ է նաև Սուրբ Էջմիածնի՝ մեր Եկեղեցու Սրբազան կենտրոնի օրհնությամբ: Աստվածաշնչյան Արարատ լեռան հայացքի ներքո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը իր թևերն է սփռել մեր բոլոր եկեղեցիների, այդ թվում՝ Սուրբ Հարություն այս հոյակերտ եկեղեցու վրա՝ իր հարազատ զավակներին հավաքելով իր փրկարար տապանում՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցում, որպեսզի բոլորդ, համախումբ և միասնական, կարողանաք այսուհետ ևս «հաստատուն կալ եւ մնալ ի հաւատ, ի յոյս, ի սէր» և «միաբան միով հաւատով եւ արդարութեամբ վաստակիլ ի գործս բարեաց»:

«Հոգո՛վ եռացեք. Տիրո՛ջը ծառայեցեք. հույսո՛վ ուրախացե՛ք» (Հռոմ. ԺԲ 11-12),- պատվիրում է սուրբ առաքյալը, և այսպիսի նվիրումով է, որ դուք բարեզարդում եք համայնքային ձեր կյանքը և մեծ ուշադրություն դարձնում նաև նոր սերնդի քրիստոնեական և հայեցի դաստիարակությանը, ինչի վկայությունն են թեմում գործող դպրոցներն ու կրթօջախները: Բարձր ենք գնահատում, որ դուք՝ ավստրալահայ բարեպաշտ հայորդիներդ, մեծապես կարևորում եք նոր սերնդի հայեցի կրթության գոր-

ծը, մայրենի լեզվի ուսուցանումը, մեր հայրերի սրբազան ժառանգությամբ ու ավանդներով դաստիարակումը: Դուք ձեր հավատքի հետ մեկտեղ նաև մեր Մայր Հայրենիքի սերն ու կարոտն եք փոխանցում ձեր զավակներին, քանզի ինչպես բույսն է սնվում արմատներով և ապա ճյուղերը զորանում են, ծաղկում ու պտուղներ բերում, այդպես էլ հայրենական մեր արժեքներով, Հայրենիքով, Սուրբ Էջմիածնի լույսով և մեր եկեղեցիներից բաշխվող օրհնությամբ զորանում են մեր աշխարհասփյուռ հայորդիները, հաստատուն մնում «ի հաւատ, ի յոյս, ի սէր», և նրանց գործոց բարի պտուղներով պայծառանում է համայն հայությունը:

Միրելի զավակներ Մեր, այս մտորումներով և գոհաբանական զգացումներով Հայրապետական Մեր հորդորն ենք ուղղում ձեզ, որ ազգային մեր կյանքում մշտապես հաստատուն մնաք հավատքի, հույսի ու սիրո մեջ, ու, ինչպես նաև առաքյալն է պատվիրում՝ «ամուր պահենք մեր դավանած հավատը» (Եբր. Դ 14):

Միրելի Սրբազան, սիրո և գնահատանքի խոսք ենք ուղղում Ձեզ, Ձեր առաքելությանն աջակցող թեմական-համայնքային մարմիններին, հայության կյանքն աշխույժով լցնող բարեսիրական, հասարակական կազմակերպություններին, կրթական հաստատություններին և մաղթում, որ բարի պտուղներով շարունակեք բարեզարդել Ավստրալիայի հայ համայնքը:

Թող Աստված ամրացնի ձեզ ձեր գնահատելի ծառայությունների մեջ՝ պարգևելով եռանդ ու ավյուն, նորանոր ձեռքբերումներ՝ ի վայելումն ավստրալահայ Մեր սիրասուն զավակաց:

Մեր սրտագին աղոթքն է, որպեսզի Ամենակալ Տերն Իր անսպառ օրհնության մեջ պահի ձեզ ամենքիդ, խաղաղություն շնորհի համայն աշխարհին և պահպանի աշխարհսփյուռ մեր ժողովրդին Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքո:

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը թող ձեր հոգու հետ լինի. Ամէն (Գաղ. Զ 18):

Վեհափառ Հարապետն իր այցի առիթով Ս. Հարություն եկեղեցուն ընծայեց Ս. Ղազարոսի սրբապատկերը, իսկ առաջնորդին՝ նրբագեղ ձեռաց խաչ: Իր հերթին Տ. Աղան արքեպս. Պալիոզյանը շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը՝ Ավստրալիայի հայոց թեմ այս այցելության համար, և Մայր Աթոռին նվիրեց արծաթե բուրվառ:

Եկեղեցական արարողությունից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիսավոր թափորի ուղեկցությամբ առաջնորդվեց Արշակ և Սոֆի Գոլստան դպրոց: Դպրոցը հիմնադրվել է 1986 թվականին և առաջին տարում ունեցել է 41 ուսանող ու երկու տարրական դասարան: Այսօր վարժարանն ունի մանկապարտեզ և ավագ դպրոց, որոնցում սովորում են շուրջ 300 աշակերտ: Դպրոցն արդեն ունի բազում շրջանավարտներ:

Դպրոցում հավաքվել էր ավելի քան երկու հազար հոգի՝ դիմավորելու Նորին Սրբությանը և մասնակցելու կազմակերպված միջոցառումներին: Ներկա էին դաշնային և տեղական իշխանությունների ներկայացուցիչները, ինչպես նաև Ավստրալիայի նախկին վարչապետ պրն Գուդ Ուիթլամը:

Հանդիսության ժամանակ Հայոց Հայրապետը շնորհավորեց դպրոցի ողջ պաշտոնեությանը դպրոցի հիմնադրման 20-ամյակի կապակցությամբ՝ իր բարձր գնահա-

տանքը հայտնելով բոլոր նրանց, ովքեր նվիրումով օժանդակել են դպրոցի հիմնադրմանն ու կայացմանը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը հանդիսապետեց դպրոցի հիմնադիր բարերարներ Արշակ & Սոֆի Գոլստաններին նվիրված հուշարձանի բացման արարողությանը:

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ թեմական խորհրդի և եկեղեցական վարչությունների անդամների հետ՝ Հայրապետական իր օրհնությունը բերելով հավաքվածներին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԱՐՇԱԿ ԵՎ ՍՈՖԻ ԳՈԼՍՏԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ 20-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Սիրեցյալ զավակներ Մեր,

Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում բարեպաշտ հայորդիներիդ՝ Արշակ և Սոֆի Գոլստան Համազգային վարժարանի 20-ամյակի նշանակալի հոբելյանի առիթով:

Ի խորոց սրտի շնորհավորում ենք Ձեզ ամենքիդ, ի մասնավորի՝ հայրենական սրբարար ակունքներից ավստրալահայ պատանի զավակաց կենդանարար սնունդ ջամբող Արշակ և Սոֆի Գոլստան Համազգային վարժարանի տեսչական և ուսուցչական կազմի բոլոր անդամներիդ, որ հոգու առանձնակի բերկրանք ու խնդություն եք զգում վարժարանի քսանամյա հոբելյանի առիթով:

Մենք բարձր ենք գնահատում արդյունավետ գործունեությունը Սփյուռքի մեր վարժարանների ու կրթական հաստատությունների, որոնց առաքելությունն առավելաբար միտված է մայրենի լեզվի ուսուցմանը, հայեցի սերունդ կրթելուն ու դաստիարակելուն՝ որպես անխախտ գրավական աշխարհասփյուռ մեր ժողովրդի ազգային ինքնության պահպանության:

Արդարև, վարժարանի ազգօգուտ գործունեության մեջ մեծ է ավանդը նվիրյալ հիմնադիրների՝ հայ ժողովրդի և մեր Մայր Եկեղեցու արժանավոր զավակներ Արշակ և Սոֆի Գոլստանների, որոնց անունով արժանիորեն անվանվեց վարժարանը և իր գործունեությամբ առատ պտուղներ բերեց համայնքային կյանքում: Վարժարանն այսօր շարունակում է արդյունավետությամբ գործել շնորհիվ մեր մանկանց հոգիներում ազնիվ ու ստեղծագործ աշխատանքով ազգասիրության և հայրենանվիրումի բարի հունդեր սերմանող վաստակաշատ բոլոր ուսուցիչ-ուսուցչուհիների, որոնց բարի փափագն է իրենց նպաստը բերել մեր ժողովրդի ազգային-եկեղեցական կյանքի բարգավաճմանը:

Դարեր շարունակ Եկեղեցու հովանու ներքո են գործել հայոց կրթարանները, և այսօր ևս մեր Սուրբ Եկեղեցին զորավիգ ու աջակից է հայ կրթօջախների շնորհակալ առաքելության իրականացմանը: Այս կապակցությամբ Մեր գնահատանքն ենք բերում Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիոզյանին և թեմական խորհրդին, որ հայրական հոգատարութ-

յամբ ուշադիր են տիրախնամ թեմի դպրոցների կարևոր առաքելության արդյունավորմանը:

Նշանակալի հոբելյանի առիթով ցանկանում ենք Մեր սրտի ջերմ խոսքն ուղղել կրթական հաստատության սիրասուն սաներին: Սիրելի զավակներ Մեր, մշտապես հավատարիմ եղեք Հայոց Եկեղեցուն, Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, Մայր Հայրենիքին, սովորեք ու միշտ սիրեք մեր ոսկեղենիկ մայրենի լեզուն և ուսման մեջ քաջեռանդությամբ ընթացեք գիտության բարի ճանապարհներով:

Հայրապետական Մեր պատգամն ենք ուղղում նաև վարժարանի բարերարներին, հոգաբարձուներին և Ավստրալիո թեմի համայն հավատացելոց, որ շարունակեն ամենօրյա հոգածությամբ զորացնել ու ծաղկեցնել կրթական հաստատությունները՝ ի խնդիր ավստրալահայ համայնքի բարգավաճման և Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պայծառության:

Թող Բարձրյալն Աստված հաստատուն և շեն պահի Արշակ և Սոֆի Գոլստան Համազգային վարժարանը և Իր Սուրբ Աջի հանապազ օրհնության ներքո՝ նրա բոլոր նվիրյալներին՝ տեսչությանը, հոգաբարձուներին, հոգատար մանկավարժներին և սիրասուն սաներին:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն»:

Ավարտելով հովվապետական այս այցելությունը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Աստանա՝ մասնակցելու ավանդական և համաշխարհային կրոնների կրոնապետերի երկրորդ համագումարին:

ԷԴՈՒԱՐԴ ՍՐԿ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՐՈՆՆԵՐԻ ԿՐՈՆԱՊԵՏԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԱՍՏԱՆԱՅՈՒՄ

Սեպտեմբերի 11-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սիդնեյից մեկնեց Ղազախստանի մայրաքաղաք Աստանա, ուր սեպտեմբերի 12-14-ը տեղի ունեցավ Համաշխարհային և ավանդական կրոնների կրոնապետերի երկրորդ համագումարը:

Առաջին համագումարը տեղի է ունեցել 2003 թ. սեպտեմբերի 23-24-ին Աստանայում՝ ծառայելով համաշխարհային կրոնների առաջնորդների երկխոսությանը:

Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորած պատվիրակության կազմում էին Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական Կոմիտեում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ Տ. Վիգեն եպս. Այքազյանը և Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Տ. Հովակիմ վրդ. Մանուկյանը:

Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների երկրորդ համագումարը խթան հանդիսացավ տարբեր քաղաքակրթությունների երկխոսության և աշխարհում հանդուրժողականության զարգացման համար: Այս միջկրոնական գագաթժողովը կազմակերպվել էր Ղազախստանի Հանրապետության ղեկավարության կողմից՝ նախագահ Նուրսուլթան Նազարբաևի նախաձեռնությամբ:

Գագաթժողովի գլխավոր նպատակն էր տարբեր կրոնների և երկրների ներկայացուցիչների անմիջական շփումը միմյանց հետ:

Կրոնական առաջնորդների քննարկման հիմնական թեմաներն էին՝ խղճի ազատության հարգումը աշխարհի տարբեր մասերում և կրոնի դերը միջազգային անվտանգության գործում:

Համաշխարհային և ավանդական կրոնների կրոնական առաջնորդների երկրորդ գագաթժողովին մասնակցեցին 43 պատվիրակություններ 20 երկրներից: Գագաթժողովին իրենց մասնակցությունը բերեցին բոլոր ավանդական կրոնների ներկայացուցիչները: Ժողովին ներկա էին Կ. Պոլսի Տիեզերական Պատրիարք Նորին Ամենապատվություն Բարդուղիմեոս Ա-ն՝ իր շքախմբով, Ռուս Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությունը՝ ղեկավարությամբ Բելառուսի մետրոպոլիտ Ֆիլարետի, Կաթոլիկ Եկեղեցու կարդինալ Էչեգարայը՝ Արդարության և Խաղաղության Պապական Խորհրդի նախկին նախագահ, Իսրայելի Ասքանազյան տոհմի գլխավոր ռաբբի Յոնա Մեցգերը և ուրիշներ: Կրոնական առաջնորդներից բացի, ժողովին մասնակցեցին նաև միջազգային մի շարք կազմակերպությունների, այդ թվում և ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի ներկայացուցիչներ:

Այս համաժողովը կազմակերպվել էր պատշաճ մակարդակով: Վեհափառ Հայրապետին օդանավակայան դիմավորելու էին եկել Ղազախստանի Հանրապետության

Արտգործնախարարության աշխատակիցները, Ղազախստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Լևոն Խաչատրյանը և հայ համայնքի ներկայացուցիչներ:

Ժողովն սկսվեց սեպտեմբերի 12-ին: Գագաթաժողովի աշխատանքներին և բոլոր նիստերին իր մասնակցությունը բերեց Ղազախստանի Հանրապետության նախագահ Նուրսուլթան Նազարբաևը:

Առաջին աշխատանքային օրը գագաթաժողովի մասնակիցները հաստատեցին միջկրոնական երկխոսությունների սկզբունքները: Համաձայն նախագծի՝ միջկրոնական երկխոսությունների սկզբունքները ենթադրում են, որ երկխոսությունները պետք է հիմնվեն ազնվության, հանդուրժողականության, համակեցության և փոխադարձ հարգանքի վրա: Դրա հետ մեկտեղ երկխոսություններում չպետք է տեղ գտնեն դավանական անհանդուրժողականությունը, ինչպես նաև չպետք է վիրավորվի երկխոսության մասնակիցներից որևէ մեկի դավանանքը և չպետք է մի կրոնը իշխի մյուսի վրա: Կրոնների երկխոսությունը պետք է նպաստի ազգերի խաղաղ գոյակցությանը և արդյունավետ համագործակցությանը: Նախագծում ընդգծվում է կրոնի կարևորությունը հասարակության համար որպես կառուցողական և կենսունակ ուժի:

Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևը գագաթաժողովի բացման խոսքում կարևորեց, որ կրոնական առաջնորդները իրենց քարոզներով մարդկանց չմղեն քաղաքական բախումների, որպեսզի նրանք չծառայեն քաղաքական կամ հակաօրինական որևէ կազմակերպության նպատակներին, որոնք հեռու են աստվածահաճո լինելուց:

Գագաթաժողովի աշխատանքային հաջորդ օրերին իրենց կարծիքներն ու առաջարկությունները ժողովականներին ներկայացրեցին կրոնական առաջնորդներն ու պատվիրակությունների անդամները:

Սեպտեմբերի 13-ին Աստանայում Վեհափառ Հայրապետը հանդես եկավ «Հավատքի ազատություն և հարգանք այլադավանների նկատմամբ» թեմայով բանախոսությամբ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԿՐՈՆՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

(Սեպտեմբերի 11-14, 2006 թ., Աստանա)

Մեծարգո նախագահ Ղազախստանի Հանրապետության,

Հարգարժան հոգևոր պետեր և ներկաներ.

Այս հավաքը, որ մեզ համախմբել է Ղազախստանի Հանրապետության մայրաքաղաք Աստանայում, չափազանց կարևոր է. մեզ հերթական հնարավորությունն է ներկայացել երկխոսության միջոցով միասնաբար քննարկել և պատասխաններ որոնել մեր ժամանակի բազում հարցերի, որ հուզում են մեզ և մեր ժողովուրդներին: Հա-

մաշխարհային և ավանդական կրոնների հոգևոր առաջնորդների երկրորդ համագումարը կարևոր քայլ է հազարամյակների խաչմերուկում կրոնների առջև ծառացած մարտահրավերները համատեղ հաղթահարելու ճանապարհին:

Բարձր գնահատելով այս համագումարի նախաձեռնությունը, հանուն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր դասի և բարեպաշտ հոտի ողջունում ենք բոլոր մասնակիցներին և Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում՝ մաղթելով, որ Աստված Իր Իմաստությամբ առաջնորդի մեր սրտերը, միտքն ու մտածումները:

Համագումարի հարգելի մասնակիցներ, թեպետև հաղթահարված են խոչընդոտները՝ մեզ պարտադրված 20-րդ դարում և ուղղված կրոնների բնական և անհերքելի իրավունքների դեմ, այնուհանդերձ այսօրվա թեման՝ □Դավանանքի ազատություն և այլ կրոնների ներկայացուցիչների նկատմամբ հարգանք□, պատահական չէ, քանզի այն դեռևս օրակարգում է՝ որպես մեր հասարակական կյանքի հրամայականներից մեկը:

Աստվածապարգև ազատությունը թանկ է մեզանից յուրաքանչյուրի համար: Նախկին Խորհրդային Միության տարածքում գործող Եկեղեցիները և կրոնները երկար տարիներ պայքարել են դավանանքի ազատության իրավունքի համար և մեծ կորուստների գնով են ձեռք բերել այն: Այսօր դավանանքի ազատությունը երաշխավորված է մեր երկրների Սահմանադրություններով, պաշտպանված տարբեր միջազգային հռչակագրերով, պայմանագրերով ու օրենքներով: Վերջին տարիների մեր փորձառությունը վկայում է, որ Եկեղեցին ոչ միայն հաստատել է ազատ գործելու իր բնական իրավունքը, այլև՝ որ, հակառակ անցնող տասնամյակների մարտնչող և իր ընդգրկունությամբ ու դաժանությամբ անօրինակ անաստվածության, անհնար եղավ կրոնական զգացումն արմատախիլ անել մարդկանց հոգիներից: Եվ այսօր մենք ականատես ենք, որ հասարակության լայն շերտեր, այդ թվում և երիտասարդությունը, իրենց տեսնում են Եկեղեցու գրկում՝ հավատացած լինելով, որ Եկեղեցին ոչ միայն աղոթքի և խորհրդածությունների վայր է, այլև արժեքների օրրան և հասարակության բարոյական կյանքի ուղեցույց:

Այնուհանդերձ, հակառակ դավանանքի ազատության ուղղությամբ անժխտելի ձեռքբերումների, աստվածամարտ համայնավարական գաղափարախոսությունը հաղթահարած մեր հասարակությունները բախվում են 21-րդ դարի նոր մարտահրավերների: Մենք հաճախ ականատես ենք դառնում քաղաքական և տնտեսական խնդիրները, ազգամիջյան հակամարտությունները և տարաձայնությունները կրոնական լույսի ներքո ներկայացնելու միտումի:

Դրանում նվազ չէ նաև մամուլի, հեռուստատեսության և զանգվածային այլ լրատվամիջոցների ազդեցությունը, որոնք, երբեմն անգամ տեղյակ չլինելով հակամարտությունների էությանը, փորձում են պարզապես այդ խնդիրները փոխադրել կրոնական դաշտ: Հաճախ ականատես ենք դառնում կրոնական զգացումները վիրավորելու փաստերի և շարունակում ենք չմիջամտելով հարևանցի անտարբեր դիտել, թե ինչպես են սրբապղծվում սրբավայրերը, բարբարոսաբար ոչնչացվում ինչպես կրո-

նական, այնպես էլ ընդհանուր մշակութային և համամարդկային նշանակություն ունեցող արժեքներ սոսկ այն պատճառով, որ ստեղծվել են ավանդական որևէ դավանանքի պատկանող մի այլ ժողովրդի կողմից: Հրատապ ենք համարում դիմել կրոնական հարանվանությունների ներկայացուցիչներին, գրականության և արվեստի գործիչներին, համաշխարհային լրատվամիջոցներին, բոլորին, ովքեր կարող են իրենց խոսքով ու գործերով նպաստել սիրո, բարեկամության հաստատմանը և կոչել բոլորին իրենց ջանքերն ուղղել միմյանց արժեքների և տարբեր կրոնների ներկայացուցիչների կրոնական զգացումների նկատմամբ հանդուրժողականության և հարգանքի քարոզչությանը:

Մյուս կողմից, զուտ աշխարհիկի հետևորդները հոգևոր արժեքների և ավանդությունների քննադատությամբ փորձում են նվազեցնել Եկեղեցու և կրոնի դերը հոգևոր և բարոյական արժեքների ձևավորման և պաշտպանության գործում, մեկուսացնել այն հանրային կյանքից: «Խղճի ազատությունը» մեկնաբանվում է իբրև ազատություն խղճից, ազատություն երկրպագելու ոչ թե Աստծուն, այլ այլազան կուռքերի, ներառյալ դրամը, իշխանությունը և այլն: Աշխարհայնացված աշխարհի արժեքները փաստորեն փոխակերպվում են, և կրոնը դառնում է «ազատ շուկայի» առարկա հատկապես ԱՊՀ երկրներում, ուր արդի ժամանակաշրջանը հատկանշված է նոր կրոնական հոսանքների և քայքայիչ տոտալիտար աղանդների աննախադեպ տարածումով, որոնք հայտնի են իրենց հոգեորսական գործունեությամբ և դրամական հնարավորություններով, որոնք բավական գործուն են մեր երկրների ներկայիս սոցիալական պայմաններում:

Մեզ համար հրատապ է ոչ միայն կրոնական ազատությունը հարգելու սկզբունքը, այլև ազգերի ինքնության պահպանության, նրանց կրոնական զգացումները հարգելու խնդիրը, ազգերի իրավունքի և ազատության ճանաչումը՝ պաշտպանելու իրենց նախնյաց հոգևոր-մշակութային ժառանգությունը, դարերով ձևավորված ազգային արժեքների համակարգը, որը հիմքն է տվյալ ազգի ինքնության:

Հայ ժողովուրդը, հակառակ պատմության ընթացքում իրեն բաժին ընկած փորձությունների և չարչարանքների, հակառակ 1915 թ. ցեղասպանության, պահպանել է հավատն ու ինքնությունը. հավատը, որի կարևոր բաղկացուցիչներից է Տիրոջ առաքյալի պատգամը. «Եղբայրասիրությունը թող հաստատ մնա ձեր մեջ: Մի՛ մոռացեք օտարասիրությունը» (Եբր. ԺԳ 1-2): Այսօր լինելով աշխարհասփյուռ, մեր ժողովրդի և Եկեղեցու զավակները հավատարիմ մնացին այս պատգամին՝ մշտապես հարգելով այլ ավանդույթները և կրոնները, մյուս ժողովուրդների հետ միասին քայլելով համագործակցության և բարի արարումների արահետով: Քանզի հավատում են, որ այնտեղ, ուր սեր կա, Աստված է Իր օրհնությամբ և խաղաղությամբ:

Մեր գնահատանքը հայտնելով համագումարի կազմակերպիչներին՝ գլխավորությամբ Ղազախստանի հանրապետության նախագահի, Մենք ողջունում ենք նման համաժողովների հրավիրումը, որոնք ծառայում են նաև կրոնների ներկայացուցիչների միջև անմիջական կապերի և շփման փոխըմբռնման, հարգանքի և համագործակցության ոգու հաստատմանը:

Աղոթք ենք վերառաքում Ամենողորմ Տիրոջը՝ հաջողությամբ պսակելու կրոնական առաջնորդների համաժողովի աշխատանքները:

Պահապան և Հույս հավատացյալների, Բարձրյալ Տե՛ր, Քո Սուրբ Աջի հովանու ներքո պահի՛ր ու պահպանի՛ր ողջ աշխարհը, շնորհի՛ր ուժ և կարողություն կրոնների ներկայացուցիչներին իրենց պատասխանատու առաքելության մեջ, զորացրո՛ւ ժողովուրդների մեջ սիրո և եղբայրության ոգին և առաջնորդի՛ր մեզ ամենքիս դեպի բարին և խաղաղություն: Ամեն:

Գագաթաժողովի երկրորդ օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց Ղազախստանի Հանրապետության նախագահ Նուրսուլթան Նազարբաևին և մոտ 20 րոպե առանձնազրույց ունեցավ նրա հետ:

Գագաթաժողովի մասնակիցները հյուրընկալվեցին նաև Ղազախստանի Հանրապետությունում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Օրդվեյի կողմից դեսպանի նստավայրում: Ջոն Օրդվեյը, որ երկար տարիներ եղել է ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպանը Հայաստանի Հանրապետությունում, բարեկամական հարաբերությունների մեջ է Վեհափառ Հայրապետի հետ: Նորին Սրբությունը անմիջական և մտերմիկ զրույց ունեցավ դեսպանի հետ:

Ժողովի մասնակիցներին հյուրընկալեց նաև Ղազախստանի նորակառույց մայրաքաղաք Աստանայի քաղաքապետը:

Ժողովի ընթացքում Վեհափառ Հայրապետը առանձնազրույցներ ունեցավ Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Ա-ի և Իսրայելի գլխավոր Ռաբբի Յոնա Մեցգերի հետ: Վեհափառ Հայրապետը հանդիպեց նաև Եվրախորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի նախագահ Ռենե վան դեր Լինդենի հետ:

Ղազախստանում տեղի ունեցող գագաթաժողովը լուսաբանվում էր տեղական և միջազգային լրատվամիջոցներով: Ի դեպ, հարկ է շեշտել, որ Վեհափառ Հայրապետը իր բանախոսության մեջ անդրադարձավ Հայոց Ցեղասպանության դատապարտման փաստին, ինչը ներկաները ընդունեցին ծափողջույններով:

Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների գագաթաժողովին հատուկ սրահներ էին տրամադրվել իրենց կրոններն ու մշակույթը ներկայացնելու համար, որոնցից մեկում էլ Ղազախստանի հայ համայնքի և Հայաստանի Հանրապետության դեսպանության ջանքերով ներկայացվեց Հայ Եկեղեցին և մշակույթը:

Վեհափառ հայրապետի այցը Ղազախստան կարևորվում է ոչ միայն կրոնական առաջնորդների գագաթաժողովով, այլև տեղի հայկական համայնքի կյանքին ծանոթանալով: Ղազախստանում բնակվում են շուրջ 25 հազար հայեր և կան 13 համայնքային կազմակերպություններ: 2004 թ. Ղազախստանում ստեղծվել է «Հայ համայնքային կառույցների ասոցիացիան»:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորած պատվիրակությունը սեպտեմբերի 26-ին վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

ԷԴՈՒԱՐԴ ՍՐԿ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին

777777ՀՐԱՇԱՓԱՌ888888-Ի ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Սեպտեմբերի 16-ին, վաղ առավոտյան, Ավստրալիա և Ղազախստան կատարած Հայրապետական ուղևորությունից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին վերադարձավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նույն օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանեց նաև Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբանների ուղեկցությամբ՝ մասնակցելու «Հայաստան-Սփյուռք» երրորդ համաժողովին և Հայաստանի Հանրապետության անկախության 15-ամյակին նվիրված միջոցառումներին:

Միածնաէջ Տաճարի զանգերի ղողանջների ներքո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններից և արտերկրից ժամանած եկեղեցականներից կազմված հանդիսավոր թափորով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսն առաջնորդվեցին Մայր Տաճար:

Իջման Սուրբ Սեղանի առջև կատարված սաղմոսերգության և գոհաբանական աղոթքի արարողությունից հետո Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարիգալստյան խոսքով դիմեց ներկաներին՝ ուրախություն հայտնելով Մայր Աթոռում Արամ Ա Կաթողիկոսի, իրեն ուղեկից հոգևոր դասի, ինչպես նաև տարբեր երկրներից ժամանած թեմական առաջնորդներին՝ ողջունելով նրանց «Հայաստան-Սփյուռք» երրորդ համաժողովին և Հայաստանի Հանրապետության անկախության 15-ամյակին նվիրված միջոցառումներին մասնակցելու համար վերստին Հայաստան գալու առթիվ: *«...Երկու կարևոր միջոցառումներ են, որոնք կոչում են աշխարհասփյուռ մեր ժողովրդին համահավաք, միասնական ոգով և միասնական կամքով շարունակելու իրենց նվիրյալ ծառայությունը՝ իրագործելու համար մեր հայրերի նվիրական և սուրբ տեսիլքը՝ ազատ և հզոր Հայրենիքի կերտման:*

Մենք գոհունակ սրտով հաստատում ենք, որ անցնող 15 տարիներին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ամբողջանվեր կերպով իր ծառայությունն է բերել Հայրենիքում և Սփյուռքում այս կարևոր նպատակի համար՝ Սփյուռք-Հայրենիք մերձեցման և անկախ մեր պետության զորացման համար»,-ասաց Նորին Սրբությունը՝ փառք վերառաքելով Աստծուն, որ այս օրերին Հայոց Եկեղեցին պիտի ևս մեկ անգամ վկայի և հռչակի, որ անվարան կերպով ամբողջական իր մասնակցությունն է բերելու Հայրենիքի զորացման ու առաջընթացի սուրբ գործին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսը, ուրախություն հայտնելով Սուրբ Էջմիածնում գտնվելու համար, այս առիթով իր ապրումները փոխանցեց ներկաներին: «*Մեր ժողովրդի զավակները և մենք պետք է միշտ մեր մտքի, մեր հոգու ու մեր կյանքի մեջ անջնջելի կերպով ունենանք, հիշենք, մտաբերենք այն պատմական իրողությունը, թե*

Աստված մեր ժողովրդի հետ Սուրբ Գրիգոր Լուսավորչի ճամփով, այս տաճարի ճամփով խոսեց: Էջմիածինը Միածնաէջ Տաճար է: Աստված մեր ժողովրդի կյանքի մեջ իջավ, մեր ժողովրդի հետ երկխոսության մեջ մտավ այս տաճարի ճամփով: Հետևաբար՝ լինել Սուրբ Էջմիածնի մեջ՝ մեզ համար սովորական եկեղեցու մեջ լինել չի նշանակում, այլ մեր պապերի հետ, մեր սուրբերի հետ, մեր հայրապետների հետ, մեր նահատակների հետ, այլ խոսքով՝ մեր կենդանի պատմության մեջ լինել: Լինել Սուրբ Էջմիածնի մեջ մեզ համար նշանակում է մի քիչ ավելի հայանալ, մի քիչ ավելի մեր քրիստոնեական հավատքի մեջ զորանալ»,- ասաց Արամ Ա Կաթողիկոսը՝ հավաքվածներին փոխանցելով նաև Հայրենիքին զորակցության և «Հայաստան-Սփյուռք» խորհրդաժողովի հետ կապված իր մտորումները:

Ապա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հրավիրեց ամենքին Տերունական աղոթքով հայցելու Բարձրյալ Տիրոջ ողորմությունը՝ հանուն աշխարհի խաղաղության, աշխարհասփյուռ հայ ժողովրդի բարօրության և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու անսասանության:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ «ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՇՔԱՆՇԱՆԸ» ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Սեպտեմբերի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վեհարանի հանդիսությունների դահլիճում, տեղի ունեցավ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի կողմից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսին շնորհված «Բարեկամության շքանշանի» հանձնման հանդիսավոր արարողությունը: Հանդիսությանը ներկա էին Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսը, Մայր Աթոռի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբաններ, ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը, ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դեսպաններ, պետական այրեր, գիտության ու մշակույթի գործիչներ:

Հանդիսությունը բացեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը՝ ընդգծելով հանդիսության յուրահատկությունը. Նորին Սրբությունը, ով սովորաբար պարգևաբաշխումներ է կատարում Վեհարանի հարկի ներքո, այս անգամ ինքն է պարգևատրվում: Գերաշնորհ Սրբազանն անդրադարձավ նաև հայ-ռուսական հարաբերությունների սերտացման գործում Նորին Սրբության ջանքերով արձանագրված ձեռքբերումներին:

Այնուհետև ելույթ ունեցավ ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Նիկոլայ Պավլովը: «Ձերդ Սրբության հովվապետությամբ Եկեղեցու հոգևոր և հասարակական առաքելության իրագործումն արժանիորեն խորին երախտագիտությամբ է գնահատված Ձեր հոտի և Հանրապետության հանրության կողմից... Մենք կցանկանայինք առանձնացնել Ձեր ակտիվ գործունեությունը՝ ուղղված Ռուսաստանի և Հայաստանի ժողովուրդների բարեկամության ավանդական հարաբերությունների և միմյանց հանդեպ սրտաբուխ կապվածության պահպանմանը, երկու պետությունների միջև փոխշահավետ դաշնակից փոխգործակցության ամրապնդմանը»,- նշեց դեսպանն իր խոսքում:

Դեսպանը նաև անդրադարձավ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գործունեությանը Ռուսաստանի հայ համայնքում, նոր եկեղեցիների կառուցմանը, հոգևոր ու մշակութային կենտրոնների հաստատմանը՝ այդ ամենում տեսնելով նաև Նորին Սրբության անմիջական կարևոր ներդրումը: «Ձեր բազմակողմանի և արդյունավետ գործունեության այս համառոտ ներկայացումը ևս մեկ անգամ ընդգծում է, որ Ձեր ավանդը իրավացիորեն գնահատվել է Ռուսաստանի կողմից»,- ասաց ՌԴ դեսպանը: Իր խոսքից հետո դեսպան Պավլովը Ամենայն Հայոց Հայրապետի կուրծքը զարդարեց «Բարեկամության շքանշանով» և հանձնեց շքանշանի վկայականը:

Հանդիսության ընթացքին շնորհավորական խոսքով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմեց Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսը: Անդրադառնալով հայ-ռուսական բարեկամությանը և այդ դարավոր բարեկամության սերտացման գործում Հայոց Հովվապետի կարևոր ներդրմանը՝ Արամ Կաթողիկոսը իր խոսքում ի մասնավորի ասաց. «Հայ-ռուսական բարեկամությունը սովորական հասկացողությամբ բարեկամություն չի եղել, այլ բարեկամություն, որ իր զանազան արտահայտություններն է ունեցել երկու ժողովուրդների քաղաքական, տնտեսական, հոգևոր,

ընկերային և այլ մարզերից ներս: Բարեկամություն է, որ սովորական հասկացողությամբ դարձյալ բարեկամություն չի եղել, այլ պատմության պայմանները այնպես են պարտադրել, որ լայն չափով մեր ժողովուրդների ճակատագրերը իրար հետ սերտորեն առնչվում են: ....Հայ-ռուսական բարեկամությունը անցյալ չէ, այլ նաև ներկա ու մանավանդ ապագա»: Հայ-ռուսական դարավոր բարեկամության առավել սերտացման գործում աղոթքով առ Աստված Նորին Սրբություն Արամ Ա-ն մաղթեց Վեհափառ Հայրապետին երկար տարիների արդյունաշատ գահակալություն՝ իր ազգաշեն, հայրենաշեն և եկեղեցաշեն գործունեության համար:

Ապա շնորհակալական խոսքով հանդես եկավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը իր շնորհակալությունը հայտնեց ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին՝ շնորհված բարձր պարգևի համար, և ՌԴ դեսպանին՝ շքանշանի հանձնման համար: *««Ժողովուրդների բարեկամության» այս պարգևը մենք ընկալում ենք որպես պարգև՝ տրված Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն: Եկեղեցի, որ դարեր շարունակ խնամել է նախանձախնդրորեն բարի հարաբերությունները ռուս ժողովրդի և ռուսական իշխանությունների հետ:....Այս պարգևը Մենք ընկալում ենք նաև պարգև՝ ընծայված մեր ժողովրդին, որ դարեր շարունակ եղբայրաբար ապրել, աշխատել, մաքառել է ռուս ժողովրդի հետ միասին»*,- ասաց Վեհափառն իր խոսքում՝ նշելով նաև, որ Ամենայն Հայոց մի շարք Հայրապետներ քանիցս պարգևատրվել են ինչպես ցարական, այնպես էլ խորհրդային իշխանությունների կողմից: Արժեվորելով երկու ազգերի հետզհետե առավել ամրապնդվող սերտ հարաբերությունների շարունակական ընթացքը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձր գնահատեց բազում հայորդիների՝ Ռուսաստանի կյանքի տարբեր մարզերում ունեցած կարևոր դերն ու նշանակությունը: Վեհափառ Հայրապետը նաև նշեց, որ երկու ժողովուրդների բարեկամության ոգուն համարժեք ու համապատասխան զարգանում են նաև սերտ կապերը Հայ Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջև, և իր մասնավոր շնորհակալությունը հայտնեց Նորին Սրբություն Ալեքսի Բ-ին՝ հանուն Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման ներդրած իր միջնորդական ջանքերի համար:

Ռուսաստանի նախագահի շնորհած պարգևը համալրում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին նախկինում շնորհված բազում պետական և հասարակական պարգևների շարքը, որոնց թվում են Հորդանանի բարձրագույն «Բեթղեհեմ-2000» շքանշանը, «Ռումինիայի աստղ» Ռումինիայի ազգային բարձրագույն պարգևը (2000 թ.), Ուկրաինայի Հանրապետության «Իշխան Յարոսլավ Իմաստուն» շքանշանը (2001 թ.), Ֆրանսիայի Պատվո լեգեոնի կոմանդորի շքանշանը (2001 թ.), Ռուս Ուղղափառ Եկեղեցու բարձրագույն պարգև՝ Ս. Անդրեաս Նախակոչ առաքյալի շքանշանը (2004 թ.), «Դարի բարեգործներ» միջազգային բարեգործական հիմնադրամի «Սուտակե խաչ» շքանշանը (2005 թ.), ՌԴ հասարակական բարձրագույն պարգև՝ «Ռուսաստանի հպարտություն» ոսկե շքանշանը (2006 թ.):

Հանդիսությունը փակվեց «Պահպանիչ» աղոթքով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ «ՀԱՅԱՍՏԱՆ -ՍՓՅՈՒՌՔ» ԵՐՐՈՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ

(18-20 սեպտեմբերի 2006 թ., Երևան)

Մեծարգո Նախագահ Հայաստանի Հանրապետության,

Սիրելի Վեհափառ եղբայր,

Խորհրդաժողովի սիրելի մասնակիցներ.

Հայաստանում և Արցախում մեր պետականության վերահաստատման 15-րդ տարեդարձի հոբելյանական լույսի ներքո «Հայաստան-Սփյուռք» երրորդ խորհրդաժողովի գումարումը ուրախությամբ է համակել մեր հոգիները: Եվ Մենք առ Աստված գոհության և փառաբանության աղոթքով եկել ենք ողջունելու պատվարժան մասնակիցներիդ և բերելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունը խորհրդաժողովի աշխատանքներին:

Մայր Հայրենիքը կրկին միավորել է իր զավակներին նույն հույսերով ու ձգտումներով ու նաև՝ հավատով, որ մենք միասնաբար նոր առաջընթաց ճանապարհ պիտի անցնենք՝ դեպի մեր ժողովրդի բարօրություն, հոգևոր ու ազգային կյանքի զորացում:

Համայն մեր ժողովրդինը եղան անցնող տասնհինգ տարիների և՛ դժվարությունները, և՛ հաղթանակները: Հայրենաբնակ և սփյուռքահայ համայն մեր ժողովուրդն ապրեց Հայրենիքի անկախության բերկրանքը և հավասարազոր դիմակայեց մեր ազատությանը սպառնացող վտանգները, հավասարազոր կրեց անկախության ճանապարհի, պետականության կայացման դժվարությունները ու միասնաբար ձեռք բերեց հաղթանակներն ու հաջողությունները: Փառք տանք Աստծուն, որ օրհնեց հայրենի անկախ պետականությունը վերահաստատելու մեր ժողովրդի միաբան ջանքերը, սերն ու նվիրումը:

Ամեն ժամանակ ունի իր հրամայականը: Այսօր մեր պատմության կարևոր հանգրվանն ենք ապրում: Եկել է պահը, որ ներկա մեր հնարավորությունները, որ ավելին են՝ Հայրենիքի ազատ, անկախ կյանքով, Սփյուռքի հետ անարգելք հարաբերություններով, լիովին և լավագույնս ծառայեն մեր ժողովրդի բարօրությանը, միասնությանն ու համախմբությանը, ամենուր հոգևոր ու ազգային կյանքի զարթոնքին: Այս հեռանկարն է այսօր ներշնչում և առաջնորդում մեզ: Այս գերագույն նպատակին հետամուտ և առկա հրամայականներին ընդառաջ ելնելու է կոչված մեր հավաքը: Այո, ավելին են այսօր ազատորեն գործելու հնարավորությունները, քան 15 տարիներ առաջ, սակայն քիչ չեն և մեզ հուզող, հրատապ հարցերը: Եկել է պահը, ու չպիտի ուշանանք: Արդի աշխարհում՝ քաղաքական ընթացքներում, գիտության ու տեխնիկայի, հաղորդակցության արագ զարգացումներում, տնտեսական ու մշակութային ժամ առ ժամ սերտացող առնչություններում հայ ժողովուրդը պիտի հանդես գա և խաղաղ ու ստեղծագործ կյանքի իր հույսերը իրականություն պիտի դարձնի ամուր պետությամբ ու կենսունակ Սփյուռքով: Ներկայիս, երբ մեծ տեղաշարժեր են ընթանում Սփյուռքի համայնքներում, նվազում են որոշ գաղթօջախներ, ձևավորվում նորերը, հրատապ է դառնում ընթացող տեղաշարժերին համարժեք ազգապահպան նոր կառույցների ստեղծումը, նոր եկեղեցիների, դպրոցների կառուցումը, կրթության լիարժեք կազմակերպումը, հրատապ է նաև մեզ ժառանգություն մնացած եկեղեցական կյանքը հուզող անբնական վիճակների հաղթահարումը:

Այսօր Հայաստանի և Արցախի հզորացման, ըստ ամենայնի զինված ու մարտունակ բանակով պաշտպանվածության և ամեն առումով առաջընթացի հրամայականն է բոլորիս առջև: Դեռ ճանաչված չէ Արցախի արդար իրավունքը, և շարունակվում է մեր ժողովրդի դեմ պատերազմի վերսկսման սպառնալիքը: Հայրենիքում դրական տեղաշարժեր կան տնտեսական, ընկերային կյանքում, կրթության, մշակույթի ասպարեզներում, սակայն դեռևս հաղթահարված չեն աղքատությունը, գործազրկությունը, արտագնա աշխատանքը երկրից: Կարիքավոր վիճակում են գյուղական բնակավայրերը, որոնց զարգացման ծրագրերն ու հեռանկարները մեր այս հավաքի հիմնական նպատակներն են: Մենք ողջունում ենք գյուղերը բարեկարգելու ծրագրի նախաձեռնումը, որը այսօր առանցքային նշանակություն ունի մեր երկրի տնտեսական ու ընկերային կյանքի առաջընթացի ու ժողովրդի բարեկեցության համար: Բոլոր հրամայականներին ճիշտ վճիռներ ու պատասխաններ պիտի գտնենք միասնաբար, միաբան ոգով, ազգային ու եկեղեցական կառույցների միասնական ջանքերով՝ ունենալով մեր անկախ պետականության ուժը: Լիբանանյան վերջին իրադարձությունների ժամանակ դրսևորվեց էականությունը հայրենի պետության դիրքերից ցուցաբերված զորակցության: Ցանկացած իրավիճակում որպեսզի առավել լինի մեր պետության դերակատարությունը, մոտ պիտի տեսնենք մեր Հայրենիքը զարգացած ու բարգավաճող երկիր դարձնելու հեռանկարը, որը ինքնին անկախ պետականություն ունենալու նպատակն է՝ ազատության մեջ ստեղծելու ու ստեղծագործելու, կառուցելու բարօր ու ապահով կյանք, ազատորեն արտահայտելու հոգևոր կենսական ուժերը: Հայրենիքի հզորությունն ու առաջընթացը ուժն ու զորությունն են նաև Սփյուռքի: Դարեր շարունակ, թեկուզ՝ բարվոք պայմաններում, թեկուզ՝ դժվարին, Սփյուռքը եթե ապրել է ու պահպանվել, ապա՝ իր Հայրենիքը ազատ տեսնելու և Հայրենիք վերադառնալու երազով: Այսօր երազը իրական է մեր Հայրենիքի այս հատվածի վրա, և Հայաստանի ու Արցախի ազատ կյանքի հանդեպ հավատը իրական է, որը պիտի դառնա մեզ առաջնորդող լույսը:

Հայրապետական Մեր պատգամն ու հորդորն ենք բերում հայրենաբնակ և Սփյուռքի համայն մեր ժողովրդին՝ արձագանքելու գյուղերը վերականգնելու հայրենաշեն այս մեծ ու կարևոր նախաձեռնությանը: Հայ Առաքելական Եկեղեցին ևս հանձնառու իր մասնակցությունն է բերելու ծրագրի իրականացմանը, որը պիտի ծառայի մեր երկրի բարգավաճմանն ու բարօրությանը: Հավատում ենք, որ Մեր զավակները, ինչպես միշտ, նեցուկ պիտի լինեն Հայրենիքին, և մեր ժողովուրդը միասնաբար պիտի շենացնի իր հայրենի տունը, որպեսզի այն միշտ լինի իր հույսի հանգրվանը, ներշնչանքն ու առանցքը հայ կյանքի, համախմբող զորությունը հայության: Աշխատանքով հպարտ մեր ժողովուրդը հայրենի հողի վրա պիտի մոռանա խեղճության մասին: Մեր զավակներին պիտի հանձնենք ներդաշնակ հասարակական կյանքով ամուր, մեր հավատի լույսով, գիտությամբ ու մշակույթով պայծառ երկիր, քրիստոնյա երկիր՝ աստվածասեր ու մարդասեր: Եվ թող մեզ առաջնորդ լինի Աստծո Ճշմարտության Հոգին, և մեզ օգնական՝ Աստծո շնորհն ու զորությունը, որպեսզի մեր ծրագրերն ու գործերը բարի արդյունքներ բերեն ու հաղթանակներ, և մենք սերնդից սերունդ պատգամենք Աստծո օրհնությունը մեր ժողովրդի կյանքի մեջ:

Օրհնյալ երթ խորհրդաժողովի աշխատանքներին և բարի նախաձեռնումներին:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սեպտեմբերի 21-ին, Հայաստանի Հանրապետության անկախության 15-րդ տարեդարձի առիթով, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և մասնակցությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմական առաջնորդների, կատարվեց Հանրապետական մաղթանք՝ Հայրենիքի անսասանության, բարօրության ու առաջընթացի համար:

Արարողությանը ներկա էին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը, ՀՀ ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, ՀՀ նախարարներ, պետական այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, ԱԺ պատգամավորներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագետներ, գիտության և մշակույթի գործիչներ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 15-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԻ ԸՆԹԱՑՔԻՆ

(Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, 21 սեպտեմբերի 2006 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Ի Տեառնէ եղեւ այս, եւ է սքանչելի առաջի աչաց մերոց: Այսօր է, զոր արար Տէր, եկայք ցնծասցուք եւ ուրախ եղիցուք ի սմա»:

(Սղմ. ՃԺԷ 23-24)

Սիրելի Վեհափառ եղբայր,

Մեծարգո Նախագահ Հայաստանի Հանրապետության Տիար Ռոբերտ Քոչարյան,

Մեծարգո Նախագահ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Տիար Արկադի Ղուկասյան,

Դիվանագիտական առաքելությունների պատվարժան ներկայացուցիչներ և սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Այս պանծալի օրը, Աստծուց օրհնյալ օրը մենք միասնաբար աղոթք ու մաղթանք բարձրացրինք երկինք՝ հանուն մեր Հայրենիքի ազատ, շեն ու պայծառ կյանքի, հանուն մեր ժողովրդի միասնական, լուսավոր գալիքի: Այսօր Հայաստանի Հանրապետության 15-րդ տարեդարձի տոնական ուրախությունը կամարել է համայն մեր ժողովրդի հոգիները աշխարհի բոլոր կողմերում: Գոհություն մատուցենք մեր Տիրոջն ու Փրկչին մեզ պարգևած առատ շնորհների համար. հույսի համար, որը չլքեց մեզ նեղությունների մեջ, հավատի համար՝

հանդեպ մեր հաղթանակը՝ հանդեպ մեր միասնության զորությունը: Գոհություն բարձրացնենք երկինք այն հավատարմության ու նվիրումի համար, որով ապրեց ու գործեց մեր ժողովուրդը Արցախյան պայքարից ու Հայաստանի անկախությունից ի վեր Հայրենիքում ու Սփյուռքում:

Արդարև, աշխարհի չորս ծագերում հայության սիրտը բաբախեց Հայրենիքի ազատության սիրով և իր նոր կյանքը կառուցելու ձգտումով: Եվ այսօր Հայաստանի Հանրապետության 15-րդ տարեդարձը փառքով է դիմավորում մեր ժողովուրդը: Դիմավորում է քաջությամբ անցած ճանապարհի անանց վաստակով՝ հայրենի անկախ պետականությունը զորացնելու ու վերափոխումների դժվարին ընթացքները հաղթահարելու վճռականությամբ, Արցախի արդար իրավունքը պաշտպանելու և ազգային իղձերը մարմնավորելու հավատով ու կամքով:

Փառք քեզ, ժողովուրդ հայոց, տասնհինգ տարիների հերոսական մաքառումներիդ համար, որը նոր սկիզբ է բարգավաճումի, հոգևոր զարթոնքի, հայրենի հողի վրա համախմբումի, գիտական ու մշակութային առաջընթացի, որով մշտապես ճանաչելի է եղել մեր ժողովուրդը: Կոչված ենք ազատության: Ազատության արևից լուսեղեն ու բարձր հասկեր պիտի բարձրանան, հույսից հույս պիտի ծնվի, հաղթանակից՝ հաղթանակ: «Տիրոջից եղավ այս, և սքանչելի է մեր աչքերի առջև: Սա է այն օրը, որ Տերը ստեղծեց, եկեք ցնծանք և ուրախանանք այսօր»,- սաղմոսերգուի այս խոսքն է հնչում այս պահին Մեր հոգում:

Սիրելի ժողովուրդ հայոց, միշտ հիշենք Աստծո սերը մեր հանդեպ, որով կոչված ենք արդար գործերի, և չերկնչենք ներկա հրամայականների առջև, այլ նորոգված սիրով ու նվիրումով ծառայենք մեր Հայրենիքին ու մեր ժողովրդի նոր կյանքին:

Հայցենք մեր Փրկչից, որ անվարան պահի մեր հավատը, որը դեպի հաղթանակներ առաջնորդեց մեզ, և թող այն՝ սրբափայլ շարունակի լուսավորել մեր ճանապարհը: Մեր սրտերում թող ապրի Հայրենիքին ծառայության անձնազոհ օրինակը նահատակ քաջորդիների: Փառք մատուցենք նրանց անմար հիշատակին և աղոթք բարձրացնենք նրանց հոգիների համար, որ երկնքում այսօր աղոթակից են մեզ: Եվ թող Տերը ունկնդիր լինի մեր աղոթքին, հայոց հողից, հայոց սրտից հնչած աղոթքներին՝ վասն կյանքի, խաղաղության ու ազատության, և արժանի անի տեսնել մեզ մարմնավորումը մեր հույսերի:

Տեր շնորհաց և Տեր զորությանց, «խնդրեմ վասն ազգիս մերոյ, զի զորս պահեալ ես մինչեւ ցայժմ ի հաստատութեան եւ ի բարեկարգութեան, աղաչեմ մեծաւ թախանձանօք, զի եւ եւս պահեսցես ի խնամս Քոյ ի փառս անուանդ Քում սրբոյ»:

Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ և ընդ ամենեսեան. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՊԵՏՐՈՍ ԵՎ ԱՆՆԱ ՕՐՈՒՆՋԱՔՃԻԵԼՆԵՐԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՊԵՏՐՈՍ ԵՒ ԱՆՆԱ ՕՐՈՒՆՋԱՔՃԻԷԼ, ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, ԱՄՆ

Սիրելի Տէր եւ Տիկին Օրունջաքճիէլ,

Բարձրեալ Տիրոջ կամքով այսօր ուրախ առիթն ունենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վեհարանի նուիրական այս յարկի ներքոյ ընդունել բարեպաշտ ամոլիդ եւ Մեր բարձր գնահատանքը բերել Ձեզ՝ հաւատաւոր Ձեր ոգու եւ ազգանուէր ու եկեղեցաշէն Ձեր արդիւնաւոր ծառայութեանց համար։

ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի միջոցով քաջածանօթ ենք Ձեր աստուածահաճոյ գործերին։ Տարիներ շարունակ Դուք գնահատելի մասնակցութիւն էք բերում ամերիկահայութեան կեանքին, ազնիւ բարերարութիւններով սատարում ազգային հաստատութիւնների, Տիրախնամ թեմի եւ Պոլսահայ Միութեան կողմից իրականացուող ծրագրերին։ Ազգային մեր կեանքը եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին աշխոյժ ու կազմակերպուած, միշտ շէն ու պայծառ տեսնելու նախանձախնդրութիւնը եւ զոհողութեան պատրաստակամութիւնը ճանաչում ու յարգանք են բերել Ձեզ, ինչին Մենք գոհունակութեամբ հաղորդ դարձանք Արեւմտեան թեմ կատարած Հովուապետական Մեր վերջին այցելութեան ընթացքին։

Մեր գնահատանքն ենք բերում Ձեզ նաեւ Ձեր ջերմ զգացումների ու որդիական սիրոյ համար՝ հանդէպ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Սուրբ Էջմիածնին կատարած Ձեր ազնիւ նուիրատուութիւնը մեծապէս պիտի նպաստի Քրիստոսահիմն եւ լուսաւորչապսակ Մայր Աթոռի շինութեանն ու պայծառութեանը, Հայրենի մեր երկրում հոգեւոր կեանքի վերազարթօնքին: Գոհաբանական աղօթքն է Մեր հոգում, որ ազգս հայոց օրհնուած է Ձեզ պէս բարեգործ զաւակներով, ովքեր միշտ պատրաստակամ են իրենց օգտակարութիւնը եւ հնարաւոր աջակցութիւնը բերելու մեր ժողովրդին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

Ձեր հաւատաւոր, ազգասէր ու հայրենասէր ոգու եւ ազգային-եկեղեցական մեր կեանքում Ձեր իրագործումների բարձր գնահատանքով, սիրով ընդառաջ թեմակալ ձեր առաջնորդի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ Մեր աղօթքն ենք բարձրացնում առ Ամենախնամն Աստուած՝ հայցելով, որ Տէրը Ձեր կեանքը օրհնի երկնատուր բարիքներով եւ գործոց յարանորոգ յաջողութիւններով՝ Իր օրհնութեան ներքոյ քաջառողջ ու կենսուրախ պահպանելով Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 1-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2006 եւ ի թուին հայոց ՌՆԾԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 355

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԼԵՎՈՆ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԼԵՒՈՆ ԱՀԱՐՈՆԵԱՆ, ՈՐ Ի ԹԵՀՐԱՆ, ԻՐԱՆ

Յարգարժան պրն Ահարոնեան,

Ուրախ ենք մեծապէս համայն հայութեան հոգեւոր կենտրոն լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունելու Ձեզ եւ բերկրանօք սրտի մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ բերելու Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Տիրոջ կամքով առիթ ենք ունեցել անձնապէս ճանաչելու Ձեզ եւ քաջատեղեակ լինելու ազնիւ հայորդուդ հաւատաւոր ու ազգաշէն գործերին, զոհողութեան պատրաստակամ ոգուն: Առ Աստուած հաւատով եւ առ հարազատ ժողովուրդը որդիական սիրով Դուք տարիներ շարունակ բարի աւանդ էք բերում մեր Հայրենիքի բարգավաճմանը, մասնաւորաբար՝ մեր Երկրում կրթական գործի արդիւնաւորմանը: Ձեր ազնիւ հովանաւորութեան շնորհիւ Հայաստանի տարբեր բնակավայրերում հազարաւոր մատաղ հայորդիներ կրթութիւն են ստանում բարեկարգուած դպրոցներում: Այս բարի իրագործումների արգասիքները Ձեզ իրաւամբ արժանացրել են հայրենաբնակ բազմաթիւ հայորդեաց անկեղծ սիրուն ու երախտագիտութեանը, որի վկայութիւնն է նաեւ ի պատիւ ազգանուէր հայորդուդ դպրոցի՝ Ձեր անունով վերակոչումը:

Առանձնակի գոհունակութեամբ Մեր բարձր գնահատանքն ենք բերում Ձեզ նաեւ հանդէպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ համայն մեր ժողովրդի հոգեւոր սրբազան կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դրսեւորած որդիական սիրոյ ու նուիրումի համար: Տակաւին Գարեգին Ա Ամենայն Հայոց երջանկայիշատակ Կաթողիկոսի գահակալութեան տարիներից Դուք գովարժան ծառայութիւն էք բերում ի նպաստ մեր Սուրբ Եկեղեցու շինութեան ու պայծառութեան, Մայր Աթոռին մատակարարելով մոմարտադրութեան անհրաժեշտ նիւթերը: Արդարեւ, արժանի զաւակն էք իրանահայ աւանդաշատ գաղութի, որ բազմադարեայ իր պատմութեան ընթացքին մշտապէս գործերով է վկայել իր սէրն ու անխախտ հաւատարմութիւնը հանդէպ Հայրենի մեր Երկիրը, մեր Սուրբ Եկեղեցին եւ լուսոյ խորան Սուրբ Էջմիածինը:

Բարձր գնահատելով Ձեր մատուցած ծառայութիւնները մեր Եկեղեցուն ու հաւատաւոր ժողովրդին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ենք հայցում Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին եւ մաղթում նորանոր յաջողութիւններ Ձեր եկեղեցաշէն ու ազգօգուտ գործերին:

Թող ընտանեկան Ձեր յարկը շնորհընկալը լինի երկնապարգեւ շնորհների եւ Բարձրեալի առատ ողորմութեան:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 22-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2006 եւ ի թուին հայոց ՌՆԾԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 358

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով սեպտեմբեր ամսին

«Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրվել է.
Դենիս Փափազյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել է.
Գեղամ Չոլաքյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

Օրհնության գիր է տրվել.
Ֆրունզիկ Գրիգորյան (Կոտայքի թեմ)
Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ծխական համայնքին (Իրաքի հայոց թեմ)

«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՊԵՏՐՈՍ ԵՎ ԱՆՆԱ ՕՐՈՒՆՋԱՔՃԻԵԼՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 3-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշան հանձնեց տեր և տիկին Պետրոս և Աննա Օրունջաքճիելներին՝ բարձր գնահատելով հավատավոր իրենց ոգու, ազգանվեր ու եկեղեցաշեն արդյունավոր ծառայությունների համար:

Շքանշանի հանձնման արարողությունը բացվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի խոսքով: «...Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը եկեղեցիների մայրն է: Այստեղ է, որ Ս. Գրիգոր Լուսավորիչը գեղեցիկ տեսիլքն ունեցավ: Աստվածորդին այստեղ է, որ իջավ և հիմնեց «Եկայք շինեսցուք Սուրբ զԽորանն լուսոյ»: Լույսի խորանն այստեղ հիմնվեց: Եվ մենք տեսնում ենք, որ մեր ազգի զավակները 20 դար անց նույն նախանձախնդրությամբ գալիս են իրենց նպաստը բերելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, որպեսզի Հայոց Հայրապետությունը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը միշտ շեն և պայծառ մնան»,- նշեց Սրբազան Հայրը՝ մեծազնիվ բարերարներին բարի գալուստ մաղթելով Սուրբ Էջմիածին:

Մայր Աթոռի միաբան սարկավագների կողմից «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո ներս բերվեց Հայրապետական Սրբատառ Կոնդակը և ընթերցվեց Արմավիրի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանի կողմից (տե՛ս էջ 27):

Ապա Նորին Սրբությունը բարեպաշտ ամոլին հանձնեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձր շքանշանը՝ ի գնահատություն ազգային-եկեղեցական կյանքում իրենց բազում իրագործումների:

Մեծարյալ ամուսիններին շնորհավորանքի խոսք ուղղեց նաև Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգսյանը՝ ասելով. «Բարերարությունը դրամի հետ կապված բան չէ. այլ սրտի, հավատքի, ժողովրդի բարձր թռիչքների, երազների իրականացման նկատմամբ ապրումների»:

Արարողության ավարտին իր օրհնության ու գնահատանաց պատգամը ներկաներին փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը: *«...Մեր ազգի ապագան կերտողները Մեր նվիրյալ զավակներն են, ձեզ պես զավակները, որոնք գիտեն իրենց վաստակը, աշխատանքը, իրենց տաղանդը, ձիրքը, շնորհը ընծայաբերել ազգին, նվիրել Հայրենիքին, ժողովրդին և փառավոր դարձնել Հայրենիքի անունը, ժողովրդի անունը:*

...Ես ուրախ եմ անչափ, որովհետև արժանավոր զավակներն եք մեր Եկեղեցու, իրապես Ավետարանի ոգով ձեր անձը կրթած զավակներ, որ չգիտեք տարփողել ձեր կատարած աշխատանքը: Ջերմ է, հեռու է ձեզանից ցուցադրականությունը, համեստորեն, խոնարհ կերպով կատարում եք այն, ինչ որ ցանկանում եք անել՝ որպես հոգու պահանջ ազգի, Հայրենիքի և Մայր Եկեղեցու համար»,-ասաց Վեհափառ Հայրապետն իր խոսքում՝ մաղթելով, որ Տերը օրհնի իրենց կյանքը երկնատուր բարիքներով և գործոց հարանորոգ հաջողություններով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑԻՆ ԼԵՎՈՆ ԵՎ ԲԵԼԼԱ ԱՀԱՐՈՆՅԱՆՆԵՐԸ

Սեպտեմբերի 23-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ Հայ Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» բարձրագույն շքանշանով պարգևատրվեցին թեհրանաբնակ բարերարներ տեր և տիկին Լևոն և Բելլա Ահարոնյանները՝ իրենց բարեսիրական բազմամյա արդյունաշատ ծառայությունների համար:

Հանդիսությանը բացման խոսք ասաց Արժանապատիվ Տ. Պարույր քահանա Ավետիսյանը: Այնուհետև «Էջ միածինն ի Հօրէ» շարականի հնչյունների ներքո Վեհարանի դահլիճ բերվեց Վեհափառ Հայրապետի Սրբատառ Կոնդակը, որն ընթերցեց Մայր Աթոռի դիվանապետ Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: Կոնդակում ասվում է. *«Առ Աստված հավատով և առ հարազատ ժողովուրդը որդիական սիրով Դուք տարիներ շարունակ բարի ավանդ եք բերում մեր Հայրենիքի բարգավաճմանը, մասնավորաբար՝ մեր երկրում կրթական գործի արդյունավորմանը: Ձեր ազնիվ հովանավորության շնորհիվ Հայաստանի տարբեր բնակավայրերում հազարավոր հայորդիներ կրթություն են ստանում բարեկարգված դպրոցներում: Այս բարի իրագործումների արգասիքները Ձեզ իրավամբ արժանացրել են հայրենաբնակ բազմաթիվ հայորդյաց անկեղծ սիրուն ու երախտագիտությանը, որի վկայությունն է նաև ի պատիվ ազգանվեր հայորդուդ դպրոցի՝ Ձեր անունով վերակոչումը»* (Տե՛ս էջ 29)

Կոնդակի ընթերցումից հետո Նորին Սրբությունը երախտաշատ ամոլի կրծքին ամրացրեց շքանշանը:

Տիար Ահարոնյանն երախտագիտություն հայտնելով Ամենայն Հայոց Հայրապետին՝ իրեն նման բարձր պատվի արժանացնելու համար, նշեց. «Մեր ազգի գոյատևումը երեք արժեքների հետ է կապված. մեր հավատը, մեր մշակույթը և մեր լեզուն: Իմ համոզմամբ՝ ամեն մի հայ պետք է աջակցի, որ այս երեք հիմնասյուները ուժեղ և ամուր լինեն»:

Հանդիսությունը եզրափակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի գնահատանքի խոսքով՝ ուղղված Լևոն և Բելլա Ահարոնյաններին: Նորին Սրբությունը, բարձրորեն գնահատելով նրանց գործունեությունը, ի մասնավորի ասաց. *«Աստծո ողորմությունն ու շնորհը քեզ հետ պետք է լինի, որպեսզի կարողանաս բարեգործ լինելու բարձր անունը, այդ բարձր պատիվը և այդ բարձր շնորհը ստանալ Աստծուց և քեզ շրջապատող անձանցից: Այսօր տեր և տիկին Լևոն և Բելլա Ահարոնյանները ազգային բարերարներ են՝ ըստ արժանվույն»*:

Հանդիսության ընթացքում գեղարվեստական կատարումներով հանդես եկան «Նոր անուններ» մանկապատանեկան համույթի տաղանդաշատ սաները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը նոր ուսումնական տարվա առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածնից շնորհավորական ուղերձ է հղել աշակերտներին, ուսանողներին, մանկավարժներին և կրթության ասպարեզի բոլոր գործիչներին:

«*Սիրելի աշակերտներ, ուսանողներ, մանկավարժներ և կրթության ասպարեզի գործիչներ,*

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում և շնորհավորում ենք ձեզ նոր ուսումնական տարվա առիթով և հղում ենք բոլորիդ Հայրապետական Մեր օրհնությունը: Մաղթում ենք, որ նոր ուսումնական տարին բեղուն ու արգասավոր լինի յուրաքանչյուրիդ համար: Ուսման ու կրթության մեջ ձեռքբերումները լավագույն հաղթանակներն են մեր երկրի ու ժողովրդի ճանապարհին դեպի բարգավաճ ու բարօր կյանք, դեպի մեր բոլոր իղձերի իրականացում:

Աղոթքով առ Աստված հայցում ենք, որ Փրկիչ մեր Տերը պահպանի ձեզ քաջառողջ, զորացնի հոգու և մտքի բազում շնորհներով և օրհնի ուսանելու և ուսուցանելու ձեր անձնվեր ջանքերը, ձեր բոլոր նախաձեռնություններն ու բարի գործերը:

Թող սերն ու շնորհն Աստծո միշտ լինեն ձեզ հետ՝ առաջնորդող ու զորացնող: Ամեն»,- ասվում է Հայրապետական պատգամում:

ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՈՆԻՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(17 սեպտեմբերի 2006 թ.)

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, Հայաստանի անկախության 15-ամյակի և Հայրենիք-Սփյուռք համաժողովին մասնակցելու համար Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրավերով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին են ժամանել Մեծի Տանն Կիլիկիո Հայրապետ Տ. Տ. Արամ Առաջին Կաթողիկոսը իր շքախմբով, ինչպես նաև Ս. Էջմիածնի տարբեր թեմերի առաջնորդ Սրբազան Հայրերը: Հանուն Վեհափառ Հայրապետի ողջունենք նրանց բոլորին:

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

«Փայտ կենաց, որ փոխանակ մահացու պտղոյն զՔրիստոս պտղաբերեցեր»:

(Շարական)

Ով կենաց փայտ, Սուրբ Խաչին ուղղված է խոսքը, փոխանակ մահ սփռելու՝ պտուղ տվեցիր, մեր Տեր Հիսուս Քրիստոս:

Սրբազան շարականագիրը այսպես խորիմաստ կերպով խաչափայտի պտուղ անվանում է Քրիստոսին, Ով Իր անմեղ արյունը թափեց Գողգոթայի բարձունքում հանուն մարդկության մեղքի, մարդկության անցյալի, ներկայի և գալիքի մեղքը խաչափայտի վրա սրբեց, մաքրեց նրանց և դարձրեց Աստուծո որդեգիրներ: Հին աշխարհը խաչից սարսափում էր, վախենում էր, որովհետև խաչը մահվան գործիք էր Բյուզանդական, Հռոմեական և Պարսկական կայսրությանց բովանդակ տարածքում: Բոլոր մեղավորները սարսափում էին Խաչի նշանից: Հին աշխարհում, տեսեք, Ադամն ու Եվան ճաշակեցին բարի և չարի գիտության ծառի պտուղից և մեղքի մեջ ընկան, իսկ Նոյը տապանը կառուցեց փայտով և իր ընտանիքն ու կենդանական սերունդները ազատեց ոչնչացումից: Մովսեսը գավազանը բարձրացրեց Սինայի անապատի մեջ, երբ իր ժողովուրդը մեղանչական էր, և նրանց փրկեց մահվանից՝ այդ փայտի վրա պղնձյա օձի նշանը ցույց տալով: Նաև Մովսեսը Կարմիր ծովը ճեղքեց փայտի իր ցուպի հպումովը ծովի ալիքներին: Քրիստոսի խաչափայտով, սակայն, խաչը պատժի գործիքից դարձավ հաղթանակի նշան:

Խաչվերացի տոնը կապված է պատմական հետևյալ իրողության հետ: 613 թվականին Պարսից Խոսրով թագավորը արշավեց Բյուզանդիո վրա: Բյուզանդիան չկարողանալով ծունկի բերել՝ նա արշավեց դեպի Երուսաղեմ, որն ավերելուց բացի Քրիստոսի խաչափայտը, որ մնացել էր մինչև այդ ժամանակները, գերեվարեց ու տարավ Տիզբոն: Հերակլ կայսրը 15 տարի անց միայն կարողացավ գերեվարությունից ետ դարձնել խաչափայտը: Ինչպես վկայում է պատմությունը, Մժեժ Գնունի իշխանը իր զորաբանակով մասնակցեցավ Հերակլի արշավանքին դեպ Պարսկաստան, և խաչափայտը նաև Հայաստան աշխարհից անցուցին և մի բարձունքի վրա զետեղեցին, որպեսզի մեր ժողովուրդը այնտեղ երկրպագություն կատարե խաչափայտին:

Ի՞նչ է խաչափայտի խորհուրդը, սիրելի հավատացյալներ.

Մենք այսօր պաշտում ենք խաչը: Շատեր ասում են՝ խաչը խաչելության չարչարանքի նշան է և կարիք չկա պաշտելու: Սակայն Հայաստանյայց Եկեղեցին և Առաքելական մյուս բոլոր Եկեղեցիները խաչը պաշտում են, խաչը իրենց եկեղեցիների ճակտին զետեղում են, խաչը մենք կրում ենք մեր կրծքի վրա, խաչով սկսում ենք մեր առօրյան, խաչով մեր աչքերը ուղղում ենք հավիտենական կյանքի մեկնման պահին:

Խաչը այսպիսով դառնում է ոչ միայն մեղքի քավության միջոց, այլ նաև հաղթանակի: Սատանան սարսափում է խաչի նշանից, սատանան ամեն անգամ, որ մոտենում է որևէ հավատացյալի կամ անհատի, խաչի նշանով կարող եք վանել սատանայի զորությունը և գայթակղությունը ձեր միջից: Խաչը զորության նշան է մեզ համար, որովհետև խաչով մենք կարողացանք ապրիլ մեր ամբողջ պատմության ընթացքին: Խաչն է, որ Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքում Հիսուս երկնքից իջեցրեց այս սուրբ վայրը: Խաչով է, որ մեր ժողովուրդը մկրտվեցավ, հաղորդվեցավ և արժանի դարձավ փրկության: Խաչով է, որ կնքվում ենք մկրտության ավազանի մեջ, խաչով է, որ հաղորդվում ենք մեր Սուրբ Սեղանների հաղորդությամբ Քրիստոսի արյամբ և մարմինով: Խաչով է, որ մեր աչքերը փակում ենք դեպի հավիտենական կյանք:

Ի՞նչ է խաչի խորհուրդը. երկնքից ուղղահայաց իջած Աստծո շնորհքը և մարդկության ամբողջ պատմության ընթացքին փնտրտուքը գտնելու համար Աստուծո խորհուրդը մեր կյանքի ընթացքին: Հորիզոնական և ուղղահայաց երկու գծերու հատման կետը կազմում է ահավասիկ խաչի խորհուրդը, և այդ խորհուրդն է, որ մեզ կյանք է պարգևում և այդ խորհուրդի իրագործման միջոցով է, որ հայ ժողովուրդը կարողացավ իր բազմադարյան պատմության ընթացքին բոլոր տեսակի դժվարությունները հաղթահարել և այսօրվա ազատ և անկախ Հայաստանին հասնել: Հատկապես խաչի խորհուրդն է, որ առանց արյան հեղումի հեղաբեկեց մեր կյանքը, խորհրդային իշխանությունը փլուզեց, և կարողացանք այդ խաչի խորհուրդով ազատությունը, անկախությունը վերահաստատել Հայաստան աշխարհի:

Մենք այսօր շատ ուրախ ենք, որ Հայաստանի անկախության 15-ամյակի առիթով այստեղ՝ Մայր Աթոռ, Վեհափառ Հայրապետի հրավերով եկել է Մեծի Տանն Կիլիկիո Արամ Առաջին Կաթողիկոսը: Տեսեք երկնքեն իջնող շողը: Երկու Հայրապետությունները այսօր Խաչվերացի տոնի առիթով խաչի նշանն են կազմում՝ հաշտության սիրո գործակցությամբ և իրար նեցուկ կանգնելով:

Սիրելի հավատացյալներ, թող ազատագրված խաչը ազատագրության նշան լինի նաև բոլորիս, որ մեր կյանքի օրերը բարվոք դառնան, երջանիկ դառնան, մեր Հայրենիքը երկար-երկար տարիներ ապրի խաղաղության, ազատության շունչի տակ: Թող մեր Եկեղեցին միասնական լինի, և երկու Հայրապետները ձեռք ձեռքի տված, մեր բոլոր միաբանները ձեռք ձեռքի տված կարողանան իրագործել իրենց բոլոր ծրագրերը ի շինություն և ի պայծառություն հայ ժողովրդի, Հայաստան աշխարհի և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու: Ամեն:

Տ. ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՇԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(24 սեպտեմբերի 2006 թ.)

Սիրելի հավատացյալներ.

Այսօրվան Ավետարանական ընթերցումը կխոսի ամուսնության մասին (Մարկոս Ժ 1-12)։ Կարգ մը մարդիկ կու գան Հիսուսին և կհարցնեն ամուսնության և ամուսնալուծության մասին։ Խնդիր մը, որ միշտ օրակարգի վրա է և երբեք չէ հինցած։ Մարդու արարչութենեն ի վեր, Եդեմի հաճելի դրախտեն ի վեր, մարդուն հիմնական խնդիրը միշտ եղել է ամուսնությունը, և մենք էլ այսօր մի քիչ պիտի խոսինք այս խորհրդավոր և շատ հաճախ առեղծվածային հարաբերության վրա։

Երբ Տեր Հիսուսին կհարցնեն ամուսնալուծության կարելիության մասին, ան կպատասխանե՝ ըսելով, որ ամուսնալուծությունը կարելի է ըստ սուրբ գրությանց՝ որոշ պայմաններու ներքև, թեկուզ ասիկա Աստուծո կատարյալ կամքը չէ։ Ամուսնալուծության արտոնությունը տրված է մարդկանց, որովհետև անոնք կատարյալը չեն կրնար իրագործել. «Ձեր խստասրտության համար արտոնված է ձեզի ամուսնալուծությունը»։ Սակայն Աստված այսպես չտնօրինեց սկիզբեն, չծրագրեց ամուսնալուծությունը։ Աստուծո կողմե նախատեսված ամուսնությունը շատ տարբեր էր այն ամուսնություններեն, որ կտեսնենք մեր շուրջ։ Աստված ուզեց, որ այր և կին միանան և ցկյանս միասին ապրելով երջանիկ ըլլան, և մինչև որ մահը բաժնե՝ չբաժնվին իրարմե։ Ասիկա իդեալ է։

Ամուսնությունը, սիրելիներ, կյանքի ամենեն կարևոր երրորդ դեպքն է։ Ծնունդը, մահը և մեջտեղը կկենա ամուսնությունը։ Ծնունդեն սկսյալ մենք կպատրաստվինք ամուսնության, մեր ամբողջ միտքը կլեցնե ամուսնության գաղափարը. թե որո՞ւն հետ պիտի ամուսնանանք, ո՞ւր պիտի ըլլա մեր հանդիպումը մեր կյանքի ընկերի հետ, հարո՞ւստ պիտի ըլլա մեր կողակիցը, թե՝ աղքատ, ո՞ր եկեղեցիին մեջ պիտի պսակվինք, ինչպիսի՞ տուն մը պիտի լինի մերինը։ Եվ ի վերջո, կամուսնանանք. զավակներ, թոռնիկներ, մեր ամբողջ կյանքը կլեցնե ցմահ։

Ուրեմն այնքան կարևոր է ամուսնությունը, որ Աստված այս հաստատությանը վստահեց կյանքի շարունակությունը։ Նայեցեք, այսօր մենք բոլորս, որ կապրինք, կշնչենք և կաշխատինք այս աշխարհում, ընտանիքե մը եկեր ենք։ Բայց քաջ գիտենք, որ կյանքը մինչև մեզի հասնի Ադամ և Եվայեն՝ քանի՜-քանի ընտանիքներ կազմվեցան, քանի՜ հարյուր սերունդներ շարունակ մարդիկ ամուսնացան, հազար ու մեկ դժվարություններուն տոկացին, սերունդ ձգեցին, և մենք այսօր այս գեղեցիկ կյանքը կվայելենք։

Ամուսնությունը շատ էական ու կենսական է, մեր ամբողջ կյանքը կհետաքրքրե։ Եվ Աստված դրախտային հաճույք մը ըլլալով ծրագրեց մարդկանց ամուսնությունը։ Աստված ինչ որ իբր պարտականություն տվեր է մարդուն՝ միշտ հաճույք մըն ալ փակցուցեր է անոր վրա։ Ուտել մեր պարտականություն է իհարկե, եթե չուտենք՝ կմեռնինք, բայց լավագույն հաճույքներեն մեկը չէ՞ արդյոք ուտելը. խմելը նույնպես, շնչելը նույնպես։ Իհարկե ամուսնությունը պարտականություն է զավակներ հասցնելու և ցեղը շարունակելու

համար: Սակայն Աստված նոյնպես ուզեց, որ դրախտային ըլլա ատիկա, ճոխ սեղանին պես ըլլա՝ ուրախ, երջանիկ:

Այսպես աղվոր բան մը այսօր ինչո՞ւ այսպես դժվար է, ինչո՞ւ այսքան բարդ է, ինչո՞ւ այսպես խնդիրներով և փուշերով լեցուն է: Առակի մը ըսածին պես. «Քիչ մը մեռնիլ է ամուսնությունը, կա՛մ դժոխք կերթաս, կա՛մ արքայություն»: Բայց ընդհանրապես ամուսնությունները խառնույթն են երկուքի. երբեմն դժոխք, երբեմն դրախտ, և հաճախ՝ քավարան:

□□□□□□□□□□□□□□□□□□□□□□□□□□

Սուրբ Գիրքը և կյանքի փորձառությունը կսորվեցնեն մեզի, որ ամուսնության հետ կապված խնդիրները և տագնապները կարելի է բացատրել երկու ձևով. մեկը աստվածաբանական է, իսկ մյուսը՝ կենցաղավարական:

Աստվածաբանական բացատրությունը այն է, որ երբ որ մարդը մեղանչեց Աստուծո դեմ և ինկավ շնորհքեն՝ պատիժը անխուսափելի էր: Բնության օրենքներուն և ողջամտության ցուցմունքներուն հակառակելով մարդիկ նաև սկսան իրարու պատժել՝ մշակելով սխալ հարաբերության սկզբունքներ: Կարելի չէ, որ մենք հաճախ հակառակինք Աստուծո օրենքներուն և երջանիկ ըլլանք, կարելի բան չէ ատիկա: Եվ մեր մեղավոր բնութենեն բխած չարն է ահա, որ կարգիլե մեզ, որպեսզի մենք թե՛ մարդկային հարաբերություններու մեջ և թե՛ ամուսնության մեջ երջանիկ ըլլանք կատարելապես: Սուրբ Գիրքը հստակ ձևով կընդգծե, սիրելիներ. «Եթե տունը Աստված չշինե, շինարարները իզուր, պարապ տեղը կաշխատին»:

Ամուսնություն մը, ահա, հազարավոր խոստումներով և երազանքով հիմնված՝ կքանդվի, փուլ կու գա, անհուն վերքեր և տառապանք թողնելով իր ետին: Ինչո՞ւ: Պատասխանը մի շարք աստվածաբանական պարզ հարցումներով տանք: Արդյո՞ք փուլ եկած տունը Աստուծո կողմեն շինված է, Աստվա՞ծն էր, որ միացուցած էր զույգը, աղոթք կա՞ր այդ տան մեջ, Սուրբ Գիրքը կկարդացվե՞ր, եկեղեցի կհաճախեի՞ն զույգերը և միասին Աստված կդիտեի՞ն հավատքով, Աստուծո երկյուղը և վախը կա՞ր այդ տան մեջ, և մարդիկ սորվա՞ծ են միասնաբար երկինք նայիլ:

Իմ հոգևորական կյանքիս ամենեն ցնցիչ դեպքերեն մեկը սա էր, պատմեմ ձեզի: Տարեց հայր մը եկավ ինձի ալեհեր, կուլար տխրագին:

«Հայր սուրբ,- կըսեր,- տղաս ինձի հայհոյեց. ինչպե՞ս կրնա ըլլալ, ես ինչ պակաս ըրի, ամեն ինչ ըրի իմ տղուս համար, ինչպե՞ս կրնա, որ ինձ՝ իր հոր հայհոյել»: Ես ըսի, որ երեխան կանչե, անգամ մըն ալ ես իր հետը խոսիմ:

«Քանի՞ տարեկան է», հարցուցի. ըսավ՝ «քսանչորս»:

«Քսանչո՞րս, շատ ուշ է,- ըսի: -Չորս տարեկանին պիտի բերեիր եկեղեցի, ութ տարեկանին. որպեսզի եկեղեցական մթնոլորտը իր նկարագրին վրա բարի ազդեցություն գործեր»:

«Բայց,- ըսավ,- ամեն ինչ տվի ես իրեն. լավագույն դպրոցներ կարդացուցի, գրպանում միշտ դրամ կար, մաքուր էին հագուստները և ճաշը՝ առատ, ուտելիքը, խմելիքը՝ ընտիր. լավագույնս տվի անոր»: Ես ըսի, որ ամենեն կարևորը մոռցեր ես՝ «Աղոթել չես սորվեցրեր»:

«Մարդն ինչո՞ւ համար այս աշխարհի մեջ կապրի, սորվեցուցի՞ր տղայիդ, աղոթեցի՞ր անոր հետ գիշեր մը իսկ միասին, բռնեցի՞ր ձեռքեն և եկեղեցի բերի՞ր, շապիկ հագա՞վ,

ստիպեցի՞ր, որ Աստծու հետ լինի քիչ մը, հավիտենական կյանքը մտածե, մարդու արժեք, մարդկային սեր սորվի՝ շփվելով բարի նկարագիր ունեցող մարդկանց հետ»:

Գլուխը շարժեց. բացասական էին բոլոր հարցումներուս պատասխանները: Իսկ ես որպես հոգևորական շատ չէի կրնար օգնել այդ քսանչորս տարեկան անառակ որդիին, որպեսզի իր հորը ետ դառնար հրաշանման ապաշխարությամբ՝ սթափելով իր սխալմունքեն: Անկարելի չեն իհարկե այսպիսի հրաշքները, սակայն խիստ հազվադեպ:

Ուրեմն շատ-շատ ամուսնություններ կձախողին այսօր, որովհետև հավատքի տարրը կպակսի անոնց հիմքերում: Այս պատճառով տարեց և ավագ սերունդին մեջ ավելի քիչ ամուսնալուծություններուն կհանդիպինք մենք, որովհետև անցյալին ավելի հավատացյալ և հավատարիմ էին մեր նախնիները, մեր մամիկները և պապիկները: Հետևաբար ավելի հաստատուն ընտանիքներ կկազմեին: Որովհետև ամուսնանալը դյուրին գործ չէ, միայն զգացումներով չենք կրնար ամուսնանալ, կամքի ուժով երբեմն մինչև որոշ տեղ մը կրնաք տանիլ այդ ամուսնությունը, հետո նեղությունները անտանելի կդառնան. ահա հոն Աստված է պետք՝ մեզ օգնության հասնելիք. հոն աղոթք է պետք, որպեսզի ամուսնությունը փրկվի նավաբեկութենե:

Ամուսնություններու մեծագույն խնդիրը նաև **կենցաղավարական** է, այսինքն՝ մարդիկ ամուսնանալ չեն գիտեր պարզապես: Նայեցեք մեր կրթության դրության. ամեն ի՛նչ կսորվին մեր մանուկները. միջատները, բջիջները, աստղերը, հողը, ջուրը, 113 էլէմենտները, բայց չեն գիտեր, թե ինչպես պիտի ամուսնանան, երբ ժամանակը գա: Բախտի ձգված է հարցը բոլորովին: Երիտասարդներ կկարծեն, թե շատ պարզ է հարցը: Բնությունը կկարգադրե ամեն ինչ և կհարթե բոլոր դժվարությունները: Հաճույք կառնես մեկու մը հետ ըլլալե, կսիրես զայն ջերմ զգացումով, սեռային ձգողություն կզգաս անոր հանդեպ և կամուսնանաս իրեն հետ, ամեն ինչ լավ կլինի: Բայց հետո հայտնի կդառնա, որ այդքան պարզ չէ մեկու մը հետ ամբողջ մի կյանք միասին ապրիլ և հաջողիլ երջանիկ ըլլալ:

Սիրելիներ, ամուսնության մեծագույն խնդիրը, փիլիսոփան՝ Հերակլիտի մեկ հռչակավոր խոսքի լույսին ներքև ավելի լավ կհասկնանք. «Ամեն ինչ կհոսի,- կըսե փիլիսոփան,- մարդը նույն գետի մեջ երկու անգամ չի կրնար լվացվիլ»: Հետևաբար այն հարսը և այն փեսան, որ կամուսնանան, վաղը պիտի չգտնեն իրար նույն դրությամբ. պիտի ծերանան, կնճիռներ պիտի առաջ գան իրենց ճակտին վրա, պիտի գերնան, մազերը պիտի թափվին, բերաննին պիտի հոտի, պիտի հիվանդանան. որովհետև կյանքը հաճախ կփոխվի. «Ամեն ինչ կհոսի»: Այս շարժումը այնպիսի առաջընթաց մըն է, որ վաղը նույն անհատը, որուն հետ ամուսնացեր եք, չեք գտներ ձեր դիմացը: Սուրբ Գիրքը մարդը ծաղիկի կնմանցնե. հետևաբար մարդն ալ ծաղիկի մը նման օր ըստ օրե կթառամի, և երիտասարդությունը կթռչի-կերթա անհետադարձ գնացքով մը տխրագին:

Անոր համար եկեղեցին ավելի իմաստուն է, քան թե քաղաքապետարանը, երբ կպսակեն զույգերը: Եկեղեցին ուխտ ընել կուտա ամուսնացյալ զույգերուն, շեշտելով այն ճշմարտությունը, որ ամուսնության օրվան պես գեղեցիկ պիտի չըլլան միշտ, այդ օրվան պես առողջ պիտի չըլլան, այդ օրվան պես հարուստ պիտի չըլլան: Այնուամենայնիվ, պիտի կրեք դուք իրարու բոլոր դժվարակիր պարագաներում, մինչև մահը բաժնե ձեզ իրարմե: Քահանան հարց կուտա երկուքին ալ նույն լրջությամբ. «Կողակիցդ սիրելու, հնազանդելու, հավատարիմ ըլլալու խոսք կուտա՞ս: Հասկցա՞ծ եք դուք, թե ի՞նչ է ամուսնությունը»:

Խաղալիք չէ Աստուծո առջև ցկյանս ամուսնության խոստումը կատարել: Ամուսնալուծություն, այո՛, որոշ անբաղձալի պարագաներու ներքև կարելի է, բայց ես չտեսա ոչ մեկ ամուսնալուծված անձ, որ մնայուն վերք մը չկրե իր սրտին մեջ: Անոր համար ձեր երիտասարդները լավ խրատեցեք: Ընդհանրապես խոսք կապին և նշանտուքի շրջանին, ապագա ամուսնության բոլոր խնդիրները կհայտնվին ու կերևին: Բայց զույգերը կըսեն, որ «ես կրնամ փոխել իմ ամուսինը, եթե ամուսնանանք, ես ճամփա կդնեմ անիկա»: Ոչ ոք ճամփա չի կրնա դնել արդեն շատոնց հասունցած անձնավորություն մը: Մեկը որ կամուսնանա՝ արդեն իր նկարագրի կառուցումը լմնցած գործ է, ադոր համար ամուսնութենե առաջ պիտի որոշեք, թե արդյո՞ք շիտակ անձի հետ կամուսնանաք:

Գաղտնիք չէ: Աղջիկները դրամ ունեցող մարդ կփնտրեն, տղաներն ալ գեղեցիկ աղջիկի ետևեն են միշտ: Այս է մարդկային բնությունը, ավելի ճիշտ՝ երիտասարդի բնությունը: Դրամ և գեղեցկություն. ահա գլխավոր որոշիչները արդի ամուսնություններու: Ըսեք ձեր երիտասարդներուն, զգուշացուցեք զանոնք, որ իմանան, թե ավելի կարևոր բաներ կան հաստատ, մնայուն և երջանիկ ամուսնություններ կնքելու համար: Օրինակի համար՝ նախ և առաջ մարմնի, մտքի և հոգիի ներդաշնակություն թող փնտրեն և նկարագրի հասունություն: Դո՛ւք, ավագ սերունդ. բաժնեցէք ձեր տարիներու փորձառությունը երիտասարդներու հետ. որովհետև շատ սուղ է և շատ թանկ՝ ամուսնության փորձառությունը ձեռք բերել, երբ երիտասարդ է անձը տակավին, և երբ արյունը խենթորեն կհոսի երակներուն մեջ կույր բնազդներով հրահրված:

□□□□□□□□□□□□□□□□□□□□□□□□□□□□□□□□□□

Ամուսնության մեծագույն խնդիրը լեզվագարությունն է, ըստ ամուսնության մասնագետներուն: Ամուսնությունը կբերե մտերմություն, մտերմությունը կծնի հաճախ արհամարհանք ու անհոգություն դիմացինի զգացումներու նկատմամբ: Զույգերը արտոնելի կգտնեն, որ իրենց զույգին ամեն ինչ կրնան ըսել, ամեն վարկաբեկիչ խոսք և վիրավորական արտահայտություն կրնան դրսևորել, և դիմացինն ալ ստիպված է կրելու այդ բոլոր նվաստացուցիչ վերաբերմունքը: Այդպես չէ սակայն մարդկային հոգեբանությունը: Շատ նուրբ է մարդուն սիրտը, և դժբախտաբար մենք մեր կյանքի մեծագույն վերքերը կկրենք՝ ստացված մեր հարազատներեն: Անոր համար լեզվին պետք է հատուկ ուշադրություն դարձնել:

Մանուկ մը իր հորը կհարցնե. «Հայրիկ,- կըսե,- պատերազմները ինչո՞ւ համար կելլեն»: Հայրը թերթը մի կողմ կդնե, ակնոցները կհանե՝ այս խոշոր հարցումին լուրջ պատասխան մը տալու համար.

«Նայե, տղաս,- կըսե ան,- աշխարհի պետությունների միջև քաղաքատնտեսական ու ստրատեգիկ տեսակ-տեսակ խնդիրներ կան և..», կինը մեջտեղ կցատկե և կսաստե ամուսինին. «Այս փոքր տղան ի՛նչ կհասկնա քաղաքատնտեսական, ստրատեգիկ խնդիրներեն, ինչո՛ւ պարզ բառերով չես բացատրեր: Եկուր, տղաս, ես քեզ կբացատրեմ»:

«Ո՛վ կին,- կբարկանա ամուսինը բղավելով,- դուն միշտ իմ խոսքս կկտրես այսպես, շատախոս արարած»: Եվ կսկսին կռվել իրարու հետ: Մանուկը կաղաղակե զարհուրած. «Կեցցե՛ք, կեցցե՛ք, ես արդեն հասկցա, թե պատերազմները ինչպես կելլեն»:

Պատերազմները ամուսնության մեջ շատ լուրջ հետևանքներ կունենան ընտանեկան համերաշխության վրա և կարգիլեն, որ հոգեբանորեն առողջ սերունդներ հասնին ընտանեկան մեր հարկերեն ներս: Ամուսնության մասնագետները տեսեր են, որ այն ամուսնությունները, որոնք խորը խնդիրներ կապրին, զույգերը այլևս շատ պարզ բաները չեն

կրնար խոսիլ. իրարու չեն կրնար ըսել, հատկապես երեք պարզ նախադասություններ: Եթե այս խոսքերը կարողանան ըսել՝ իրենց ամուսնությունը կրնա փրկվիլ: Այդ խոսքերեն մեկն է՝ «Կսիրեմ քեզ»: Որքան գեղեցիկ բառ է ատիկա, ամենքս լսել կուզենք հաճախ և չենք կշտանար կրկին ու կրկին լսելով: Սակայն անցնող տարիներ կարծես թե մոռցնել կուտա ամուսիններուն այս կախարդական խոսքի գործածությունը և կմտածեն անտարբերությամբ. «Արդեն ան գիտե, թե ես կսիրեմ, ի՞նչ պետք կա կրկնելու. քսան տարի առաջ ըսեր էի. սին ձևակերպություններու կարիք չկա»:

Սակայն կարիք կա, խիստ կարիք կա: Չէ որ մենք չենք ձանձրանար երբեք մեր սիրած երաժշտությունը լսելե կրկին ու կրկին, նույնպես նաև երբեք չենք ձանձրանար ու կշտանար, որ ուրիշները, հատկապես մեր հարազատները մեզի ըսեն, թե կսիրեն մեզ: Ըսեն ա՛յդ, անկեղծ ժպիտով մը և փունջ մը ծաղիկով՝ սիրալիր:

Երկրորդ խոսքը, որ չեն կրնար ըսել՝ «կհասկնամ քեզի», «քու տեսակետը կհասկնամ»: Երրորդն ալ ասոր նման՝ «ներողություն, սխալած կրնամ ըլլալ»: Եթե այս խոսքերը կարողանան ըսել զույգերը իրարու, թերևս պիտի փրկվին փլուզումեն շատ մը ամուսնություններ: Ասոնք իմաստության անգին ադամանդներ են, որ եթե կիրարկվին անկեղծորեն կյանքի մեջ՝ հարուստ կդարձնեն շատերը:

Այս շաբաթ Հայաստան-Սփյուռք համաժողովը տեղի ունեցավ և զուգահեռաբար մեր հանրապետության անկախության տասնհինգամյակը տոնեցինք: Շատ կարևոր շաբաթ մըն էր մեր բոլորի համար. անցյալին նայեցանք, ապագային նայեցանք, մեր այսօրը արժեվորեցինք և տեսանք բերկրանքով, որ շատ ճամփա կտրեր է մեր ազգը, ուր տեղեն ուր հասեր ենք, ինչ փոթորիկներ, ինչ չարություններ, ինչ հալածանքներ դիմագրավեր ենք. ինչ բարձունքներ մագլցեր և ինչ վիհերեն անցեր ենք, և մեր ազգը քանի-քանի դժոխքներ մարած է իր կյանքի ավիշով: ինչպե՞ս մեր ազգը ձեռք բերեց այս հսկա հաջողությունը:

65 միլիոն տարի առաջ անջրպետեն աստղաքար մը երկիր ինկավ: Անկումը այնքան ուժեղ էր, որ փոշին լեցուց ամբողջ մթնոլորտը, և աշխարհը սառուցյալ գոտիի վերածվեցավ. կենդանիները մեծավ մասամբ մեռան. հատկապես այն մեծ հսկա կենդանիները՝ դինազորուսները, որ կիշխեին երկրի վրա, մեռան, չկրցան շարունակել իրենց սերունդը, աշխարհի երեսեն սրբվեցան, կորսվեցան առհավետ: Իսկ մրջյունները կարողացան ապրիլ: Որովհետև անոնք երկու առաքինություն ունեին, որ դինազորուսները չունեին. առաջին՝ նոր պայմաններուն և շրջապատին հարմարիլ, և երկրորդ՝ աճիլ, բազմանալ և սերունդ ձգել:

Մարդկության պատմության վաղեմի դարերուն մեզի հետ գոյություն ունեցող քանի□քանի հզոր ազգեր, ինչ-ինչ կայսրություններ փուլ եկան, այսօր գոյություն չունին, միայն պատմության փոշիոտ էջերուն մեջ կհանդիպինք անոնց. իսկ մենք հոս ենք, մենք կանք: Գաղտնիքը ի՞նչն է մեր գոյատևման: Որովհետև մենք մրջյուններուն նման հարմարեցանք միջավայրին. բոլոր հալածանքներուն, բոլոր դժվարություններուն և մեր գտնված բոլոր պայմաններուն, և երկրորդն ալ՝ մենք կրցանք բազմանալ. աճեցանք, և՛ առողջ աճեցանք՝ հայ ավանդական ընտանիքի կայունության շնորհիվ:

Երբեմն վիճաբանություն կհարուցվի, թե արդյոք հայու համար որն է ամենեն կարևոր հաստատությունը. պետությո՞ւնն է, Եկեղեցի՞ն, դպրո՞ցն է ան, երգն ու պա՞րն է, մամուլն ու գրականությո՞ւն, մայրենի լեզո՞ւն. որ մեկն է ամենեն կարևորը, որուն շնորհիվ մեր գոյությունը կապահովենք: Ոչ մեկը. **ընտանի՛քն** է ամենեն կարևորը, որովհետև պահեր են

եղեր, որ մենք պետություն չենք ունեցեր, տեղեր եղեր են, որ մենք եկեղեցի կամ եկեղեցական չենք ունեցեր, դպրոց ալ չենք ունեցեր, մոռցեր ենք նույնիսկ մեր լեզուն, բայց մինչև որ հայ ընտանիքը մնացեր է, մենք գոյատևեր ենք: Ինչո՞ւ է այսպես. շատ պարզ է պատասխանը. որովհետև ընտանիքն է տարրական պետությունը, ընտանիքն է տարրական եկեղեցին, տարրական դպրոցը և մշակութային օջախը:

Հետևաբար, սիրելիներ,

Եկեք շարունակենք մեր պատմության ընթացքը գուրգուրալով հայ ընտանիքի սրբության վրա, հառաջ դնենք, սատար կանգնենք մեր ընտանիքներուն, որովհետև մեր ազգի գոյատևման գաղտնիքը հոն է. հոն է գաղտնիքը մեր ազգային դիմացկունության, որ մենք կրցանք տոկալ ամեն ինչի և պիտի դիմագրավենք դեռ ինչ□ինչ դժխեմ արհավիրքներ:

Բայց ես ստիպված եմ զգուշացնել ձեզ. եթե ոչ, քարոզս անկատար պիտի մնա: Մեծ վտանգ մը ցցված է ամբողջ մարդկության առջև: Որոշ մութ և չարամիտ կեդրոններ կան, որոնք կուզեն որ ամբողջ աշխարհը դառնա ընդարձակ Հոլիվուդ մը՝ իր ցոփ ու թուլամորթ արժեքներով. արժեքներ, որ մերը չեն. հեթանոս աշխարհի այլասերած հին արժեքները մեր առջև կդնեն որպես նորություն, նորաձևություն և հառաջդիմություն: Բոլոր լկտիությունները, բոլոր ցոփությունները կմատուցվին անփորձ երիտասարդներուն և նորապսակներուն հանուն արդիականության ու կթափանցեն մեր ընտանիքներեն ներս՝ խանգարելով մեր ավանդական հաստատ կառույցները անխնայորեն: Համաճարակ դառնալու սկսած այս նեխած, այլասերած ու փչացած արժեքները և քայքայված բարոյականությունը խորտակեցին Սոդոմ և Գոմորը, խորտակեցին հսկա Հռոմեական կայսրությունը. և եթե չկասեցվի այս չար ընթացքը՝ մեր ներկա քաղաքակրթությունն ալ պիտի կործանե անտարակույս:

Բայց մենք՝ քրիստոնյաներս, մենք՝ քրիստոնյա հայերս, եկեք կառչած մնանք մեր մաքուր, սուրբ և հարազատ արժեքներուն: Անոնք մինչև այժմ մեզ փրկեցին, հիմա ալ պիտի փրկեն. մինչև հիմա երջանիկ դարձուցին մեզ, ասկե հետո ալ երջանիկ պիտի դարձնեն:

Ընտանեկան կյանքը դյուրին չէ: Եկեք՝ Տերունական աղոթքով աղոթենք Աստծուն, որ մեր հանապազօրյա հացը մեզի տա և մեզի փորձութենեն հեռու պահե և չարութենեն փրկե: Սուրբ Պարարագի օրհնությունը անպակաս ըլլա ձեր բոլորին վրա և ձեր ընտանեկան հարկերեն ներս, թող Աստված Իր օրհնությունը, խաղաղությունն ու սերը տեղացնե առատորեն, ամեն:

ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Տ. ԱԴԱՄ ՔԱՀԱՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ

14-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷԿՈՒՄԵՆԻԿ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԵՎ ՀԱ-ՂՈՐԴՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սեպտեմբերի 14-20-ը Իտալիայի Բոսե վանքում տեղի ունեցավ 14-րդ միջազգային էկումենիկ համաժողովը՝ նվիրված Քաղկեդոնական Ուղղափառ Եկեղեցիների Սուրբ Նիկոլաս Կաբասիլասին և Ռուս Ուղղափառ Եկեղեցու քարոզչական առաքելությանը: Համաժողովին մասնակցում էին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու, Ուղղափառ Եկեղեցիների, Անգլիկան Եկեղեցու ներկայացուցիչներ:

Համաժողովի բացմանն ընթերցվեցին Եկեղեցիների պետերի ողջույնի խոսքերը համաժողովի առիթով, այդ թվում և՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի խոսքը, որտեղ Նորին Սրբությունը կարևորում էր Էկումենիկ հավաքների գումարումը և եկեղեցական ժառանգության արժեվորումը արդի աշխարհում ու հավատացյալների կյանքում:

Համաժողովի՝ Նիկոլաս Կաբասիլասին նվիրված կոնֆերանսի ընթացքում զեկուցողները ներկայացրեցին եկեղեցական այս հեղինակի աշխատությունը՝ Սուրբ Պատարագի մեկնությունը, իսկ հաջորդ նիստին՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցու միսիոներական անցյալ և ներկա գործունեությունը Ռուսաստանում և աշխարհի տարբեր երկրներում:

Բավականին հետաքրքիր էին առաջին կոնֆերանսի քննարկումները Հաղորդության խորհրդի և Սրբազան Պատարագի արարողության վերաբերյալ: Քննարկումների ընթացքում կարևոր համարվեցին Եկեղեցիների միջև հաղորդական միության վերականգման ուղղությամբ տարվող ջանքերը, որով հնարավոր պիտի լինի վերահաստատել Քրիստոսի Մեկ, Ընդհանրական, Սուրբ Եկեղեցու միասնությունն ու միասնականությունը:

Սակայն, չնայած նման մտադրություններին ու ցանկություններին, հատկապես քաղկեդոնական և ոչ քաղկեդոնական Եկեղեցիների միջև Հաղորդության միասնության խնդիրը մեր առջև պատկերվում է դեռ երկար գործընթացի, բանակցությունների, աստվածաբանական ու քրիստոսաբանական թեմաներին նվիրված բանավեճերի ու ժողովների իրագործման չափազանց աղոտ լույսի ներքո: Եվ պատճառը, որքան էլ որ այստեղ կրկնություն կամ անհարկի հիշեցում կատարենք, այնուամենայնիվ, մնում է 451 թ. Քաղկեդոնի ժողովը և դրա բանաձևից բխած բոլոր դիրքորոշումները, որոնց մի քանի կետերին և ոչ քաղկեդոնական Եկեղեցիների կողմից դրանց դեմ առաջադրված սկզբունքային դիրքորոշումներին կանդրադառնանք ստորև:

«ԵՒ ԲԱՆՆ ՄԱՐՄԻՆ ԵՂԵՒ»

Հովհաննու Ավետարանի Ա 14-ի բառերը՝ «Ho Logos sarx egeneto» (Եւ Բանն մարմին եղեւ), պարունակում են ավելի շատ քրիստոսաբանություն, քան որևէ այլ չորս բառեր աշխարհում[1]: Եվ Հաղորդության խնդրին վերաբերող մեզ հուզող ամենակարևոր հարցերից

---

[1] "My Lord and my God" (an introduction to Christology), **Munduvel V. George**, M.A., B. D., S. T. M., Orthodox Theological Seminary, Kottayam Kerala, Published by St. Paul's Book Depot, Mavelikara-3, Kerala, India, 1971, p.17.

մեկը առնչվում է հենց Քրիստոսի մարմնին, որի վերաբերյալ կարծիքն է նաև հիմնական խզող պատճառներից մեկը Եկեղեցիների հաղորդական միասնության և այս հարցում փոխադարձ ընդունելիության:

Նախ երկաբնակները Քրիստոսի մարմինն Աստված չեն համարում՝ մարմինն ու դրա անդամները պարզապես կոչելով Քրիստոսի մարմին, ձեռքեր, ոտքեր, և այլն[2]: Սակայն ինչպես մարդու մարմինը խոցվեց, չարչարվեց ասելով նկատի ունենք, թե մարդն ինքը խոցվեց ու չարչարվեց, այդպես էլ այս տրամաբանությամբ և միավորության պատճառով՝ ճշմարիտ իմաստով միաբնակ Եկեղեցիներս Քրիստոսի մարմինը ևս Աստված ենք ասում, հետևաբար՝ և արյունը նույնպես, հակառակ դեպքում Սուրբ Հաղորդության ընթացքում մենք սոսկ մարդու միս և արյուն ճաշակած կլինենք[3]: Եթե ասենք, թե Սուրբ Հաղորդությամբ միայն աստվածայինն ենք ճաշակում, ապա սուտ կլինի, որովհետև աստվածայինն անարյուն է, իսկ եթե ասենք՝ մարդկայինը, ապա այս դեպքում Սուրբ Հաղորդությունը կարող ենք իջեցնել պիղծ մարդակերության մակարդակին, *որովհետև մարդու միս և արյուն ուտելը հատուկ է միայն գազաններին և անաստվածներին*[4]: Սուրբ Կյուրեղը Քրիստոսի մարմնի Աստված լինելն է շեշտում նաև Հովհաննու Թ 37-ի մեջբերումով՝ Քրիստոսի՝ բուժված կույրին ուղղված խոսքերի վկայակոչմամբ. «Ե՛վ տեսար Նրան, և՛ Նա է, Ով խոսում է քեզ հետ»: Մինչդեռ պատմական աստվածաբանության վերաբերյալ քաղկեդոնական հեղինակների գրքում սա բացատրվում է մարմնի մասին ակնարկով կատարյալ մարդկության շեշտման իմաստով[5]:

Սակայն նորկտակարանյան բազմաթիվ հաստատումները, որ Քրիստոս Տերն է, մեզ ուղղակիորեն առաջնորդում են դեպի Քրիստոսի աստվածությունը: Նա Աստված է theos, ոչ թե պարզապես աստվածային theios[6]: Նաև Պողոս առաքյալն է շեշտում, որ «Նրա մեջ է բնակվում աստվածության ամբողջ լիությունը մարմնապես» (Կող. Բ 9): Աստվածությունը հունարենում արտահայտվում է երկու բառերով՝ θεότης և θειότης: Առաջին բառը ծագում է θεος եզրից և օգտագործվում է ցույց տալու համար Աստվածային էությունը, իսկ երկրորդը ծագում է θεi՝ος (աստվածային) ածականից և գործածվում է ցույց տալու համար Աստվածության հատկությունները (ինչպես, օրինակ՝ Հռոմ. Ա 19-20-ում): Եվ առաքյալը ցույց է տալիս, որ մարմնացյալ Քրիստոս ոչ միայն աստվածային է, այլ նաև Աստված է[7]:

Հետևաբար, Քրիստոս, որպես ճշմարիտ Աստված և ճշմարիտ մարդ, ըստ միավորության մարդ լինելով՝ միաժամանակ նաև Աստված է մարմնապես, և Աստծո մարմինը ևս

---

[2] **Ղազար Ճահկեցի**, "Աստուածաբանական դրախտ ցանկալի", վերատպեալ ի տպարանի Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ – 2002, էջ 148: Այս մասին տես նաև՝ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք Հարցմանց, Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1993, էջ 72-73:

[3] **Ղազար Ճահկեցի**, նշվ. աշխ., էջ 149:

[4] Նույն տեղում, էջ 188:

[5] "Théologie Historique", Collection fondée par Jean Daniél ou dirigée par Charles Kannengiesser, 104, Le Christ de Cyrille d'Alexandrie, l'humanité, le salut et la question monophysite par Bernard Meunier, Beauchesne, Paris, Ouvrage publié avec le concurs du Centre National du Louvre, 1997, p. 240-241.

[6] MOWBRAYS LIBRARY OF THEOLOGY, "Jesus the Christ", **H. E. W. Turner**, Sometime Fellow of Lincoln College, Oxford; Canon of Durham; and van Mildert Professor of Divinity in the University of Durham, MOWBRAYS LONDON & OXFORD, 1976, p. 63.

[7] *Աստված* և *աստվածային* եզրերի մասին տե՛ս Толковая Библия или Комментарий на все книги Св. Писания Ветхаго и Новаго Завета, издание преемниковъ А. П. Лопухина, Том десятый, Петербургъ, 1911-1913, ст. 313.

Աստված է մարդկությամբ հանդերձ, ինչպես կենդանի մարդու մարմինը նույնպես մարդն է: Քրիստոսի մասին ասում ենք՝ աստվածությամբ մարդ և աստվածությամբ Աստված և նույն Բանն Աստված Աստվածությամբ Աստված և մարդկությամբ Աստված, որովհետև անբաժանելի է: Նախքան մարդեղությունը Աստված էր, բայց անճառ միավորությունից հետո մարմնով է Աստված[8]: Քրիստոս մարդկությամբ մարդ է և աստվածությամբ Աստված, այսինքն՝ Բանն Աստված նաև մարդ է: Աստված մարդ և մարդը Աստված ***ոչ փոխարկապես, այլ փոխատրաբար*** նայում են մի էության[9]:

Եթե մարմինը նույնպես Աստված չենք համարում, ապա սրանով զրկում ենք նաև Սուրբ Կույսին Աստվածածին լինելու պատվից և միայն մարդածին կամ մարմնածին դարձնում, մինչդեռ Եփեսոսի երրորդ տիեզերական ժողովում հաստատվեց Theotokos (Աստվածածին) եզրը Սուրբ Մարիամի համար: Ակնհայտ է, որ հատկապես այս հարցը իր լուրջ արգելքն է դնում քաղկեդոնականության դեմ, որը ոմանք այսօր էլ փորձում են շրջանցել հետևյալ ոչ հիմնավոր հայտարարությամբ. «Եփեսոսի որոշումով Theotekos եզրը հաստատվեց ոչ որպես բացառիկ իրավունք կամ արտոնություն Սուրբ Մարիամի, այլ որպես բառ, որն արտահայտում է մեր Տիրոջ երկու բնությունների վարդապետությունը»[10]:

Թոմմաս առաքյալը Քրիստոսի մարմինը տեսնելով և շոշափելով՝ Նրան Տեր և Աստված դավանեց (Հովհ. Ի 24): Սուրբ Կյուրեղի նզովքներում նշվում է, որ եթե մեկը Հոր հետ նույն բնությունն ունեցող Բանին, Իր մարմնով հանդերձ, նույն Աստվածը չի դավանում, ապա թող նզովյալ լինի[11]: Մինչ ոմանք ասում են, թե այլ է տեսանելի և շոշափելի բնությունը և այլ է աստվածայինը[12], Ս. Հովհաննես առաքյալը երկուսն էլ միասին է ասում. «Մեր ձեռքերը շոշափեցին Կենաց Բանը» (Ա Հովհ. Ա 18):

«ԱՍՏՈՒԱԾ ՉԱՐՉԱՐԵԱԼ»

Սրբազան Պատարագի մատուցման և Սուրբ Հաղորդությանը մոտենալու ժամանակ չափազանց կարևոր է, թե որպես ում նկատի ունենք Քրիստոսին: Այս կարևորությունը շեշտվում է հատկապես նրանով, որ Պատարագը ներկայացնում է հանուն ողջ մարդկության Քրիստոսի կողմից կրած չարչարանքների և կատարված զոհաբերության խորհուրդն ու հիշեցումը:

Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ուսուցանում է, որ անչարչարելին չարչարելիով չարչարվեց, անմահը մահկանացուով մեռավ[13]: Մենք ընդունում ենք, որ միաժամանակ ճշմարիտ մարդ եղող Քրիստոս Աստված չարչարվեց ու խաչվեց մարդկության փրկության համար: Այս դիրքորոշման դեմ եղել են մեղադրանքներ, թե չի կարե-

---

[8] **Ղազար Ճահկեցի**, նշվ. աշխ., էջ 137:

[9] Նույն տեղում:

[10] "The person of Jesus Christ in the decisions of the ecumenical councils", A historical and doctrinal study with the relevant documents referring to the Christological relations of the Western, Eastern and Oriental Churches, by **Methodios G. Fouyas** Ph. D. (Manchester), Hon. D. D. (Edinburgh) Greek Orthodox Archbishop of Aksum, Central Printing Press, Adsis Ababa, 1976, p. 72.

[11] **Գիրք Թղթոց** էջ 404:

[12] **Ղազար Ճահկեցի**, նշվ. աշխ., էջ 259:

[13] **Ղազար Ճահկեցի**, նշվ. աշխ., էջ 182:

լի ասել՝ Աստված չարչարվեց, և սխալ է «Աստված չարչարեալ» արտահայտությունը: Լևոնականները, որոնք համաձայն չեն մեր Սուրբ Եկեղեցու տեսակետին, ասում են, թե Աստված Բանը անհաղորդ էր չարչարանքներին և «Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս» խոսքերը Քրիստոսի մարդկությունն ասաց Իր աստվածությանը[14]: Սրան նման է նաև Նեստորի ուսմունքը, ըստ որի՝ Քրիստոսի մարդկությունն է չարչարվել, մինչդեռ հակառակ ծայրահեղության է հասել Եվտիքեսի կարծիքը, որի համաձայն՝ Աստված է չարչարվել: Քաղկեդոնականները պնդում են, որ Աստծո Բանը չարչարվեց Իր մարդկության մեջ և ոչ իր աստվածության[15]: Ասում են նաև, թե այդ բառերը Հիսուսի մարդկային բնության ճիչն են[16]: Սակայն հնարավոր չէ, որ միայն մարդը փրկեր ողջ մարդկությունը, քանզի «ունայն է փրկությունը մարդու» (Սաղմ. ԾԹ 13):

Վերոնշյալ տեսակետը նման է Լևոնի տոմարի մեջ հիշվող ուսուցմանը (հրաշքները վերագրվում են աստվածությանը, իսկ կրքերն ու չարչարանքները՝ մարդկությանը), որը, սակայն, չպետք է շփոթել չարչարանքների վերաբերյալ առանձին արտահայտված այս տեսակետի հետ[17]: Ըստ Սուրբ Եփրեմ Ասորու՝ չարչարանքների ժամանակ Քրիստոսի աստվածությունը նահանջեց Քրիստոսի մարդկությունից, բայց ոչ այն աստիճան, որ բաժանվի, այլ այդ նահանջելը դրսևորվում էր նրանով, որ այդ ժամանակ աստվածային հզորությունը չէր արտահայտվում[18]:

Արդյո՞ք պատշաճ է ասել, թե Աստված չարչարվեց կամ Աստված մեռավ, և արդյո՞ք այսպիսով չենք դառնում աստվածաչարչարներ: Պատասխանն այն է, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին չի ասում, թե խաչվեց աստվածային բնությունը, այլ մեր քրիստոսաբանությամբ՝ խաչվեց Հիսուս Քրիստոս, այսինքն՝ Քրիստոս ամբողջությամբ, առանց բաժանումների: «Անչարչարելի աստվածությամբ ասվում է ըստ բնության, իսկ Աստված չարչարյալ՝ ըստ միավորության»[19]: Միավորությունը Ջահկեցին բացատրում է հետևյալ համեմատությամբ: Ինչպես հուրը երկաթի հետ միավորվելով վերացնում է նրանից ցրտությունը և սևությունը, այսպես էլ Քրիստոսի մարմինը, միավորված Աստված Բանի հետ, ունի Բանի կարողությունը և աստվածությունը»[20]: Հետևաբար՝ ոչ թե ըստ բնության, այլ ըստ միավորության, *Աստուած չարչարեալ* արտահայտությունը ճիշտ է: Եվ Սուրբ Պատարագի մատուցման ժամանակ մենք նկատի ունենք Քրիստոսի՝ որպես և՛ Աստծո, և՛ մարդու զոհագործությունը, գիտակցություն, որով բոլորովին այլ է լինում ընկալումը Սուրբ Հաղորդության:

---

[14] Նույն տեղում, էջ 239:

[15] **Munduvel V. George**, նշվ աշխ., էջ 32: Նաև՝ *New Catholic Encyclopedia Vol IV, p. 574 (Mc Graw Hill. N. Y. 1967): (Հոդվածում *-ով կատարված հղումները վերցված են նշվող գրքերի հեղինակների վկայակոչումներից):

[16] "A Commentary on the Holy Bible", by various writers, edited by the Rev. J. R. Dummelow M. A. Queens' college, Cambridge, Complete in one volume with general articles, New York, the Macmillan company, p. 718.

[17] **Munduvel V. George**, նշվ. աշխ., էջ 32:

[18] **Святой Ефремъ Сиринъ**, Творенія, Том 8, Издание Свято-Троицкой Сергиевой Лавры, Издательство "Отчий дом", ст. 316-317.

[19] **Եղնիկ ծ. վարդապետ Պետրոսյան**, դոկտոր աստվածաբանության, "Հայ Եկեղեցու քրիստոսաբանությունը", Ս. Էջմիածին, 1995, էջ 68:

[20] **Ղազար Ճահկեցի**, նշվ. աշխ., էջ 168:

Ե՛Վ ԱՍՏՎԱԾ, Ե՛Վ ՄԱՐԴ

Սուրբ Հաղորդության մատուցման և ստացման արարքում և ընդհանրապես Քրիստոսապաշտության մեջ կարևորվում է ոչ միայն Քրիստոսի չարչարանքների վերաբերյալ ճիշտ պատկերացում ունենալու, այլև սրանից էլ ավելի՝ Քրիստոսի բնության մասին ճիշտ ընկալում ունենալու իրողությունը: Զարմանալի է, որ Սուրբ Կյուրեղի բանաձևը՝ *Մի է բնութիւն Բանին մարմնացելոյ* (Mia physis tou Theou Logou sesarkomene) ընդունվում է որպես ուղղափառ տեսակետ և՛ քաղկեդոնական, և՛ ոչ քաղկեդոնական Եկեղեցիների կողմից[21]: Սակայն այս բանաձևը քաղկեդոնականները բացատրում են բավականին տարօրինակ մեկնաբանություններով:

Քրիստոս մեր մարմինը միացրեց իր աստվածությանը անշփոթ և անխառն միությամբ: Մենք խոստովանում ենք այս միավորությունը՝ մի անձ և մի բնություն, մի դեմք և մի կերպ, մի կամք և մի ներգործություն: Սուրբ Աթանասը Արիոսի դեմ գրում է, որ մի Որդու մեջ երկու բնություն չէ, մեկը երկրպագելի և մյուսն՝ աներկրպագելի, այլ «մի բնութիւն Աստուծոյ Բանին մարմնացելոյ»: Սուրբ Կյուրեղը առ Սեկունդոս թղթում գրում է՝ «Մի ասեմք զՔրիստոս Աստուած մարդացեալ եւ մի զբնութիւն նորա», իսկ Կղոդեոսին ուղղված առաջին թղթում Սուրբ Կյուրեղը վերստին շեշտում է «մի բնութիւն Բանին մարմնացելոյ», ինչպես Հայրերն են ասում, և Հայր է կոչում Աթանասին[22]: Նաև քաղկեդոնականներն իրենք են ընդունում, որ Կյուրեղն իր թղթերում շատ անգամներ գործածել է *մի բնություն* արտահայտությունը: Կաթոլիկ հեղինակներից մեկը նույնիսկ նշում է, թե քանի անգամ է Կյուրեղն օգտագործել *մի բնություն* արտահայտությունը Նեստորին ուղղված երրորդ նամակում: Նեստորին ուղղված Կյուրեղի այս երրորդ նամակում, որը խոսում է բնության մեկության մասին, Կյուրեղը վեց անգամ գործածել է *մի է բնություն* բանաձևը՝ նշելով, որ այն ստացել է Աթանասից: Սակայն 6-րդ դարից ի վեր այս բանաձևի ծագումը համարվում է ապողինարյան խաբեբայություն[23]: Բնական է, որ մի բնության աթանասյան բանաձևի՝ որպես ապողինարյան ներկայացումը պետք է լիներ Քաղկեդոնի ժողովից հետո, հասկանալի է՝ ինչ նպատակներով:

Քաղկեդոնականների համառ պնդումն այն է, որ Սուրբ Կյուրեղը չէր գիտակցում, թե ինչ բառեր է օգտագործում, և պարզապես ասել է ճշմարտությունը՝ միայն թե ոչ ճիշտ բառերով: Դեռ ավելին՝ պնդում են, որ Կյուրեղը օգտագործեց Ապողինարի բանաձևերը, որոնք սխալմամբ համարում էր Աթանասինը[24]: Հետաքրքրական է այս կռահողունակությունը, որով որոշում են, թե դարեր առաջ Եկեղեցու մեծագույն աստվածաբաններից մեկը ինչ է արդյոք իր մտքին ունեցել և կամ մի խոսք ասելիս ինչպես է, որ բոլորովին այլ իմաստ է նկատի առել: Եվ մինչ Կյուրեղին ներկայացնում են որպես անգետ, ով շփոթում էր Եվտիքեսի և Աթանասի ասածները, կամ ասում էր *բնություն*, բայց նկատի ուներ *անձ*, Լևոն Պապին ներկայացնում են որպես բանաձևումների կազմության մեծ վարպետ, ով

---

[21] **Munduvel V. George** նշվ. աշխ., էջ 32:

[22] **Ղազար Ճահկեցի**, նշվ. աշխ., էջ 131-132:

[23] **Bernard Sesboüé** s. j., "Jésus-Christ dans la tradition de l'Eglise", Pour une actualisation de la christologie de Chalcédoine, Collection "Jésus et Jésus Christ" dirigée par Joseph Doré, n⁰ 17, Desclée, 1982, p. 131.

[24] **Methodios G. Fouyas**, նշվ. աշխ., էջ 61: Նաև՝ *** H. von Campenhausen**, "The Fathers of the Greek Church", (Pantheon, N. Y. 1959), p. 148.

ընդունակ է նպաստելու վարդապետության գիտական զարգացմանը և վարդապետության շատ հստակ արտահայտմանը[25]:

Լևոնի՝ նեստորականություն հիշեցնող ուսմունքի մասին ասում են, որ նրա բացատրությունների պակասն է այդպիսի տպավորություն թողնում[26]: Ստացվում է, որ *աստվածաբանական բանաձևերի կազմության մեծ վարպետը* այնքան էլ չի կարողացել հստակ արտահայտել իր միտքը, քանի որ, ինչպես հենց քաղկեդոնական հեղինակն է նշում, «Լևոնը պակասն ուներ Սուրբ Կյուրեղի քրիստոսաբանական ընդգրկումի, բայց նա համաձայն էր նրա գաղափարին»[27]: Եվ վստահաբար Սուրբ Կյուրեղի և Լևոնի՝ միմյանց հակասող բանաձևումները հաշտեցնելու համար պետք է սխալ համարեին Կյուրեղին, բայց ոչ թե նրա անձը, քանզի նա մեծագույն և անժխտելի հեղինակություններից է Քրիստոնեական Սուրբ Եկեղեցու, այլ՝ նրա ասածը, որն իբր ճիշտ է, բայց սխալ բառերով (այլ կերպ ասած՝ այս իմաստով քաղկեդոնական քրիստոսաբանությունը վերածվում է սովորական սոփեստության):

Քրիստոսի բնությունների մասին վարդապետությունը իր մեծ ազդեցությունն է թողել քաղկեդոնական Եկեղեցիների աստվածաբանական և մեկնողական ուսուցումների վրա: Օրինակ՝ Թովմա Աքվինացու համաձայն՝ Քրիստոսին տրված շնորհը կրկնակի է gratia habitualis՝ տրված Քրիստոսին որպես մարդու, ինչպես ուրիշ մարդկանց, և gratia unionis՝ տրված միայն Քրիստոսին[28], բաժանում, որ բխում է քաղկեդոնականությունից: Եվ կամ չսպասված օրվա և ժամի մասին Քրիստոսի թվացյալ չիմացությունը (Մատթ. ԻԴ 36) լևոնականները դարձյալ բացատրում են քաղկեդոնականությունից բխող մարդկային և աստվածային երկու բնությունների շեշտումով, թե՝ Քրիստոս ոչ միայն vere Deus է, այլ նաև vere homo, բացի մեղքից[29]: Այսինքն՝ Քրիստոս աստվածությամբ գիտեր, բայց մարդկությամբ անտեղյակ էր, մինչդեռ Սուրբ Եփրեմ Ասորին իր մեկնության մեջ բաժանումներ չի անում, այլ նշում է, որ Քրիստոս, ով ճանաչում է ամենամեծ ճանաչելիին՝ Հորը (Մատթ. ԺԱ 27), գիտե և փոքր բաները, ինչպես ժամը և օրը, սակայն մարդկանց օգտի համար չբացահայտեց՝ Իրեն անգետ ցույց տալով[30]:

Բողոքականները, որոնք հետևողը և պաշտպանն են քաղկեդոնականության, երբեմն ձեռնպահ են մնում աստվածաբանության վիճելի խնդիրներին անդրադառնալուց: Օրինակ՝ Կալվինը, ով քաղկեդոնական էր իր քրիստոսաբանությամբ և Իր *Institutes* աշխատության մեջ խոսում է երկու բնությունների մասին[31], անընդունելի էր դիտում խրթին հարցերի առնչությամբ հարցադրումներ անելը՝ համարելով, թե Սուրբ Գրքից մենք գիտենք, որ Քրիստոս եկավ մեզ փրկելու մեղքից, և դա բավական է[32]:

Մանուել 1-ին Կոմնենոս կայսերն ուղղված իր թղթում Սուրբ Ներսես Շնորհալին մեկ

---

[25] Ibid, p. 101. Նաև՝ *Christian Doctrin , p. 288, Cf. Bright, note 148 pp. 227-228.

[26] Ibid, p. 119.

[27] Ibid, p. 119.

[28] "God was in Christ", An Essay on Incarnation and Atonement, D. M. Baillie, D.D., Late Professor of Systematic Theology in the University of St. Abdrews, Faber and Faber limited, 3 Queen Square, London, 1977, p. 128.

[29] **Munduvel V. George** նշվ. աշխ., էջ 21:

[30] **Святой Ефремъ Сиринъ**, նշվ. աշխ., էջ 272-273:

[31] Munduvel V. George, նշվ. աշխ. 61:

[32] **D. M. Baillie**, նշվ. աշխ. էջ 158: Նաև՝ *Calvin, *Instit.*, Bk. ii, chap. xii, secs. 4-6.

բնությունը բացատրում է մարդու մարմնի և հոգու օրինակով, որոնք տարբեր բնություններ են. մեկը՝ երկնային, մյուսը՝ երկրային, մեկը՝ տեսանելի, մյուսը՝ անտեսանելի, մեկը՝ ժամանակավոր, մյուսը՝ անմահ, բայց միությամբ ասում ենք, որ մարդը մեկ բնություն ունի և ոչ՝ երկու: Նմանապես Քրիստոսի բնությունը պետք է մեկ ասենք, այլապես Քրիստոսի մեջ կշեշտենք ոչ թե երկու, այլ երեք բնություն՝ երկու մարդկային բնություններ՝ հոգի և մարմին, և մեկ աստվածային բնություն[33]: Մեր Եկեղեցու նոր շրջանի նշանավոր հեղինակներից Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը ևս նշում է, որ երկու բնություն հայտարարելով՝ երկրորդ բնություն են ներմուծում Երրորդության մեջ, որովհետև Հոր աջ կողմը նիստից հետո Քրիստոս չդադարեց լինելուց այն, ինչ կար մարմնավորման ընթացքում[34]: Հետևաբար՝ երբ ըստ Քաղկեդոնի ասում ենք երկու բնություն, նշանակում է, որ այժմ, ի դեմս Քրիստոսի, Սուրբ Երրորդության մեջ ևս մարդկային բնությունն է առկա, որով երկու բնություն է լինում Սուրբ Երրորդության մեջ:

Բացի դրանից, քաղկեդոնականների համար այստեղ մեկ այլ խնդիր ևս կա: Առաքյալն ասում է. «Մի է միջնորդը՝ մարդը Հիսուս Քրիստոս» (Ա Տիմ. Բ 5): Եթե լևոնականներն ասեն, որ այդ *մի*-ն վերաբերում է անձին և ոչ բնությանը, սխալ կլինեն, որովհետև ասում է՝ մարդը Հիսուս Քրիստոս, իսկ նրանք Քրիստոսի համար մեկ անձ են ասում, և այդ անձը աստվածային է և ոչ՝ մարդկային: Եվ եթե ասեն, որ *մի*-ն անձին է վերաբերում, ուրեմն կխոստովանեն, որ մարդու անձ ևս ունի, և նեստորական կդառնան, որովհետև Նեստորը երկու անձ էր ընդունում՝ աստվածային և մարդկային[35]: Մինչդեռ մեկ բնություն ընդունելու պարագային պողոսյան ուսուցմանը և Սուրբ Երրորդության վարդապետությանը հակառակ ոչ մի խնդիր չկա: Քրիստոսի մեջ երկու էակներ չկան, ոչ էլ Նա կազմված է երկու էակներից, հետևաբար՝ մեկ բնություն է[36]:

Քրիստոսի բնության խնդրի հետ սերտորեն կապված է Տիրոջ մարմնի անապականության հարցը[37]:

«ԱՌԷՔ, ԿԵՐԷՔ, ԱՅՍ Է ՄԱՐՄԻՆ ԻՄ»

ԱՆԱՊԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ - Եթե մի պահ պատկերացնենք, որ ինչ-որ մի ձևով ի վերջո հնարավոր է եղել համաձայնություն հաստատել քաղկեդոնական և ոչ քաղկեդոնական Եկեղեցիների միջև Քրիստոսի բնության և Հաղորդության հարցում, ապա, այնուամենայնիվ, մնում է Քրիստոսի մարմնի վերաբերյալ այդ Եկեղեցիների՝ միմյանց բոլորովին հակասող դիրքորոշումները:

Մենք ընդունում ենք, որ Քրիստոսի մահկանացու մարմինն անապական էր՝ ըստ Ադամի նախաանկումային մարմնի: Ապականությունը հետևանք է մեղքի, և քանի որ Քրիստոս, Աստված լինելով հանդերձ, նաև ճշմարիտ մարդ է առանց մեղքի, ապա զերծ է

---

[33] **Methodios G. Fouyas**, նշվ. աշխ., էջ 216:

[34] "The Christological Position of the Armenian Church", A paper read before a circle of Anglican Theologians in Oxford, England in 1943, By **Archbishop Tiran Nersoyan** (then a Vardapet), p. 8.

[35] **Ղազար Ճահկեցի**, նշվ. աշխ., էջ 182:

[36] **Tiran Nersoyan**, ibid, p. 8.

[37] **Tiran Nersoyan**, ibid, p. 10-11.

ապականությունից, քանզի ապականությունը հաստատվել է մարդկային մարմնում մեղքի պատճառով: Երկաբնակները, ընդհակառակը, ասում են, որ Քրիստոսի մարմինը նախքան Հարությունը ապականացու էր և պետք է որ Քրիստոս ապականացու, կրքերին ու չարչարանքներին ենթակա մարմնով լիներ, որպեսզի կարողանար մարդկային անմեղ կրքերը կրել և տանջանքների ու մահվան ենթարկվել հանուն մարդկության: «Բանի կողմից հանձն առած մարդկությունը ադամական մեղավոր մարդկությունն էր՝ մեղքին ենթակա, բայց առանց մեղքի»[38]:

Քրիստոս, սակայն, մարդկային կրքերը կրեց ոչ թե այն պատճառով, որ մարմնի անհրաժեշտությունն էր, այլ որովհետև Ինքը կամեցավ[39]: Եվ Վերնատանը Սուրբ Հաղորդության խորհուրդը հաստատելիս Քրիստոս այս անապական մարմինն էր, որ բաշխեց առաքյալներին[40]: Հավանաբար այս տեսակետով *Օգոստինոսի կողմից ևս մահկանացու մարմինը և հարուցյալ մարմինը նույնացված են*[41]: Բողոքականների մոտ ևս Քրիստոսի մարմնի հարցում տարաձայնություններ կան: Լյութերականները հաստատում են Քրիստոսի մարմնի խորհրդական ամենուրեքությունը, որը կալվինիստները մերժում են: Լյութերը հետագայում հարուցյալ Քրիստոսի փառավորյալ մարմնին վերագրեց անսահմանություն[42]: Լյութերի համար Քրիստոսի մարդկությունն ամենագետ է և ամենակարող, բայց ոչ Կալվինի համար: Այս տարբերությունները գալիս են քաղկեդոնական բանաձևի անորոշությունից ու երկիմաստությունից[43]: Նոր ժամանակներում հայտնի աստվածաբան Ադոլֆ Հառնակի՝ ոչ պակաս նշանավոր աշակերտ և մեծ աստվածաբան Կարլ Բարտն էր, որ հայտարարեց, թե երբ Բանը մարմին եղև, Լոգոսը առավ մարդկային անկյալ բնությունը[44]:

ԱՅՍ Է ՄԱՐՄԻՆ ԻՄ - Բացի Քրիստոսի անապական մարմնի վերաբերյալ տեսակետների տարբերությունից, քաղկեդոնական և ոչ քաղկեդոնական Եկեղեցիների միջև մեծ տարբերություններ կան նաև եկեղեցու Սուրբ Խորանի վրա Հաղորդության պատրաստման և մատուցման հարցում: Հաղորդության հացի թթխմորով պատրաստման կամ գինու մեջ նաև ջուր լցնելու տարբերություններից զատ, մեր վարդապետության համաձայն, Պատարագի համար պետք է անթթխմոր միայն մեկ հաց բեկանել (Գործք Բ 46), մինչդեռ, օրինակ, կաթոլիկները բազում նշխարներ են բաժանում: Պողոս առաքյալն ասում է, որ նույն հացից պետք է ուտեն (Ա Կորնթ. Ժ 16): Քրիստոս, մեկ հաց վերցնելով, ասաց՝ «այս է մարմինն իմ», բացի դրանից, գործածեց եզակի թիվը՝ ասելով՝ *այս է*, և ոչ թե՝ *սոքա են*: Պատարագի ժամանակ միայն մեկ հացի գործածումը նաև իր խորհուրդն ունի, որի մասին խոսում է Պողոս առաքյալը. «Որովհետև մի հաց, մի մարմին ենք բոլորս, քանի որ բո-

---

[38] Jesus the Christ, p. 65.

[39] Քրիստոսի անապական մարմնի մասին մանրամասն տե՛ս՝ **Գիրք հարցմանց**, էջ 498-503; **Ղազար Ճահկեցի**, նշվ. աշխ., էջ 216-226:

[40] Գիրք հարցմանց, էջ 499:

[41] "The risen Christ and the eucaristic world", **Gustave Marlet**, translated by René Hague, Collins, St. James's Place, London, 1976, p. 125.

[42] **Gustave Marlet**, նշվ. աշխ., էջ 126:

[43] **Munduvel V. George**, նշվ. աշխ., էջ 63:

[44] Ibid, p. 74.

լորս էլ այդ միակ հացից ենք վայելում» (Ա Կորնթ. Ժ 17)[45]: Կաթոլիկները նաև համարում են, որ բավական կլինի Հաղորդության համար ժողովրդին միայն հացը տալը, որը մարմինն է Քրիստոսի, իսկ որտեղ մարմինն է, այնտեղ նաև արյունն է: Մի՞թե ավելի իմաստուն են, քան Տերը, որ հրամայեց նաև արյանը հաղորդվել[46]: Նաև ասում են, որ Պատարագի աղոթքի մեջ պետք չէ ասել՝ *որով զհացս օրհնեալ մարմին ճշմարտապէս արասցես*, այլ *արասցես*-ի փոխարեն *արարէր*, որովհետև *առէք կերէք*-ը դրանից առաջ էր, և այդ ժամանակ մարմին և արյուն եղավ: Երբ քահանան ասում է այս բառերը՝ «Hoc est Corpus meum», խոսքն ընկնում է ուղղակիորեն հացի վրա՝ այն փոխելով Քրիստոսի անհատական իրականության[47]:

Նման կարծիք է արտահայտում նաև Գրիգոր Տաթևացին. «Այլ յորժամ ասէ քահանայն զբանն Քրիստոսի, թէ (ա՛յս է մարմին իմ). էութիւն հացին փոխի յէութիւն մարմնոյն Քրիստոսի. եւ մնան պատահմունքն. այսինքն գոյնն, համն, հոտն»[48]: Չնայած Զահկեցին ևս նույնությամբ մեջբերում է Տաթևացու այս խոսքերը[49], սակայն նշում է, որ, այնուամենայնիվ, անհայտ է ճշգրիտ պահը փոխարկության, և Պատարգչի հայտարարումով չէ, որ սուրբ ընծաները դառնում են Մարմին և Արյուն, այլ՝ Սուրբ Հոգու ներգործությամբ: Ըստ Զահկեցու՝ եթե հենց *առէք կերէք*-ի ժամանակ մարմին և արյուն դառնար, ապա պետք էր հրամայական կերպով ասել՝ *եղիցի* (այսինքն՝ *այս եղիցի մարմին իմ* և ոչ թե՝ *այս է*), ինչպես արարչագործության ժամանակ՝ *եղիցի լոյս*, իսկ այստեղ ոչ թե հրամայական, այլ ցուցական կերպով է ասվում, և *առէք կերէք*-ը ոչ թե փոխարկության համար էր, այլ Աստվածորդու տնօրինության խորհուրդը պատմելու համար: Ուրեմն՝ պետք է խնդրել Հորից Սուրբ Հոգին, որ Նրանով փոխարկությունը լինի[50]: Նաև Սուրբ Հովհան Ոսկեբերանի հեղինակած աղոթքում խնդրվում է, որպեսզի Սուրբ Հոգով փոխակերպվեն հացն ու գինին Քրիստոսի ճշմարիտ Մարմնի և Արյան:

ՓՈԽԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՅԱՑԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ – Եկեղեցիների հաղորդական միասնության համար խնդիր է նաև Հաղորդության խորհրդի մեջ Քրիստոսի իրական ներկայության բացատրության տարբերությունը: Վերոնշյալ աղոթքում Ոսկեբերանը ընծաների՝ Մարմնի և Արյան փոխվելու համար օգտագործել է metaballein բառը[51], որը համապատասխանում է ֆրանսերեն նույնարմատ mՈtabolisme, անգլերեն metabolism բառին, որ նշանակում է նյութափոխանակություն: Հացի և գինու փոխվելը Մարմնի և Արյան Կաթոլիկ Եկեղեցին կոչում է գոյացափոխություն (transubstantiation)[52]: Լյութերը Հաղորդության համար ընդունում էր երևակայական գոյացափոխության իր տեսությունը[53], մինչդեռ

---

[45] Այս մասին մանրամասն՝ **Գրիգոր Տաթևացի**, "Ամառան հատոր", Տպեալ յամի 1741 ի Կ. Պոլիս, Վերատպեալ ի տպարանի Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ – 1998, էջ 157, **Ղազար Ճահկեցի**, նշվ. աշխ., էջ 350-351:

[46] **Ղազար Ճահկեցի**, նշվ. աշխ., էջ 351:

[47] **G. Martelet**, "Résurrection eucharistie et genèse de l'homme, Chemin Théologiques d'un renouveau Chrétien", Desclée, 1972, p. 126-127.

[48] Ամառան հատոր, էջ 164:

[49] **Ղազար Ճահկեցի**, նշվ. աշխ., էջ 362:

[50] Նշվ. աշխ., էջ 364-365:

[51] **G. Martelet**, նշվ. աշխ., էջ 168:

[52] CathՈchisme de l'Eglise Catholique, Mame/Plon, 1992, p. 296.

[53] Այս մասին մանրամասն՝ **G. Martelet**, նշվ. աշխ., էջ 154-156:

Կալվինն ընդունում էր Քրիստոսի իրական ներկայությունը[54], բայց ավելի շատ խորհրդանշական իմաստով, ոչ այնպես, ինչպես ընդունում են առաքելահաստատ Եկեղեցիները:

Կաթոլիկ Եկեղեցու գոյացափոխության տեսությունն ընդունելու դեպքում մի շարք հարցեր են առաջանում, որոնք այդպես էլ բացատրություն չեն ստանում: Լատին Եկեղեցին, որը, ինչպես Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանն է ասում, միշտ եղել է ամենից ծայրահեղը իր դավանական ձևերի մեջ[55], գոյացափոխության տեսությամբ ուսուցանում է, թե հացի և գինու գոյությունը, գոյացությունը անհետանում և ջնջվում է, իսկ Հիսուսի Մարմինն ու Արյունը նրանց է փոխարինում: Այդ պարագայում, ինչպես նշում է Օրմանյանը, դժվարիմանալի բացատրությունների մեջ են մտնում, թե ինչպե՞ս արդյոք հացի և գինու բոլոր հատկությունները՝ համը, հոտը, գույնը, քանակը, տեսակը, որակը, չափը առանց գոյության կարող են մնալ, և թե ինչպես են հացն ու գինին մնացած կամ ճաշակված պահերին փտության, փոփոխության բոլոր պարագաները ներակայացնում, եթե հացի և գինու գոյությունը ջնջված է: Ստիպված են լինում մի շարք ավելորդ և մտացածին հրաշքներ ավելացնել, ինչպես, օրինակ՝ հացի և գինու՝ Քրիստոսի Մարմնի և Արյան գոյափոխվելուց հետո վերստին դրանց հաց ու գինու գոյափոխվելն ընդունելը, և նմանօրինակ բռնազբոսիկ խնդիրներ: Սրանից խուսափելու համար ուրիշներ Մարմնի և Արյան՝ հացի և գինու հետ միավորման ձևը խորհեցին, ինչպես նաև՝ հացեղության և գինեղության վարդապետությունը՝ մարդեղության վարդապետության նման[56]:

Ըստ մեր վարդապետների՝ հացն ունի էություն կամ գոյացություն և պատահմունք ու որակ: Փոխարկության ժամանակ հացի էությունը կամ գոյացությունը փոխարկվում են Քրիստոսի Մարմնի և Արյան, իսկ պատահմունքը և որակը մնում են, որպեսզի մենք զգայարաններով պատահմունքների միջնորդությամբ հասնենք գոյացության և որպեսզի կարողանանք մերձենալ սրբությանը, քանի որ եթե մարմնի և արյան կերպարանքով լիներ, ոչ ոք չէր համաձայնվի մոտենալ Հաղորդության: Հինգ զգայարաններն անտեսանելի այդ էությունը չեն տեսնում, այլ միայն՝ տեսանելի որակն ու պատահմունքը, սակայն մարդու իմացումը հասնում է մինչև փոխակերպյալ էությունը[57]: Սուրբ Հոգին աներևութապես իջնում է հացի և գինու վրա և ոչ թե հացի ձևն ու բաժակի պարունակությունը փոխում մսի և արյան, այլ միայն Քրիստոսի Մարմնի և Արյան աստվածային զորությունն ու ներգործությունը տպավորում է հացին և գինուն[58]:

Այստեղ հարց է առաջանում. եթե մի օր լուծվեն Քրիստոսի բնության, չարչարանքների ու խաչելության, անապական մարմնի, ծիսական կարևոր ու սկզբունքային հարցերը, և որոշվի բոլոր Եկեղեցիների միջև հաստատել միասնություն Հաղորդության մեջ, արդյո՞ք պետք է ընդունենք նաև հացի և գինու՝ Մարմնի և Արյան փոխվելու այլ Եկեղեցիների բացատրությունները, որոնք դարերով անընդունելի են համարվել մեր Սուրբ Եկեղեցու կողմից: Հակառակ բողոքականների՝ Հաղորդությունը միայն խորհրդանիշ ընդունե-

---

[54] Նույն տեղում, էջ 156-157:

[55] **Համապատում չորս Ավետարանների**, պարունակությունը շարադրելով, բաղդատելով և բացատրելով պատմված, պարզաբանեց Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը, նախկին Պատրիարք, Գ հրատարակություն (Արևելահայերեն թարգմանությամբ), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1997, էջ 645:

[56] Նույն տեղում:

[57] **Ամառան հատոր**, էջ 164; **Ղազար Ճահկեցի**, նշվ. աշխ., էջ 361-363:

[58] **Ղազար Ճահկեցի**, նշվ. աշխ., էջ 367:

լու սխալ կարծիքի, կաթոլիկների՝ մի շարք խնդիրների առջև կանգնեցնող գոյացափոխության տեսության և այլոց ոլորապտույտ մեկնաբանությունների՝ միայն մեր վարդապետների վերոնշյալ ճշմարիտ բացատրությամբ է, որ Հաղորդության Սուրբ խորհրդի մեջ կարողանում ենք ճշմարտապես ընկալել Քրիստոսի իրական ներկայությունն ու Մարմնի և Արյան փոխակերպության իրողությունը:

ՀԱՄԱԶԱՅՆ ՊԼԱՏՈՆՅԱՆ ԻԴԵԱՆԵՐԻ - Մեծ աստվածաբան Գրիգոր Նյուսացին բացատրելով, թե ինչպես Քրիստոս կարող էր հացը ցույց տալով ասել, թե՝ սա Իմ մարմինն է, ասում է, որ մենք էլ կարող ենք նույն բառերն ասել, որովհետև հացը, ներթափանցելով մարմնի մեջ, հենց ինքն է մարմին դառնում[59]: Սուրբ Բարսեղը օգտագործում է antitype (հակատիպ, հակատեսակ) բառը, որը, հակադրված typ-ին, արտահայտում է ստվերի հարաբերությունը իրականությանը: Այս երկու բառերը ցույց են տալիս հացը և Քրիստոսի Մարմինը: Հովհան Դամասկացին antityp-ը թարգմանում է figure (կերպարանք)-ով՝ այն հակադրելու համար մարմնին[60]: Պատկերամարտները համարում էին, որ Քրիստոսի օրինական և միակ պատկերը Հաղորդությունն է, որի մասին Սուրբ Բարսեղն ասում էր, որ այն antityp-ն է կամ կերպարանքը Քրիստոսի մարմնի, իհարկե նաև նկատի ունենալով, ինչպես համարում էր նաև Հովհան Դամասկացին, որ Հաղորդությունը միայն Քրիստոսի figur-ը չէ, բայց այն նաև Նրա իրականությունն է[61]: Օգոստինոսն ասում էր, որ Քրիստոս՝ որպես մարդ, մարմնով երկնքում է, իսկ որպես Աստված-հոգի՝ Իր աստվածությամբ ամենուրեք է:

Օգոստինոսի մասին պետք է ասել, որ նա մեծապես ազդված էր նեոպլատոնիզմից[62], և իր շատ տեսակետներ արտահայտել է՝ Պլոտինի գաղափարների ազդեցության տակ գտնվելով[63]: Հոգին ընդհանրապես Օգոստինոսի համար, ինչպես և Պլատոնի համար, զուտ բանական բարձրագույն հոգի է, որն անհրաժեշտություն չունի կապի մեջ լինելու մարմինների աշխարհի հետ[64]: Օգոստինոսի վերոհիշյալ եզրակացությունը հետո որդեգրեց Կալվինը՝ հայտարարելով, թե Քրիստոս ներկա է ամեն ինչում, քանի որ Աստված է, մյուս կողմից Նա մարմնապես երկնքում է, քանի որ Նա մարդ է[65]:

Այդ դեպքում ինչպե՞ս են հացն ու գինին Մարմին և Արյուն դառնում, եթե Քրիստոսի նյութական մարմինը միշտ երկնքում է: Կալվինն ասում էր, որ Հոգին մինչև մեզ է բերում-հասցնում այն, ինչ Քրիստոս ունի: Արևն իր ճառագայթներով երկիր է հասցնում իր սուբստանցիան՝ բույսերին սնելու համար, նույն կերպ էլ Հոգու միջոցով է լինում մեր հաղորդությունը, շփումը Տիրոջ Մարմնին և Արյանը[66]: Ըստ Ջահկեցու՝ Սուրբ Հոգին տպավորում է Քրիստոսի Մարմնի և Արյան զորությունն ու ներգործությունը հացին և գի-

---

[59] **G. Martelet,** նշվ. աշխ., էջ 193: Նաև՝ ***Grégoire de Nysse**, Discours catéchétique, XXXVII, 7 et 8, trad. fr., Méridier, Paris, 1908, p. 177-178.

[60] **G. Martelet**, նշվ. աշխ., էջ 166:

[61] Նույն տեղում:

[62] **Gustave Marlet**, նշվ. աշխ., էջ 123:

[63] **G. Martelet**, նշվ. աշխ., էջ 147:

[64] **Gustave Marlet**, նշվ. աշխ., էջ 132: Նաև՝ ***Louis Bouyer**, «L'Eglise de Dieu, Corps du Christ et Temple de l'Esprit», Le Cerf, 1970, p. 41.

[65] **Gustave Marlet**, նշվ. աշխ., էջ 126, 144:

[66] **G. Martelet**, նշվ. աշխ., էջ 159: Նաև՝ *Inst. chrét , IV, XVII, 12, p. 387.

նուն[67]:

Այս իրողությունն ամենից լավ բացատրում է Սուրբ Գրիգոր Տաթևացին պլատոնյան իդեաների նմանողությամբ: Հետաքրքրական է, որ պլատոնյան իդեաների աշխարհի հետ հարաբերությանն անդրադարձել է նաև Օգոստինոսը[68]: Տաթևացին, անշուշտ, քաջ ծանոթ էր Պլատոնի ստեղծագործություններին և իր քարոզները երբեմն համեմում էր մեծ փիլիսոփայի մտքերով: Ինչպես, օրինակ՝ հավատքի մասին իր քարոզի հենց սկզբում թեև չնշելով Պլատոնի անունը, ասում է. «Զի որպէս ասեն իմաստունք թէ՝ ամենայն մարդ որ գիտէ զբժշկութիւն՝ բժիշկ է. այլ ոչ ամենայն որ գիտէ զարդարութիւն՝ արդար է»:

Այս միտքը Պլատոնի «Մենոն» ստեղծագործության[69] ողջ իմաստի համառոտ արտահայտումն է: Եվ բնական է, որ Տաթևացին, նաև ծանոթ լինելով պլատոնյան իդեաների հասկացությանը, այն պիտի օգտագործեր՝ լավագույնս բացատրելու հացի ու գինու և Մարմնի ու Արյան հարաբերության իրողությունը: Երբեմն Հաղորդության տրման ժամանակ սուրբ նշխարը ոչ դիտավորյալ պատճառով կարող է գետին ընկնել, մկրտության արարողության ժամանակ փոքրիկ երեխաները Հաղորդությունը կարող են բերանից գցել, Պատարագի ավարտին սկիհը ջրով լվալու ժամանակ հացի մանր փշրանքներ ջրի հետ կարող են թափվել: Ի՞նչ է լինում նման դեպքերում Սուրբ Մարմինը, և կամ Պատարագի պարագային նույն մտահոգությամբ արդյո՞ք պետք է անգամ մանր փշրանքները քամել և ջրից հանել: Այսպես վարվելով՝ գուցե թե նմանվենք օրենսգետներին և փարիսեցիներին, ովքեր, առաքինությունները թողած, կրոնական մտադրությամբ ջրով լվացումների համար մշտապես ստուգում էին այդ նպատակով նախատեսված ջուրը և այն գործածելուց առաջ քամում մեկ այլ պնակի մեջ՝ մտածելով, թե ջրի մեջ կարող են սուրբ ջուրը պղծող մժղուկներ ընկած լինել: Մինչդեռ Քրիստոս մեծապես դատապարտեց նրանց՝ ասելով. «Կույր առաջնորդներ, որ մժղուկները քամում եք և ուղտերը կուլ եք տալիս» (Մատթ. ԻԳ 24):

Եթե Քրիստոսի Մարմինը միշտ երկնքում է, ինչպե՞ս կարող է այն լինել և պատարագվել ողջ աշխարհում: Այս հարցին Տաթևացին պատասխանում է պարզ օրինակներով: Ենթադրենք, թե մի ոսկե խնձոր կա երկրի մեջտեղում, և աշխարհի չորս կողմերում՝ չորս հաց: Աստված կարող է այդ չորս հացերը փոխել երկրի մեջտեղում գտնվող ոսկե խնձորի, և այս փոխումը լինում է զորությամբ: Խնձորն ինքը մնում է իր տեղում և միայն իր զորությունն է տալիս հացերին, որոնք փոխվում են: Նույնպես ձայնը ելնում է վարդապետի բերանից և մտնում բազում մարդկանց լսելիքները, մեկ է խոսողը, բայց բազում են լսողները: Այսպես Քրիստոսի մարմինը երկնքում է, բայց նաև զորությամբ՝ նշխարներում[70]:

Այս բացատրությունը հիմնված է պլատոնյան իդեաների հասկացության վրա, որն ավելի ակնհայտ է դառնում քահանայի կողմից Քրիստոսի Մարմին-նշխարի մասնատման ու բաժանման կամ հավատացյալների կողմից այն ճաշակելու հետ կապված պար-

---

[67] **Ղազար Ճահկեցի**, նշվ. աշխ., էջ 367:

[68] **G. Martelet**, նշվ. աշխ., էջ 136: Նաև՝ *__Hans Jorissen__, *Die Entfaltung der Transsubstantiationslehre bis zum Beginn der Hochscholastik*, Münster, 1965, p. 4-6. *__Karl Adam__, "Zur Eucharistielehre des heiligen Augustinus" *Theologische Quartalschrift*, 112, 1931, Tübingen–Stuttgart, p. 490-536.

[69] Классическая философская мысль, **Платон**, "Апология Сократа, Критон, Ион, Протагор", ("Менон"), Москва, издательство "Мысль", 1999, ст. 575-562.

[70] **Ամառան հատոր**, էջ 163-164:

զաբանումներում:

Նշխարը մասնատելիս կամ ատամով կտրելիս Քրիստոսի մարմինը չի կոտրվում, այլ՝ հացի պատահմունքը, որը մնացել է, կամ երբ օրինյալ հացը հուրը կամ ջուրն է ընկնում, Քրիստոսի մարմինը չի այրվում կամ ապականվում, այլ հացի պատահումն է այրվում կամ ապականվում, ինչպես արեգակի ճառագայթը, հրով անցնելով կամ տիղմի վրա ծագելով, չի ապականվում: Եվ այն ժամանակ Քրիստոսի մարմինն այնտեղ չի մնում, այլ երկնքում՝ Հոր Աջ կողմում, ինչպես առաջ էր[71]: Այս բացատրությունը հար և նման է ջերմության և սառնության իդեաների մասին Պլատոնի տեսությանը, որն արտահայտված է փիլիսոփայի «Ֆեդոն» ստեղծագործության մեջ: Երբ մարմինը, ջուրը կամ կրակը տաք է, նրան հատուկ է ջերմության իդեան: Բայց երբ մարմինը սառչում է, դա չի նշանակում, որ տաքության իդեան ևս սառն է դարձել, դա միայն նշանակում է, որ տաքության իդեան այստեղ մի կողմ է հեռացել և տեղը զիջել է սառնության իդեային՝ մնալով նույնպես հակադիր սառնության իդեային, ինչպես նախկինում: Նույնպես երբ սառը ձնակույտը տաք ջրի է վերածվում, սառնության իդեան դադարում է[72]: Ահա ճիշտ նույն կերպ Քրիստոսի Մարմնի զորությունն ու ներգործությունը չի մնում նետված կամ ապականված հացի պատահումի մեջ: Կաթոլիկների գոյացափոխության տեսության դեպքում բավականին դժվար է ճաշակվող Հաղորդության կամ մասնատման ու հացի ապականման պարագային Պլատոնի իդեաների ուսմունքը հիշեցնող նման բացատրություններ տալ:

ԵԶՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՓԵՍՏՈՒԹՅՈՒՆ

Մի է բնութիւն Բանին մարմնացելոյ (μία φύσις τοῦ Θεοῦ Λογου σεσαρκωμένη) Կյուրեղյան բանաձևը հավանաբար քաղկեդոնականների կողմից ամենաշատ քննարկված ու ձևափոխված և շարունակական նորովի մեկնաբանություններով ի հայտ եկող քրիստոսաբանական բանաձևն է: Այս առնչությամբ քաղկեդոնականների հիմնական ջանքերն ուղղված են բացատրելու և ցույց տալու, թե ինչպես էր Սուրբ Կյուրեղը սխալ եզրերով ճիշտ աստվածաբանական բացատրություններ տալիս: Ըստ նրանց՝ քաղկեդոնականների և ոչ քաղկեդոնականների միջև անհամաձայնությունը կախված է ոչ այնքան օգտագործված եզրերից, որքան դրանց տրված իմաստից[73], և գլխավոր տարբերությունը Լևոնի և Սուրբ Կյուրեղի միջև ընկած է եզրերի օգտագործման մեջ[74]:

Ամենից շատ վիճարկելի են գործածված hypostasis, prosopon, ousia և հատկապես physis հունարեն եզրերը: Այս եզրերին հաճախ տրվում են տարբեր իմաստային նրբերանգներ ու բացատրություններ:

Hypostasis - Ըստ մեկ բացատրության՝ hypostasis-ը նշանակում է մասնավոր կամ անհատական, մինչդեռ essence-ը կամ nature-ը հավաքական (common) աստվածությունը[75]: Մեկ այլ բացատրության համաձայն՝ դասական քրիստոսաբանությունն օգտագործեց

---

[71] Նույն տեղում, էջ 164:

[72] Классическая философская мысль, **Платон**, “Федон, Пир, Федр, Парменид”, Москва, издательство “Мысль”, 1999, (“Федон”, 103d), նաև ծանոթագրությունը՝ էջ 425:

[73] **Methodios G. Fouyas**, նշվ. աշխ., էջ 118-119:

[74] Ibid, p. 119.

[75] Ibid, p. 152.

hypostasis եզրը կամ դրա լատիներեն համարժեքները՝ նկարագրելու ինքնագոյությունը և անձնավորության կոնկրետ իրականությունը[76] (Այստեղ ուշադրություն դարձնենք *անձնավորություն* (personality) բառի վրա, այն բոլորովին էլ նույն իմաստը չունի, ինչ *անձը* (person)): Hypostasis-ը ձեռք է բերել մի իմաստ, որ կես ճանապարհին է անձի (person) և հատկանիշի (attribute) միջև[77]: Երբ ասում ենք մարդ, այն ցույց է տալիս բնություն, բայց անորոշ է, ընդհանուր, իսկ երբ ասում ենք Պողոս, այն ժամանակ նշում ենք բնությունը՝ որպես իրականում գոյություն ունեցող այն օբյեկտի մեջ, որն արտահայտվում է այդ բառով: Ահա սա է hypostasis-ը, այն անորոշ հասկացություն չէ, ինչպես ousia-ն[78]:

Prosopon - Անձ - Անձի (person) վաղ հասկացությունը տրամաբանական և ոչ թե հոգեբանական եզր էր: Դա անձնավորության արդի հասկացությունը չէ: Գիտակցություն (consciousness) եզրը, որը լայնորեն տեղ է գրավում անձնավորության շուրջ արդի բանավեճերում, դեր չի խաղում Հայրերի մտածողության մեջ[79]: Person-ը՝ անձը, պատմությունից վեր եղող իրականություն է, վերաբերում է Բանին, personality-ն՝ անձնավորությունը, դիտարկելի պատմական իրականություն, պատկանում է մարդկային բնությանը: Բարտի մոտ չկար այս տարբերակումը, և այս բացը փորձեց վերացնել նրա հակառակորդ Էմիլ Բրունները: Person-ը գոյաբանական հասկացություն է, personality-ն պատկանում է հոգեբանության բառարանին: Երկու եզրերը նույնական չեն, և անհիմն է մեկն օգտագործել մյուսի փոխարեն[80]: Անձնավորության, գիտակցության և կամքի արդի գործածումները նույն վտանգն են ներկայացնում, և աստվածաբանները պետք է զգույշ լինեն դրանց գործածության ժամանակ[81]: Արևելյան աստվածաբանության 5-րդ դարի պատմական կոնտեքստում կային հունարեն hypostasis, prosopon բառերը՝ համապատասխան լատիներեն persona-յին[82]:

Ousia - Ousia-ի լատիներեն թարգմանությունը որպես substantia և hypostasis-ը որպես persona չեն արտահայտում հունարեն բառերի իմաստային հստակությունը: Հառնակն ասում է. «Ousia-ն այժմ ստացել է վերացական էության և կոնկրետ անհատի (individual) նշանակություն, հակված է առաջինի՝ էության կողմը, hypostasis-ը դրվում է person-ի և որակի (պատահում կամ ձև) միջև, որտեղ անձնական գաղափարն ավելի ուժեղ է»[83]: Նույն մտքի՝ մեկ այլ հեղինակի կողմից մեջբերումով՝ ousia-ն ձեռք է բերել մի իմաստ, որը գտնվում է վերացական substance-ի և կոնկրետ անհատական substance-ի միջև, բայց դեռ հակված է առաջինի կողմը[84]:

Physis - Physis նշանակում է բնություն, սակայն սույն բառի այս իմաստն էլ հաճախ կասկածի տակ է դրվում քաղկեդոնականների կողմից՝ հաստատելու համար քաղկեդոնական երկու բնությունների վարդապետությունը: Հաճախ քաղկեդոնական հեղինակնե-

---

[76] Jesus the Christ, p. 62.
[77] **Methodios G. Fouyas**, նշվ. աշխ., էջ 53:
[78] Ibid, p. 55.
[79] Jesus the Christ, p. 62.
[80] Ibid, p. 72.
[81] Ibid, p. 73.
[82] **Methodios G. Fouyas**, նշվ. աշխ., էջ 151:
[83] **Munduvel V. George**, նշվ. աշխ., էջ 35:
[84] **Methodios G. Fouyas**, նշվ. աշխ., էջ 53:

րի կողմից physis, hypostasis և prosopon բառերը դիտվում են իբրև հոմանիշներ, քանզի միայն այդ ճանապարհով կարելի է հաշտեցնել կյուրեղյան և լևոնյան՝ միմյանց բոլորովին հակասող բանաձևերը: Այդ իսկ պատճառով էլ ասում են, որ Կյուրեղը բնությունը նկատի ուներ անձ-prosopon իմաստով[85]: Նաև բնություն բառը Կյուրեղի համար նշանակում է hipostasis, և φύσις ու **u**Jόστασις բառերը հոմանիշներ են[86]: Physis եզրը կարող էր օգտագործվել այն նույն իմաստներով, որոնք տրված էին ousia-ին և hypostasis-ին[87]: «Պատմական աստվածաբանություն» գրքի հարցադրումին, թե արդյո՞ք Կյուրեղը միաբնակ է այս բառի դասական իմաստով[88], պատասխանում են, թե քանի որ Կյուրեղը մեկ բնություն ասելով նկատի ունի մեկ անձ, ապա այս իմաստով քաղկեդոնականները շատ ավելի միաբնակ են, քան նրանք, ովքեր այսօր միաբնակ են կոչվում[89]:

Կարող ենք նկատել, որ այս բացատրություններում ousia-ն հիմնականում դիտվում է որպես էություն, hypostasis, prosopon, physis բառերը՝ որպես հոմանիշներ *անձ* իմաստով, չնայած ոմանց կողմից շեշտվում են նաև դրանց առանձնահատուկ իմաստային նրբերանգները և ժամանակի ընթացքում նոր իմաստային հատկություններ ստանալու իրողությունը: Թեև նշվում է physis-ի նաև *բնություն* իմաստը, սակայն քաղկեդոնական հեղինակներն ամեն կերպ պնդում են, որ այն ավելի շատ, հատկապես Կյուրեղի կողմից, գործածվել է անձի իմաստով: Սակայն այս պնդումով քաղկեդոնական հեղինակներն արդեն հակասության մեջ են մտնում միմյանց հետ: Մի կողմից ասում են, որ Կյուրեղը սխալ եզրեր է օգտագործել և նրա գործածած լեզուն նրան ստիպում էր տատանվել *մեկ է մարմնացյալ Բանի բնությունը* և *մեկ է մարմնացյալ Բանի hypostasis-ը* բանաձևերի միջև[90], Կյուրեղն ինքը երբեմն օգտագործել է այն լեզուն, որն իր կողմից դատապարտելի է համարվել[91], Կյուրեղը օգտագործեց Ապողինարի բանաձևերը, որոնք սխալմամբ համարում էր Աթանասինը[92], Կյուրեղի աստվածաբանությունը ճիշտ է, բայց իր եզրաբանությունը շփոթված է, սխալն իր նախադասության անորոշությունն է, ոչ հստակությունը, որով Լոգոսին միայն physis կոչեց[93]: Իսկ մյուս կողմից էլ հունարեն եզրերի վերաբերյալ իրենց վերոնշյալ բացատրություններով հայտարարում են, որ Կյուրեղը ճիշտ է ասել, քանի որ այն ժամանակ *բնություն-physis* բառի իմաստներից օգտագործել է հենց *անձ*-ը, որը միանգամայն համապատասխանում է քաղկեդոնական դիրքորոշմանը, որն ընդունում է մի անձ, բայց երկու բնություն, մինչդեռ մենք ընդունում ենք մի անձ, մի բնություն: Քաղկեդոնական հեղինակի ասելով՝ Կյուրեղը, որի ուսմունքը Ապողինարի և Նեստորի ուսմունքների մեջտեղում էր գտնվում[94], իր հայտնի բանաձևի մեջ նկատի ուներ մեկ

---

[85] Նույն տեղում, էջ 60, 62: Նաև՝ *R. V. Sellers, «Two Ancient Christologies», pp. 156 ff.

[86] Théologie Historique, p. 255.

[87] **Methodios G. Fouyas**, նշվ. աշխ., էջ 60:

[88] Théologie Historique, p. 254.

[89] **Methodios G. Fouyas**, նշվ. աշխ., էջ 70:

[90] **Bernard Sesboüé**, նշվ. աշխ., էջ 129:

[91] Théologie Historique, p. 274.

[92] **Methodios G. Fouyas**, նշվ. աշխ., էջ 61: Նաև՝ ***H. von Campenhausen**, «The Fathers of the Greek Church», (Pantheon, N. Y. 1959), p. 148.

[93] **Methodios G. Fouyas**, նշվ. աշխ., էջ 137:

[94] **Methodios G. Fouyas**, նշվ. աշխ., էջ 136:

hypostasis[95]: Այդ իսկ պատճառով էլ Կյուրեղի բանաձևը հաճախ ներկայացվում է սրբագրումով՝ physis բառի փոխարեն hipostasis բառի գործածումով՝ Mia hypostasis tou Theou Logou sesarkomene[96]: Եվ քանի որ այս կարևոր բառերը տարբեր իմաստային նրբերանգներ ունեն և ժամանակի ընթացքում էլ ձեռք են բերել, ապա Կապադովկյան Հայրերի կողմից նկատի առնված Աստվածության միությունն այն նույն միությունը չէր, որ Սուրբ Աթանասն ուներ իր մտքում[97]:

Այս ամենի մեջ ամենազարմանալին այն է, որ նաև ներկայիս քաղկեդոնական հեղինակները կարողանում են ճշգրտությամբ ասել, թե դարեր առաջ բառային որ իմաստներից էր Սուրբ Կյուրեղի կամ Սուրբ Աթանասի մտքինը: Գուցե սխալ է այս բանի համար դատելը, բայց *փիլիսոփայությունը աստվածաբանության աղախինն է* հայտնի արտահայտության նկատառումով քաղկեդոնական հեղինակներն այստեղ որպես աղախին գործածել են փիլիսոփայության սոփեստական ուղղությունը:

ՀՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ – Նիկիայի տիեզերաժողովում արդեն քրիստոնեաբանության համար օգտագործվեցին հունական փիլիսոփայության մեջ շրջանառություն ունեցող բառեր: Սակայն տիեզերաժողովները հունական փիլիսոփայական բացատրություններով սխալ աստվածաբանության դեմ էին ուղղված: Եվ այս իմաստով Նիկիան հելլենականացում չէր, այլ ավելի շուտ ազատում հելլենականությունից, քանի որ հույները չէ, որ իրագործեցին Նիկիան, այլ Նիկիան է, որ հաղթահարեց հույն փիլիսոփաներին[98]: Սակայն քրիստոնեաբանության համար հունական փիլիսոփայության բառերի գործածումը տեղիք տվեց ժամանակակիցներից շատերի մեծ դժգոհության, քանզի նպատակահարմար էր նկատվում ճշմարտությունը Սուրբ Գրոց լեզվով արտահայտել և ոչ թե Աստծո իմաստությանը հակառակ հունական հեթանոս փիլիսոփայության բառերով[99]: Եվ դավանաբանական քրիստոնեաբանության հետ մեկտեղ զարգացավ նաև աստվածաշնչյան քրիստոնեաբանությունը: Սակայն պետք է, այնուամենայնիվ, նկատի ունենալ, որ Քրիստոսին վերաբերող նորկտակարանյան հարստության մի մասը ծածկված է արտահայտությունների մեջ: Այսպես է, որ Նոր Կտակարանում ոչ մի ուղղակի բացատրություն չկա Քրիստոսի անձի կազմության, Նրա կամքի և գիտակցության մասին, ցույց չի տրված, թե Քրիստոս ինչպես է Աստված և մարդ և այլն[100]: Աստվածաշնչյան քրիստոնեաբանության զարգացման հետ մեկտեղ աստվածաբանները եկան այն եզրակացության, որ աստվածաշնչյան և դավանաբանական քրիստոնեաբանությունները հեռու են հակասություն լինելուց և մեկ միություն են կազմում, չնայած որ այդ միությունը դեռ բավականաչափ կերպով իրականացված չէ, և դրանց փոխադարձ հարաբերությունները և փոխլրացումը դեռ

---

[95] Նույն տեղում, էջ 121:

[96] Նույն տեղում, էջ 100: Նաև՝ *A. Grillmeier, «Christ in Christian Tradition», p. 456.

[97] Նույն տեղում, էջ 53: Նաև՝ *A. Harnack, «History of Dogma», vol. IV, pp. 85-86, cf. Basil's Ep. ccxxxvi, 6 on the distinction of meaning between ousia and hypostasis in Stevenson, Creeds, ibid pp. 115-116.

[98] **Bernard Sesboüé**, նշվ. աշխ., էջ 102:

[99] Նույն տեղում, էջ 103:

[100] **Bilan de la Théologie du XXe siècle**, sous la direction de Robert Vander Gucht, Chercheur qualifié au F.N.R.S. et Herbert Vorgimler, professeur à la Faculté de théologie de Lucerne, Tome II, «La théologie chrétienne (suite): Les disciplines théologiques particulières, Portraits de théologiens, L'Avenir de la théologie» Casterman, 1970, p. 340.

պետք է իրականացնել[101]:

Իսկ ինչ վերաբերում է Քաղկեդոնի ժողովին, ապա սրա մասին կարծիքն այն է, որ Քաղկեդոնն ուղղեց Կյուրեղի գործածած աստվածաբանական լեզուն[102]: Ինչի՞ց են արդյոք այդքան մեծ համոզվածությամբ իմանում՝ Քաղկեդոնն ուղղե՞ց Կյուրեղի գործածածը, թե՞ ընդհակառակը՝ աղավաղեց: Երբեմն բնությունների վերաբերյալ բացատրություններ ու ապացույցներ նույնիսկ նմանվում են մեկի և երկուսի վերաբերյալ Պլատոնի կողմից արտահայտված հետևյալ, զավեշտալի թվացող դատողությանը: Ես և դու առանձին մեկ մարդ ենք, բայց երկուսով միասին երկուս ենք և ոչ թե մեկ, իսկ միասին չենք կարող լինել այն, ինչ առանձին ենք, որովհետև մենք միասին ոչ թե մեկ ենք, այլ՝ երկու: Եթե մեզանից յուրաքանչյուրը մեկ է, ապա կենտ կլինի, նշանակում է՝ միասին կենտ ենք, չնայած մենք երկուս ենք: Բայց եթե մենք երկուսով զույգ ենք, մեզանից մեկը առանձին զույգ չի լինի, նշանակում է՝ բոլորովին անհրաժեշտություն չկա, որ յուրաքանչյուրը առանձին լինի այն, ինչ երկուսով միասին, և երկուսով միասին այն, ինչ յուրաքանչյուրն առանձին[103]:

ՀԱՅԵՐԻ ՀՈՒՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ – Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանն ասում է, որ ոմանք անհիմն դիտարկում են անում, թե հայոց լեզուն բավարար չէր՝ արտահայտելու հունարենի իմաստային նրբությունները, որոնք իբր թե սխալ են հասկացված հայերի կողմից: Դա իհարկե անհեթեթություն է: Հայոց Եկեղեցու՝ այդ ժամանակաշրջանների առաջնորդները այնքան լավ են իմացել հունարենը, որքան մյուսները, ովքեր գործածում էին այդ տերմինները բանաձևումների համար[104]: Նաև ժամանակին Ղազար Ջահկեցին էր նշում հայերին ուղղված մեղադրանքները, թե հայերը ասում են մի բնություն, քանի որ չեն կարողացել զանազանել բնությունը անձից և չգիտեն անձի և բնության սահմանը[105]: Եվ Ջահկեցին հստակորեն ցույց է տալիս, որ կյուրեղյան բանաձևը մենք հասկացել ենք ճիշտ այնպես, ինչպես Սուրբ Կյուրեղը, և քաջ գիտենք յուրաքանչյուր եզրի, բնության, անձի, անհատի, էության իմաստն ու նշանակությունը: Բնությունն ընդհանրական էություն է, որով կայանում է անձը: Բնությունը ներգործող է, իսկ անձը՝ կրող, բնությունը՝ որպես վերացյալ, իսկ անձը՝ թանձրացյալ: Անձը ենթակա է բնությանը, նրա վրա կայանում է բնությունը: Անձը բնության մասնավորողն է և նրա ներգործության ընդունարանը: Բնությունը ո՛չ ծնում է և ո՛չ էլ ծնվում, ո՛չ կրում է և ո՛չ էլ ենթակա է կրքերին, անձն է, որ գործում է, և բնությունն է, որով գործում է: Անձը առանց բնության չկա, որտեղ անձն է, այնտեղ և բնությունը: Անձը անհատի գոյանալու ժամանակ է էանում և իր անձնավորությամբ՝ կերպ, տիպ, հասակ, ձև, զանազանվում է այլ անհատներից և ճանաչվում է իր անձով: Նույն անձի հատկությունը այլ անհատի վրա չի երևում: Անհատը մարդն է, և եթե բաժանես նրան հոգու և մարմնի, այն ժամանակ մարդ չէ, ելավ մարդկության տեսակից: Անձը ժողովվում է իր հատկությամբ անհատի մեջ: Էություն ասվում է հաստատաբար էանալու համար[106]:

Մինչ մեզ համար միաբնակությունը ճշմարիտ քրիստոսապաշտության հիմքն է, քաղ-

---

[101] Bilan de la Théologie du XXᵉ siècle, p. 341.

[102] **Bernard Sesboüé**, նշվ. աշխ., էջ 129:

[103] Классическая философская мысль, **Платон**, «Федон, Пир, Федр, Парменид», Москва, издательство «Мысль», 1999, («Гиппий Больший»), էջ 412-413:

[104] Archbishop Tiran Nersoyan, նշվ. աշխ., էջ 3:

[105] **Ղազար Ճահկեցի**, նշվ. աշխ., էջ 104:

[106] Այս մասին մանրամասն՝ նույն տեղում, էջ 104-107:

կեդոնականների համար սա միայն բառային կամ բառարանային հարց է: Այդ իսկ պատճառով էլ, ըստ նրանց, ոչ քաղկեդոնականների մոնոֆիզիտիզմը կարելի է կոչել բառային մոնոֆիզիտիզմ[107]՝ համարելով, որ Արևելյան ոչ քաղկեդոնական Եկեղեցիները հավատարիմ են մնացել Կյուրեղ Ալեքսանդրացու բառարանին[108]:

Ակնհայտ է, որ բառարանային այս հարցը, կամ աստվածաբանական-փիլիսոփայական եզրերի հակառակ ու տարբեր իմաստներով գործածված լինելու, ժամանակի եկեղեցական մեծ դեմքերի կողմից դրանց նրբությունները չհասկացված լինելու տեսության հեղինակները բոլորովին էլ միաբնակները չեն:

ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Արտահայտված մի կարծիքով՝ Քաղկեդոնը հաղթանակն էր Անտիոքի դպրոցի ու Լևոն Պապի և ոչ թե Ճշմարտության հաղթնակն էր[109]: Մինչև 20-րդ դարի սկիզբը Կաթոլիկ Եկեղեցու տեսակետով, արտահայտված կաթոլիկ հեղինակների կողմից, արևելյան քրիստոնեական վարդապետության բոլոր հետևողները հերետիկոսներ են և հերձվածողներ[110]: Բայց այնուհետև հատկապես Կաթոլիկ Եկեղեցու դիրքորոշումը կտրուկ փոխվեց: Եվ քաղկեդոնականների կողմից հայտարարվեց, որ քաղկեդոնական և ոչ քաղկեդոնական Եկեղեցների տարբերությունը միայն տերմինաբանության մեջ է[111]: Արևելյան ոչ քաղկեդոնական որոշ Եկեղեցիներ կարծես թե համաձայնվեցին այս հայտարարումի հետ[112] և սկսեցին քաղկեդոնականների հետ համատեղ հայտարարություններ ստորագրել՝ երբեմն չնկատելով, որ ստորագրություն են դնում այնպիսի փաստաթղթերի տակ, որոնցում զիջում են միաբնակության իրենց դիրքերը:

1964 թ. Դանիայում՝ Աարհուսում, օգոստոսի 11-15-ը Արևելյան քաղկեդոնական և ոչ քաղկեդոնական Եկեղեցիների միջև կայացած հանդիպման արդյունքում ստորագրված համատեղ հայտարարության մեջ Կյուրեղ Ալեքսանդրացու բանաձևը հանդես է գալիս նաև mia hypostasis tou Theou Logou sesarkomene տեսքով (բնության փոխարեն անձի իմաստ արտահայտող բառով)՝ միևնույն ժամանակ հայտարարության մեջ նշումով, որ քաղկեդոնականություն և ոչ քաղկեդոնականություն նույն ճշմարտությունն է տարբեր եզրաբանություններով[113]:

Կաթոլիկ Եկեղեցու և Ղպտի Եկեղեցու միացյալ հանձնախմբի առաջին լիագումար նիստը կայացավ Կահիրեում 1974 թ. մարտի 26-30-ին: Նիստի ավարտին ստորագրվեց հայտարարություն քրիստոսաբանության վերաբերյալ՝ բաղկացած 8 կետից, որի 5-րդ կետում ասվում է, որ Եկեղեցիները դեռ կարիքն ունեն հաշտեցման մի բանաձևի երկու բնության առանձնահատկություններով օժտված մեկ բնություն դավանող ոչ քաղկեդո-

---

[107] La théologie chrétienne, p. 323.

[108] **Bernard Sesboüé**, նշվ. աշխ., էջ 151-152:

[109] **Munduvel V. George**, նշվ. աշխ., էջ 37:

[110] **Methodios G. Fouyas**, նշվ. աշխ., էջ 233: Նաև՝ *__Adrian Fortescue__, «The Lesser Eastern Churches» (London, Catholic Truth Society), 1912 ¿ç 4:

[111] **Munduvel V. George**, նշվ. աշխ., էջ 38:

[112] **Christine Chailiot,** «The Syrian Orthodox Church of Antioch and All the East», A brief introduction to its life and spirituality, Inter-Orthodox Dialogue, Geneva, 1998, p. 8.

[113] **Methodios G. Fouyas**, նշվ. աշխ., էջ 253:

նականներ և երկու բնություն դավանող քաղկեդոնականների միջև փոխըմբռնողության ամրապնդման համար[114]: Ուշադրության է արժանի այն փաստը, որ այստեղ խոսվում է ոչ թե մեկի ճիշտ կամ սխալ լինելու, այլ երկուսի համար մեկ այլ ընդհանուր բանաձև որդեգրելու մասին, որով նաև ճշմարիտ պիտի համարվի քաղկեդոնականությունը և նոր բանաձևով արդեն ընդունելի՝ ոչ քաղկեդոնականների համար:

Նույն համաձայնագրի 6-րդ կետում ասվում է, որ երբ Ուղղափառ[115] կողմը մերժում է բոլոր երկակիությունները Հիսուս Քրիստոսի մեջ, դա միտում ունի ասելու, որ Հիսուս Քրիստոսի յուրաքանչյուր գործողություն իրական Աստծո մարմնացյալ Բանի գործողությունն է և ոչ թե Նրա գործողություններից որոշը վերագրվում են միայն նրա աստվածությանը և որոշ մասը միայն Նրա մարդկությանը: Կաթոլիկները չեն մերժում այն, ինչ ասում են Ուղղափառները, այլ ցանկանում են շեշտել, որ Նրանում պահպանված են ինչպես աստվածության բոլոր հատկությունները, այնպես էլ մարդկության բոլոր հատկությունները, փաստ, որն ուղղափառները միշտ դավանել են: Իսկ 7-րդ կետում ասվում է, թե ուղղափառները մեկ բնությունը դավանում են որպես բաղադրյալ բնության մեջ Աստվածության և մարդկության անշփոթելիությունը, որը կաթոլիկները ևս դավանում են 2 բնություններով՝ չբաժանելով Քրիստոսի աստվածությունը մարդկությունից[116]: Կահիրեի ժողովից առաջ՝ 1967 թ. հուլիսի 25-29-ը, Բրիստոլում Արևելյան քաղկեդոնական և ոչ քաղկեդոնական Եկեղեցիների աստվածաբանների համատեղ հայտարարության 4-րդ կետում նշվում է, թե երկու բնություն ասողները նկատի չունեն բաժանում, և մեկ բնություն դավանողները նկատի չունեն բնությունների խառնում, շփոթում[117]: Վերջին երեք դատողություններում արտաքինից թվում է նույն եզրահանգումը, բայց այդ նույնությունը թվացյալ է, որովհետև երկու, բոլորովին տարբեր աղբյուրներից են ելնում, և եթե այդ եզրահանգումներով կրկին ետ գնանք դեպի դրանց սկզբնաղբյուրները, վերստին տարբերությունների առաջ կկանգնենք:

Համատեղ հայտարարություններ ստորագրող ոչ քաղկեդոնականներին թվում է, թե Եկեղեցիների միասնության ճանապարհի սկիզբն են դնում, մինչդեռ քաղկեդոնական հեղինակը սա դիտում է որպես միաբնակների կողմից քաղկեդոնականության ընդունման առաջին քայլերը: Այսպես՝ 1973 թ. Պողոս Զ Պապի և Շենուդա Գ Պատրիարքի կողմից ստորագրված քրիստոսաբանական հայտարարության մասին ասվում է, որ չնայած այնտեղ բացակայում է *երկու բնություններ* արտահայտությունը, այնուամենայնիվ, այն ամբողջովին ներշնչված է Քաղկեդոնի բանաձևից[118]:

Ինչպես 1964 թ. Աարհուսի ժողովի հայտարարության մեջ, այնպես էլ 1989 թ. հունիսի 20-24-ին Եգիպտոսի Սուրբ Բիշոյ վանքում կայացած Ուղղափառ Եկեղեցու և Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների հավաքի հայտարարության մեջ Կյուրեղի բանաձևը կրկին ի հայտ է գալիս physis-ի փոխարեն hypostasis-ով և այնուհետ ամբողջ հայտարարությունը շեղվում է դեպի *անձ* բառի իմաստը, թե ինչպես են Եկեղեցիները ընդունում Կյուրեղի բանաձևը Քրիստոսի մեկ անձի (ո՛չ թե բնության) վերաբերյալ՝ նշումով, որ մեր Հայրերը փոխնիփոխ գործածել են hypostasis և physis բառերը մեկը մյուսի փոխարեն և շփոթել են

---

[114] Նույն տեղում, էջ 244:

[115] Այսինքն՝ ոչ քաղկեդոնական:

[116] **Methodios G. Fouyas**, նշվ. աշխ. էջ 244:

[117] Ibid, p. 255:

[118] **Bernard Sesboüé**, նշվ. աշխ., էջ 152:

մեկը մյուսի հետ[119]: Պարզվում է, որ այսօրվա եկեղեցականներն ավելի իմաստուն են, քան «մեր Հայրերը»:

Հետաքրքրական է նաև մեկ այլ բան. արդյոք ե՞րբ շրջանառությունից դուրս դրվեց *հակաքաղկեդոնական* բառը՝ փոխարինվելով *ոչ քաղկեդոնական* արտահայտությամբ: *Հակաքաղկեդոնական* և *ոչ քաղկեդոնական* բոլորովին էլ նույնը չեն, քանզի *հակա*-ն և *ոչ*-ը նույն ժխտումները չունեն: *Հակա* նշանակում է, որ երբեք համաձայն չէ, իսկ *ոչ*-ը, որ հիմա այդ վիճակին չէ, բայց հակառակ վիճակն էլ չի մերժում, ինչպես, օրինակ՝ *ոչ ամուսնացյալ*-ը ենթադրում է, որ մարդը ամուսնացած չէ, բայց չի մերժում ամուսնությունը:

Ինչևէ, այսօր Եկեղեցիների միջև երկխոսությունն ու համագործակցությունը տարբեր ոլորտներում մեծապես ողջունելի է, եթե ամեն ինչ ի գործ է դրվում ոչ թե մի կողմի համոզմունքների ժխտման ու արդեն նուրբ ձևերով սեփական դիրքորոշումներն ընդունել տալու, այլ՝ հանուն իրական Ճշմարտության հաղթանակի:

Իսկ Արարչին բնութիւնն և անձն անհասանելի և անքննելի է մտաց մարդկան[120]*:*

---

[119] **Towards Unity, The Theological Dialogue between the Orthodox Church and the Oriental Orthodox Churches**, Edited by Christine Chaillot and Alexander Belopsky, Inter-Orthodox Dialogue, Geneva, 1998, p. 60.

[120] **Ղազար Ճահկեցի**, նշվ. աշխ., էջ 106:

ՏԵՍԱԿԵՏ

Տ. ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՆԱՆՅԱՆ

ԱՐԱՐԱ՞Տ, ԹԵ՞ ՍԱՆԱՍԱՐ, ՆԱՎԱՍԱ՞ՐԴ, ԹԵ՞ ՆԱՎԱՍԱՐ

XX դարի վերջին տասնամյակներից սկսած առավել հաճախակի են այն հրատարակությունները՝ հոդված կամ գիրք, երբ ուսումնասիրությունները գալիս են վերարժեվորելու պատկանածդ ազգի ով և ինչպիսին լինելը, մի նոր լույսի տակ դիտարկելու Աստվածընտիր հայ ժողովրդի պատմական այս կամ այն չլուսաբանված ծալքերը։

Այդ նյութերից ներշնչված՝ փորձեցինք անդրադառնալ մի քանի հարցերի, որոնք, թերևս, կարող են նոր տեսակետի առաջնորդել մեզ։ Դա վերաբերվում է Նավասարդ, Սանասար-Բաղդասար անուններին և հրեա ժողովրդի իրականության մեջ առկա որոշ պատումների, որոնց արմատները, ըստ մեզ, գտնվում են Հայոց աշխարհում։ Եվ քանի որ ինչպես Աստվածաշունչը, այնպես էլ հայոց «Սասնա Ծռեր» դյուցազնավեպը իրենց մեջ են ամփոփում հազարամյակների խորքից եկող ավանդապատումներ, փորձեցինք դրանց վրա հիմնվելով՝ նորովի մոտենալ մի քանի հարցերի։

Աստվածաշնչյան տեքստերի ուսումնասիրության ժամանակ յուրաքանչյուր անգամ մեր ուշադրությունը գրավել է ինչպես մարդկության պատմության վերաբերյալ Նոյի և նրա սերունդների ապրած երկրից՝ Արարատից, ազգությունների ծագման հարցը, այնպես էլ Ծննդոց գրքի Է և Ը գլուխներում շարադրված Ջրհեղեղի պատմության քառասնօրյա շրջանի հատվածները։

Առաջին. Աստվածաշնչի Է 17 համարում կարդում ենք. «Երկրի վրա քառասուն օր ու քառասուն գիշեր ջրհեղեղ եղավ»։ Ապա նույն գլխի 23-րդ համարում շարունակվում է. «Աստված բնաջնջեց երկրի երեսին գտնվող ամեն մի էակ՝ մարդուց մինչև անասուն, սողուններից մինչև երկնքի թռչունները։ ... Կենդանի մնաց միայն Նոյը, նաև նրանք, որ նրա հետ տապանում էին»։

Այսպիսով, քառասուն օր ու գիշեր տեղի ունեցած ջրհեղեղի արդյունքը եղել է ամեն տեսակ մեղավոր էակների բնաջնջումը։ Իսկ Ծննդոց Ը գլխի 6 համարը տեղեկացնում է. «Քառասուն օր հետո Նոյը բացեց իր կառուցած տապանի պատուհանը»։ Որով «քառասուն օր ու քառասուն գիշեր ջրհեղեղ»-ը դառնում է չարչարանքի, տանջանքի և բնաջնջման խորհրդանիշ, իսկ «քառասուն օր հետո»□ն՝ փրկության։ Տեղին է այստեղ նշել, որ «Սասնա Ծռեր» դյուցազնավեպում ևս առկա է քառասունի խորհրդանշական առկայությունը.

«Թողնենք ***Քառասուն***-Ճյուղ-Ծամ Դեղձուն կառավարի» (էջ 97),

«Տարին ***քառասուն*** անծին երինջ, տարին ***քառասուն*** կոտ ոսկի, տարին ***քառասուն*** ազապ աղջիկ կառներ» (էջ 98)։

«***Քառասուն*** ձի կա գոմը կապուկ» (էջ 101)։

«***Քառասուն*** փութ էլ արճիճ ըլներ» (էջ 145)։

Իսկ ամենահատկանշականը Մսրա Մելիքի փրկություն փնտրելու հատվածն է.

«Մելիք մտավ մեջ հորին։

Քառասուն գոմշի կաշի բերին քաշին վերան,
Քառասուն ջաղացի քար դրին վերան» (էջ 244)։
(«Սասունցի Դավիթ», Երևան, 1961)

Հետաքրքիր է, որ եթե հայոց ավանդության մեջ առկա քառասունի գաղափարը տակավին հստակեցված խորհրդանիշ չէ, ապա հրեա իրականության մեջ այն կապված է Նոյի՝ Ջրհեղեղից փրկվելու գաղափարի հետ։ Այսպես. «Մովսեսը քառասուն օր ծոմ պահելուց և աղոթելուց հետո Աստծուց ստացավ Տասնաբանյան. «Տերն ասաց Մովսեսին. «Բարձրացի՛ր ինձ մոտ՝ լեռը, այնտեղ եղի՛ր, և քեզ պիտի տամ քարե այն տախտակները, որոնց վրա գրելու եմ իմ օրենքներն ու պատվիրանները : ... Մովսեսը լեռան վրա մնաց քառասուն օր ու քառասուն գիշեր» (Ելից ԻԴ 12-18)։ Անապատում քառասուն տարի թափառական շրջելուց հետո հրեաները մտան խոստացված Քանանի երկրին տիրանալու։ Քրիստոս քառասուն օր ծոմ պահելուց հետո՝ «... անապատ տարվեց Հոգուց՝ սատանայից փորձվելու։ Եվ քառասուն օր ու քառասուն գիշեր ծոմ պահեց, ...Ապա սատանան Նրան թողեց. և ահա հրեշտակները մոտեցան ու ծառայում էին Նրան» (Մատթ. Դ 1-10)։

Քանի որ այս տեղեկությունները մենք ստանում ենք Աստվածաշնչից, որը մեզ է փոխանցվել հրեա ժողովրդից, ապա մեր համեստ կարծիքն է, որ Սուրբ Գրքի առաջին գրքերում (Հնգամատյանում) առկա են այն ավանդություններն ու սովորությունները, որոնք առնչվում են Նոյին և նրա սերնդին, իսկ այնտեղ առկա սովորությունները այն երկրի սովորություններն էին, ուր ապրել են Նոյը և նրա սերունդը, այսինքն շումերների լեզվով այն կոչենք Արատտա, Աստվածաշնչի լեզվով՝ Արարատի երկիր, իսկ մեր լեզվով՝ Հայք։

Երկրորդ. Ուշադրության արժանի է նաև մեկ այլ պարագա. հրեական տարեթիվը՝ 5767-ը (այս տարի հրեաների 5767 թվականն է), չի սկսում Աբրահամին կատարված Աստվածային հայտնությունից (Ծննդոց ԺԲ 2. «Քեզ մեծ ցեղի նախահայր պիտի դարձնեմ», որը Ք. ա. երկրորդ հազարամյակում է տեղի ունեցել) կամ Աբրահամի ծննդյան թվականից, ինչպես քրիստոնեության կամ մահմեդականության պարագային է (քրիստոնյաների համար դարագլուխ է համարվում Քրիստոսի ծննդյան 1 թվականը, իսկ մահմեդականների համար՝ Մուհամմեդի ծննդյան 1 թվականը, որը Քրիստոսի 580 թվականն է), այլ՝ Ադամի և Եվայի, այսինքն մարդու կամ մարդկության արարման թվականից։ Սակայն մենք գիտենք, որ մարդկության գոյությունը ոչ թե սկսում է Ք. ա. չորրորդ հազարամյակից, այլ շատ ավելի վաղ ժամանակներից, այսինքն՝ միլիոնավոր տարիներ առաջ («Հայաստանի պատմության սահմանները, 4 հազար տարուց ընդարձակվելով, հասան 4 միլիոն տարվա։ Ապացուցվեց, որ Հայաստանի տարածքը մտնում է այն ընդարձակ գոտու մեջ, որտեղ մարդը ծագել է, ձևավորվել, անցել մշակույթի զարգացման բոլոր փուլերը». (**Սանդրո Սարդարյան,** Հայաստանը քաղաքակրթության օրրան, Երևանի Համալսարանի Հրատարակչություն, Երևան, 2004 թ, էջ I)։ Սակայն այն, որ Ք. ա. չորրորդ հազարամյակում տեղի է ունեցել համամարդկային տարողության իրադեպ, վկայում է թե՛ Աստվածաշունչը և թե՛ շումերական Գիլգամեշի դյուցազնավեպը (ի դեպ, շումերական սալիկները 1952 թ. վերծանել է ամերիկացի շումերագետ Ս. Ն. Քրամերը)։

Նախ անդրադառնանք շումերներին։ Շումերները, որոնք «Եփրատի ու Տիգրիսի ավազանում ստեղծեցին ամենահարուստ մշակույթներից մեկը մարդկության պատմության մեջ» (Զենոն Կոսիդովսկու «Բիբլիական Ավանդապատումներ», Երևան, 1978, էջ 28), համաձայն ռուս մեծ գիտնական Վ. Կ. Աֆանասևայի □ Ք. ա. V հազարամյակում հյուսիսային միջագետքից (իմա՝ Հայք-Արատտա-Արարատ) իջնելով հարավային Միջագետք, նրանք հիմքը դրե-

ցին Շումերական մշակույթի (Հնագույն Արևելքի պատմությունը, I մաս, Մեսոպոտամիա, Մոսկվա, 1983, էջ 66-75)։

Համաձայն Գիլգամեշյան դյուցազնավեպի՝ շումերների թագավոր Գիլգամեշը (շումերների թագավոր է եղել 2760-ական թվականներին) իր բարեկամ Էնկիդուի մահից հետո գնում է սուրբ երկիր համարվող Արատտա (Աստվածաշնչյան լեզվով ասած՝ Արարատի երկիր, որը շումերների համար **անմահության գաղտնիքը իմացողների**, **Սուրբ օրենքների** և **Աստվածների ընտրած ժողովրդի** երկիրն էր)՝ անմահության գաղտնիքը սովորելու։ Եվ այնտեղ՝ Արատտայում, Գիլգամեշը հանդիպում է Զիուսուդրա-Ուտնափիշտիմին («Զիուսուդրա և Ուտնափիշտիմ անունները շումերերենում և աքքադերենում ունեցել են միևնույն նշանակությունը՝ «երկար կյանք գտած» (**Ա. Մովսիսյան**, Հնագույն Պետությունը Հայաստանում Արատտա, Երևան, 1992, էջ 25, հետայսու ՀՊՀԱ), որն իր կնոջ հետ փրկվել էր Ջրհեղեղից, աստվածները նրանց անմահություն են շնորհում։ Ուրեմն, եթե սա տեղի էր ունեցել երրորդ հազարամյակում, ապա, ըստ մեր համեստ կարծիքի, չորրորդ հազարամյակը, որը դարձել է դարասկիզբ հրեաների համար, այսինքն Ք. ա. 3767 թ., պարզապես Ջրհեղեղի ավարտի և Նոր-Նոյ-ի միջոցով մարդկության վերածննդի սկիզբն էր (եթե Զիուսուդրա և Ուտնափիշտիմ անունները նշանակում էին «երկար կյանք գտած», շատ հավանական է, որ Նոյի անունը կազմված է զուտ հայկական ***նոր*** բառից, ուր տեղի է ունեցել ր-յ բնական լծորդումը։ Պետք է նշել, որ Հաճնի բարբառում ***նոր*** բառը արտասանվում է ***նոյ*** (**Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հատոր III, Երևան,1977, էջ 466)։ Եվ, ամենայն հավանականությամբ, Նոյի (շումերական՝ Զիուսուդրա, աքքադական՝ Ուտնափիշտիմ) միջոցով մարդկության փրկության թվականն է համարվում հրեաների տարեթվի սկիզբը։ Ուշագրավ է, որ թե՛ շումերական և թե՛ աստվածաշնչյան տեքստերում Ուտնափիշտիմ-Նոյը համարվել է առաջին դեպքում երկար կյանք գտած (նույնիսկ «աստվածները նրանց (Ուտնափիշտիմ-Նոյին և նրա կնոջը) ***անմահություն են շնորհում***»), իսկ երկրորդում՝ «Նոյը ինը հարյուր հիսուն տարի ապրելուց հետո մեռավ» (Ծննդոց Թ 29)։ Այսինքն, երկու դեպքում էլ հազարամյակն է սահմանագիծը (իսկ համաձայն Մովսես Խորենացու՝ «Նոյի համար գործ են ածում ուրիշ անուն (Քսիսութրիոս անունը) և վերագրում են նրան խիստ երկար ժամանակ» (**Մովսես Խորենացի**, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 82)։

Պատմահոր այս վկայությամբ կարծեք հստականում է, թե ինչու հրեաները իրենց տարեթվի սկիզբը ոչ թե Ք. ա. ասենք 1700-ական թվականները՝ Աբրահամի Ուրից դուրս գալն են համարում, այլ Նոյի 5767 թ., այսինքն Ջրհեղեղից հետո կատարված փրկության տարեթիվը։ Իսկ Նոյի ջրհեղեղյան շրջանին վերաբերող հատվածում առկա «քառասուն»-ի խորհրդանիշը ուղեկցվում է հրեա ժողովրդի ողջ պատմության ընթացքում նախ որպես չարչարանքի ժամանակաշրջան, որից հետո միայն գալիս է փրկությունը կամ փրկագործությունը։

Երրորդ. Ինչպես Աստվածաշնչից տեղյակ ենք, հրեա ժողովրդի մեծագույն տոնը ***աստվածային օգնությամբ*** Եգիպտոսի գերությունից ազատվելու տոնն էր՝ Զատիկը – Պասախը։ Նույնն է նաև մյուս ժողովուրդների պարագայում։ Հնում տոները ընդհանրապես կապված էին լինում կա՛մ աստվածների, կա՛մ աստվածային հայտնությունների և կա՛մ էլ աստվածներին առնչվող ինչ-որ հրաշապատումների հետ։ Դրանք երբեք կապված չեն եղել պատահական ինչ-որ երևույթի հետ, ուր աստվածայինի կամ գերբնականի առկայությունը բացակայել է։

Նույնն է եղել նաև պարագան Հայոց Նավասարդի տոնի։ Երբ այսօր ուզում ենք գտնել այդ մեծագույն տոնի պատճառն ու իմաստը, ապա, չգիտես ինչու, բառակապակցություններն են

գալիս պարզագույն բացատրությունները տալու տոնի գաղափարի՝ անտեսելով տոնակատարության նախապայմանի խորհուրդը և իմաստը :

Համաձայն մեծն Հ. Աճառյանի, «Նաւասարդ = Իրանական navasard հոմանիշից, որ բարդված է nava - «նոր» (զնդ. Nava- պրս. Nav, աֆղան. Nau, քրդ. Nu) և sard «տարի» (զնդ. Sareda տարի, սանս. Carad «աշուն, տարի, պարս. Sal. կարի, քրդ. Sar, sal,) բառերից» (**Հ. Աճառյան**, Արմատական բառարան, հատ. Գ. Երևան, 1977, էջ 435)։ Սակայն նկատի ունենալով այն, որ ինչպես արդեն ասացինք, թե հնում տոները երբեք առանց աստվածների կամ նրանց միջամտության չէին կարգվում, ուրեմն Հայոց մեծագույն տոնը՝ Նավասարդը, նախաքրիստոնեական ժամանակաշրջանում, ուր ամեն մի երևույթ կապվում էր գերբնական՝ աստվածային ուժի հետ, չէր կարող պարզապես միայն Նոր Տարի հասկացությամբ դառնալ կարևոր տոնը մի ողջ ժողովրդի։ Այսօրվա անաստվածյան ժամանակաշրջանի իմաստով հնարավորը հնում պարզապես անհնարին էր, որով դա ոչ այլ ինչ էր, քան մարդկության Ջրհեղեղից փրկության կարևորագույն իրադեպի հիշատակության տոնը, այնպես, ինչպես հրեաների համար աստվածային միջամտությամբ Եգիպտոսի գերությունից փրկությունն էր՝ կարևորագույն տոնը բոլոր տոներից։

Ուստի Նավասարդը բացատրել պարզապես *նավա* նոր և սարդ *տարի* բառակապակցություններով, այսինքն նոր տարվա գաղափարով ամփոփելը, ոչ միայն արժեզրկում է այդ մեծագույն տոնի իմաստը, այլև իմաստափոխում է պատմական ճշմարտությունը, քանի որ ազգի ամենամեծ տոնը պետք է որ իր մեջ ինչ-որ կարևոր իրադեպ ընդգրկեր։ Ահա թե ինչու, կարծում ենք, դրա տրամաբանական առաջացումը ավելի առնչվում է Ջրհեղեղով մարդկության ոչնչացումից հետո վերապրումի, փրկության գաղափարին, քան պարզապես «նոր տարի» հասկացությանը։ Թե՛ գիլգամեշյան պատումում, թե՛ աստվածաշնչյան հատվածում, Ջրհեղեղից փրկված Զիուսուդրա-Ուտնափիշտիմը, Նոր-Նոյը լեռից իջնելուց հետո զոհ է մատուցում աստվածներին կամ Աստծուն։ «Աքքադական դյուցազնավեպի 11-րդ պնակիտում պատմվում է, որ երբ նավը կանգ առավ Նիցիր Լեռան վրա, Ուտնափիշտիմը զոհ մատուցեց աստվածներին և խնկարկեց, որի բուրմունքն առան աստվածները, հավաքվեցին զոհաբերողի մոտ, ապա ժողով գումարելով՝ որոշեցին ***անմահություն շնորհել փրկվածներին***» (ՀՊՀԱ, էջ 27)։ Իսկ Աստվածաշնչում կարդում ենք. «Նոյը զոհասեղան շինեց Աստծու համար։ Նա առավ բոլոր տեսակի անպիղծ անասուններից, բոլոր տեսակի անպիղծ թռչուններից և ողջակիզեց զոհասեղանի վրա։ Եվ Տեր Աստվածը հոտոտեց անուշ բույրը։ Տեր Աստվածն իր մտքում ասաց. «Մարդկանց չար արարքների համար ես երկիրն այլևս չեմ անիծի (Ծննդոց Ը 20-22)։ Աստված օրհնելով Նոյին ու նրա որդիներին՝ ասաց նրանց. «Աճեցե՛ք, բազմացե՛ք, լցրե՛ք երկիրն ու տիրեցե՛ք դրան» (Ծննդոց Թ 1)։ Այս հատվածներն ինքնին պարզաբանում են, թե ինչու Նավասարդյան տոնակատարությունների ժամանակ հայերը բերքի առաջնեկը ընծայաբերում կամ զոհաբերում էին աստվածներին, որը շարունակականությունն էր Զիուսուդրա-Ուտնափիշտիմ-Նոյի կատարածի, որ Աստված ընդունի իրենց զոհը այնպես, ինչպես ընդունեց Նոյի զոհը, և ոչ միայն փրկի իրենց ոչնչացումից, չարիքից կամ փորձանքից, այլև «Աստվածները ... որոշեցին անմահություն շնորհել փրկվածներին», ուրեմն նաև անմահությանն արժանանալու յուրահատուկ կերպ էր դա։

Քանի որ «Նավասարդ» բառի «նոր տարի» բացատրությունը, ըստ մեզ, համոզեցուցիչ չէ, տոնին առնչվող գաղափարային իմաստով, փորձեցինք հայերենում առկա Սանասար և Բաղդասար անունների հետ համեմատականով, այդ անունների բառային և պատմական ստուգաբանական ճշտումով գտնել այդ բառի բուն ձևը՝ Նավասա՞րդ, թե՞ Նավասար։

Չորրորդ. «Սասնա Ծռեր» դյուցազնավեպի հերոսներ Սանասարի և Բաղդասարի ինչպես ծննդյան, այնպես էլ անունների ստուգաբանությունները մեզ ենթադրել են տալիս, որ դա, արարչագործության պատմություն լինելով հանդերձ, չի վերաբերվում անձերի: Ինչպես Արամ Ղանալանյանի «Ավանդապատում» գրքում նշել է հեղինակը, թե «...հայրենի հսկա լեռներին, ...ժողովուրդը հաճախ ներկայացրել է իբրև կենդանի, խոսուն, ապրող ու շնչող էակներ: ... Մի դեպքում այդ լեռները ժողովրդին ներկայացել են իբրև երբեմնի հարազատ քույրեր, մի այլ դեպքում՝ իբրև նետաձիգ զորականներ, մի երրորդ դեպքում՝ իբրև արյունակից եղբայրներ: ... Արևմտյան Հայաստանի Արճեշ գավառի բնակիչների ավանդությամբ Հայոց լեռները մի ժամանակ բարձրահասակ ու հաղթանդամ, հսկա եղբայրներ են եղել» (**Արամ Ղանալանյան**, Ավանդապատում, Երևան, 1969, էջ ԽԴ-ԽԵ):

Հիմք ունենալով մեզ փոխանցված ավանդապատումները, համոզված ենք, որ Սանասար և Բաղդասար անունները հազարամյակների խորքից մեզ փոխանցված Հայոց Մեծ և Փոքր Մասիսների զուտ հայկական անվանումներն են, իսկ «Սասնա Ծռերը» պահպանել է պատումի բուն արարման սկզբնապատկերը, որը հետագա դարերի ընթացքում ինչպես մեզանում, այնպես էլ տարբեր ազգերի մոտ կերպավորվել ու իմաստափոխվել է: Որպեսզի մեր ասածը կարողանանք հիմնավորել, դիմենք «Սասնա Ծռեր» դյուցազնավեպին, որն, ըստ մեծն Հովսեփ Օրբելու. «Հին հայերի կոսմիկական հնագույն պատկերացումները, հնադարյան առասպելները, որոնք ստեղծվել են Հայաստանի նախապատմական կյանքի հազարամյակների ընթացքում» («Սասունցի Դավիթ», Երևան, 1961, էջ XXXVI) իր մեջ ամփոփած որոշ փոփոխություններով մեզ փոխանցված հնագույն ավանդապատումն է:

Դյուցազնավեպում ամենաուշագրավը Ծովինարի խմած մեկ լեցուն ափ ջրից ծնունդ առնող Սանասարի և կես ափ ջրից ծնունդ առնող Բաղդասարի պատմությունն է.

Էն ժամանակ Ծովինար...
Բուռ էտու էդ անմահական աղբրրի մեջ,
Մի բուռ լիք ջուր խմեց, մեկ էլ՝ մի բուռ կիսատ:
Ինն ամիս, ինն օր, ինը ժամ, ինը րոպե որ թամամվավ,
Էրկու տղա էբեր,
Մեկըն թամամ, մեկըն կիսատ:
...Ջոջ տղի անուն էդիր Սանասար,
Պստիկին՝ էդիր Բաղդասար:

(«Սասունցի Դավիթ» հայկական ժողովրդական էպոս,
Երևան, 1961 թ., էջ10)

Հատվածի Ծովինար անվան ստուգաբանությունից պարզվում է, որ «Նար» նշանակում է աստվածուհի (**Յակոբ Ալթունեան,** Սասնայ Ծռեր Հայկական Դիւցազներգութիւն, «Խօսնակ», նոյ.-դեկտ. 2002 թ, էջ 11), որն իր Ներ ձևը պահպանել է բազում այլ ազգերի ավանդապատումներում: Ուրեմն Ծովի աստվածուհուց ծնվում է մեծ լեռը (Մի բուռ լիք ջուր խմեց, Մեկըն թամամ) և փոքր լեռը (մեկ էլ՝ մի բուռ կիսատ, մեկըն կիսատ): Որով, եթե «մի բուռ լիքը» խորհրդանշում էր ամբողջությունը, կատարյալը, ապա «մի բուռ կիսատը» խորհրդանշում էր ոչ կատարյալը: Եվ ծննդաբանական պատումի անվանումներում ամփոփվում էր արարումի գաղափարաբանությունը: Այսպես, Սանասար անունն իր մեջ ամփոփում էր կատարյալը և նշանակում էր Սուրբ սար, որի բառացի թարգմանությանը հանդիպում ենք ռուսական ավանդապատումի՝ «ИЛЬЯ МУРОМЕЦ И СВЯТОГОР«□ի մեջ: Ռուսական ա-

վանդապատումի հսկա Սվետագորը (Սվետագոր թարգմանաբար նշանակում է Սուրբ Լեռ), որն Իլյա Մուրոմեցի ավագ եղբայր է հայտարարվում, Արարատյան Սուրբ լեռներից էր, ուր և մեկնում է իր կրտսեր եղբոր՝ Իլյա Մուրոմեցի հետ.

Святогор-богатырь да будет больший брат,
Илья Муромец да будет меньший брат;
…И поехали оне да не в чисто поле,
А поехали оне да по святым горам,
По святым горам да Араратскиим.
(www.feb-web.ru/ ИЛЬЯ МУРОМЕЦ И СВЯТОГОР)

Ուրեմն, Սվետագորը հենց Սանասար բառի թարգմանությունն է: ***Սան*** արմատը հնդեվրոպական լեզվում նշանակում է *սուրբ*, *ա*-ն կապը և *սար* բաղադրիչը, այսինքն նույն Սուրբ Լեռ - Սվետագոր հասկացողությունն է առկա այդ անվան մեջ (այստեղ հարկ ենք համարում նշելու, որ Սանասարի Սան□ը առկա է նաև «Սասնա Ծռերում» Սասուն անվան ստուգաբանության մեջ, որի համաձայն «Դուք էն սասուն քարեր, ինչպես հաներ եք էն վերին տեղ, ու քարե ***սան սուն*** եք զարկե (սուրբ սյուն, որովհետև Սասնա բարբառում ***սուն*** նշանակում է ***սյուն***)…Մեր բերդի անուն էղավ Սասուն» («Սասնա Ծռեր», Երևան, 1961, էջ IX):

Նույնատիպ կազմվածք ունի նաև հայերեն Սանամ անունը, որը կազմված է Սան□սուրբ արմատից և գրաբարյան ամ□տարի բաղադրիչից, այսինքն սուրբ տարի: Գիտենք, որ Աստվածաշնչում գոյություն ունի Հոբելյանական□հիսուներորդ տարին մեկ մեծ թողության տարի հռչակելու սովորությունը (Ղևտացիների ԻԵ գլուխ) «11…Հիսուներորդ տարին թող ձեզ համար Հոբելյանական տարի լինի: ...12 …Այն թող ***սուրբ լինի*** ձեզ համար»: Այսինքն սուրբ տարվա գաղափարը):

Իսկ Բաղդասար անվան մեջ հանդիպում ենք մեկ այլ բառակապակցության, «Բաղդ» արմատով, «ա» կապով և «սար» բաղադրիչով: Սակայն այս անվան մեջ, ըստ մեր համեստ կարծիքի, բառարմատը պետք է կարդացվի Բախտ և ոչ՝ Բաղդ: Որով «Սասնա Ծռեր» դյուցազնավեպի այս հատվածը համապատասխանում է գիլգամեշյան պատումի աստվածների բնակավայրը համարվող, Նիցիր-Արարատ լեռան և, այսպես կոչված, Փոքր Մասիսի արարման պատմությանը:

Ինչպես նշել է Ա. Մովսիսյանը՝ «Շումերական դիցաբանության համաձայն՝ ի սկզբանե հավերժորեն գոյություն է ունեցել նախաստեղծ օվկիանոսը (իմա՝ Ծովի Նարը): Նրանից ծնվել է տիեզերական լեռը՝ կազմված միասնական երկրից ու երկնքից» (ՀՊՀԱ, էջ 39): Այս նույն մտքի որպես շարունակություն, «Գիլգամեշի» աքքադական տարբերակում կարդում ենք.

19. Նա (Գիլգամեշը) լսել էր լեռների մասին, որոնց անունն է Մաշու,
20. Հենց որ այդ լեռներին նա մոտեցավ,
Որ այգալույսն ու մայրամուտն են ամեն օր պահպանում,
Վերևում հասնում են երկնային ձուլվածքին,
Ներքևում՝ նրանց կուրծքը սանդարամետին է հասնում,-
24. Մարդակարիճներն են պահպանում նրանց դարպասները...
(«Հին Արևելքի պոեզիան», Երևան, 1982, էջ143)

Հարկ է նշել, որ Մասսի վիհերը կոչվել են սանդարամետ («Սասնա Ծռեր», էջ LVIII):

Թե՛ առաջին և թե՛ երկրորդ մեջբերումներում նկատելի է երկու լեռների առկայությունը,

«տիեզերական լեռը՝ կազմված միասնական երկրից ու երկնքից» և «Վերևում հասնում են երկնային ձուլվածքին, ներքևում՝ նրանց կուրծքը սանդարամետին է հասնում», երկնային և երկրային։

Հայտնի է, որ Մասիսը կոչվել է նաև «Ազատ Մասիս», իսկ զենդերեն yazata □ նշանակում է սրբազան, պաշտելի, ազնվական (Հայկական Սովետական Հանրագիտարան, հատ. Ա, էջ 691), որպես սուրբ, սրբազան լեռ արգելված էր նրա վրա բարձրանալը։ Բոլոր նրանք, որ կհամարձակվեին դա անել, պիտի հալածվեին։ Ինչպես նշել է Անժելա Տերյանն իր «Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան» գրքում. «Հայերը նաև սուրբ, աստվածային լեռ են համարել Մասիս սարը, որի գագաթին չպետք է դիպչեր մահկանացու մարդու ոտքը։ Հայոց հավատալիքներում լեռը պահպանում են քաջքերն ու վիշապազունները» (Երևան, 2002, էջ 26), իսկ շումերականում՝ «Մարդակարիճներն են պահպանում նրանց (լեռների) դարպասները»։

Թալինի շրջանում պահպանված մի ավանդություն կա, համաձայն որի Մասիս և Արագած լեռների մրցակցության արդյունքում Արագածն անիծում է Մասիսին՝ ասելով. «Աշխարհի երեսին մարդ չբարձրանա նրա կատարին, վրան մատաղ չմորթի։ Այդպես էլ լինում է։ Մասսի վրա մինչև օրս ***մարդ չի բարձրացել, ոչ էլ մատաղ է մորթվել***» (**Արամ Ղանալանյան**, Ավանդապետում, Երևան, 1969, էջ ԽԴ)։ Իսկ XIII դարի ֆրանսիացի ճանապարհորդ Ռուբրուկը վկայում է, որ հայերը Արարատի վրա չեն բարձրանում ոչ այնքան լեռան դժվարամատչելիության, որքան նրա ***սրբազանությունը չպղծելու*** պատճառով։ Ծերունի մի հայ Ռուբրուկին ասել է. «Ոչ ոք պետք չէ բարձրանա Մասիսի վրա, նա աշխարհի մայրն է» (**Հ. Հակոբյան**, Ուղեգրություններ, հ. I, 1932, էջ 18, Հայկական Սովետական Հանրագիտարան, էջ 691)։

Ի՞նչու ոչ ոք չէր բարձրացել կամ իրավունք չի ունեցել բարձրանալու այդ լեռան վրա և մատաղ անելու, որովհետև Լեռն այդ սուրբ էր, «Աստուածների ժողովի լեռ»-ն էր այն, աստվածների բնակավայրը։

Աստվածաշնչից արդեն գիտենք, թե հրեա ժողովրդի կյանքում ինչ կարևոր դեր է խաղացել Նոյը, նրա սերունդը (որից, համաձայն Սուրբ Գրքի, առաջացել է ողջ մարդկությունը՝ Հաբեթից հնդեվրոպացիները, Սեմից՝ սեմիտները, իսկ Քամից՝ մնացյալները) և փրկագործության Արարատ լեռը (Արարատ անունը, ի դեպ, մեզ հայտնի է Աստվածաշնչից, առաջին անգամ լեռն այդպես է կոչվել Սուրբ Գրքում)։ Այս անգամ նույն Աստվածաշնչում հանդիպում ենք Արարատ-Սանասար բառի մի նոր տարբերակի՝ Սինա լեռան։ Փորձենք հայերենում Սինան կոչել ոչ թե լեռ, այլ՝ սար, և քանի որ գիտենք, թե լեզվաբանության մեջ բնական է ձայնավորների տառադարձությունը, *ի - ա* ձայնավորների հնչունափոխությամբ Սինա բառի *ի*-ն տառադարձենք *ա*-ով, ապա կստանանք Հայոց նույն Սանա սարը՝ Աստվածների բնակած լեռան պատկերով։ Վերը նշված կարծիքի հիմնավորման համար ուշադրությամբ կարդանք Աստվածաշնչի Ելից գրքի 19-րդ գլխի շարադրանքը. «11...Տերը ողջ ժողովրդի աչքի առաջ իջնելու է Սինա լեռան վրա»։

Ուրեմն Սինան Աստծո գտնվելու վայրն էր այնպես, ինչպես Սանասար-Նիցիր-Արարատն էր հայտարարվում «աստվածների ժողովավայր»։

«12 «Զգո՛ւյշ եղեք, լեռան վրա մարդ չբարձրանա ու դրան չմոտենա, որովհետև ով մոտենա լեռան, մահվամբ պիտի պատժվի»։

Նույնն է պարագան Ազատ Մասիսի, ով փորձի դրա վրա բարձրանալ, քաջքերից ու վիշապազուններից պիտի պատժվի-հալածվի, կամ չեն կարող բարձրանալ, քանի որ «Մարդա-

կարիճներն են պահպանում նրանց (լեռների) դարպասները»։ Բացի այդ, «Հայկական լեռնաշխարհում էր գտնվում «Աստվածների ժողովի լեռը» (ՀՊՀԱ, էջ 28)։ Այսինքն այն լեռը, որը աստվածների ժողովավայրն էր, որակվել էր որպես Սուրբ լեռ-սար, և ահա դրա հստակ շարադրանքին ենք հանդիպում Աստվածաշնչում. «Մովսեսն ասաց Աստծուն. «Ժողովուրդը չի կարող Սինա լեռը բարձրանալ, որովհետեւ դու ինքդ ես մեզ պատվիրել և ասել, թե՝ «Մարդկանց ու լեռան միջև տարածություն կթողնես և ***լեռը սուրբ կհռչակես***» (Ելից ԺԹ 23)։

Աստվածային այդ հրահանգից հետո Սինա բառը պետք է որ եբրայեցերենում սուրբ նշանակեր (Աստվածաշնչից գիտենք, որ Աստվածային որևէ հրահանգի կատարումը պարտավորություն է, իսկ չկատարելը՝ անհնազանդություն։ Օրինակ՝ Ծննդոց ԻԲ գլխում «Աստված ասաց նրան (Աբրահամին). «Ա՛ռ քո միակ որդուն՝ քո սիրելի Իսահակին, գնա՛ մի բարձրադիր տեղ և այնտեղ՝ ***լեռան վրա***, ...ողջակիզի՛ր նրան»։ Աբրահամն առավոտյան վեր կացավ, հետը վերցրեց իր որդի Իսահակին...եկավ այն տեղը, որ Աստված ասել էր նրան (ողջակիզելու)»։ «Զաքարիա քահանային Աստծո հրեշտակը պատվիրեց՝ ասելով. «Քո կինը՝ Եղիսաբեթը, մի որդի կծնի քեզ, և նրա անունը Հովհաննես կդնես»։ «Եվ նա իր տղայի անունը դրեց Հովհաննես» (Ղուկ. Ա 13)։ «Գարբրիել հրեշտակը Մարիամին հրահանգեց՝ ասելով. «Մի՛ վախեցիր, Մարիա՛մ, ... Աստծուց դու շնորհ գտար։ Եվ ահա՛ դու կհղիանաս և կծնես մի որդի ու նրա անունը Հիսուս կդնես»։ Նա իր որդու անունը դրեց Հիսուս» (Ղուկ. Ա 30-31)։ Ուրեմն Աստվածային հրահանգի կատարումը, նույնիսկ անվանակոչության պարագայում, պարտադիր էր, մինչդեռ ***Սինա*** անունը սուրբ չի նշանակում։

Սինա բառի ստուգաբանությունը պարզելու համար դիմեցինք «Հրեական Հանրագիտարան»-ի մեջ ***Սինա*** անվան բացատրությանը և, ի զարմանս մեզ, գտանք հետևյալը. «Die Etymologie des Wortes Sinai ist dunkel. (Judisches Lexikon, 2 Auflage 1987, JƑdischer Verlag bei AthenƠum, Band IV/2, s. 436), այսինքն. «Սինա բառի ծագումը մութ է» և ապա միտքը շարունակելով հավելում էր. «Manche der neueren Bibelforscher halten es fƑr unwahrscheinlich, dass diese Lokalisation der biblischen VorgƠnge historische begrƑndet sei, weil die Sinai-Halbinsel keinen Vulkan aufweist, die Darstellung in Exodus 19 aber einen solchen vorauszusetzen scheine (Brennender Berg, Donner, Blitz, Wolke, Rauch, Feuer, Schmelzofen, Beben), այսինքն «նորագույն շրջանի Աստվածաշնչի որոշ մասնագետներ (ինչպեսին է Գրեսսմանը (H. Gressmann, Moses und seine Zeit, 1913, «36, 409-419), անհավանական են համարում գործողությունների աստվածաշնչյան տեղադրման պատմականորեն հիմնավորված լինելը, քանի որ Սինայի թերակղզում հրաբխային առկայություն չկա։ Մինչդեռ Ելից գրքի ԺԹ գլուխը նմանատիպ պատկեր է ներկայացնում (այրվող լեռ, որոտում, կայծակ, ամպեր, ծուխ, կրակ, շարժում-երկրաշարժ» (Ելք ԺԹ 16□18)։

Ուրեմն այն սարը, որը հայտնի է որպես Սինա, պարզապես վերանվանված սար է, սակայն ոչ այն, որը պիտի Սուրբ սար-լեռ հռչակված լիներ, ինչպես Աստված պատվիրել էր։ Մինչդեռ, ի տարբերություն Սինա լեռանը վերագրվող «այրվող լեռ, որոտումի, կայծակի, ամպերի, ծուխի, կրակի, շարժումի-երկրաշարժի լեռ», սակայն սարին չհամապատասխանող բնութագրումների, այլ է Արարատ (իմա՝ Սանասար) լեռան բացատրությունը. «Արարատ, Մասիս, հանգած հրաբխային մեկուսացած լեռնազանգված։...Արարատը բազմաձին հրաբուխ է։...Արարատի զառիկող լանջերը և հատկապես մերձգագաթնային սարավանդները ծածկված են հողմահարված հրաբխային ապարների քարակարկառներով («քարե ծովեր»), իսկ գագաթը՝ հավերժական ձյունով։ ... Արարատը Հայկական լեռնաշխարհի ակտիվ սեյսմիկ շրջաններից է» (ՀՍՀ, 1 հատ., էջ 691)։ Եվ այսպես, Սուրբ Գրքում Սինա լեռանը

տրվող որակումները բառ առ բառ համապատասխանում են Սանասար-Արարատ լեռանը։

Ահա թե ինչն է մեզ պարտադրում մտածել, որ Սուրբ Գրքի Հնգամատյանի Սինա սարը պարզապես փոխառումն է հնչյունափոխված Սանա-սուրբ սարի, ուր պահպանված է հայերեն տարբերակի սկզբնակերպը հանդիսացող սուրբ լեռան գաղափարով՝ Սանա-Սինա սարը։

Եվ այսպես, ակնհայտ է, որ Արարատ լեռան մասին գոյություն ունեցող թե՛ հայկական, թե՛ շումերական և թե՛ աստվածաշնչյան տարբերակները գալիս են իմաստավորելու այդ լեռան սրբազան լինելը։ Հաստատելու, թե աստվածների ժողովավայրը, Աստծու բնակավայրը հանդիսացող այդ լեռը հենց ինքը Սանա սարն է՝ Սուրբ Սարը-Լեռը։ Այսինքն Սանասարը (և հրեաների մոտ նույն ձևով պահպանված Սինասարը) ոչ այլ ինչ է, քան աստվածաշնչյան տեքստով հայտնի Արարատ լեռան զուտ հայկական հնագույն անվանումը։

Իսկ Բախտասա՞րը, այսպես կոչված՝ Փոքր Մասիսը, ինչո՞ւ Բախտասար։ Ըստ մեր համեստ կարծիքի, քանի որ արգելված էր Սանասարի վրա բարձրանալը («...Մասսի վրա մինչև օրս մարդ չի բարձրացել, ոչ էլ մատաղ է մորթվել», «Ոչ ոք պետք չէ բարձրանա Մասիսի վրա, նա աշխարհի մայրն է»), քանզի այն աստվածների բնակավայրն էր, ապա բախտդ կարող էիր փորձել՝ բարձրանալով նրա կեսը հանդիսացող, կես ափ ջրից ծնված, երկրայինի խորհրդանիշը հանդիսացող Բախտասարի վրա։ Մեր այս տեսակետը հաստատելու է գալիս մեկ այլ ավանդություն. «...Նոյը բարձրանում է Մասսի գագաթը և այնտեղից շնորհակալության զոհ մատուցում Աստծուն՝ ի պատիվ խաղողի որթի և գինու» (**Ա. Ղանալանյան,** Ավանդապետում, Երևան, 1969, էջ 336)։

Ավանդապատումներում նշված Մասիսը չի ճշտված մեծի՞, թե՞ փոքրի մասին է, քանի որ Թալինի վերոնշյալ ավանդապատումից հայտնի էր, որ «Մեծ Մասիսի վրա ոչ ոք զոհ պիտի չմատուցեր», ապա այստեղ նշված Մասիսը հենց փոքր սարն է, որի վրա զոհամատուցումը արգելված չէր, այսինքն «բախտը» կարելի էր փորձել հենց փոքրի վրա։ Այս տեսակետին է մեզ առաջնորդում «Ավանդապատումի» էջ 363□ի Արտավազդին նվիրված պատումում նշված «Եւ հեծելազաւրքն համբաւեցին թէ չաստուածքն Շիդարայ յափշտակեցին զնա եւ եդին ի սեաւ լեառն, որ է ***աւագ Մասիս***»։

Ուրեմն, եթե մեծ սարը կոչվում էր ավագ Մասիս , փոքրը պիտի կոչվեր «կրտսեր Մասիս», որով թե՛ մեծ և թե՛ փոքր սարերը կոչվում էին նույնանուն՝ Մասիս։ Ուրեմն Մասսի գագաթին Նոյի մատուցած զոհաբերությունը կատարվել է ոչ թե ավագ Մասիս-Սանասարի, այլ կրտսեր Մասիս-Բախտասարի վրա։

Այսպիսով, հստականում է, որ շումերական դյուցազնավեպի նախաստեղծ օվկիանոսից ծնված տիեզերական լեռը երկրի ու երկնքի միասնականությունից կազմված, ինչպես նաև նույն գրքի երկնային ձուլվածքին հասնող և կուրծքը սանդարամետին մոտեցող լեռների առկայության մեջ խոսվում է Սուրբ-Երկնայինն իր մեջ ամփոփող Սանասարի և երկրայինի խորհրդանիշ Բախտասարի մասին։

Դառնալով Նավասարին, եթե հայերենում ունենք Սանասար և Բախտասար բառակազմությունը, որոնք հայոց Սուրբ սար և նրան անքակտելիորեն կապված Բախտի սար հասկացողություններն են ամփոփում, ապա դրանց բառակապակցության նմանօրինակով էլ կազմված է ***Նավասար*** բառը։ Քանի որ Սանասար-Բախտասարի շրջակայքում ապրած ժողովրդի մեծագույն տոնը պիտի լիներ ինչպես շումերական Զրահեղեղից փրկված Ուտնափիշտիմի, այնպես էլ աստվածաշնչյան Նոյի միջոցով մարդկությանը տրված փրկության հիշատակությունը նշելու մեծագույն տոնը, որը Աքքադական դյուցազնավեպի 11-րդ պնակիտի մեջ է ստացել իր ձևակերպումը. «Նավը կանգ առավ Նիցիր Լեռան վրա» («Հին Արևելքի դյուցազնավեպ», Երևան, 1963, թարգմանիչ՝ Ն. Մարտիրոսյան, էջ 160, ՀԱՊ) և Աստվածաշնչում.

«տապանը նստեց Արարատ լեռան վրա» (Ծննդոց Ը 4)։

Ուրեմն կասկածից վեր է, որ հայ ժողովրդի պատմական այդ տոնը ոչ թե հեթանոսական շրջանին վերաբերող նոր տարին էր, այլ ինչպես հայոց, այնպես էլ ողջ մարդկության դարագլուխ կազմող փրկագործության, Ջրհեղեղից հետո մարդկային կյանքի շարունակականության հիշատակության տոնն է, որով ոչ թե Նավասարդ, այլ՝ Նավ-ա-սար-Նավասար, ոչ թե Արարատ կամ Մասիս, այլ՝ Սանասար և Բախտասար։

ԱՐՄԵՆ ԴՊԻՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Գևորգյան Հոգևոր Ճեմարանի
(Աստվածաբանական համալսարան)
Ե լսարանի սան

ԴՊՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (SCHOLASTICA)՝ ԻԲՐԵՎ ԿՐՈՆԱԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՔՐԻՍՏՈՆՅԱ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

“Scholasticus” բառն առաջ է եկել լատիներեն “schola” և հունարեն “σχολή” ձևերից, որ թարգմանաբար նշանակում է «դպրական», «դպրոցական» կամ «ուսումնական»: Սովորաբար այս եզրույթով է բնորոշվում միջնադարյան (Թ-ԺԴ դդ.) վանական դպրոցներում դասավանդվող կրոնական իմաստասիրությունը (φιλοσοφία): Հետաքրքրական է, որ “σχολαστικός” արտահայտությունն առաջին անգամ գտնում ենք տակավին Ք. ա. Դ-Գ դարերում ապրած հույն իմաստասեր-տրամաբան Թեոֆրաստի՝ իր աշակերտին գրած նամակում[1]:

Ի տարբերություն խորհրդապաշտության (mystica)՝ դպրականությունը իմաստասիրությունը կիրառում է կրոնաեկեղեցական ճշմարտությունները հիմնավորելու, Հայտնութենականության էությունն ու բնույթը բանականության համար մատչելի դարձնելու նպատակով: Նրա առաջնային անելիքներից էր համակարգել աստվածաբանական գիտելիքները՝ մեծ մասով հենվելով Եկեղեցու՝ հեղինակություն համարվող Հայրերի կրոնագիտական և աստվածաբանական ողջ գրավոր ժառանգության վրա, միաժամանակ արտածական (deductive) մտահանգումների միջոցով ընդհանուրից բխեցնելով մասնավոր տիպի եզրահանգումներ:

Դպրականության ձևավորումն անմիջականորեն կապվում է Արևելյան Եկեղեցու նշանավոր Հայրերից մեկի՝ Հովհաննես Դամասկացու անվան հետ: Դպրական իմաստասիրության պատմական զարգացման փուլում կարելի է առանձնացնել երեք հիմնական շրջաններ. ա) դպրականության ձևավորումը (վաղ դպրականություն) - Թ-ԺԲ դարեր, բ) հասուն դպրականություն - ԺԳ դար, գ) դպրականության անկումը - ԺԴ-ԺԵ դարեր: Այս շրջանների եկեղեցական իմաստասիրության մեջ առաջնային տեղ էին զբաղեցնում հավատքի ու բանականության, աստվածաբանության ու իմաստասիրության, աստվածային նախախնամության ու մարդու կամքի ազատության, ընդհանուրի ու եզակիի փոխառնչակցության մի շարք հարցեր: ԺԳ դարում որոշ երկրների քաղաքական, մշակութային և տնտեսական կյանքի վերելքը պայմանավորեց դպրական իմաստասիրության զարթոնքը: Այս ընթացքում թարգմանվեցին Արիստոտելի և արաբ իմաստասերների հեղինակած մեծ թվով երկեր, բացվեցին ֆրանցիսկյան և դոմինիկյան միաբանությունները, հոգևոր համալսարաններ, որոնցից աչքի էին ընկնում հատկապես Փարիզի և Օքսֆորդի իմաստասիրական դպրոցները:

---

[1] **Diog. Laert**. V, 2, 37, տե՛ս **Христианство**, энциклопедический словарь, том 2, Москва, 1995, стр. 657.

Արիստոտելյան իմաստասիրության տարածումով վերարծարծվեցին հավատի և բանականության, աստվածաբանության և իմաստասիրության փոխհարաբերության հարցերը: Դպրական իմաստասիրության մեջ, սակայն, ձևավորվել էին որոշ ուղղություններ, որոնք այնքան էլ դրական վերաբերմունք չունեին բանապաշտական (rational), հատկապես արիստոտելյան իմաստասիրության նկատմամբ: Այսպես, խորհրդապաշտ մտածողները, ազդվելով Երանելի Օգոստինոսի հայացքներից, առավելաբար արտահայտվում էին ընդդեմ բանապաշտական իմաստասիրության՝ բացառելով դրա հնարավոր թափանցումը հավատքի ոլորտ: Մինչդեռ բանապաշտ իմաստասիրողները, ջատագովելով արիստոտելյան իմաստասիրությունը, փորձում էին այն համադրել քրիստոնեական հիմունքների հետ. ասել է, թե արիստոտելականությունը քրիստոնեացնել: Սակայն հաճախ տեղի էր ունենում վերջինի ճիշտ հակառակ գործընթացը. արիստոտելացվում էր քրիստոնեությունը: Կարծեք վերածնունդ էր ապրում երբեմնի գնոստիցիզմը, որ *«կը հաւակնէր փոխարինել պարզ հաւատքը* (πι'στισ) *՝փոխանակ հաւասարակշռուած իմաստասիրութեան մը գործածելով այլասերած պղատոնականութիւն (կամ արիստոտէլականութիւն) մը...»*[2]:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ԴՊՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

Իր համապարփակ նկարագրով դպրականությունը ներկայանում է իբրև կրոնաեկեղեցական իմաստասիրություն, որը ճիգեր է գործադրում՝ համերաշխելու իմաստասիրական կարգույթներն (categoria) ու նրա ընկալյալ իմացաբանությունը քրիստոնեական-եկեղեցական հրամանակարգ (dogma(tic) տեսությունների հետ: Իր տեսակի մեջ սա առաջին փորձն է, որով ցույց է տրվում նախնական դպրականության հայրախոսական իմաստասիրությունը: Համերաշխման այսօրինակ կերպով նպատակ ունենալով մարդկային մտացականությունը (intellect) դույզն-ինչ հասանելի դարձնել հավատո ինքնությանը՝ դպրականությունը և հայրաբանությունը իրարից զանազանվել են այն բանում, որ վեջինիս համար այդ ինքնությունը համարվել է Ս. Գիրքը: Եվ իմաստասիրությունից օգնություն է հայցվել միայն այն դեպքերում, երբ հրատապ անհրաժեշտություն է նկատվել՝ «բանականության լույսի ներքո» բանաձևելու աստվածային Ինքնահայտնութենականությամբ մեկընդմիշտ տրված վարդապետական հրամանակարգերը: Այլ խոսքով, հավատքի իսկությունը կայանում է Ս. Եկեղեցու հոգեկիր Հայրերի ամրագրած հրամանակարգերի մեջ, իսկ իմաստասիրության համերաշխումը՝ առավելաբար վերջիններիս պարզաբանման, հիմնավորման և համակարգման մեջ. ահավասիկ և դպրականության իմաստն ու էությունը: Սրա և հայրաբանության միջև սկզբունքորեն առճակատում գոյություն չունի, քանզի հայրաբանության պատմության վաղնջական ժամանակներից սկսյալ ի հարկե յուրացվել են իմաստասիրական որոշ հարազատ ընկալումներ՝ աստվածաբանական հրամանակարգերում հստակություն մտցնելու միտումով:

Դպրականների իմաստասիրումը մեծ մասամբ հիմնարկվում էր Ս. Եկեղեցու ճշմարիտ ուսուցումների հաստատուն հենքի վրա, որոնք միջնադարում ամենուր տիրապետող էին: Աստվածաբանական-իմաստասիրական ավանդության այս երկ-

---

[2] **Շահէ արքեպս. Ամիմեան**, *Վարդապետական աստուածաբանութիւն*, դասախօսութիւններ, անտիպ, էջ 76:

միասնության մեջ, ինչ խոսք, բարձրագույն տեղը սեփականվում էր եկեղեցական սրբազան ուսուցմանը: Դրանով հանդերձ, աննվազ հարգանքի և պատկառոտ ուշադրության էր արժանի նաև իմաստասիրական ավանդությունը: Եվ անհաղթ դավթյան հիացումով մենք էլ կարող ենք ասել, թե «ովքեր գեթ մեկ անգամ տենչում են իմաստասիրական խոսքի և ունենում են պատեհ առիթը՝ լոկ մատի ծայրով ճաշակելու նրա քաղցրությունը, նրանք, բոլոր երկրավոր հոգսերին «մնաք բարով» ասելով, ողջախոհ մի մոլությամբ անձնատուր են լինում նրան»[3]: Ուստի հրամայական էր դարձել միաբանել այդ երկու ավանդությունները և դրանք մեկտեղել համընդհանուր նպատակի մեջ: Սույն հրամայականին ընդառաջ և մեկնելով այն սկզբունքից, որ թե(իմացականությունը և թե(, մանավանդ, Հայտնութենականությունը սերում են Լուսո միևնույն Աղբյուրից՝ Աստծուց, տրամաբանում են, որ աստվածաբանության և ստուգական իմաստասիրության միջև որևէ ներհակություն չի կարող հանդուրժվել: Եվ հապացույց այդ երկուսի ճշմարտացիության՝ կարող էր լինել սոսկ դրանց համերաշխումը: Դպրական հրամանակարգերի ծաղկունքի շրջանում, իսկապես որ, աստվածաբանությունը և իմաստասիրությունը համընթաց քայլերով առաջացել են ձեռք ձեռքի տված: Եվ միայն միջնադարի մայրամուտին աստվածաբանությունն ու իմաստասիրությունը տարանջատվում են միմյանցից:

Աստվածաբանությունը հիմնվում է աստվածային Հայտնութենականության վրա, որն ըստ ինքյան կրում է անդրանցական, վերանցական (transcendent) բնույթ: Մինչդեռ իմաստասիրությունը հաստատվում է մտային-իմացական սկզբունքների վրա կամ, ինչպես դպրականներն էին սիրում ասել՝ «բանականության լույսի ներքո»: Միևնույն ժամանակ այն չի հավակնում պնդելու, թե ինքն ի զորու է գոհացնել մեր մտքի երկնասլաց թռիչքը, որ ճգնում է հասնել աստվածային հայեցողության: Համարյա բոլոր դպրականներն ակնածանքով էին վերաբերվում հին իմաստասերներին, ովքեր կարողացան հասնել մտավոր իմացության բարձունքները, ինչը, սակայն, չի նշանակում, թե իմաստասերները մարդկության առջև սփռեցին ողջ ճշմարիտը: Իմաստասիրության նկատմամբ աստվածաբանության գերազանցությունը կայանում է նրանում, որ ճանաչողության հասնելու համար այն ունի գերագույն սկզբունք, և որ իրենում են բովանդակվում այնպիսի բարձրագույն ճշմարտություններ, որոնց բանականությունն ինքնին անկարող է հասնել: Դպրականների համար այդ ճշմարտություններն աներկբայորեն իրական են, որոնք էլ կազմում էին նրանց համակարգված ուսուցման էատարրերը:

Իրենց իսկ խոսքերով ասած՝ իմաստասիրությունը հանդես էր գալիս իբրև աստվածաբանության աղախին (ancilla theologiae)[4]: Դպրական ձևավորման սեմին իմաստասիրական միտքը տակավին չէր գտնվում իր ծառայական կերպի մեջ՝ ի հնազանդություն եկեղեցական ուսուցման: Այսպես, իռլանդացի իմաստասեր Հովհան Էրիուգենան համոզված էր, որ «մեր բոլոր հետազոտությունները պետք է բխեն Հայտնութենականության ճշմարտացիության նկատմամբ մեր ունեցած հավատքից»: Այսուհանդերձ, ճշմարիտ կրոնը նա չէր միտում հասկանալ զուտ եկեղեցական ուսուցման տեսքով՝ նախապատվությունը տալով տրամաբանությանը: Նրանից հետո բանականությունը հետզհետե համաձայնեցվեց եկեղեցական ուսուցման հետ:

ԺԳ դարի կեսերին այդ համաձայնեցումը հիմնավորվում էր այն պատճառաբա-

---

[3] **Դավիթ Անհաղթ**, *Երկեր*, Երևան, 1980, էջ 35:

[4] **Христианство**, стр. 659.

նությամբ, թե քրիստոնեական հրամանակարգերի (երրորդաբանություն, մարմնավորում և այլն) յուրահատկությունները իբր արտաբերված են բանականությամբ փաստարկելի մարզից: ԺԴ դարում անվանականության (nominalism) վերազարթոնքի հետ կապված, աստվածաբանական կացության՝ բանականությամբ փաստարկելի շրջանակն օրավուր նեղանում է այնքան, մինչև որ եկեղեցական ուսուցումը իմացականության հետ համերաշխ պահպանելու դպրականների բոլոր ջանքերն այլևս ի դերև ելան: Արդյունքում՝ արիստոտելյան դպրոցական իմաստասիրությունն իսպառ տարանջատվեց քրիստոնեական հավատքից:

Քրիստոնյա աստվածաբանները թեև խստիվ չէին վարվում բոլոր դպրականների հետ, բայց և այնպես դրսևորում էին կրոնական տիրակալ միտում: Միջնադարում ողջ հոգևոր կյանքն ուղղորդում և դրան աստվածմերձեցման ճանապարհին էր հաստատում քրիստոնեական Եկեղեցին: Եվ միանգամայն բնական էր, որ այդ ժամանակաշրջանում իմաստասիրությունը ևս որդեգրեր աստվածաբանական կողմնորոշում:

Գործնական բնույթի իրագործումներն իրենցից ներկայացնելու էին չափազանց հղկված մի հանգանակ, որը հանդիսանալու էր նրա բարգավաճման գրավականներից մեկը: Սույն մտահոգությամբ էլ՝ ընդհանրական բնույթ կրող հեղինակությունն իր քայլ առ քայլ վերընթացի ճանապարհին խորհում էր իր հանգանակի մեջ ներառել կանոնական այնպիսի սկզբունքներ, որոնք ընկած պիտի լինեին այդ համակարգի հիմքում: Դասակարգային այսօրինակ երևույթ նկատելի է նաև միջնադարյան իմաստասիրության մեջ, որը ևս ակնկալում էր այդպիսի մի հանգանակ: Արդյունքում՝ հայրախոսական իմաստասիրությունը պարգևեց ամբողջական հանգանակների միակտոր շարան: Դա հատկապես տեղի ունեցավ դպրականության ծաղկման շրջանում, երբ մեկը մյուսի հետևից հրապարակ իջան անվանի աստվածաբաններ Ալբերտ Մեծի, Թովմա Աքվինացու և Դունս Սկոտի աստվածաբանական-իմաստասիրական բնույթի հանգանակները:

Դպրականների ուշադրությունը հայսժամ սևեռվում է այն բանի վրա, որ իմաստասիրողների դատողություններում վաղուց ի վեր իշխում էր նյութը (materia): Ուստի դրանց ձևական մշակման համար պատշաճ էր պահանջել նպատակադիր քննություն և հետևողական աշխատանք: Այսկերպ, փաստորեն, ընդգծվում էր դպրական իմաստասիրության մյուս հատկորոշ գիծը՝ հակվածությունը դեպի ձևը, ձևական մտածողությունը, որը գոյություն ուներ տակավին Արիստոտելի ժամանակ[5]: Այս առումով դպրականությունը հաճախ մեղադրվում էր ձևապաշտության (formalism) մեջ: Այսօրինակ մեղադրանքները հիմնազուրկ չէին, սակայն հարկ է նկատի ունենալ, որ այդպիսի ձևապաշտությանը փարվելը պարզապես անխուսափելիություն էր: Առաջնահերթ խնդիրը կայանում էր նրանում, որ հին աշխարհի իմաստասիրական մտքի կոթողներից պետք է սեփականվեր այն ընդունելին, որն ի

[5] Ձևի և նյութի հարաբերակցությունը, ինչպես նաև իրերի առաջացման երևույթը բացատրելու համար Արիստոտելը ներմուծում է նոր հասկացություններ՝ □հնարավորություն□ (potencia) և □իրականություն□ (energie): Այսու, ամեն մի առաջացում, ըստ նրա, անցում է □հնարավոր□ գոյությունից □իրական□ գոյության: Արիստոտելի կարծիքով, յուրաքանչյուր իրի առաջացման հիմքում ընկած են չորս պատճառներ՝ նյութ, ձև, շարժում, նպատակ: Քանի որ ձևն ընդգրկում է և' շարժում, և' նպատակ, ուստի իրերի առաջացման համար հարկավոր են նյութական և ձևական պատճառներ (**Մեյրան Զաքարյան**, *Փիլիսոփայության պատմություն*, Երևան, 2000, էջ 74):

սպաս պիտի դրվեր ժամանակի աստվածաբանության բծախնդիր պետքերին: Այսպիսով, նախապես հանձնարարական էր լրացնել իմաստասիրական ավանդության բացերը և ապա հրամայական էր հարթել ներկայի ու անցյալի հեղինակությունների միջև առկա տարաձայնությունները: Սրանցից զատ, անհրաժեշտություն էր նաև իմաստասիրությունը համերաշխել աստվածաբանության հետ, սահմանել և հիմնավորել հավատքի նկատմամբ իմացականության հարաբերության որպիսությունը, գտնել հավատո ճշմարտությունների մտամատչելի բացատրությունները և, վերջապես, գյուտել աստվածաբանական-իմաստասիրական մի համադրույթ: Այս ամենն, ինչ խոսք, միջնադարյան մտածողությանը դրդում է առաջադեմ զարգացման: Ահա թե ինչու դպրականների իմաստասիրման մեջ անազնիվ է տեսնել օգոստինյան կամ արիստոտելյան մտքի սոսկական պատճենումներ:

ԱՆԴՐԱԴԱՐՁ ԴՊՐԱԿԱՆ ՄՏՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ

Դպրական իմաստասիրության պատմությունը նպատակահարմար է ստորաբաժանել երկու ընդարձակ մասերի: Առաջին ենթաշրջանը, երբ սկիզբ է առնում նախնական դպրականությունը, ընդգրկում է Թ դարից մինչև ԺԳ դարասկիզբը: Այն, ընդհանուր առմամբ, իրենից ներկայացնում է արիստոտելական տրամաբանության և նորպղատոնական իմաստասիրության հավակնոտ մերձեցումը եկեղեցական ուսմունքին: Երկրորդ ենթաշրջանում, որն ընդգրկում է ԺԳ դարասկզբից մինչև միջնադարի մայրամուտը, դպրականությունը հասավ իր զարգացման և ընդարձակման աննախադեպ վերելքին: Այն այս անգամ ջանում էր արիստոտելյան իմաստասիրությունը, որ տակավին դպրականության ձևավորումից սկսած ձեռք էր բերել լիակատար ճանաչում, համերաշխել քրիստոնեաեկեղեցական դավանաբանության հետ:

Սովորաբար դպրական իմաստասիրության սկիզբ է համարվում դասական շրջանի իմաստասիրական, ի մասնավորի՝ նորպղատոնական մտքի ինքնակերպ և խիզախ վերափոխումը, որը Թ դարի կեսերին անմիջականորեն կապվում է Հովհան Էրիուգենայի անվան հետ: Նրա՝ սկզբնական շրջանի հայացքները կենսունակ են մնում մինչև ԺԲ դարի միջակայքը՝ բնութագրվելով պղատոնական շերտի գերակայությամբ, որը մեկնաբանվում էր օգոստինական ազդեցության առկայությամբ: Բեկումնային նշանակություն ունեցավ արիստոտելյան մտքի ճանաչողական սահմանների ընդլայնումը, որի համար դպրականությունը մասնակիորեն երախտապարտ է նաև արաբ իմաստասերներին: Սակայն ժամանակ առ ժամանակ Արիստոտելի ուսմունքը կասկածանքով է դիտվել քրիստոնեական Եկեղեցու կողմից, որն ուներ իր պատճառները: Այսպես, Հռոմի Գրիգոր Թ Պապը (1227-1241) հրահանգում է բացառել արիստոտելյան որոշ տարամետ գաղափարների դասավանդումը տեղական դպրոցներում: Այս քայլով դրսևորվում էր առավել զգուշավոր վերաբերմունք Արիստոտելի՝ վաղուց ի վեր հրապարակ իջած երկերի նկատմամբ: Եվ միայն ԺԳ դարի միջասահմանում արիստոտելականությունը, քրիստոնյա իմաստասիրության հանդիման, ընդունվում է բարիդրացիական հանդուրժողությամբ:

Այսուամենայնիվ, անտեղի է ենթադրել, որ դպրականության գոյությունը, նրա վերելքն ու վայրէջքը կախում ունեին հին աշխարհի, հատկապես արիստոտելյան իմաստասիրության փայլատակումներից, և որ միջնադարում քրիստոնեական իմաս-

տասիրությունը նախորդների համեմատ գտնվում էր ստրկական վիճակում: Ինչպես Բ-Է դարերի Եկեղեցու Հայրերը, դպրականները ևս դասական իմաստասերների մտածումներում փորձում էին գտնել քրիստոնեական ճշմարտությունների՝ թեկուզ սակավաթիվ հունդեր, որոնցից շատերն, ընկնելով բարեբեր հողում, պիտի պտղաբերեին «*էր որ հարիւրաւոր, և էր որ վաթսնաւոր, և էր որ երեսնաւոր*» (հմմտ. Մատթ. ԺԳ 8): Այսպես, Պղատոնը թեև հավատքի հարցերում ուներ որոշ օտար տեսումներ, սակայն դրանցով հանդերձ նրա վաստակն ամենևին չէր ստվերվում: Նա, ի դեպ, ուսուցանում էր Աստծո կեցության մասին՝ միմյանցից տարանջատելով ժամանակը հավիտենությունից, նյութականը՝ հոգևորից, ժխտելով բանականության՝ իբրև ճանաչողության միակ աղբյուրի անհրաժեշտությունը: Մինչդեռ Արիստոտելը դպրականներին գերեց քրիստոնեական ընկալմանը հարիր կյանքի և հոգու վերաբերյալ իր տեսությամբ: Ըստ նրա՝ հոգին մարմնի կենդանությունն է, կյանքի առհավատչյան…

Հաշվի առնելով այս ակնհայտ համանմանությունները՝ մասամբ հնարավոր դարձան դասական իմաստասերների որոշ հայացքների թափանցումները դպրական մտքի զարգացման ճանապարհին: Այդուհանդերձ, Ս. Եկեղեցու վարդապետանոցները, ի դեմս դպրականների, առավել բարձր մակարդակում էին գտնվում իմաստասիրական այնպիսի դպրոցներից, ինչպիսիք էին Ակադեմիան և Լիկեյը:

Դպրականության ծագումը հիմնապես կապվում է ոչ թե Թ դարի արևմտյան մտածող Հովհան Էրիուգենայի իմաստասիրության հետ, այլ Է-Ը դարերի հույն վանական Հովհան Դամասկացու աստվածաբանության հետ: Նրա «Աղբիւր գիտութեան» (“Πηγή γνώσεως”) աշխատությունը ներկայացնում է հայրախոսական աստվածաբանության համառոտ շարադրանքը՝ իմաստասիրության վերաբերյալ ամփոփ ներածականով: Ընդ որում, իմաստասիրությունը հենց սկզբից հանդես է գալիս իբրև աստվածաբանությանը հնազանդ աղախին: Սակայն վաղ դպրականության բուն առաջնորդը Օգոստինոս Երանելին է, ով անհրաժեշտաբար հավատքի բովանդակությանը հաղորդեց բանապաշտական համակարգված տեսք:

Դպրականներն աստվածաբանությունը դիտում էին իբրև մի գիտություն, որն իր մեջ համատեղում էր կրոնականության բոլոր տարրերը: Այս շավղին առաջինը ոտք դրեց ԺԱ-ԺԲ դարերի անգլիացի աստվածաբան Անսեղմոս Քենթերբերացին, որին ժամանակակիցները կոչում էին «երկրորդ Օգոստինոս»: Նրա հայտնի նշանաբանն էր՝ «*Հաւատք ի խնդիր իմացութեան*» (“Fides quaerens intellectum”): Աստծո կեցության մասին անսեղմյան գոյաբանական ապացույցներով էլ սկզբնավորվում է բանապաշտական աստվածաբանությունը: Առաջին անգամ փորձ է արվում հավատքը բանականացնել կամ գեթ մերձեցնել բանականությանը: ԺԲ դարը նպաստավոր էր նաև խորհրդապաշտական իմաստասիրության համար, որի ականավոր ներկայացուցիչն էր կաթոլիկ աստվածաբան Բերնար Քլերովացին: Հանդես գալով եկեղեցական ավանդության, նրա վարդապետության պաշտպանությամբ՝ նա կշտամբել է դպրականության մեջ նորամուծություններ սերմանողներին:

ԺԳ դարում աստվածաբանությունն սկսում էր հանդես գալ իբրև գիտություն[6]: Այսու, սեղանին էին դրվում հարցեր, որոնք կարոտ էին պատասխանների: Այսպես, անհրաժե՞շտ է արդյոք այդ գիտությունը, թե՞ ոչ. ունի՞ արդյոք նաև գործնական, թե՞

[6] Գիտական աստվածաբանության հիմքերն առաջին անգամ դրվել են Բ-Գ դարերում Կղեմես Աղեքսանդրացու և Որոգինեսի կողմից (տե(ս **Եզնիկ ծ. վրդ. Պետրոսյան**, *Հայրաբանություն*, մաս Ա, Էջմիածին, 1996, էջեր 118, 131):

միայն տեսական բաժիններ. ո՞րն է նրա առարկան, նպատակը, մատուցման եղանակները. ինչպե՞ս այն սահմանել. ի՞նչ կարգով ավանդել… Աստվածաբանությունը լայն իմաստով աստվածգիտություն է, աստվածճանաչողություն: Ս. Եկեղեցու Հոգեշնորհ Հայրերը շարունակ առաջնորդվել են Պողոս Առաքյալի կարգախոսով. «*Հաւատք ձեր մի(իցեն իմաստութեամբ մարդկան, այլ զօրութեամբ Աստուծոյ*» (Ա Կորնթ. Բ 5):

Ալբերտուս Մեծն է(լ ավելի է առաջադիմում: Ըստ նրա՝ աստվածաբանությունն իր իմաստության շնորհիվ է ճանաչվում իբրև սրբազան գիտություն և իմաստասիրության բարեկամ: Թովմա Աքվինացին աստվածային այդ իմաստությունը համարում է «*հիմն հաւատոյ*» և հնարավոր ճանաչողության ժամանակական ավարտ (philosophia prima): Աստվածաբանության՝ նվաճված բարձունքում հարամնալու համար հարկավոր էր ոչ միայն «գիտական» եռանդ, այլև մշտատև ապավինում կրոնական սկզբունքներին: Մտավոր աշխարհին, ավա՛ղ, ի զորու չեղավ պահպանելու այս համերաշխ միաբանությունը:

Ուշ միջնադարի դպրականությունը մի կողմից պահպանում էր ծաղկման շրջանի ձեռքբերումները, իսկ մյուս կողմից երևան էր հանում նույնի ինքնաքայքայման նշաններ: Դպրականության անկումը, ներքին պատճառներից բացի, ուներ նաև արտաքին պատճառներ: Նրա կտրուկ վայրէջքը նկատելի է ԺԴ դարում՝ կապված ընդհանուր հասկացությունների (universalia) մասին իմաստասիրական հարցերի արծարծման հետ: Մինչ այդ հրամայող էր իրապաշտությունը (realism): Այժմ վերջինիս տեղն է զբաղեցնում անվանականությունը: Վստահեցնելով, որ ընդհանուր հասկացությունների միջոցով ընդամենը ի վիճակի ենք մտահայել առարկաների անիսկական կեցությունը և ունենալ միակ Աստծո մասին անորոշ պատկերացում, անել կանխակալ վերացարկումներ (abstractia) և կուտակել բառերի դատարկ հնչյուններ ու ոչինչ չասող նշաններ՝ անվանականությունը միաժամանակ մերժում էր իմաստասիրության այսօրինակ իրապաշտ մոտեցումը: Հակառակ դեպքում կստացվեր, թե առանձնահատուկն ինչ-որ արտածված, մտացածին բան է՝ զուրկ և կտրված իրականությունից: Իրապաշտական այսպիսի ուսմունքը մեծ վիհ էր բացում աստվածաբանության և «արտաքին» կոչվող գիտությունների միջև:

Իմացաբանության ճշգրիտ սկզբունքներին հնարավոր է ծանոթանալ միայն աստվածաբանական ներշնչուն մտքի շնորհիվ և Սուրբ Հոգու վստահելի առաջնորդությամբ: Այլ կերպ, սակայն, մարդու համար անհնար է հասնել աստվածճանաչողության, որ է «*ամենայն յամենայնի*»: Աստված ամենուր է և անուր, անհաս և անքնին, անիմանալի, անսահմանելի… Աստվածային անդրանցականությունն ու ամենուրեքությունը խիստ համահունչ և ներդաշնակ են միմյանց նկատմամբ: Այլապես մեկի կամ մյուսի առավելությունը կամ նվազությունը կհանգեցնի ծայրահեղ բևեռների առկայության, որոնք էլ կմղեն չար հերձվածողության: Քանզի աստվածային անդրանցականությունն առանց մյուսի վեր է ածվում պաղ աստվածականության (deism), ուր Աստված լոկ Արարիչ է՝ առանց նախախնամության: Իսկ աստվածային ամենուրեքությունն առանց նախորդի պատճառում է խոտելի համաստվածություն (pantheism) :

Սակայն ուղղափառ ընկալման համաձայն՝ Աստված «*անընդմիջելի մերձաւոր*» է

և «*անմատչելի հեռաւոր*»[7]: Աշխարհիկ գիտությունները ի վիճակի չեն հասու լինելու ճանաչողության այսպիսի շերտերին, քանի որ զգայարանները հաճախ խաբում են, միտքն ստեպ սխալվում է, փորձը ենթակա է բնության օրենքներին... Եվ միայն հավատքով է հնարավոր դառնում թաքնել աստվածճանաչողության խորհրդավոր բարձունքներում: Թեև Աստված ըստ էության անճանաչելի է, սակայն Ինքնահայտնությամբ մարդկանց համար ճանաչելի է դառնում, որչափ որ կամենում է[8]: Քրիստոնյաների միակ ճշմարիտ Աստվածը հայտնված Աստված է, որ շարունակ երևացել է աստվածատես մեր Հայրերին. *«Աստուած Աբրահամու, Մովսէսի, Եղիայի եւ մարգարէներուն՝ ոչ թէ մտածուած եւ իմացական պրպտումներով յայտնաբերուած, ինչպէս իմաստասէրներու Աստուածը»*[9]*:*

Աստվածաբանական գիտությունն ունի տեսական և գործնական բաժիններ: Առաջինն իր մեջ ամփոփում է Ս. Եկեղեցու հրամանակարգ ողջ տեսությունը, վարդապետական բոլոր դրույթները: Մինչդեռ գործնական աստվածաբանությունը, մեկ արտահայտությամբ բնորոշելով, խտացումն է քրիստոնեական պարզ կենցաղավարության: Միայն այսպես են բացվում երկնային արքայության դռները, միայն այսպես է հարթվում փրկության ճամփան…

Վերադառնալով դպրականությանը և անդրադառնալով անվանականությանը՝ չենք կարող չհիշել անվանականներից մեծին՝ ԺԳ-ԺԴ դարերի անգլիացի իմաստասեր Ուիլյամ Օկկամին: Նա, ելնելով, այսպես կոչված, «զուտ հավատ»-ի տեսությունից, տերտուղիանոսյան ոգով փորձում էր համոզել, որ ոչ մի միասնություն չի կարող լինել հավատքի և բանականության, աստվածաբանության և իմաստասիրության միջև: Ընդհանուր հասկացությունների վերաբերյալ իր ուսմունքը հետագայում զարգացավ որպես եզրապաշտություն (terminism): Օկկամի հայացքների շնորհիվ անվանականությունը շուտով լայնորեն տարածում գտավ՝ դեպի իրեն ձգելով խորհրդապաշտ աստվածաբաններին: Եվ արդեն ԺԴ դարում իմաստասիրությունը զատվեց աստվածաբանությունից:

ԴՊՐԱԿԱՆ ԲՆԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ (ΜΕΤΑΦΥΣΙΚΑ)

ԺԲ դարավերջին իմաստասիրման գործընթացն ընդհանուր առմամբ այնպիսին էր, որ հնարավոր էր՝ առաջադրվեին որոշ հարցեր, որոնց տրամաբանությունը տար համարձակ պատասխաններ: Այդժամ դպրականներն սկսեցին շարադրել իրենց ուսուցման հիմնադրույթները՝ գլխավորաբար տրամաբանական հայեցողության հենքի վրա: Ուսուցողական նպատակ հետապնդող գրառումները կենտրոնացած էին մեկ հիմնական խնդրի շուրջ: Այդպիսի խնդիր ակնարկելով՝ դպրականությունն ի նկատի ուներ ընդհանուր հասկացությունների մասին հարցը: Այս խնդիրն արտացոլված է եղել դեռևս արիստոտելյան մտակառույցում: Դպրականներն այն առաջին անգամ գտել են Պորփյուրի «Ներածության» նախաբանում, որտեղ իմաստասերը մատնացույց է անում երեք հարցեր, որոնց լուծումներն իր համար ևս այնքան էլ հստակ չեն: Դրանք են՝ ա) արդյո՞ք սեռն ու տեսակը իրականում գոյություն ունեն, թե՞

[7] **Գրիգոր Նարեկացի**, *Մատյան ողբերգության*, բան ԻԳ, Երևան, 2003, էջ 132:

[8] Տե(ս **Գարեգին Ա**, *Կրոնական, աստուածաբանական և հայագիտական երկեր*, հատ. Գ, Կանադա, 2005, էջ 38-39:

[9] **Շահէ արքեպս. Ամէմեան**, նշվ. աշխ., էջ 36:

դրանք առկա են սոսկ գաղափարապես, բ) եթե ենթադրորեն դրանք իրականում գոյություն ունեն, ապա մարմնավո՞ր են, թե՞ անմարմին, գ) արդյո՞ք դրանք գոյություն ունեն զգայական իրերից անկախ, թե՞ առկա են բոլոր իրերում: Ահավասիկ հիշյալ հարցերը գրեթե վեց հարյուրամյակներ ալեկոծում էին դպրական մտածողներին:

Ընդհանուր հասկացությունների այս կամ այն լուծմանը հավանություն տվող հակադիր ուղղությունները դպրականների կողմից ստացան զանազան անվանումներ: Դրանք հիմնականում երկուսն էին՝ իրապաշտություն և անվանականություն: Իրապաշտ էին կոչվում այն իմաստասերները, ովքեր ընդհանուր հասկացությունները համարում էին իրական գոյություն՝ իրերից անջատ և իրերին նախորդող (universalia ante rem): Ի դեպ, այս ուղղությունը իրապաշտության ծայրահեղ տեսակն է: Իրապաշտությանը չափավորության երանգ է հաղորդում արիստոտելյան այն միտքը, թե չնայած ընդհանուրն իրականում գոյություն ունի, սակայն հանդես է գալիս ոչ թե ինքնուրույնաբար, այլ՝ իրերի մեջ (universalia in re): Ի տարբերություն սրանց՝ անվանականներն ուսուցանում էին, որ իրական գոյություն կարելի է համարել միայն առանձնահատուկը, իսկ սեռն ու տեսակը առանձնահատուկի ընդհանրացումներն են՝ վերածված միևնույն բառերի նույնական հասկացության (conseptus): Քանի որ անվանականությունն ընդգծում է հասկացությունների ենթակայականությունը (subjectivism), որոնց միջնորդությամբ մենք ձեռք ենք բերում համասեռ առարկաների մտահղացում, այն կարելի է անվանել նաև հղացականություն (conseptualism): Ծայրահեղ անվանականությունն ակնարկում էր բառերի միատեսակություն, որոնց յուրական անվանումների բացակայության պատճառով նկատի էր առնվում համասեռ իրերի ամբողջությունը (universalia post rem): Ընդհանրապես, անվանականության ակունքները հայտնաբերվում են վաղ շրջանի հունական իմաստասիրության մեջ, որը շարունակ հակադրվում էր իրապաշտությանը: Հունաստանում անվանականության ներկայացուցիչն էր Սոկրատեսի սան Անտիսթենեսը՝ կինիկների դպրոցի[10] հիմնադիրը: Նա ժխտում էր ընդհանուրը՝ համարելով, որ գաղափարները մարդկային մտքից դուրս գոյություն չունեն, այլ դրանք լոկ մտքի արգասիք են:

Հայ իմաստասիրության ձևավորման առաջին շրջանից սկսյալ (Ե-Զ դդ.) նրա պատմության մեջ իրենց արձագանքն են գտնում անվանականության և իրապաշտության ուսուցումները: Հայոց իմաստասիրությունն առավելաբար հակված է եղել դեպի անվանականությունը՝ իբրև սկզբունք ունենալով Ս. Դավիթ Անհաղթի իմաստասիրական հայացքները: Դրանք խթան են հանդիսացել եկող սերունդների՝ անվանական գաղափարներ արտահայտելու համար: Սակայն անվանականության՝ իբրև իմաստասիրական ինքնուրույն ուղղության կարկառուն ներկայացուցիչը Վահրամ Ռաբունին է: Անվանականության հետագա զարգացումը տեղի է ունեցել խոշոր մտածողներ Ս. Հովհան Որոտնեցու, Ս. Գրիգոր Տաթևացու և Սիմեոն Ջուղայեցու անձնդիր ջանքերի շնորհիվ: Իրապաշտական գաղափարներ են ներկայացված Ստեփանոս Լեհացու իմաստասիրական խոհերում[11]:

Բացի իր համընդհանուր նշանակությունից, ընդհանուր հասկացությունները

---

[10] Հին հունական կինիկների կամ ցինիկների դպրոցն ուներ սոկրատյան իմաստասիրության թեքում: Նրանց որդեգրած համեստ ապրելակերպը զգալիորեն ազդել է քրիստոնեական ճգնակեցության ձևավորման վրա: Իմացաբանության մարզում հարել են սոփեստների զգացապաշտությանը (sensualism) (տե(ս **Հայկական սովետական հանրագիտարան**, հատ. 5, Երևան, 1979, էջ 432):

[11] Տե(ս **Հայկական սովետական հանրագիտարան**, հատ. 8, Երևան, 1982, էջ 335-336:

դպրականների համար կարևորվում էին այն պատճառով, որ դրանց լուծումով անմիջական հաղորդակցություն էր ստեղծվում դավանական այս կամ այն դրույթի հետ: Սակայն հարկ է միշտ ի մտի ունենալ, որ աստվածային Հայտնութենականությամբ շնորհված վարդապետական հրամանակարգերը, իրենց բնույթով լինելով անդրիմացական և գերբանական, երբեք մտաքննելի չեն և ոչ էլ ենթակա են իմաստասիրական ստորոգությունների (categoria)՝ հաճախ մանվածապատ սահմանումներին: Հետևապես, չի կարելի միանշանակ վստահել իմաստասիրական որևէ ուղղության, այլ անհրաժեշտ է ունենալ չափավոր դիրքորոշում՝ միակ բացարձակ դիտելով Աստծուն և աստվածայինը….

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՐԻՆԵ ՀԵՔԵՔՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՆՇԱՆԱԿՈՂ ՇՐՋԱՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շրջասությունը հաղորդակցական մակարդակում բառափոխակերպման եղանակներից է, երբ հիմնական նշանակությունը դրսևորվում է նոր անվանման միջոցով, այն է՝ առավել ընդգծված հարանշանակային արժեք ունեցող երկրորդային անվանումով:

Լեզվաբանության մեջ *շրջասություն* տերմինի մեկնաբանությունները բավական բազմազան են. դա պայմանավորված է երևույթի միասնական ըմբռնման և սահմանման բացակայությամբ: *Շրջասություն* հասկացության ծավալն ու բովանդակությունը տարբեր կերպ են ներկայացվում լեզվաբանության և գրականագիտության մեջ:

Լեզվաբանական գրականության մեջ շրջասությունը հիմնականում բնորոշվում է որպես *նկարագրական արտահայտություն* կամ *բառակապակցություն*: Այսպես, շրջասությունն «արտահայտություն է, որը մեկ այլ արտահայտության կամ բառի իմաստի նկարագրական հաղորդումն է»[1], «արտահայտություն է, որը մեկ ուրիշ արտահայտության կամ բառի իմաստի նկարագրական, ծավալուն հաղորդումն է»[2], «նկարագրական՝ բառակապակցական անվանում (բնութագրություն) է՝ բուն մենաբառ անվանման փոխարեն (կամ նրան զուգահեռ)»[3], «դարձվածք է կամ բառակապակցություն, որ նկարագրական կերպով բնութագրում է առարկան կամ երևույթը նրան ուղղակի անվանելու փոխարեն»[4], «երևույթների, առարկաների նկարագրական բնութագրումն ուղղակի անվանման փոխարեն, սովորական բառերի փոխարինումը նկարագրական արտահայտություններով»[5] և այլն[6]: Կա նաև այսպիսի մոտեցում. «Շրջասությունները շրջուն արտահայտություններ են, բառեր կամ կապակցություններ, որոնցով առարկան կամ գործողությունը անուղղակիորեն ենք անվանում»[7]:

Գրականագիտական գրականության մեջ առաջին հերթին շեշտվում է շրջասության ոճական-արտահայտչական արժեքը. այն ներկայացվում է որպես *ոճական հնար*

---

[1] ***Розенталь Д. Э., Теленкова М. А.,*** Словарь-справочник лингвистических терминов. М., 1985.

[2] Словарь русского языка. М., 1987.

[3] ***Պետրոսյան Հ. Զ.,*** Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 509:

[4] ***Ջահուկյան Գ., Խլղաթյան Ֆ.,*** Հայոց լեզու. ոճաբանություն, դասագիրք 9-րդ դասարանի համար, Ե., 1998, էջ

[5] ***Խլղաթյան Ֆ.,*** Ոճաբանական բառարան, Եր., 2000:

[6] Շրջասության հեղհեղուկ և անճիշտ սահմանումներ էլ կան, օրինակ՝ «Շրջասությունը **նախադասության այն փոխակերպումն է** (ընդգծումը մերն է - Ն.Հ.), որն առաջանում է միևնույն բովանդակությունը ավելի ծավալուն, ընդարձակ լեզվական միջոցներով, երբեմն էլ նկարագրորեն արտահայտելու պատճառով, որն արվում է ասածն ավելի հետաքրքրական, կարևոր, պատշաճ դարձնելու կամ հեգնելու (կեղծ կարևորություն տալու) համար» (*Պ.Պողոսյան,* Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք 2-րդ, Եր., 1991):

[7] ***Պ. Բեղիրյան,*** Հայերեն շրջասությունների բառարան, Ս. Էջմիածին, 2002, էջ 5:

կամ *դարձույթ*. «ոճական հնար, որի էությունը որևէ բառի կամ բառակապակցության փոխարինումն է խոսքի նկարագրական դարձվածքով»[8], «գեղարվեստական խոսքի արտահայտչական միջոցներից մեկը: Առարկան կամ անձնավորությունն ուղղակի անվանելու փոխարեն նշվում է միայն նրանց այս կամ այն էական կողմը, հատկանիշը….»[9], «դարձույթներից մեկը….»[10] և այլն:

Ինչպես նկատում ենք, առաջին դեպքում ընդգծվում է շրջասության հարաբերակցությունը (լեզվի) խոսքի միավորներին՝ բառակապակցություններին և արտահայտություններին, երկրորդ դեպքում շեշտը դրվում է շրջասության՝ իբրև արտահայտչամիջոցի վրա: Սակայն մի բան ակնհայտ է. չնայած բերված սահմանումներում շեշտվում են տարբեր իրողություններ, սակայն ընդհանուրն այն է, որ շրջասությունը դիտվում է իբրև բաղադրյալ անվանողական միավոր, որը կարող է հանդես գալ նաև ոճական գործառույթով՝ որպես պատկերավորման միջոց:

Ելնելով վերոնշյալից՝ շրջասությունները կարող են ուսումնասիրվել տարբեր տեսանկյուններից՝ իմաստաբանական, կառուցվածքային, արտահայտչական, ծագումնաբանական, մշակութաբանական և այլն:

Ծագումնաբանական առումով շրջասությունները կապվում են այլաբանությունների և մեղմասությունների[11] հետ, որոնց գործածությունը պայմանավորված է անձի հոգեբանական առանձնահատկություններով և վարվելակերպի կանոններով: Ա. Պոտեբնյայի կարծիքով՝ նշված բանադարձումների առաջացումը կապվում է բառարգելման (տաբու) հետ, որի հետևանքով սնոտիապաշտական, դիցաբանական, ավանդական, հասարակական և այլ արգելքների պատճառով առանձին բառեր փոխարինվել են այլաբանություններով կամ մեղմասություններով (գեղասություններով): Կարելի է ասել, որ շրջասությունները այլաբանություններից և մեղմասություններից են առաջացել՝ հանրորեն կոպիտ, անպատշաճ ու գռեհիկ համարվող բառերը և արտահայտությունները փոխարինելով առավել մեղմ ու վայելուչ ձևերով, ոճականորեն չեզոք բառերը՝ խիստ ընդգծված վերամբարձ կառույցներով[12]:

Շրջասությունները լինում են՝ 1) կայունացած, ընդհանուր գործածություն ունեցող (հմմտ., օրինակ, *հողմաղացների ասպետ* (Դոն Քիշոտ), *Ալբիոնի երկիր* (Անգլիա), *կաշվե ձեռնոց* (բռնցքամարտ) և այլն[13]) և 2) հեղինակային (անհատական), որոնց իմաստը բացահայտվում է խոսքաշարում: Մեր կարծիքով, այս տեսակը ներառում է այնպիսի շրջասություններ, որոնք հատկանիշի չափազանց մեծ ընդհանրականության պատճառով իմաստային որոշակիություն են ձեռք բերում միայն խոսքաշարում (օր.՝ Մոցարտին բնութագրող *լուսաշող հանճար* շրջասությունը (ՊԲ, էջ 126) կարող է հաջողությամբ վերագրվել արվեստի կամ մշակույթի որևէ այլ գործչի: Մինչդեռ նույնը չես ասի *Զալցբուրգի ծաղիկ* (ՊԲ, էջ 103) շրջասության մասին): Նշենք, սակայն, որ հաճախ նույնիսկ կայունացած շրջասությունները խոսքաշարա-

---

[8] ***Квятковский А.,*** Поэтический словарь. М., 1966.

[9] ***Ջրբաշյան Էդ., Մախչանյան Հ.,*** Գրականագիտական բառարան, Եր., 1980:

[10] Словарь литературных терминов. М., 1974.

[11] Կարծիք կա, որ սրանք շրջասությունների տարատեսակներ են: Տե՛ս ***Видлак С.,*** Проблемы эвфемизма на фоне теории языкового поля: Этимология. М., 1967. ***Хазагеров Т. Г., Ширина Л. С.,*** Русская риторика. Ростов-на-Дону, 1999, стр. 280.

[12] Տե՛ս ***Потебня А. А.,*** Мысль и язык. Киев, 1993, стр. 280.

[13] Այս և հաջորդ օրինակները քաղել ենք Պ. Բեղիրյանի նշված բառարանից:

յին կամ ժամանակային կախվածություն (սահմանափակություն) են ունենում։ Սա պայմանավորված է նրանով, որ՝ **ա)** շրջասությունները հաճախ այս կամ այն առարկան կամ անհատին անվանելու համար ստեղծվելով՝ կարող են հետագայում գործածվել համանման հատկանիշներ ունեցող ուրիշների համար ևս[14] (այստեղ առկա է ժամանակի գործոնը. հմմտ., օրինակ, *երկաթե տիկին*[15] (Մարգարեթ Թեթչեր և Մադլեն Օլբրայթ), *ամենայն հայոց սոխակ* (Հայկանուշ Դանիելյան և Լուսինե Զաքարյան)[16]), **բ)** միևնույն հատկանիշով կարող են բնութագրվել տարբեր անձինք կամ առարկաներ (օրինակ՝ *Աֆրիկայի մարգարիտ* (Քենիա և Ուգանդա), *սափրած գլուխներ* (նեոֆաշիստներ և կալանավորներ) և այլն), և միայն խոսքաշարը կարող է որոշակիություն հաղորդել շրջասությանը։

Ոճական տեսանկյունից շրջասությունները լինում են *պատկերավոր* և *ոչ պատկերավոր*[17]։ Առաջինները հիմնված են փոխաբերության վրա (ինչպես, օրինակ, *Ավարայրի բլբուլ* (Եղիշե), *Մկյուտարի սոխակ* (Պ. Դուրյան), *հայ օպերայի հայր* (Տ. Չուխաջյան), *հայ երգի Մեսրոպ Մաշտոց* (Կոմիտաս), *Հոմերոսի լեզու* (հունարեն), *կենդանիների արքա* (առյուծ) և այլն), իսկ երկրորդներն ուղղակի անվանողական կապակցություններ են, որոնցում բառերը գործածված են իրենց ուղիղ իմաստներով (օրինակ՝ *հայկական օպերային արվեստի հիմնադիր* (Տ. Չուխաջյան), *հայ նոր գրականության հիմնադիր* (Խ. Աբովյան), *միջնադարյան խազերի վերծանող* (Կոմիտաս) և այլն[18])։ Անհատական (հեղինակային) շրջասությունները միշտ պատկերավոր են և գեղագիտական մեծ լիցք ունեն, մինչդեռ «լեզվական, հաճախ ոչ պատկերավոր շրջասությունները խոսքում ոչ թե գեղագիտական, այլ իմաստային գործառույթ ունեն և օգնում են միտքն ավելի ճշգրիտ արտահայտելու, նկարագրվող առարկայի այս կամ այն հատկանիշն ընդգծելու»[19]։

Անառարկելի է շրջասությունների մշակութաբանական արժեքը. նրանք հաճախ հիմնվում են այս կամ այն մշակույթի վրա՝ միաժամանակ հանդես գալով որպես այդ մշակույթի մասին տեղեկատվության կրող, նաև մշակույթները կապող օղակ։ Սա վերաբերում է մասնավորապես անձնանիշ և տեղանիշ շրջասություններին։ Հմմտ. օրինակ, *արյունոտ սուլթան* (Սուլթան Համիդ Երկրորդ), *Թորգոմի տուն* (Հայաստան), *Ազատության կղզի* (Կուբա), *Գեղամա/Գեղարքունյաց գեղեցկուհի* (Սևանա լիճ), *Մերձավոր Արևելքի Փարիզ* (Բեյրութ), *մայրիների երկիր* (Լիբանան), *բժշկության հայր* (Հիպոկրատ), *հայ Արիստոտել* (Դավիթ Անհաղթ), *Արևելքի Հոմերոս* (Ֆիրդուսի), *արվեստների հայրենիք* (Իտալիա), *հազար ու մեկ եկեղեցիների քաղաք* (Անի) և

---

[14] Տե՛ս ***Պ. Բեղիրյան,*** նշվ. աշխ., էջ 5։

[15] Նման կազմությունները հաճախ որոշիչ լրացումներով են կոնկրետանում. հմմտ., օրինակ, *վրաց քաղաքականության երկաթե տիկին* (Ն. Բուրջանաձե), *Ուկրաինայի երկաթե տիկին* (Յու. Տիմոշենկո) և այլն։

[16] Խոսքաշարից դուրս շփոթություն կարող է առաջանալ նաև այն դեպքում, երբ այս կամ այն շրջասությունը, նույն գլխաբառն ունենալով, կարող է մեկ ուրիշի տարբերակային ձևը թվալ։ Այս դեպքում, անշուշտ, պատասխանը խոսքաշարը կարող է տալ։ Հմմտ. *Հայաստանի (հայ ժողովրդի, հայրենի) սոխակ* (Գոհար Գասպարյան)։

[17] Այս դասակարգումը հիմնված է շրջասությունների լայն ըմբռնման վրա։ Նեղ իմաստով՝ շրջասություններ են համարվում միայն պատկերավոր կապակցությունները։

[18] Այս օրինակները քաղված են Հայկական սովետական հանրագիտարանից։

[19] ***Розенталь Д. Э., Голуб У. Б.,*** Секреты стилистики. М., 2004, стр. 106.

այլն։

Մասնավորապես անձնանիշ շրջասություններն արժեքավոր տեղեկություններ են պարունակում պատմական տարբեր դարաշրջանների ականավոր գործիչների մասին՝ տալով նրանց գործունեության գնահատականը, այս կամ այն հատկանշական կողմը, կենսագրական տեղեկություններ և այլն՝ միաժամանակ որոշակի պատկերացում ստեղծելով տվյալ ժամանակաշրջանի պատմական, քաղաքական, գիտական ու մշակութային կյանքի մասին։

Անձնանիշ շրջասությունները նաև ոճական-արտահայտչական հզոր միջոց են, որոնք ոչ միայն նպաստում են խոսքաշարում կրկնություններից խուսափելուն, այլ նաև լեզվի հոմանիշային միջոցների ոճական պաշարի հարստացմանը, խոսողի կամ գրողի ստեղծագործական հնարավորությունների և լեզվական ճաշակի բացահայտմանը։

Բազմաթիվ շրջասություններ են կազմվել հայ երևելի գործիչների անունների փոխարեն։ Դրանց մեջ առանձին խումբ են կազմում *Մեսրոպ Մաշտոց* նշանակող շրջասություններն ու շրջասական արժեք ունեցող կառույցները։

Մաշտոցին անվանող շրջասությունները հիմնականում հեղինակային (անհատական) են[20]։ Ինչպես այլ շրջասությունների դեպքում, այս պարագայում էլ էական չէ, թե ո՛վ է այս կամ այն շրջասության հեղինակը. ստեղծվելով իբրև խոսքային միավորներ՝ շրջասությունները կարող են ժամանակի ընթացքում կորցնել այդ «կարգավիճակը»՝ վերածվելով լեզվական կայուն միավորների։ Հեղինակային (անհատական) շրջասության դեպքում կարևորն այն է, թե որքանով դիպուկ կամ հաջողված է այն և որքանով անկախ է խոսքաշարից, այսինքն՝ որքանով ներունակ է կայունանալու։

Անձ անվանող յուրաքանչյուր շրջասություն յուրատեսակ մակդիր է, յուրահատուկ բնութագիր, որը զուգորդությունների կամ համադրությունների միջոցով բացահայտում է տվյալ անձին բնորոշ այս կամ այն ցայտուն հատկանիշը։ Ըստ այդմ էլ նույն անձին շրջասական տարբեր բնութագրումներ կարող են տրվել։

Հայկական սովետական հանրագիտարանում Մեսրոպ Մաշտոցը ներկայացված է որպես «հայկական գրի ստեղծող և հայ ինքնուրույն ու թարգմանական գրականության սկզբնավորող…., հայ գրչության, հայագիր (հայկական) դպրոցի հիմնադիր և հայերենի առաջին ուսուցիչ, լուսավորիչ, մշակութային հասարակական գործիչ, քրիստոնեության քարոզիչ»[21] և Հայ Առաքելական Եկեղեցու[22] վարդապետ։

Մաշտոցին վերաբերող շրջասական կառույցներում էլ նա բնութագրվում է որպես՝

ա) հայ գրերի ստեղծող, գրականության ու գրչության սկզբնավորող

Մեսրոպ Մաշտոցին այս հատկանիշով բնութագրող ուղղակի՝ ոչ պատկերավոր կապակցություններ են, օրինակ, *հայ գրերի ստեղծող* (ՊՍ, էջ 165), *հայ նշանագրերի գյուտարար* (ն. տ., էջ 166) և այլն։ Կայուն շրջասություններ կարող են դիտվել *հայոց գրի հայր* (ՌԳ, էջ 146), *հայոց տառերի սկզբնահայր* (ՌԳ, էջ 133) կապակցությունն-

[20] Այսուհետև բերվող օրինակներն էլ կհուշեն, որ դրանք կարելի է անվանել նաև *բանաստեղծական շրջասություններ*։

[21] Հայկական սովետական հանրագիտարան, հ.7, Եր., 1981, էջ 469։

[22] Հայկական սովետական հանրագիտարանում անվանված է *Հայաստանի Եկեղեցի։* Տե՛ս ն. տ.։

ը[23]:

Պատկերավոր (կամ բանաստեղծական) շրջասություններից թերևս կայունանալու ներունակ են *գրի հսկա* (ՊԲ, էջ 74), *մեր գրերի զորավար* (Դու օծել ես փառքով, երգով ճոխ ցնծությամբ Մեր գրերի զորավարին՝ Մեծ Մաշտոցին (ՍՄ, էջ 158)), *հայոց տառերի զորավար* (Մաշտոցը՝ զորավար, զորավար հայոց տառերի…. (ԿԱ, էջ 47)), *մեր անզեն մեծ զորավար* (Դու մեր անզեն մեծ զորավար (ԼԴ, էջ 21)) կապակցությունները:

Մեր կարծիքով, դա պայմանավորված է շրջասական հիշյալ կապակցություններում մի կողմից *գիր* և *տառ* բառերի առկայությամբ, մյուս կողմից՝ *զորավար* բառի գործածությամբ: Առանձնապես ուշագրավ է վերջինիս գործածությունը Մաշտոցին՝ իբրև հայ գրերի ստեղծողի բնութագրելու համար: Սա թերևս պայմանավորված է գրերի գյուտի պատմական նշանակությամբ. հայոց տառերի գյուտը հայ ժողովրդին փրկեց ձուլվելու և կորստյան վտանգից, դա հայ ժողովրդի հաղթանակներից մեկն էր, և այդ «անարյուն ճակատամարտի հետ չի կարող համեմատվել մեր սպարապետների փառավոր հաղթանակներից և ոչ մեկը»[24]: Սա է պատճառը, որ Մաշտոցը համեմատվում է անզեն զորավարի հետ, որը հաղթեց ոչ թե սրով, այլ գրով:

Հեղինակային դիպվածային շրջասություններ են՝ Ո՛վ *գերազանց մեր տառաստեղծ* (Աս., էջ 47), Դու *քո տառերով կառուցված տաճար* (ԼԴ, էջ 125), Դուն *բարբառի արարիչ,* Բանի իշխան…. (Ս., էջ 186), Դուն անհպելի *մատենագիր մայր բարբառի* (Ս, էջ 182), Երկնատուր գրչի:

Այբուբենաձև շարժում մը գիտուն-*Որմնադի՛ր ճկուն* - Բաւեց, օ՜, բաւեց, Որ մագաղաթը շինվի լույս տաճար ու խորան *Բանի:* (ԺՀ, էջ 89):

Եթե առաջին չորս օրինակներում հուշող բաղադրիչներ կան (*տառեր, բարբառ, տառաստեղծ*), որոնց շնորհիվ այդ շրջասությունները հարաբերականորեն ավելի ընկալելի են դառնում, և թուլանում է նրանց կախվածությունը համատեքստից, ապա *ճկուն որմնադիր*-ը խիստ խոսքաշարային է:

բ) հայերենի առաջին ուսուցիչ, ուսուցչապետ

Մաշտոցին անվանող շրջասական կապակցությունների մեջ նրան այս կողմով բնորոշող կառույցները թերևս ամենահաճախադեպն են, և սրանց մեջ ավելի շատ են կայունացած կամ կայունանալու ունակ միավորները: Օրինակ՝ Պ. Բեդիրյանի բառարանում արձանագրված *առաջին հայ ուսուցիչ*[25] (էջ 36), *հայերենի առաջին ուսուցիչ* (էջ 168), *ուսուցանող Հայոց աշխարհի* (էջ 286) կապակցությունների շարքը կարող է լրացվել հետևյալ շրջասություններով՝ *անդրանիկ դաստիարակ* (Ս., էջ 181), *ամենասուրբ ուսուցիչ* (Փա՛ռք *ամենասուրբ ուսուցչիդ* գործին… /Աս., էջ 6/), Ո՛վ *վեհ դպրապետ մշտնջենավոր* (Աս., էջ 23), *մեծ ուսուցչապետ* (Հայցելով բարեխոսությու-

---

[23] Վերջիններիս պատկերավորություն է հաղորդում *հայր/սկզբնահայր* բառի գործածությունը («հիմնադիր» իմաստով), որը բավական տարածված է շրջասություններում (հմմտ. *բժշկության հայր* = Հիպոկրատ, ողբերգության հայր = Էսքիլես, *գիտական կոմունիզմի հայր* = Կարլ Մարքս, *գիտական ֆանտաստիկայի հայր* = Ժյուլ Վեռն և այլն) և շրջասական կաղապարի[23] արժեք է ձեռք բերել (տե՛ս ***Պ. Բեդիրյան***, նշվ. աշխ., էջ 7-8):

[24] ***Պարույր Սևակ,*** Երկերի ժողովածու, հ. 5, Եր., 1974, էջ 166:

[25] Թերևս սրա շարադասական տարբերակ է *հայ առաջին ուսուցիչ* շրջասությունը (Ավանդները մշտապես՝ *հայ առաջին ուսուցչի* Շողացել են լույսով լի, ինչպես պայծառ արշալույս /ԿԱ, էջ 7/):

նը Սուրբ Սահակ և Սուրբ Մաշտոց մեր Մեծ *Ուսուցչապետերի*[26], ոգեկոչելով անմահ հիշատակը հայ գրի և դպրության նվիրյալների, մեր գրական ժառանգությունը կերտողների, աղոթք ենք բարձրացնում առ Փրկիչ Տերը մեր…. /Գարեգին Բ/), *սուրբ ուսուցչապետ* (Կարճ ժամանակ անցավ և *սուրբ ուսուցչապետի* աշակերտները այստեղ դարձան քաջահմուտ ուսուցիչներ և թարգմանիչներ /ՎՍ, էջ 41/), *(ամենայն) հայոց մեծ ուսուցչապետ*[27] (Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ կաթողիկոսն իր անդրանիկ ուխտագնացությունը կատարեց Օշական՝ *Հայոց մեծ ուսուցչապետ* Մեսրոպ Մաշտոցի շիրմին /ՔՀ, 2004, հոկտ., էջ 6/, ….այս սառը թանով ու օշարակով են Ամարասի միաբանները դիմավորել Եզնիկ եպիսկոպոսին և *ամենայն հայոց մեծ ուսուցչապետ* Մեսրոպ Մաշտոցին /ՎՍ, էջ 42/)։

Վերջին օրինակներում բերված կապակցությունները թեև մակդրային կիրառություն ունեն, սակայն դրանից նրանց անվանողական արժեքը չի փոխվում։ Ինչպես վերևում արդեն նշել ենք, անձնանիշ շրջասություններն անձը բնութագրում են որևէ հատկանիշով և սրանով շատ նման են մակդիրներին։ Մյուս կողմից էլ՝ մեր քննության առարկա կառույցները նշված օրինակներում կարող էին նաև բացահայտյալի (կամ բացահայտչի) պաշտոնով հանդես գալ (հմմտ. *ամենայն հայոց մեծ ուսուցչապետին՝ Մեսրոպ Մաշտոցին*), կամ էլ այլ խոսքաշարերում տարբեր հոլովաձևերով գործածվել որպես երկրորդային անվանումներ։

գ) **հայ դպրության հիմնադիր և լուսավորիչ**

Այս շարքի կայուն միավորներից է *հայ դպրության հիմնադիր* (ՊՍ, էջ 166) ոչ պատկերավոր կապակցությունը։

Հեղինակային կամ բանաստեղծական շրջասություններ են՝ Դուն *հայ դպրության անշրջանակ լուսամուտ* (Ս, էջ 181), *Մեր դպրության Արարատ լեռը*[28] (ԳԷ, էջ 413), Դու՝ *կարապետ ու անդրանիկ՝ մեր դպրության* (Աս, էջ 11), *մեր մեծագույն լուսավորիչ* (ՍԶ, էջ 9), *Հայաստանի ու հայ ժողովրդի իսկական լուսավորիչ* (ԳԷ, էջ 426), *լույսի վարդապետ* (Ով սքանչելի *լույսի վարդապետ,* Ով դու տառապած բանի ուխտավոր (ՎԴ, էջ 48)) *կենաց լուսատու* (Դու լուսատու ես, *կենաց լուսատու* (ԼԴ, էջ 8)) և այլն[29]։

Թվարկված օրինակների շարքում թերևս ամենահաջողվածն ու կայունանալու

---

[26]Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը, որպես նույն գործի նվիրյալներ, հաճախ են միասին ներկայացվել և բնութագրվել, ինչպես՝ *երանելիներ* (Կոր, էջ 123), *երանելի հայրեր* (Կոր, էջ 105), *Եկեղեցու սյուներ* (Կորյուն, էջ 107) և այլն։

[27] Հմմտ. *ամենայն* բաղադրիչով այլ շրջասությունների հետ, ինչպես՝ *ամենայն հայոց բանաստեղծ, ամենայն հայոց սոխակ* և այլն, որոնք թերևս քանակային տարբերակներ են և կազմվել են *Ամենայն Հայոց Կաթողիկոս* բաղադրյալ անվան նմանողությամբ։

[28] Լեզվաբանական գրականության մեջ կա մի դիտարկում, որ շրջասությունները հաճախ գործածվում են որպես վերնագրեր։ Այսպես, *Մեր քնարերգության Վահագնը* = Պ. Դուրյան (ՊՍ, էջ 156), *Գույների կախարդ վարպետը* = Մ. Սարյան (ՍԶ, էջ 184), Մեր նորագույն պոեզիայի հիմնադիրը = Հ. Հովհաննիսյան (ՍԶ, էջ 59), *Ռեալիզմի ռահվիրան* = Շիրվանզադե (ՍԶ, էջք 43, 45), *Մեր նոր լուսավորիչը* = Խ.Աբովյան (ՍԶ, էջ 23), *Երկու մեծ թիֆլիսեցիներ* = Սունդուկյան և Սայաթ-Նովա (ՀԹ, էջ 172), *Կովկասի մեծ որդեգիրը* = Լերմոնտով (ՀԹ, էջ 220) և այլն։

[29] Վերջին երկու շրջասություններն այս խմբում ընդգրկվել են որոշ վերապահումով. նույն հաջողությամբ կարող էին ներկայացվել Մաշտոցին որպես քրիստոնեության քարոզչի բնութագրող շրջասությունների շարքում։ Այս մասին տե՛ս նաև 27-րդ ծանոթագրությունը։ Նույնը կարելի է ասել նաև *վարդապետ* բառի մասին, որը կարող է ընկալվել թե՛ «կրոնավոր», թե՛ «ուսուցիչ» իմաստներով։

ներունակը *մեր դպրության Արարատ լեռը* շրջասությունն է: «Որևէ բանի ամենաբարձր կետ՝ մակարդակ, գագաթ» փոխաբերական իմաստով *Արարատ* անվան գործածությունը շատ դիպուկ և պատկերավոր է դարձնում այս կառույցը, մանավանդ որ զուգորդվում է նաև չարենցյան «Բայց Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության» հայտնի ձևակերպմանը:

Մյուսները դիպվածային են, ընդ որում *մեր մեծագույն լուսավորիչ, Հայաստանի ու հայ ժողովրդի իսկական լուսավորիչ* ոչ փոխաբերական կապակցությունները կարող են գործածվել նաև ուրիշների, ասենք՝ Գրիգոր Լուսավորչի, Խաչատուր Աբովյանի անունների փոխարեն:

դ) թարգմանիչ և գիտնական

Նախորդների համեմատ՝ Մաշտոցին այս հատկանիշներով բնութագրող շրջասական կապակցությունները թվով ավելի քիչ են և հիմնականում դիպվածային (կայուն է միայն *մեր առաջին թարգմանիչ* (ՍՋ, էջ 9) ոչ փոխաբերական կապակցությունը): Օրինակ՝ *ոսկեհոս գետ գիտության* (Ս, էջ 180), *Օշականեն մեզի հսկող Մտքի Աստված* (Ս, էջ 181), *Տեր գիտուն և հրաշամիտ* (ՊԽ, էջ 9), *ուսյալ գերագույն* (ԼԴ, էջ 126):

Կայունանալու ներունակ են թերևս միայն *թարգմանիչ Սուրբ գրոց* (ՊՍ, էջ 165) ուղղակի և *Եհովայի պատգամախոս մեծ Մատյանին* Դուն *սրբագիր թարգմանիչ* (Ս, էջ 181) պատկերավոր շրջասական կապակցությունները:

ե) քրիստոնեության քարոզիչ և վանական

Այս խմբի շրջասական կապակցությունների մեջ կայունացած միավորներ չկան: Սա կարելի է բացատրել նրանով, որ Մաշտոցն իր գործունեության այս կողմով ավելի քիչ է առանձնանում և հայ մշակույթի պատմության մեջ մնացել է առաջին հերթին իբրև հայկական գրի ստեղծող և հայերենի առաջին ուսուցիչ: Այդ պատճառով էլ *Քրիստոսի խաչակրոն վկա*[30] (Կոր., էջ 143), *Քրիստոսի ազնիվ խոսքին* դուն *տիրական տարածիչ* (Ս, էջ 180), Դուն *վեհիմաստ վանական և Աստծո բաժակ*[31] (և. տ.), *սուրբ վարդապետ* (ԿԱ, էջք 17, 47) շրջասական կապակցությունները, որ չափազանց ընդհանուր ձևակերպման պատճառով կարող են գործածվել նաև ուրիշների (առաքյալներ, քարոզիչներ, կրոնավորներ) անունների փոխարեն, խոսքաշարային կախվածություն ունեցող դիպվածային կառույցներ են: Ինչ վերաբերում է *Օշականի վսեմական վարդապետ* (Ս, էջ 180), *Օշականին* դուն *անկորուստ կրոնական* (և. տ., էջ 181) շրջասություններին, ապա սրանք էլ, անգամ *Օշական* տեղանվան շնորհիվ կոնկրետանալով, չեն դադարում դիպվածային լինելուց:

զ) Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու սուրբ

Մաշտոցին որպես սրբի ներկայացնող շրջասական կապակցություններն էլ սակավաթիվ են և որոշակիանում են միայն խոսքաշարում: Օրինակ՝ Օշակա՛ն, Օշա-

---

[30] Կարող է դիտվել իբրև *Քրիստոսի վկա* կապակցության քանակային տարբերակ: Այս մասին տե՛ս ***Դ. Գյուրջինյան,*** Կրոնաեկեղեցական լեզվական միավորների քննություն, Ս. Էջմիածին, 2002, էջ 41: Հմմտ. նաև *Քրիստոսի խաչակից, Քրիստոսի լծակից* կայուն կապակցությունների հետ. «շարականներում վերջին երկու կապակցությունները շրջասաբար գործածվում են առաքյալների համար» (և. տ., էջ 40):

[31] Հմմտ. *ընտրյալ անոթ*. «Գնա՛ դու, որովհետև նա ինձ համար ընտրյալ անոթ է՝ իմ անունը տանելու հեթանոսների, թագավորների և իսրայելացիների առաջ» (Գործք Թ 15, Աստուածաշունչ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994):

կա՛ն, *Մեծ Սրբի* վայր թաղման, Դու իմ հող սրբազան, Հավերժակա՛ն, հավերժակա՛ն□ (ՆՎ, էջ 356), ….Մաշտոցի մարմինը փոխադրեց տաճարի գերեզմանը։ Եվ նրա Թադիկ անունով աշակերտին…. *երանության հասած Սրբի* համար սպասավոր կարգեցին ի փառս Աստծու (Կոր, էջ 143-145)։

Նշվածներից բացի՝ շրջասություններ էլ կան, որոնք ընդգծում են Մաշտոցի գործի հարատևությունն ու անմահությունը, ինչպես՝ Դուն *թռչող դարերն մեկզմեկու կամարող կամուրջ անգիծ* (Ս, էջ 186), Դու *կամուրջ՝ դրված դարերին կամար* (ԼԴ, էջ 126)։ Նշված օրինակները ստեղծվել են պատկերային միևնույն հիմքով, և պատճառը թերևս *կամուրջ* հիմնաբառի գործածությունն է՝ իբրև անցյալը ապագային կապող խորհրդանիշի։

Հայ ժողովրդի կյանքում Մաշտոցի գործի նշանակությունն արժեքավորող շրջասություններում ընդգծվում է՝

ա) Մաշտոցի ազգապահպան դերը, օր.՝ Դու *ազգն ազգ պահող ահեղ հրաման* (ԼԴ, էջ 126), Դու *ազգ կամարող ծիածան անքուն*, (ԼԴ, էջ 127), Դու յոթնապարգև լեզվով փրկեցիր Քո հայոց լեզուն Որպես *ազգապահ հզոր հայկազուն* (ԼԴ, էջ 94), *Մեզ ափ հանող հույսի նավ* (ԼԴ, էջ115), Դու *Նոյը մեր* (ԼԴ, էջ 52), Ով *Տարօնածին* հայոց մեծ *փրկիչ* (Աս, էջ 6),

բ) նրա ունեցած դերը քրիստոնեական հավատի տարածման և ամրապնդման գործում՝ Դո՛ւ՝ *մեծ սերմնացան*[32], Դու՝ *զինվոր լույսի*, Դու՝ *մեր ոգու հայր,* Դու՝ Մեսրոպ Մաշտոց (ԱՊ, էջ 166), Դուն *լույսի անիվ*[33], դուն *հավատքի հրավեր* (Սիամ., էջ 86), Դու *լուսեղեն մեր հավատի Աստվածամոտ Արարատ* (ԼԴ, էջ 22),

գ) Մաշտոցի գործի նշանակությունը հայ ժողովրդի հոգևոր և մշակութային կյանքում՝ *Ոսկեդարու աղամանդյա բանալի* (Սիամ, էջ 181), *Մտքի Փրկիչ, հույսի Հսկա* (Սիամ, էջ 180), Դու *փարոսներ պահող ափ* (ԼԴ, էջ 20), *մեր ոգու լյառը Արարատ* (ՌԳ, էջ 133) և այլն։

Մշակութաբանական տեսանկյունից հետաքրքրական են նաև *Մաշտոց* նշանակող այն շրջասությունները կամ շրջասական կառույցները, որոնք կենսագրական բնույթի որոշակի տեղեկություններ են պարունակում, ինչպես՝ *Օշականի անմահ մեռյալ (սուրբ ննջեցյալ)* (ՊԲ, էջ 298), *Օշականի անհո՛ւն մեռյալ* (Ս, էջ 180), *Օշականի մեջ անմա՛հորեն մահացյալ* (ն. տ., էջ 181), *Տարոնածին հսկա՛ Մովսես* (ն. տ., էջ182), *Տարօնածին հայոց մեծ փրկիչ* (Աս, էջ 6), *հացեկացցի դպիր* (ՊՍ, էջ 130), Եվ *գեղջուկ մի այր, որ զորական էր, սրի տիրապետ* (ՎԴ, էջ 48) և այլն։

Անդրադառնալով նշված շրջասությունների պատկերային կառուցվածքին՝ ասենք, որ շրջասության արտահայտչությունը և նրա պատկերավորությունը մեծապես պայմանավորված են նախ և առաջ ընտրված հիմնաբառերով։ Վերևում արդեն խոսել ենք *զորավար, կամուրջ, Արարատ* բառերով կառուցված շրջասությունների

---

[32] Հմմտ. աստվածաշնչյան *սերմ, սերմնացան* պատկեր-խորհրդանիշների հետ։

[33] *Լույսի զինվոր, լույսի անիվ* շրջասությունները կարող են Մաշտոցին թե՛ իբրև քրիստոնեության տարածողի, թե՛ իբրև լուսավորչի բնութագրող կապակցություններ ընկալվել։ Պատճառը թերևս *լույս* բառի գործածությունն է, որով հաճախ բնութագրվում է Հիսուս Քրիստոս, օր.՝ «Հովհաննեսը, որ Աստծու կողմից ուղարկված մի մարդ էր, եկավ վկայություն տալու Լույսի մասին, որպեսզի նրա միջոցով ամեն մարդ հավատա։ Ինքը Լույսը չէր, այլ մի վկա, որ եկել էր վկայելու Լույսի մասին» (Հովհ. Ա 6-8), «Հիսուսը դարձյալ իր խոսքն ուղղեց ժողովրդին՝ ասելով. -Ես եմ աշխարհի լույսը…. « (Հովհ. Ը 12) և այլն (Աստվածաշունչ. Նոր Կտակարան Հիսուս Քրիստոսի, Աշխարհաբար նոր թարգմանություն, Եր., 2001)։

մասին։ Ավելացնենք, որ Մաշտոցին անվանող շրջասական կապակցություններում իբրև հիմնաբառ հանդես են գալիս ոչ միայն հասարակ, այլ նաև հատուկ անուններ, մասնավորապես անձնանուններ։ Վերջիններս հետաքրքրական են նրանով, որ Մեսրոպ Մաշտոցին այս կամ այն հատկանիշով բնութագրում են այլ անձանց հետ անցկացված զուգահեռների միջոցով։ Այսպես, Մաշտոցին *մեր Նոյ* շրջասությամբ անվանելով՝ հեղինակը հետևյալ զուգահեռն է անցկացնում. ինչպես որ Նոյն իր կառուցած տապանով փրկեց իրեն և իր ընտանիքը, այնպես էլ Մաշտոցն իր ստեղծած տառերով հայ ժողովրդին փրկեց կործանումից և դարձավ նրա հարատևության խորհրդանիշը։ Նույնը վերաբերում է *Տարոնածին հսկա Մովսես* կապակցությանը։ Ինչպես Մովսեսը Աստծու ժողովրդին դուրս բերեց Եգիպտոսից՝ ազատելով գերությունից, այնպես էլ Մաշտոցը հայ ժողովրդին ազատեց հոգևոր գերությունից և այլն։

Ամփոփելով *Մեսրոպ Մաշտոց* նշանակող շրջասությունների քննությունը՝ կարող ենք ասել, որ դրանց մեջ մեծ թիվ են կազմում բանաստեղծական շրջասությունները, որոնք գերազանցապես հիմնված են փոխաբերության վրա, քանի որ ստեղծվել են խոսքի պատկերավորությունն ու արտահայտչությունն ուժգնացնելու նպատակով։ Դրանց մեջ կան պատկերային միևնույն հիմքով ստեղծված կապակցություններ, ինչպես՝ *գրերի* ***գորավար, գորավար*** *հայոց տառերի* և *աղավնու գորքի մեծ* ***գորավար, Տարոնածին*** *հսկա Մովսես* և ***Տարօնածին*** *մեր մեծ փրկիչ, ազգն ազգ պահող ահեղ* ***հրաման*** և *մեզ արթուն պահող միակ* ***հրաման****, մեր հավատի Աստվածամոտ* ***Արարատ*** և *մեր ոգու լյառը* ***Արարատ*** և այլն։ Սա թերևս բացատրվում է գրական ազդեցությամբ և կարող է նպաստել նման կամ տարբերակային շրջասությունների հետագա կայունացմանը։ Դիպվածային կապակցություններից մի քանիսն էլ, ինչպես՝ *մեր դպրության Արարատ լեռ, Ոսկեդարի աղամանդյա բանալի* և այլն, ժամանակի ընթացքում կարող են կայունանալ խոսքաշարային թույլ կախվածության, Մաշտոցին տված խիստ բնորոշ և դիպուկ բնութագրի շնորհիվ։

Համեմատաբար սակավաթիվ են կայուն շրջասությունները, որոնք հիմնականում ուղղակի կապակցություններ են (օրինակ՝ *հայ գրերի ստեղծող, հայերենի առաջին ուսուցիչ, հայոց մեծ ուսուցչապետ, մեր դպրության հիմնադիր* և այլն)։

Մշակութային տեսակետից՝ *Մաշտոց* նշանակող շրջասությունները բավական բազմազան են, քանի որ տեղեկություններ են պարունակում նրա կյանքի, գործունեության տարբեր կողմերի, հայ ժողովրդի կյանքում նրա ունեցած վիթխարի դերի վերաբերյալ։

Բերված շրջասությունների քննությունը ցույց է տալիս, որ մեր ուսումնասիրության առարկա կապակցությունների գործածությունը թելադրվում է ասելիքի արտահայտչությունն ուժեղացնելու, հայ ժողովրդի կյանքում և նրա մշակույթի պատմության մեջ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի դերն ու նշանակությունն ընդգծելու, նրա գործունեության գնահատականը պատկերավոր ձևով արտահայտելու՝ գրողի կամ խոսողի ձգտմամբ։ Վստահաբար կարող ենք ասել, որ ժամանակի ընթացքում Մեսրոպ Մաշտոցին անվանող շրջասությունների շրջանակը կընդլայնվի այլ՝ ավելի նոր կապակցություններով։

Համառոտագրություններ

ԱՊ - **Անահիտ Պարսամյան**, Աստղականչ, Երևան, 1987:

Աս - **Ասողիկ**, Մեսրոպ Մաշտոց, Երևան, 1991:

ԳԲ - Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս (Էջմիածին, 2005, ԺԱ, էջ 140):

ԳԷ- **Գևորգ Էմին**, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1986:

ԺՀ- **Ժագ Ս. Հակոբեան**, Հայատրոփ, Պեյրութ, 1970:

ԼԴ - **Լյուդվիգ Դուրյան**, Մաշտոց, Երևան, 1986:

ԿԱ - **Կարինե Արսենյան**, Մաշտոցապատում օշականյան, Երևան, 2006:

Կոր – **Կորյուն**, Վարք Մաշտոցի, Երևան, 1980:

ՀԹ – **Հովհաննես Թումանյան**, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1969:

ՆՎ – **Ներսես Վանական** (Ներսես արքեպս. Պոզապալյան), Բանաստեղծություններ, Եր., 2006:

ՊԲ - **Պետրոս Բեղիրյան**, Հայերեն շրջասությունների բառարան, Ս. Էջմիածին, 2002:

ՊԽ – **Պատվական Խաչատրյան**, Ասք Մաշտոցի մասին, Երևան, 1982:

ՊՍ – **Պարույր Սևակ**, Երկերի ժողովածու, 6 հատորով, հ. 5, Երևան, 1974:

ՌԳ - **Ռևիկ Գրիգորյան**, Պատմություն հայոց. գիրք պոեմների, Երևան, 2002:

ՍԶ - **Ստեփան Զորյան**, Երկերի ժողովածու, տասներկու հատորով, հ. 12, Երևան, 1990:

Ս – **Սիամանթո**, Երկեր, Հայ դասականների գրադարան, Երևան, 1979:

ՍՄ – **Սուրեն Մուրադյան**, Աշնանամուտի զանգեր, Երևան, 2006:

ՎԴ - **Վահագն Դավթյան**, Երկեր, հ. 2, Երևան, 1985:

ՎՍ- **Վանիկ Սանթրյան**, Մաշտոցի որդիները, Ս. Էջմիածին, 1995:

ՔՀ – Քրիստոնյա Հայաստան

ԳԵՎՈՐԳ ՄՐԱՊԻՈՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՇԱՄԱԽՈՒ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՍԱՂԻԱՆԻ Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԽԱՎԿԱ ՎԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)

Շամախու հայոց թեմի վանական համալիրների շարքում իր կարևոր տեղն է ունեցել Սաղիանի Ս. Ստեփաննոս Նախավկա վանքը: Վանական համալիրը կոչվել է վանքի հնագույն շինության և գլխավոր եկեղեցու՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի անունով: Թեև մատենագրական աղբյուրները վանքի հիմնադրման վերաբերյալ ստույգ տեղեկություններ չեն հաղորդում, այդուհանդերձ պատմությունն ավանդում է, որ Սաղիանի վանքը գոյություն է ունեցել վաղ միջնադարից: Վանքի պատմության մասին առաջին ուսումնասիրությունը հրատարակել է Շամախու հայոց թեմի 1887-1895 թթ. առաջնորդ Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը (Նախիջևանցի)՝ «Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ի Շամախւոյ թեմի»:

Ինչպես ցույց են տալիս Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի ուսումնասիրությունները, հեթանոսության շրջանում Սաղիանի վանքի տեղում եղել է կռատուն, որտեղ Աղվանից նահատակ Գրիգորիս կաթողիկոսը քրիստոնեության քարոզության ժամանակ կանգնեցրել է խաչ, իսկ հետագայում Մեսրոպ Մաշտոցը այդ վայրում հիմնել է դպրանոց, որը հայտնի է եղել «Դպրավանք Աղուանից անվամբ[1]:

Սաղիանի վանքի Մեսրոպ Մաշտոցի կողմից հիմնված լինելու ավանդազրույցի վերաբերյալ տեղեկանում ենք նաև «Նոր-Դար»-ին 1887 թ. նոյեմբերի 24-ի «Դ. Գ.»-ի հղած թղթակցությունից. «Շամախիից 18 վերստ հեռաւորութեամբ դէպի հարաւ գտնուում է Սաղիանի Ս. Ստեփաննոս վանքը մի վայելուչ բարձրահայեաց դիրքի վերայ, որ, ըստ աւանդութեան տեղաբնակների, հիմնուած է Ս. Մեսրովբ Թարգմանչից՝ նրա այս կողմերը եկած ժամանակը»[2]:

Ինչպես տեսնում ենք, Սաղիանի վանքը Մեսրոպ Մաշտոցի կողմից հիմնադրված լինելու վերաբերյալ տեղեկությունները սահմանափակվում են միայն ավանդազրույցով: Եվ որքան էլ այդ ավանդությունը գունազարդված լինի, անտարակույս նրանում կան իրական ու պատմական դեպքերի արձագանքներ:

Վանքերը կառուցելիս անհրաժեշտաբար հաշվի են առնվել տեղանքի հարմարավետությունը, պաշտպանվածությունը, բնակլիմայական բարենպաստ պայմանները (բերրի հողեր, գետեր և աղբյուրներ), բնության ու սրբավայրի գեղագիտական ներդաշնակությունը և այլն: Այդ առումով Սաղիան գյուղի դիրքը չափազանց հարմարավետ էր: Սանահինի վանքի միաբան Սարգիս արքեպս. Ջալալյանցը, որը 1848 թ. երկրամասում շրջագայելու ժամանակ եղել

---

[1] **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ի Շամախւոյ թեմի, Տփխիս, 1896, էջ 84:

[2] «Նոր-Դար», Թիֆլիս, 1887, 24 նոյեմբերի, թիվ 202, էջ 1:

է նաև Սաղիանում, գյուղի վերաբերյալ թողել է հետևյալ ուշագրավ տեղեկությունը. «Կացեալ ի տեղւոյն բնակիչք են Հայք, տունք յիսուն, ունին զայգիս բազումս և սերմանեն զտորոն. սմին գեղջ ոչ բազում ժամս անցի անտի ի գիւղն Սաղիան, որ մերձ է ի քաղաքն Շամախւոյ, առողջարար և երկիրն արգաւանդ»[3]:

Սաղիան գյուղի մասին Մակար եպս. Բարխուդարյանցն էլ գրում է. «…շինուած է գիւղս այն խոր ձորի արևելահայեաց լանջի վերայ, որ ընկած է Մատրասայի և գիւղիս մէջ. Սաղիան նշանաւոր է իւր այգիներով և գինու բերքով: Արքունի է հողն, պատուական՝ ջուրն, անվնաս՝ օդն և կլիման»[4]: Հայկական հինավուրց այս գյուղում հիմնականում զբաղվում էին երկրագործությամբ և շերամապահությամբ[5]:

Սաղիանի վանքը մատենագրական հետագա աղբյուրներում հիշատակվում է XVI դ. 50-ական, ապա 1636 թ. սկսած: Թերևս առաջին հիշատակությունը կարելի է համարել Սաքսոնիայի դուքս Ֆրիդրիխ Շլեզվիգ-Հոլշտինացու պատվիրակության քարտուղար Ադամ Օլեարիուսի ճամփորդական նոթերի այն տեղեկությունները, ըստ որոնց՝ 1636 թ. հունվարի 6-ի ջրօրհնեքի արարողությունից երկու օր անց Աբրահամ եպիսկոպոսն իր քահանաների հետ միասին դիմել էր դեսպաններին, որպեսզի նրանք միջնորդեն Շամախու խանին, «որ սա թոյլ տայ վերջացնել սորանից քանի մի ժամանակ առաջ սկսած մի վանքի շինութիւնը, որ չգիտեմ ինչ պատճառաւ պարսիկները չեն թոյլ տալիս լրացնել»[6]: Ա. Օլեարիուսի վկայությամբ՝ «…նորա (Աբրահամ եպիսկոպոսի- Գ. Ստ.) առաջ գալիս էին բազմաթիվ քահանայք եկեղեցական զգեստով և ձեռքներին վառած մեղրամոմ ունենալով: Ապարանքը ներս մտնելիս նոքա բերեցին հետերնին երկու սափոր գինի և մի մեծ սինի (ափսե) լի խնձորով, որոց մեջտեղը տնկած էր մի վառած մեղրամոմ: Նոքա մոտ երեք ժամ խոսում էին մեզ հետ իրանց կրոնի մասին և նորից խնդրեցին մեզ միջնորդել խանի մոտ, որ թոյլ տայ նոցա վերջացնել իրանց վանքի շինութիւնը»:

Ա. Օլեարիուսը թեմակալի խնդրի առիթով գրում է. «Մենք խոստացանք և կատարեցինք»[7]: Թեև Ա. Օլեարիուսի նոթերում հստակ նշված չէ, թե «վանքի շինութիւնը» արտահայտությամբ որ վանքն է նկատի առնված, այդուհանդերձ հակված ենք կարծելու, որ խոսքը թեմական առաջնորդանիստ Սաղիանի վանքի մասին է, քանի որ սկզբնաղբյուրները աներկբայորեն հավաստում են, որ թեմի մյուս վանքերը՝ Մեյսարին և Խոշկաշեն գյուղի Եղիշա առաքյալի վանական համալիրը, կառուցվել են Սաղիանի վանքից ավելի ուշ, առաջինը՝ 1680, երկրորդը՝ 1682 թթ.: Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը ևս իրավացիորեն գտնում է, որ թեմի առաջնորդ Աբրահամ եպիսկոպոսի՝ դեսպաններին ուղղած խնդրանքը վերաբերել է Սաղիանի վանքի շինարարությանը, սակայն թեական է համարել «վանքի շինելու» արտահայտությունը՝ գտնելով, որ այն կարելի է հասկանալ նաև «նորոգելու» իմաստով[8]:

---

[3] Տե՛ս **Ջալալեանց Մ.**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփղիս, 1858, էջ 394:

[4] **Բարխուտարեանց Մ.**, Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893, էջ 174:

[5] Տե՛ս «Նոր-Դար», Թիֆլիս, 1887, 24 նոյեմբերի, թիվ 202, էջ 1:

[6] **Երիցեանց Ալ.**, Մանր նիւթեր հայոց պատմութեան համար, մասն Գ, Ջրօրհնեաց հանդէսը Շամախիում 1637 թուին, «Արձագանք», Թիֆլիս, 17 հունվարի, 1888, թիվ 1, էջ 14-15:

[7] Նույն տեղում, էջ 14:

[8] Տե՛ս **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 55:

Սաղիանի վանքի Ս. Ստեփաննոս Նախավկա եկեղեցու կառուցման վերաբերյալ տեղեկություն է թողել նաև Հովհաննես եպս. Շահխաթունյանցը, որը վանքի բեմի սեղանի ճակատից ընդօրինակել է հետևյալ արձանագրությունը. «Արդ ես մեղապարտս ի ծնունդս եկեղեցւոյ Կրկոս (Կիրակոս - Գ. Ստ.) պիտակ վարդապետ, բնիկ յերկրէն Աղուանից, ի գեղջն Սաղիանու, շնորհօք և ողորմութեամբ Աստուծոյ ետու շինել զեկեղեցիս վայելչակերտ յանուն Սրբոյ Ստեփաննոսի Նախավկային, ի ՌՃԹ (1660) թվին, յառաջնորդութեան Սուրբ Գանձասարայ Տէր Պետրոսի, զոր եւ աղերսեմ զյանդիպողաց յիշել զիս և զտէր Ղազարն հոգաբարձու վանիցս և զամենայն աշխատաւորս սորին, որք յիշեն՝ յիշեալ լիցին առաջի Աստուծոյ, ամէն»[9]:

Այդ արձանագրությանը ժամանակին անդրադարձել է նաև բազմավաստակ հայագետ Ղ. Ալիշանը՝ գրելով. «Ժամու մերձ է ի քաղաքն Սաղիան գիւղն վերոյիշեալ, ուր և վանք յանուն Ս. Ստեփաննոսի շինեալ յամին 1660»[10]: Այստեղ հակասական է նաև այն հանգամանքը, որ 1848 թ. Սաղիան այցելած Սանահնի վանքի միաբան Սարգիս արքեպս. Ջալալյանցը վանքի կառուցման թվական է արձանագրել 1741 թ.՝ «Աստ է հռչակաւոր մենաստանն յանուն Սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի, զոր կառոյց Կիրակոս վարդապետ ի թվին Հայոց ՌՃԶ. (1741)»[11]: Հր. Աճառյանը Սաղիանի վանքի կառուցումը (հավանաբար վերականգնումը) թվագրել է 1657[12]:

Այսպիսով, ի մի բերելով վերը հիշված արձանագրությունների բովանդակությունը, պետք է նշել, որ թեև այդտեղ հստակ ասված է, որ վանքը կառուցվել է թեմի առաջնորդ Կիրակոս վարդապետի օրոք 1660 կամ 1741 թթ., այսուհանդերձ կառուցման այդ թվականները հետագա ուսումնասիրողների մոտ կասկածանքների տեղիք են տվել: Այդ թվականները դիտվել են ոչ որպես հիմնարկման, այլ նորոգման թվականներ: Շամախու հայոց թեմի ավելի ուշ շրջանի առաջնորդ Դանիել արքեպս. Շահնազարյանցը, 1865 թ. օգոստոսի 3-ին այցելելով Սաղիան, վանքի շինության վերաբերյալ գրել է. «Սուրբ Ստեփաննոս Նախավկայի վանքն շատ տարի է որ շինուած է, բայց շինութեան թուականն ջնջուած լինելով անյայտ է մնում հետաքրքիրներից. ես հետաքրքրութեամբ շատ կամեցայ տեղեկանալ շինութեան սկզբան, բայց չկարացի: Թէև արևմտեան եկեղեցւոյ դրան ճակատին շատ բարձր կայր յիշատակարան, բայց ջնջուած էր. նոյնպէս ևս սեղանի ճակատումն կայր գրեր անվերծանելի՝ ի տեղիս տեղիս կային արտաքուստ որմանց արձանագրեր, **բայց նոքա էին վերանորոգութեան արձանագրեր՝ և ո՛չ թէ շինութեան. ուստի հարկ չհամարեցի անցուցանել ի գրի** (ընդգծումը մերն է - Գ. Ստ.)»[13]: Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը ևս թեական է վերաբերվել արձանագրությունում հիշատակված 1660 թվականին և ենթադրել է, որ գուցեն այն վերաբե-

---

[9] **Շահխաթունեանց Յովհ.**, Ստորագրութիւն Կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, Էջմիածին, 1842, էջ 380:

[10] **Ալիշան Ղ.**, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 92:

[11] Տե՛ս **Ջալալեանց Ս.**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Բ մաս, Տփղիս, 1858, էջ 394:

[12] **Աճառյան Հր.**, Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, էջ 56:

[13] **Դանիէլ արքեպս.**, Այցելութիւն եկեղեցեաց գիւղօրէից վիճակին Հայոց Շամախւոյ, «Արարատ», 1870, դեկտեմբեր, էջ 257:

րում է վանքի նորոգմանը[14]:

Մեր ուսումնասիրությունները ևս հիմք են տալիս կարծելու, որ վերը հիշատակված 1636, 1660, ապա՝ 1741 թվականները պետք է դիտել որպես Սաղիանի վանքի վանքապատկան շինությունների վերանորոգման, այլ ոչ թե հիմնարկման թվականներ: Պետք է նկատել, որ շատ դեպքերում արձանագրություններում «շինել» տերմինը օգտագործվել է ոչ միայն «հիմնարկել», «կառուցել» իմաստով, այլև «վերակառուցել, նորոգել» նշանակությամբ, ինչպես ժամանակին նշել է Հ. Օրբելին[15]: Ուստի, ենթադրելի է, որ արձանագրությունում օգտագործված «շինել» տերմինը բովանդակային առումով առնչվել է վանքի վերանորոգման մեծածավալ աշխատանքներին: Հուշարձանի ճարտարապետական ու հնագիտական տվյալները վկայում են, որ շինությունը գործելիս է եղել դեռևս XVI դ.: Այդ է վկայում այն հանգամանքը, որ վանքի պարսպից թե՛ դուրս և թե՛ ներսում պահպանված գերեզմանոցներում եղել են XVI դ. թվագրված տասնյակ խաչքարեր և թեմի առաջնորդների գերեզմաններ՝ տապանագրերով, ինչպես, օրինակ. «Այս է տապան Ներսէս վարդապետի…ԹՎՌ. (1551)»[16]:

Այսպիսով, թեև սկզբնաղբյուրները Սաղիանի վանքի հիմնարկման վերաբերյալ ըստ էության հստակ տեղեկություններ չեն պահպանել, այսուհանդերձ, դատելով վանքի խաղացած կրոնա-մշակութային մեծ դերից, ենթադրում ենք, որ այն գործել է առնվազն վաղ միջնադարից սկսած և Շամախու հայոց թեմի կազմավորումից (X դարի վերջ XI դարի սկիզբ) մինչև 1838 թ. (նախքան Շամախի քաղաք տեղափոխելը) համարվել է նրա ավանդական ու անփոփոխ եպիսկոպոսանիստը[17]: Պատմությունից հայտնի է, որ թեմերի առաջնորդանիստի ընտրության պարագայում միշտ էլ հաշվի է առնվել վայրի հնության և սրբագործված լինելու հանգամանքն ու բնակավայրի վարչական գերակայությանը: «Այս վանքն շատ յարմարութիւն ունի ամեն տեսակաւ Ուսումնարանի և Առաջնորդարանի: Այս տեղ լինելով միջակէտ գիւղացւոց վիճակին Շամախւոյ, Առաջնորդն տեղւոյն շատ շուտ կարող է այցելութեան ելանել իւր հօտին, և նոցա առանց նեղութեան հովուել, և հոգևոր պիտոյքը հոգալ: Տեղւոյն օդն շատ առողջարար է. ունի վանքն մի ամենապատուական աղբիւր»[18],- գրում է Դանիել արքեպս. Շահնազարյանցը: Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը ևս Սաղիանի վանքի հնուց ի վեր առաջնորդանիստ լինելու վերաբերյալ գրել է. «Ինչպէս որ նախքան Պոլօժէնիայի հաստատուիլը 1836 թիւը՝ **ի վաղուց հետէ Առաջնորդարան էր Շամախւոյ թեմի** (ընդգծումը մերն է - Գ. Ստ.), և այդ պատճառաւ Առաջնորդաց ցանկ ու ցուցակ կազմողը պէտք է Սաղիանի վանքի գերեզմանատանը որոնէ ու գտնէ Առաջնորդաց անուանքն…»[19]:

Մենք ևս ընդունում ենք այդ տեսակետը: Այս եզրակացության օգտին է խոսում նաև այն

---

[14] Տե՛ս **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 49:

[15] Տե՛ս **Орбели И.**, Избранные труды, Ереван,1963, стр. 419.

[16] Տե՛ս **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 76:

[17] Տե՛ս **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 36, տե՛ս նաև **Արիստակէս եպս. Մեղրակեան**, Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանցի կենսագրութիւնը, Ս.Պետերբուրգ, 1898, էջ 127:

[18] **Դանիէլ արքեպս.**, Այցելութիւն եկեղեցեաց գիւղօրէից վիճակին Հայոց Շամախւոյ, «Արարատ», 1870, դեկտեմբեր, էջ 258:

[19] Տե՛ս **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 27:

փաստը, որ եպիսկոպոսանիստ կամ տերունի[20] վանքերը ավանդաբար հիմնվել են իշխանական կամ թագավորական նստոցներին կից: Տվյալ դեպքում, Սաղիան գյուղը գտնվում էր շիրվանշահերի պետության մայրաքաղաք Շամախու մերձակայքում, շուրջ 18-20 կմ արևմուտք ընկած[21]: «Հներում,- գրում է Ներսես արքեպս. Մելիք-Թանգյանը,- մեծ մասամբ վանքերում նստում էին առաջնորդ եպիսկոպոսները…»[22]: Այդ է վկայում նաև Հայոց Կաթողիկոս Սիոն Ա Բավոնեցու նախաձեռնությամբ Պարտավում 768 թ. հրավիրված Բ եկեղեցաժողովում ընդունված 7-րդ կանոնը, ըստ որի՝ վանքերը «գիւղերում շինուին՝ որ այնտեղ իջևանեն առաջնորդները…»[23]:

Սաղիանի վանքի վերանորոգման աշխատանքներն ավարտին է հասցրել Աղվանից Պետրոս Գ Խանձկեցի Կաթողիկոսը (1653-1675), որը կաթողիկոսությանը ենթակա թեմերում լայն թափով ծավալել էր վանքերի և նոր եկեղեցիների կառուցման ու հների վերանորոգման աշխատանքներ: Ինչ վերաբերում է Սաղիանի վանքի վերականգման աշխատանքների ձգձգմանը, ապա այն ամենայն հավանականությամբ պայմանավորված է եղել պարսից խաների կողմից պարբերաբար ստեղծվող արհեստական դժվարություններով: Սաղիանի վանքը բաղկացած է եղել մեկ եկեղեցուց, միաբանության ու տնտեսական բնույթի շենքերից, պարսպապատից, դարպասից, աղբյուրներից և գերեզմանոցից[24]: Սիմեոն Ա Երևանցի Կաթողիկոսը (կթդ. 1763-1780 թթ.) Շամախու հայոց թեմին 1770 թ. հասցեագրած կոնդակներից մեկում Սաղիանի վանքի մասին գրում է. «Յորոց բազմաց վանօրէից մին է՝ հրաշազարդ և գերահռչակ ուխտն սուրբ…Որ յառաջագոյն էր ըստ ամի ճոխ և փարթամ, եկեղեցական և արտաքսական ընչիւք և կահիւք…»[25]:

Սաղիանի վանքն ունեցել է բավականին հարուստ և բազմաճյուղ տնտեսություն՝ սեփական վարելահող, այգի, այգետեղիներ և անտառ, որից էլ գոյացել է վանքի տարեկան վառելափայտը[26]: Սարգիս արքեպս. Ջալալյանցի՝ Սաղիանի վանքի վարելահողերի 1848 թ. կազմած ցուցակից հետևում է, որ վանքն ունեցել է շուրջ 33 միավոր վարելահող և պարտեզներ[27]: Ընդ որում, ինչպես հուշում է ցուցակի բովանդակությունը, վանքապատկան այդ հողերը ձեռք էին բերվել նվիրատվությամբ կամ էլ սեփական միջոցներով: Ինչպես, օրինակ. «Վլասանց Ծատուրից գնած տափն…», «Յոհան վարդապետի գնած տափը…», կամ՝ «Աննայի տուած մոշի հողը…»[28] և այլն: Մխիթար վարդապետի բերած տվյալների համաձայն՝

---

[20] Ինչպես Հայաստանում, այնպես էլ նրանից դուրս գործող թեմերում եպիսկոպոսանիստ վանքերը կոչվել են նաև՝ տերունի(տե՛ս **Մելիք-Թանգեան Ն.**, Հայոց եկեղեցական իրաւունքը (Կազմակերպութիւն եւ կառավարութիւն), հ. Բ, Շուշի,1905, էջ 150-151):

[21] Տե՛ս **Կարապետյան Ս.**, Բուն Աղվանքի վիմագրերը, Երևան, 1997, էջ 60:

[22] **Մելիք-Թանգեան Ն.**, Հայոց եկեղեցական իրաւունքը, հ. Բ, էջ 168:

[23] **Յուսիկ վրդ. Մովսիսեան**, Հայ Եկեղեցու պատմութիւն, Վաղարշապատ, 1884, էջ 149:

[24] Տե՛ս **Կարապետյան Ս.**, Բուն Աղվանքի վիմագրերը, Երևան, 1997, էջ 61:

[25] **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 81:

[26] Տե՛ս **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 70, տե՛ս նաև **Բարխուտարեանց Մ.,** Աղուանից երկիր և դրացիք, էջ 176:

[27] Տե՛ս **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 396, տե՛ս նաև **Դանիէլ արքեպս.**, նշվ. աշխ., «Արարատ», 1870, դեկտեմբեր, էջ 258:

[28] **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 396-397:

վանքն ունեցել է 1 այգի (3 դ. 1460 ք.ս. տարածությամբ), 23 կտոր վարելահող Սաղիան գյուղում(ընդամենը 32 դ., 1792 ք.ս.), 1 կտոր հող Գյուրջևան գյուղում (11 դ. 1400 ք.ս. տարածությամբ): Վանքն ունեցել է ընդամենը 47 դ. 2252 ք.ս. հող, որը շահագործվել է կա՛մ տնտեսական եղանակով և կա՛մ էլ տրվել է կապալով՝ ստանալով տարեկան բերքի 1/2-ը: Հողից ստացված տարեկան մոտավոր արդյունքը կազմել է 1700 ռ.[29]:

Խոսելով ընդհանրապես վանական կալվածատիրության մասին՝ նշենք, որ սեփականատիրական իրավունքի տեսակետից այն եղել է ամենակայուն և ամենաամուր իրավական հիմքերն ունեցող կալվածատիրությունը: «Բավական էր,- գրում է Հ. Փափազյանը,- որ տվյալ վանքը կամ որևէ այլ կրոնական-եկեղեցական հաստատություն նվիրաբերման ճանապարհով կամ այդ անվան տակ հաջողեր ձեռք բերել որևէ մուլք կամ այլ ստացվածք, և այնուհետև այն դառնում էր նրա հավիտյան անօտարելի սեփականությունը»[30]: Սաղիանի վանքի վանական տնտեսության մեջ առաջնային տեղ է գրավել հողագործությունը, հատկապես գյուղատնտեսական կուլտուրաների (ցորեն, գարի և այլն) մշակումը: Սաղիանի վանքի վանական կալվածատիրության մեջ մեծ տարածում ուներ նաև այգեգործությունը[31]: Առանձնապես աչքի է ընկել խաղողագործությունը, քանի որ այստեղ վանքի համար պատրաստել են գինի: Սարգիս արքեպս. Ջալալյանցը այս մասին թողել է հետևյալ տեղեկությունը. «Յարևմուտս հարաւոյ կից այսր վանաց է մեծադիր այգի, յորմէ քամէ զառատ և զազնիւ գինի ի սնունդ միաբանից։ Ունի նոյնպէս շահաստան կալուածս, զորս տայ կապալաւ, սպասք խորանին սրբութեան թանկագին են՝ ըստ մեծի մասի ընծայեալք յիշխանաց Հայոց բնակելոց ի Հաշտարխան»[32]:

Վանքապատկան կալվածքներից ստացվող եկամուտներով կառուցվում կամ վերանորոգվում էին եկեղեցիները, սրբատեղիներն ու մատուռները: Այդ եկամուտներով հոգում էին վանական միաբանության ապրուստի և վանական դպրոցի ծախքերը, իսկ ձեռագրերի ընդօրինակման համար ձեռք էին բերվում անհրաժեշտ նյութեր՝ թուղթ, բուսական ու քիմիական ծագում ունեցող բարձրորակ թանաք, կաշեղեն և այլն[33]: Սաղիանի վանքի վանական հարուստ տնտեսությունն իր գոյությունը պահպանեց ընդհուպ մինչև XVIII դ. վերջերը՝ Շամախիի Մուստաֆա խանի ժամանակները: Դանիել արքեպս. Շահնազարյանցն, իր այցելության ժամանակ տեսնելով Սաղիանի վանքի քայքայված վիճակը, դառնացած գրել է. «Այս վանք՝ ինչպես որ պատմում են ամեն տեսնողներ, Մոստաֆայ Խանի ժամանակում՝ շատ հարուստ է եղած, շատ միաբան Վարդապետեր և Եպիսկոպոս Առաջնորդ է ունեցել…Այս վանքն մի անդրանիկ վանք է Շամախիի վիճակի համար: Այս վանքովն են պարծանք ունեցած միշտ հայեր օտար ազգաց յառաջ, և այս վանքումն է Քրիստոսի Սուրբ Խաչն բարձրացրած՝ փոխանակ կռոց արձաններին…»[34]:

---

[29] Տե՛ս **Մխիթար վարդապետ**, Հայերը Ռուսաստանում, Վաղարշապատ, 1906, էջ 9:

[30] **Փափազյան Հ.**, Վանական կալվածատերերի սեփականատիրական իրավունքի մի քանի առանձնահատկությունները (XV-XVIIIդդ.), Բանբեր Մատենադարանի, թիվ 10, Երևան, 1971, էջ 240:

[31] Տե՛ս **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 70:

[32] **Ջալալեանց Ս.**, նշվ աշխ., մասն Բ, էջ 394:

[33] Տե՛ս **Գրիգորյան Գ.**, Սյունիքի վանական կալվածատիրությունը IX-XIII դդ., Երևան, 1973, էջ 215:

[34] **Դանիէլ արքեպս.**, նշվ. աշխ., «Արարատ», 1870, դեկտեմբեր, էջ 257:

Վանքի տնտեսական դրությունը զգալիորեն բարելավվել է հատկապես Վլաս վրդ. Շամախեցու՝ թեմի առաջնորդ (1688-1701)[35] դառնալուց հետո: Մտահոգված վանքի միաբանության բարեկեցության խնդրով՝ Վլաս վարդապետը տնտեսական նշանակություն ունեցող շինություններ է կառուցել և ըստ ամենայնի բարեկարգել վանքի տնտեսությունը: 1691 թ. վանքին կից կառուցված տնտեսատունը եղել է քառակուսի հատակագծով, անտաշ քարերով և կրաշաղախով կառուցված շենք: Տնտեսատան չորս անկյուններում եղել են մեկական թաղածածկ սենյակներ: Կենտրոնական մասի ծածկը եղել է երդիկաձև: Սենյակներից բացվել են բազմաթիվ խորշեր, բուխարիներ և լուսամուտներ[36]: Տնտեսատան կառուցման վերաբերյալ արձանագրությունը գտել է Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը՝ 1888 թ. վանքում շինարարական աշխատանքներ կատարելու ժամանակ: Արձանագրությունը, որն ունի բանաստեղծական հանգավորում, ներկայացնում ենք ամբողջությամբ.

«Շինեցաւ տնտեսատուն,
Սովեալ մարդոյ սրտին է սիւն,
Ով սորա մէջ լինի ի քուն,
Աղօթք առնէ գիշերն ի բուն,
Մաղթեմ յիշել և զիս ի նոյն,
Վլաս վարդապետ պիտակ անուն,
Վերաձայնի Շիրվանատուն:
… թվին ՌՃԽ (1691)[37]«:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում Սաղիանի վանքը հայտնի էր նաև որպես գրչության արգասավոր կենտրոն: Ունեցել է գրատուն, որտեղ գրվել, ընդօրինակվել, նկարազարդվել, նորոգվել ու պահպանվել են մեծ թվով ձեռագիր և գրչագիր գրքեր: Այստեղ 1636 թ. Աբրահամ դպրի ձեռքով ստեղծված Աղոթամատույցի հիշատակարանում գրված է. «Արդ՝ գրեցաւ Աղօթամատուցս ի յերկիրս Աղուանից, ի գեօղս որ կոչի Սաղիան, ձեռամբ Աբրահամ դպրի, ի խնդրոյ Շաքեցի Խուբիարի որդի Ոհանէս դպրի ի կաթողիկոսութեան Տեառն Փիլիպոսի, աշակերտաց Տեառն Մովսէսի, որ կրկին լուսաւորեաց զազգս Հայոց, և մերոյ նահանգիս առաջնորդութեան Թումայի մեծ ռաբունապետի…»[38]:

Սաղիանը, որպես գրչության կենտրոն, հիշատակվում է նաև հետագա ժամանակներում: Այսպես, 1654 թ. ձեռագիր մի Ժողովածուի հիշատակարանում նշված է. «Գրեցաւ ի գեաւղս որ կոչի Սաղիան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս[39]: Ի հայրապետութեան ազգիս Հայկազնայ տէր Փիլիպպոսի, ի հայրենի աթոռն պատրիարգանիստ նահանգի Ս. Էջմիածինն…»[40]: Այսպիսով, հիշատակարանում պահպանված տեղեկությունից հայտնի է դառ-

---

[35] **Տե՛ս Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 32-33:

[36] Տե՛ս նույն տեղում, էջ 73, տե՛ս նաև **Կարապետյան Ս.**, Բուն Աղվանքի վիմագրերը, էջ 63:

[37] Տե՛ս **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 73:

[38] ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, կազմեցին՝ Վ.Հակոբյան, Ա.Հովհաննիսյան, Երևան, 1978, էջ 859-860:

[39] Սաղիան գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին XIX դ. վերջին գտնվել է կիսավեր վիճակում (**տե՛ս** Սմբատեանց Մ., Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 19):

[40] **Տե՛ս** ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (1641-1660), հ. Գ, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հով-

նում, որ Սաղիան գյուղում գործել է նաև Ս. Աստվածածին անունով եկեղեցի: Սաղիանի վանքում ստեղծված բարձրարժեք ձեռագրերն աչքի էին ընկնում ձեռագրական ու մանրանկարչական բարձր արժանիքներով:

Հայ մշակույթի միջնադարյան այս կենտրոնի գրատանը պահվել և ոչնչացումից փրկվել են նաև Հայաստանի գրչության այլ վայրերում ընդօրինակված մեծ թվով ձեռագրեր՝ Ավետարաններ, Տաղարաններ, Քարոզգրքեր, Շարակնոցներ և Մաշտոցներ, տպագիր գրքեր ու դասագրքեր: Այդ թվում.

«Մեկնութիւն Գիրք սահմանաց Դաւթի գրչեայ» - ժամանակ՝ ՌՃՕԹ (1710), վայրն անհայտ է, գրիչ՝ Մինաս վարդապետ[41]:

«Մեկնութեան գրոցն Պրոկղի Փիլիսոփայի» - ժամանակ՝ ՌՃՀԵ (1726), վայրն անհայտ է, գրիչ՝ Միքայել վարդապետ[42]:

«Մեկնութեան գրոցն Պրոկղի Փիլիսոփայի» - ժամանակ՝ ՌՄՕԲ (1803), վայրն անհայտ է, գրիչ՝ Սիմեոն եպիսկոպոս Գառնեցի (Մակար եպս. Բարխուդարյանի մոտ՝ Գանձակեցի)[43]:

«Շարակնոց ձեռաց» (առանց հիշատակագրության)[44]:

«Շարակնոց» (առանց հիշատակագրության)[45]:

«Շարակնոց» (առանց հիշատակագրության)[46]:

«Շարակնոց» (առանց հիշատակագրության)[47]:

«Ժամագիրք Ատենի»- ժամանակ՝ ՌՃՕԷ (1708), վայրն անհայտ է, գրիչ՝ Եփրեմ դպիր,

---

հաննիսյան, Երևան, 1984, էջ 624:

[41] Տե՛ս **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 63: Ձեռագիրն այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում: Մուտք է գործել 1893 թ. Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի միջոցով, Խրիմյան Հայրիկի կաթողիկոսական օծման հանդեսի ժամանակ ստացված նվերների շարքում և պահպանվում է N 3329 թվահամարի ներքո (տե՛ս **Եգանյան Օ.**, Մեսրոպ արք. Սմբատյանի «Նկարագիր Շամախւոյ թեմի» գրքում հիշատակված ձեռագրերը, «Էջմիածին», 1970, հունվար, էջ 47):

[42] Տե՛ս **Բարխուտարեանց Մ.,** Աղուանից երկիր և դրացիք, էջ 157, 177: Հմմտ. **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 63, 246: Հմմտ. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, կազմեցին՝ Օ.Եգանյան, Ա.Ջեյթունյան, Փ. Անթաբյան, խմբ.՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, հ. Ա, Երևան, 1965, էջ 1130: Ձեռագիրն այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում: Մուտք է գործել 1893 թ. Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի միջոցով, Խրիմյան Հայրիկի օծման հանդեսի ժամանակ ստացված նվերների շարքում և պահպանվում է N 2573 թվահամարի ներքո (տե՛ս **Եգանյան Օ.**, Մեսրոպ արքեպս. Սմբատյանի «Նկարագիր Շամախւոյ թեմի» գրքում հիշատակված ձեռագրերը, էջ 47):

[43] Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 177: Հմմտ. Սմբատեանց Մ., Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 63, 246: Ձեռագիրն այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում: Մուտք է գործել 1912թ. և պահպանվում է N 4013 թվահամարի ներքո (տե՛ս **Եգանյան Օ.**, Մեսրոպ արքեպս. Սմբատյանի «Նկարագիր Շամախւոյ թեմի» գրքում հիշատակված ձեռագրերը, էջ 47):

[44] Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, Աղուանից երկիր և դրացիք, էջ 177: Հմմտ. **Սմբատեանց Մ.,** Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 246: Ձեռագիրն այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում: Մուտք է գործել 1888 թ. Մ. արք. Սմբատյանցի միջոցով և պահվում է N 3220 թվահամարի ներքո (տե՛ս **Եգանյան Օ.**, Մեսրոպ արքեպս. Սմբատյանի «Նկարագիր Շամախւոյ թեմի» գրքում հիշատակված ձեռագրերը, էջ 47):

[45] Տե՛ս նույն տեղում: Ձեռագրիս հետագա ճակատագիրն անհայտ է:

[46] Տե՛ս նույն տեղում: Ձեռագրիս հետագա ճակատագիրն անհայտ է:

[47] Տե՛ս նույն տեղում: Ձեռագրիս հետագա ճակատագիրն անհայտ է:

պատվիրատու՝ Օհան քահանա Ջուղայեցի[48]:

«Մաշտոց»- ժամանակ՝ ՌԹ (1560), վայր՝ Խանձք գյուղ[49], Ս. Հակոբ վանք, գրիչ՝ Հովհաննես աբեղա: Հիշատակարանում գրված է. «Արդ գրեցաւ տառս, որ կոչի Մաշտոց, ձեռամբ անարուեստ և փծուն գրչի Յովհաննէս աբեղայիս. անուամբս միայն և գործովս ոչ, ի դուռն Սուրբ Աթոռոյս Յակոբայ վանիցս և ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին ի յերկիրս Խաչեն, ի գիւղս, որ կոչի Խանձք ի Հայրապետութեան Տեառն Գրիգորիսի և Արի եպիսկոպոսին Առստակէսին, և իշխանաւոր տեղւոյս Մէհրապ պէկին, և աշխարհակալ Շահ Դամանին…ի թվիս Հայոց ՌԹ»[50]: Նկարագրության պահին եղել է Սաղիանցի ուսուցիչ Նիկոլայ Քալաշյանցի տանը[51]:

«Տաղարան»- առանց հիշատակագրության)[52]:

«Քարոզգիրք»- (առանց հիշատակագրության)[53]:

«Աւետարան»- ժամանակ՝ ՌՂԳ (1644), վայր՝ Նոր Ջուղա, գրիչն անհայտ է: Հիշատակարանում գրված է. «Արդ գրեցաւ Սուրբ Աւետարանս ի քաղաքս Շօշ ի գիւղս Ճուղա[54], ի Հայրապետութեան Հայոց Տեառն Փիլիպպոսի, և Առաջնորդութեան մերոյ գիւղս Խաչաբարձ և Քրիստոսի անմոլոր հետեւողի՝ Տէր Խաչատուր…»[55]: Ավետարանը եղել է արծաթապատ, ոսկենկար զարդերով և պատկերներով[56]:

«Ավետարան»- ժամանակ՝ ՌՃԺԵ (1666), վայր՝ Թիֆլիս, գրիչ՝ Բարսեղ քահանա: Հիշատակարանում գրված է. «…Արդ գրեցաւ և ծաղկեցաւ Սուրբ Աւետարանս յայլ և յայլ գրչաց և

---

[48] Տե՛ս **Բարխուտարեանց Մ.,** Աղուանից երկիր և դրացիք, էջ 176:Հմմտ. **Մմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 246: Ձեռագրիս հետագա ճակատագիրն անհայտ է:

[49] Խանձք-Խանցկ գյուղը գտնվում է Արցախի Խաչեն գավառում՝ Ասկերանի շրջանում: Գյուղի Ս. Ստեփաննոս կամարակապ քարաշեն եկեղեցին կառուցվել է 1673 թ. հին եկեղեցու ավերակների վրա: Եղել է գրչության արդյունաշատ կենտրոն (տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, Բազու, 1895, էջ 158-159):

[50] **Բարխուտարեանց Մ.**, Աղուանից երկիր և դրացիք, էջ 177: Հմմտ. **Մմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 245-246:

[51] Տե՛ս նույն տեղում, էջ 246: Ձեռագիրն այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում: Մուտք է գործել 1960 թ. Նիկոլայ Քալաշյանի դստեր՝ Եկատերինա Քալաշյանի ժառանգուհի Մարգարիտ Բաբայանի միջոցով և պահվում է N 9872 թվահամարի ներքո (տե՛ս **Եգանյան Օ.**, Մեսրոպ արքեպս. Սմբատյանի «Նկարագիր Շամախւոյ թեմի» գրքում հիշատակված ձեռագրերը, էջ 47):

[52] Տե՛ս նույն տեղում, էջ 64: Ձեռագիրն այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում: Մուտք է գործել 1912 թ. և պահվում է N 4011 թվահամարի ներքո (տե՛ս **Եգանյան Օ.**, Մեսրոպ արքեպս. Սմբատյանի «Նկարագիր Շամախւոյ թեմի» գրքում հիշատակված ձեռագրերը, էջ 47):

[53] Տե՛ս նույն տեղում: Ձեռագիրն այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում: Մուտք է գործել 1912 թ. և պահվում է N 3827 թվահամարի ներքո (տե՛ս **Եգանյան Օ.**, Մեսրոպ արքեպս. Սմբատյանի «Նկարագիր Շամախւոյ թեմի» գրքում հիշատակված ձեռագրերը, էջ 47):

[54] Շոշը՝ հետագայի Սպահան քաղաքն է. «Շօշոյ՝ որ այժմ ասի Ըսպահան» (տե՛ս **Թօփճեան Յ.**, Յուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 34): Ուստի, Ջուղա գյուղը՝ Շահ Աբասի 1605 թ. բռնագաղթից հետո Սպահանի մոտ հիմնված Նոր Ջուղան է:

[55] **Մմբատեանց Մ.,** Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 240-241: Հմմտ. նույնի՝ Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա (1897-1904), Տփղիս, 1904, էջ 221:

[56] Ձեռագիրն այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում: Մուտք է գործել 1925 թ. Բաքվի և Թուրքեստանի առաջնորդարանի միջոցով և պահվում է N 6665 թվահամարի ներքո (տե՛ս **Եգանյան Օ.**, Մեսրոպ արքեպս. Սմբատյանի «Նկարագիր Շամախւոյ թեմի» գրքում հիշատակված ձեռագրերը, էջ 47):

ծաղկողաց յերկիրն Թիֆլիսոյ ձեռամբ Տէր Բարսեղ քահանային»[57]: Ավետարանը հետագայում լրացվել և սրբագրվել է Սարգիս վարդապետի կողմից[58]:

«Ավետարան»- ժամանակ՝ ՌՃԽԷ (1698), վայրն ու գրիչը անհայտ է: Հիշատակարանում գրված է, որ Աղվերծու[59] Հովհաննես քահանան Ավետարանը 1709 թ,. որպես բարեպաշտական նվեր, հանձնել է անապատի Ս. Աստվածածին եկեղեցուն. «Ի ՌՃԽԷ թվին Աղուէրծու Յովհաննէս քահանայն վախմ տվեց Սուրբ Աստուածածին եկեղեցւոյն անապատի»[60]:

Ի շարս վերոնշյալ ձեռագրերի, վանքն ունեցել է նաև տպագիր հնատիպ գրքեր: Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի 1888 թ. կազմած վանքի սեփականության գույքացուցակում թվարկվում են հետևյալ գրքերը՝ Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ը, Սահակ քահանայի «Քննական կրօնագիտութիւն»-ը, «Մեկնութիւն նարեկեան աղօթից», «Աստուածաշունչ» (տպագրված Ս. Պետերբուրգում), «Աւետարան» (տպագրված Մայր Աթոռ Ս. Էջմիածնում), «Ժամագիրք Ատենի» (երկու հատ), «Խորհրդատետր», «Ճաշոց», «Մաշտոց», «Շարական Ատենի» (երեք հատ) և Ղ. Ալիշանի «Այրարատ»-ը[61]: Վանքում պահվել են նաև մեծ թվով եկեղեցական սրբություններ, զարդեր և զգեստներ: Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի կազմած գույքացուցակում թվարկվում են բազմաթիվ հնություններ՝ եպիսկոպոսական ոսկեթել թագեր (1745 թ.), սկիհներ (1750 թ.), արծաթյա բուրվառներ, ոսկեզօծ պատկերներով արծաթյա խաչեր (1761, 1767, 1785, 1788, 1796 թվագրումներով), եպիսկոպոսական գավազաններ, Ս. Մյուռոնի արծաթյա և ոսկեզօծ աղավնիներ, Ս. Եղիշա առաքյալի (1734 թ.) և Ս. Ստեփաննոս Նախավկայի (1796 թ.) արծաթափայլ և ոսկեզօծ աջեր[62]:

Այդ հնություններից բացի վանքն ունեցել է նաև այլ հարստություններ, սակայն դրանք դուրս են մնացել Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի կազմած գույքացուցակից: Այսպես, «Արձագանք»-ին 1893 թ. դեկտեմբերի 19-ի Հարություն Մարտիրոսյանի հղած թղթակցությունից հայտնի է դառնում ուշագրավ մի փաստ, ըստ որի՝ հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցու (Խրիմյան Հայրիկ, 1892-1907) օծման արարողության ժամանակ թեմի առաջնորդ Մեսրոպ

---

[57] **Բարխուտարեանց Մ.,** Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 176: Հմմտ. **Սմբատեանց Մ.,** Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 240:

[58] Տե՛ս նույն տեղում: Ձեռագիրն այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում: Մուտք է գործել 1925 թ. Բաքվի և Թուրքեստանի առաջնորդարանի միջոցով և պահվում է N 6414 թվահամարի ներքո (տե՛ս **Եգանյան Օ.,** Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի «Նկարագիր Շամախւոյ թեմի» գրքում հիշատակված ձեռագրերը, էջ 47):

[59] Աղվերծը Ստ. Օրբելյանի «Հարկացուցակ»-ում հիշատակված Ըղուերծն է (ներկայիս Սյունիքի մարզի Սիսիանի շրջանի Դարբաս գյուղը): Ձեռագիր աղբյուրներում հանդիպում է նաև Աղուերձ, Ըղուերձ, Օղվերձ, Յղուերձ ձևերով: Աղվերծում նշանավոր գրչօջախներ են եղել Ս. Աստվածածին (1272 թ. կառուցել է Տարսայիճ Օրբելյանն իր կնոջ՝ Մինա Խաթունի հետ միասին, տե՛ս Դիվան հայ վիմագրության, պրակ 2, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 11) և Ս. Ստեփաննոս Նախավկա եկեղեցիները (**տե՛ս** Հիշատակարանք Շուշիի և շրջակայից(Ագուլիս, Գանձասարայ վանք, Նուխի) գրչեայ մատենից: Ընդօրինակիչք՝ Արիստակէս վրդ. Սեդրակեան և Սիմէոն քհն. Տէր-Պողոսեան: Մատենադարան, Այլ վայրերի ձեռագրերի լուսապատճենների հավաքածու, թիվ 170, էջ 47):

[60] Տե՛ս **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 62, 241: Հմմտ. նույնի՝ Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից նորա, էջ 221: Այս ձեռագրի հետագա ճակատագիրն անհայտ է:

[61] Տե՛ս **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 64:

[62] Նույն տեղում, էջ 61-64:

արքեպս. Սմբատյանցը նորընտիր կաթողիկոսին և Մայր Տաճարի թանգարանին է հանձնել Սաղիանի վանքի մի շարք արժեքավոր հնություններ: Այդ թվում՝ Աղվանից Պետրոս Գ Խանձկեցի Կաթողիկոսի՝ վանքին նվիրած քշոցը, ոսկեթել մարգարտաշար մի վակաս, որ պատրաստվել է 1668 թ., ասեղնագործ պատկերներով զարդարված եպիսկոպոսական մի սաղավարտ, որի հիշատակագրում նշված է եղել. «Յիշատակ է Տէր Պետրոսին ի դուռն Սուրբ Գրիգորին, թվին ՌԾ (1601 թ.)»[63]: Նվերների շարքում եղել են նաև վերոնշյալ «Մեկնութիւն Գիրք սահմանաց Դաւթի գրչեայ» և «Մեկնութեան գրոցն Պրոկղի Փիլիսոփայի» ձեռագրերը[64]:

XVIII դ. 1-ին քառորդին ծավալված ազգային-ազատագրական շարժումների ժամանակ Գանձասարի վանքի կողքին ազատագրական շարժման կենտրոնի դեր էին ստանձնել նաև Սաղիանի Ս. Ստեփաննոս Նախավկա ու Մեյսարիի Ս. Աստվածածին վանքերը[65]: Ուշագրավ է այն փաստը, որ երբ Իվան Կարապետը Արցախ էր հասցնում Պետրոս Ա-ի 1723 թ. հունիսի հրովարտակը, լեզգիների կողմից ճանապարհները հսկվելու պատճառով Ի. Կարապետը, շրջանցելով Շամախին, գալիս է Մեյսարիի Ս. Աստվածածին վանք, ուր 18 օր մնալուց հետո Շամախուց իր մոտ է հրավիրում Ալեքսանդր քահանային և ծանոթացնում հրովարտակի բովանդակությանը: Ապա Մեյսարիի վանքից Իվան Կարապետը անցնում է Սաղիանի Ս. Ստեփաննոս Նախավկա վանք, ուր 2 օր մնալուց հետո մեկնում է Արցախ: «…Բաքոյէն վեր կացի ԻԸ (28) սհաթումն եկինք Մէսարոյ մանաստէրն: ԺԸ (18) օրումն մանաստէրումն կացինք գաղտուկ, որ մեզ մարթ չետես…տեղէն գնացինք Սաղիան վանքըն: Բ (2) օր տեղն կացինք, զրայ վանքումըն մին ըզմինոյ խետ մասլայաթ արարինք…Եւ ես շորէրրս փոխեցի, վարդապետին շաթիր դարցայ, որնօվ գնացի…»[66],-ասված է Ի.Կարապետի 1724 թ. փետրվարի 2-ի զեկուցագրում:

Պետք է նշել, որ XVIII դ. ողջ ընթացքում թուրքերի, պարսիկների և լեզգիների պարբերաբար կրկնված արշավանքների և ասպատակությունների պատճառով թեմի առաջնորդանիստ, երբեմնի շեն ու բարգավաճ Սաղիանի վանքի տնտեսությունը գտնվել է ծայրաստիճան աղքատության մեջ, իսկ շինությունները՝ քայքայված վիճակում: «Շիրվանի կոյսը» խորագիրը կրող ժողովրդական ավանդազրույցում ասվում է, որ վանքի Ս. Աստվածածին եկեղեցու գմբեթը արդեն գտնվում էր խարխուլ վիճակում. «Ահա և այնտեղ դէպի հարաւ (հին Շամախուց, - Գ. Ստ.) բարձրաւանդակի վրայ, շրջապատուած վիթխարի ծառերով, նկարվում է Ս. Ստեփաննոսի վանքը իւր խարխուլ գմբէթով…»[67]:

Սաղիանի վանքի վերաշինության խնդիրը լուրջ մտահոգության առարկա էր դարձել դեռևս Իսահակ վարդապետի առաջնորդության շրջանում (1753-1766/1770-1782): Նա ձեռնամուխ էր եղել վանքի տնտեսության վերականգման և պարտքերի բեռը թեթևացնելու գործին:

---

[63] «Արձագանք», Թիֆլիս, 1893, դեկտեմբերի 19, թիվ 148:

[64] Տե՛ս **Եգանյան Օ.**, Մեսրոպ արքեպս. Սմբատյանի «Նկարագիր Շամախւոյ թեմի», գրքում հիշատակված ձեռագրերը, էջ 47:

[65] Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Վաղարշապատ, 1907, էջ 79-80:

[66] Армяно-русские отношения в I-ой трети XVIII века, Т. II, часть II, под редакцией Аш. Иоаннисяна, Ереван, 1967, стр. 62.

[67] **Զաքարեանց Ա.**, Շիրվանի կոյսը, «Արձագանք», 11 սեպտեմբերի, 1888, թիվ 35, էջ 485:

Այդ մտահոգությամբ էլ նա դիմում է Սիմեոն Ա Երևանցի և Գանձասարի Հովհաննես կաթողիկոսներին: Սիմեոն Կաթողիկոսը, ընդառաջելով թեմակալի խնդրանքին, վանքի վերանորոգման նպատակով 1770 թ. կոնդակ[68] հղեց Իսահակ վարդապետին: Կոնդակը ուշագրավ է նրանով, որ պարզորոշ պատկերացում է տրվում պարսից իշխողների հարկային դաժան քաղաքականության հետևանքով աղքատացած ու թշվառ կացության մեջ հայտնված թեմի առաջնորդանիստի մասին: Մեծ կարևորություն ունեցող այդ կոնդակի մի հատվածը մեջ ենք բերում ամբողջությամբ. «Յորոց բազմաց վանօրէից մին է՝ հրաշազարդ և գերահռչակ ուխտն սուրբ, որ յանուն Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային շնորհօքն Քրիստոսի կառուցեալ կայ ի գեղջն Սաղիանու, որ է մերձ տիրախնամ քաղաքին Շամախու: Որ յառաջագոյն էր ըստ ամի ճոխ և փարթամ, եկեղեցական և արտաքսական ընչիւք և կահիւք, իսկ ի յանցեալ ժամանակսն՝ (լուեալ էք թէ՝ որքան) խռովութիւնք և հինահարութիւն եղեն ի յերկիրն Շամախու, ոչ սակաւ, յորմէ (թէ որքան) վշտացաւ և աւերեցաւ՝ երկիրն այն (ահա գիտէք ամենեքեան): Եւ յայսքան տաժանելի հարուածոց, սրբոյ ուխտին այնմիկ ևս մեծամեծ վնասք և հարուածք հասեալք են, յորմէ իսպառ աղքատացեալ և չքաւորացեալ է սուրբ ուխտն այն: Իսկ զխղճալի առաջնորդն սուրբ ուխտին Իսահակ ծերունազարդ վարդապետն, յետ բազմիցս չարչարելոյն և խոշտանկելոյն կարծրագոյն տանջանօք, ապա՝ զտուգանս յոլովս արկեալ են ի վերայ նորա: Որոյ սակս՝ անկեալ է սուրբ վանքն այն ի ներքոյ բազում պարտուց: Իսկ ապա՝ ոչ՛ ունելով յուստէքէ ճար և օգնութիւն ինչ, վասնորոյ՝ դիմեալ ի Սուրբ Աթոռս և առ մեզ, ծանոյց մեզ զցաւս և զաղետս իւր, և խընդրեաց ի մէնջ զօրհնութեան նամակս զայս, սակս օգնութեան և ազատութեան իւրոյ ի պարտուց անտի: Վասնորոյ՝ և մեք շնորհեցաք նմա զայս օրհնութեան նամակս մեր ի վերայ վերոյ յատկացեալ օրհնեալ երկրացդ, զի կամ ինքն եկեսցէ առ ձեզ, և կամ զայլ ոք առաքեսցէ փոխանակ»[69]:

Կողոպտված և անշքացած Սաղիանի վանքը վերաշինվեց ու բարեկարգվեց Ոսկան եպիսկոպոսի օրոք (1785-1796)՝ Հայոց Ղուկաս Ա Կարնեցի Կաթողիկոսի նախաձեռնությամբ, որն այդ առիթով կոնդակ էր հղել թեմի առաջնորդին. «Կոնդակ…առ Շամախու ժողովուրդն վասն առաջնորդ նորընծայ Ոսկան եպիսկոպոսի, և վասն Սաղիանի վանից, որոյ աղքատութեան և զխղճութեան վասն և վասն յափշտակութեամբ այլազգեաց անշքանալոյն՝ յանձնէ Ոսկան եպիսկոպոսին հոգալ զշինութիւնն և զպայծառութիւնն այնր վանից»[70]:

Վերանորոգվեցին Ս. Ստեփաննոս եկեղեցու հյուսիսային պատը և տանիքը: Շինարարական աշխատանքների ավարտի մասին եկեղեցու հյուսիսային պատին փորագրված է եղել հետևյալ արձանագրությունը. «Նորոգեցաւ հիւսիսային կողմն տաճարիս հանդերձ գլխի սալիւքն, աշխատանօք առաջնորդ Ոսկան վարդապետին եւ Ռ (1000) լիտր կիրն կամ ահակի

---

[68] Սույն կոնդակը ձեռագիր աղբյուրում թվագրված չէ: Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը այն թվագրել է 1768 թ. (տե՛ս **Սմբատեան Մ.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 80), որը սակայն ճիշտ չէ, քանզի այդ թվականին Իսահակ վարդապետը դեռևս բանադրված էր, և նրա անունով կոնդակ չէր հղվի: Հակված ենք այն կարծիքին, որ կոնդակը ուղարկվել է 1770 թ. Իսահակ վարդապետին բանադրանքից ազատելուց հետո: Այդ է վկայում նաև կոնդակի խորագիրը, որտեղ հստակ ասված է. «Շամախու առաջնորդ Իսահակ վարդապետին» (Մատենադարան, ձեռ. N 2912, էջ 222ա):

[69] Մատենադարան, ձեռ. N2912, էջ 222ա, 222բ, նաև Սմբատեան Մ., Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 81:

[70] Նույն տեղում, էջ 34, 208:

փողն Ըսկանդարի որդի Մահտեսի Յարութիւնն ետ, որ մասնակից եղեւ, թվին ՌՄԼԵ(1786)»[71]:

Թեմի առաջնորդ Հովհան վրդ. Գյուլիստանցու (1796-1821) օրոք, 1816 թ. Սաղիանի վանքի Ս. Ստեփաննոս Նախավկա եկեղեցու արևելյան կողմում կառուցվում է առաջնորդարանի շենքը, որի մասին արձանագրվել է մուտքի ճակատին: Նկատի ունենալով արձանագրության կարևորությունը՝ ավելորդ չենք համարում վկայակոչել նրա բովանդակությունը ամբողջությամբ. «Ի թվին ՌՄԿԵ. (1816) եւ ի Հայրապետութեան Ամենայն Հայոց Տեառն Եփրեմի եւ ի յաւուրս դատաւորութեան Մուստաֆայ խանին, շնորհիւ ամենազօրին Աստուածոյ, որ միշտ հեղու զշնորհս ի վերայ արարածոցս առաւել զբարի յիշատակս շինողաց: Ուստի եւ ես յուսացեալ ի Տէր ետու շինել զշինուածս ի յարեւելեան կողմն տաճարիս եւ թողլով ի յապակայն բարի վայելողաց նաեւս որոց, որք ունին զաշխատանս եւ տուրս ի վերայ սորայ, զվարձս ի Տեառնէ ընկալիցին, որ եւ իմ վառեալ ի սիրոյ Սրբոյն Ստեփաննոսի եւ ծառայ նորին եւ յօրինող շինուածոցս Յօհան խոնարհ եպիսկոպոս Շամախւոյ ի քաղաքանիշ գիւղիցն Կիւլիստանու»[72]:

Առաջնորդարանը եղել է երկհարկանի շինություն՝ կառուցված տաշած քարից: Հովհան արքեպս. Գյուլիստանցին առաջնորդարանին կից կառուցում է նաև խոհանոց, մառան, գինետուն, ինչպես նաև միաբանների համար առանձին սենյակ[73]: Նրա օրոք 1817 թ. վանքին կից կառուցվում է նաև վերնատուն, որն ունեցել է հետևյալ արձանագրությունը. «Շինեցաւ վերնատունս ի ժամանակս Մուստաֆայ խանին, ձեռամբ Օհան առաջնորդի Շամախւոյ և, յիշատակ Յարութիւնի եղբօրն Խաչատուրին և ծնողաց Ղարաբաղեցի Ղազարին և Թամարին, Թվին ՌՄԿԶ»[74]:

Սաղիանի վանքի Ս. Ստեփաննոս Նախավկա եկեղեցու և վանական կառույցների վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Թոփալ մականվամբ նկարիչ Սիմեոն Բզնունին [75], որը Հայոց Կաթողիկոս Հովհաննես Ը Կարբեցու հետ ունեցած տարաձայնությունների պատճառով Մայր Աթոռ Ս. Էջմիածնից աքսորվել էր Սաղիանի Ս. Ստեփաննոս Նախավկա վանք, ուր 1834-1837 թթ. ընթացքում գործել է որպես միաբան: Վանքում անցկացրած տարիների ընթացքում 67-ամյա Սիմեոն արքեպս. Բզնունին գրել է իր հուշագրությունները, որոնք արժեքավոր նյութ են հաղորդում Շամախու հայոց թեմի և մասնավորապես Սաղիանի վանքի տարաբնույթ հարցերի լուսաբանման համար: 1834 թ. հունիսի վերջերին

---

[71] **Շահխաթունեանց Յովհ.,** նշվ. աշխ., հ. Բ, էջ 380-381: Հմմտ. **Ջալալեանց Ս.,** նշվ. աշխ., մասն Բ, էջ 395: Հմմտ. **Կարապետյան Ս.**, Բուն Աղվանքի վիմագրերը, էջ 61:

[72] **Սմբատեան Մ.,** Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 73-74: Հմմտ. **Կարապետյան Ս.**, Բուն Աղվանքի վիմագրերը, էջ 63:

[73] Տե՛ս **Ջալալեանց Ս.,** նշվ. աշխ., մասն Բ, էջ 394:

[74] Նույն տեղում, էջ 395:

[75] Սիմեոն Բզնունին (Սիմեոն արքեպիսկոպոս Բզնունյանց) ծնվել է 1767 թ. Վաղարշապատում: Սկզբնական կրթությունը ստացել է իր մորեղբոր՝ Մարտիրոս քահանայի մոտ, ապա՝ Էջմիածնի վանքում: Նկարչություն սովորելու նպատակով մեկնել է Կ. Պոլիս, ուր աշակերտել է պատկերահան Սերովբեին: Կարինից Կ. Պոլիս եկած Կարապետ և Մանուկ նկարիչ եղբայրներից սովորել է նկարել նաև ապակու վրա: Ընդօրինակել է երեք ձեռագրեր: Մահացել է 1841 թ.(տե՛ս **Գէորգեան Ա.**, Հայ մանրանկարիչներ. Մատենագիտութիւն (IX-XIX դդ.), Գահիրէ, 1998, էջ 691):

Սիմեոն Բզնունին հասնելով Սաղիան, երբեմնի շեն ու բարգավաճ վանքը տեսնում է ամայի ու անմարդաբնակ, այնտեղ էին միայն թեմի նախկին առաջնորդ Պողոս վարդապետը և նորանշանակ թեմական՝ Պետրոս վրդ. Տեր-Պողոսյանը. «…և այլ ոչ ոք. ամայի և անմարդաբնակ…»[76]:

1835 թ. մարտի 2-ի թվագրումով Սիմեոն Բզնունին Հայոց Կաթողիկոս Հովհաննես Կարբեցուց ստանում է կոնդակ, որում վերջինս, նախատելով Սիմեոն Բզնունուն, արգելում էր նրա վերադարձը Մայր Աթոռ և հրամայում էր ցմահ մնալ Սաղիանի վանքում. «..այսու կոնդակաւ մերով ծանուցանելով ձեզ, թէ անհնար է ձեզ վերադառնալ այսր ի Սուրբ Աթոռս մինչեւ ցմահ ձեր կամ գոնէ ցմերն…»[77]: Սիմեոն Բզնունին Սաղիանի վանքում անցակցրած տարիների ընթացքում վանքում հեղինակել է «Գիրք ծաղկանոց Բուրաստան» խորագրով մեծադիր ծաղկանկարներով ձեռագիրը[78], որը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Ս. Ստեփաննոս Նախավկա եկեղեցու և վանական կառույցների վերաբերյալ: Այդտեղ, ի շարս թեմատիկ բազմաթիվ նկարների, Սիմեոն Բզնունին ամենայն մանրամասնությամբ գծանկարել է նաև Ս. Ստեփաննոս Նախավկա եկեղեցին և վանքն իր շրջակա օժանդակ շինություններով:

Գծանկարում առանձին սյունյակներում պատկերված են հետևյալ շինությունները. առաջնորդարանը, վանքի սպասավորների բնակության սենյակները, հյուրանոցը, խոհանոցը, ցորենի ամբարը, շտեմարանը, մառանատունը, կալսարանը, խոտանոցը, հարդանոցը, հնձանը, ձիանոցը, «Նահատակ» անվամբ ուխտատեղին, աղբյուրը, թեմի առաջնորդ Հովհան եպիսկոպոս Գյուլիստանցու կողմից կառուցված և խարխուլ վիճակում գտնվող շինությունը. «խախտեալ, անբնակ ի մարդկանէ», այգետեղիները և նրանց մուտքը, գինու կարասները, հստակ պատկերված է շրջապարիսպը և մուտքի դռները: Վանքին կից գծապատկերված է նաև Սաղիան գյուղն իր այգիներով[79]: Գծապատկերի ներքևում գրված է նաև հետևյալ չափածոն.

«Պատկեր ես դու վանքի,
յառաջնորդ չունիս որ քեզ հանգչի»[80]:

Հովհաննես Կարբեցի Կաթողիկոսը, անսալով արդեն 70-ամյա ծերունի արքեպիսկոպոսի խնդրանքներին, նրան ներում է շնորհում միայն 1837 թ. հունիսի 10-ին, ապա թույլատրում է վերադառնալ Մայր Աթոռ և ծառայության անցնել Ս. Շողակաթի վանքում[81]:

Սաղիանի վանքի դերակայությունը սկսեց նվազել, երբ 1836 թ. մարտի 11-ին ցարական արքունիքի կողմից ընդունված Հայ Եկեղեցու ներքին կյանքը սահմանող կանոնադրությամբ («Պոլոժենիե») թեմական առաջնորդները պարտավոր էին նստել քաղաքում: Առաջնորդանիստի՝ Շամախի քաղաք տեղափոխումը համապատասխանեց թեմի առաջնորդ Ստեփա-

---

[76] Տե՛ս **Սմբատեան Մ.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 341:

[77] Նույն տեղում, էջ 343:

[78] Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարան, ձեռ. N 6246 (այսուհետև շարադրանքում՝ Մատենադարան):

[79] Նույն տեղում, էջ 13բ:

[80] Նույն տեղում:

[81] **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 361:

ննոս եպս. Չախալյանի (Խաժակնյանց, Ալեքսանդրապոլցի, 1836-1841) առաջնորդության շրջանի հետ: Շամախու թեմական կոնսիստորիայի աշխատանքները կազմակերպելու նպատակով 1838 թ փետրվարին Սաղիանի Ս. Ստեփաննոս Նախավկա վանք է այցելում Էջմիածնի Սինոդի անդամ Հովհաննես եպս. Շահխաթունյանցը, որը և առաջնորդարանը Սաղիանից տեղափոխում է Շամախի քաղաք և տեղի Ս. Աստվածածին եկեղեցին դարձնում Մայր եկեղեցի, իսկ Սաղիանի վանքը մնում է միայն որպես վանահայրերի նստավայր[82]:

Հարկ է նշել, որ առաջնորդանիստի՝ Սաղիանի վանքից տեղափոխումը խիստ բացասաբար անդրադարձավ առանց այդ էլ քայքայվող վանքի և նրա հետագա կենսագործունեության վրա, որն աստիճանաբար սկսեց անուշադրության մատնվել: Սաղիանի վանքի գործունեության նվազումը առանձնապես բացասաբար անդրադարձավ Սաղիանին հարակից՝ Զարխու, Փախրաքուշ, Դվարի, Ղաջար և Թալիշ հայկական գյուղերի համար, քանզի այդտեղի հայությունը օգտվում էր վանքի Ս. Ստեփաննոս Նախավկա եկեղեցու ծառայություններից[83]:

1848 թ. Սաղիանում եղած ժամանակ Սարգիս արքեպս. Ջալալյանցը հետևյալ տպավորությունն է ստացել արդեն իսկ ավերակ և անշքացած վիճակում գտնվող վանքից, ուր մնացել էր ընդամենը մեկ սպասավոր. «Մենաստանս այս այժմ կայ յաւերակ դրութեան, ապաստանեալ միայն ի խնամս միոյ ծառայի, որ ածէ զաւել և վառէ զճրագ: Ցաւալի դրութիւն ողորմելի մենաստանիս ի սուգ և ի յողբ շարժէ զամենայն այցելուս, բայց գուցէ գթացեալ Աստուծոյ դարձուսցէ զսա ի շքեղ փառս իւր առաջինս»[84]:

Վանքը, որ նախկինում ուներ մեծ թվով վարելահողեր, այգետեղիներ և պարտեզներ, սակայն վերջինիս ավերակ լինելու պատճառով սաղիանցիների կողմից դրանք սեփականացվել էին[85]: 1865 թ. օգոստոսին թեմի առաջնորդ Դանիել արքեպս. Շահնազարյանցի Սաղիան այցելության ժամանակ գյուղն ուներ 75 տուն հայ բնակչություն, իսկ երբեմնի առաջնորդանիստ և հռչակավոր Ս. Ստեփաննոս Նախավկա վանքն արդեն գտնվում էր իսպառ քայքայված վիճակում: Վանքը վերջնական կործանումից փրկելու մտահոգությամբ, թեմակալը ծրագրեց այն հիմնովին վերանորոգել և հաշվի առնելով այդտեղի հարմարությունները՝ բացել գիշերօթիկ հոգևոր դպրոց: Թեմակալն անգամ ծրագրել էր առաջնորդանիստը Շամախուց տեղափոխել Սաղիան. «Այսոքիկ յարմարութիւնք շարժում են իմ սիրտը, որ Շամախու վիճակի Առաջնորդարան փոխադրեմ ի Սաղիան, նոյնպէս և հոգևոր դպրոցն. բայց աշխատում են ինձ խոչընդոտն լինիլ»[86]:

Ժամանակի ընթացքում Սաղիանի վանքը բազմիցս տուժել է թե՛ ասպատակիչների և թե՛ բնական աղետների պատճառով: Վերջին հարվածը վրա է հասել 1872 թ. հունվարի 12-ին տեղի ունեցած երկրաշարժով, որի հետևանքով վանքը հիմնովին կործանվում է:

---

[82] Տե՛ս **Արիստակէս եպս. Մեղրակեան**, Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանցի կենսագրութիւնը, Ս. Պետերբուրգ, 1898, էջ 127:

[83] **Դանիել արքեպս.**, Այցելութիւն եկեղեցեաց գիւղօրէից վիճակին Հայոց Շամախւոյ, «Արարատ», 1871, փետրվար, էջ 258:

[84] **Ջալալեանց Ս.**, նշվ, աշխ., մասն Բ, էջ 394:

[85] **Դանիել արքեպս.**, նշվ. աշխ.., «Արարատ», 1871, փետրվար, էջ 257:

[86] Նույն տեղում:

Երկրաշարժի պատճառած վնասներից հետո վանքի վերաշինման աշխատանքները գտնվել են Շամախու հայոց թեմի գրեթե բոլոր թեմական առաջնորդների ուշադրության կենտրոնում:

Վերականգնողական աշխատանքները ձեռնարկվեցին դեռևս թեմի առաջնորդ Մովսես վրդ. Մաղաքյանցի օրոք (1857-1860)[87]: Վանքն ամայի չթողնելու նպատակով նա այդտեղ 1852 թ. աբեղա է ձեռնադրում շամախեցի Սարգիս Միրզաբեկյանին[88]: Միաժամանակ ձեռնարկում է վանքին կից ուխտավորների և վանահոր համար սենյակներ կառուցելու շինարարական աշխատանքները[89]: Վանքի վերանորոգման աշխատանքներով զբաղվել է նաև թեմի առաջնորդ Դանիել վրդ. Շահնազարյանցը (Տարոնեցի) (1863 թ. փետրվարի 16-1868)[90]: Թեմական 1865 թ. օգոստոսին Սաղիան այցելության ժամանակ գյուղն ունեցել է 75 տուն հայ բնակչություն, իսկ երբեմնի առաջնորդանիստ վանքն արդեն գտնվում էր իսպառ քայքայված վիճակում. «Այս սուրբ վանքումն երեք օր մնացի շատ ուրախութեամբ և շատ տրտմութեամբ. Ուրախութեամբ, որովհետև վանք կասեն վարդապետի կեանք. տրտմութեամբ, որովհետև այդ վարդապետի կեանք սուրբ վանքն տեսի քայքայուած և իսպառ նորոգութեան կարօտ»[91]:

Վանքը վերջնական կործանումից փրկելու մտահոգությամբ, թեմականը ծրագրեց այն հիմնովին վերանորոգել և, հաշվի առնելով այդտեղի հարմարությունները, բացել գիշերօթիկ հոգևոր դպրոց: Թեմականն անգամ ծրագրել էր առաջնորդանիստը Շամախուց տեղափոխել Սաղիան. «Այսոքիկ յարմարութիւնք շարժում են իմ սիրտը, որ Շամախու վիճակի Առաջնորդարան փոխադրեմ ի Սաղիան, նոյնպէս և հոգևոր դպրոցն. բայց աշխատում են ինձ խոչընդոտն լինիլ»[92]: Սակայն, թեմականի անժամանակ մահվան պատճառով, այլ ծրագրերի հետ մեկտեղ խափանվեց նաև Սաղիանի վանքի վերանորոգման գաղափարը: Երախտաշատ հոգևորականի մարմինը ամփոփվեց Սաղիանի վանքի հարավային մուտքի առջև, թեմի երբեմնի առաջնորդ Հովհան եպս. Գյուլիստանցու շիրիմի հարևանությամբ. «Վանուցս հարաւային դրան առաջ ամփոփուած են Օհան և Դանիել եպիսկոպոսների մարմիներն, որք վարած են Շամախու թեմիս առաջնորդութեան պաշտօնը գովելի գործունէութեամբ և ընտիր վարուք ըստ վկայութեան ծերունեաց և ըստ տապանաքարի արձանագրութեանց»[93]: Վերջինիս տապանաքարին արձանագրված է եղել հետևյալը. «Վիճակաւոր առաջնորդ թեմին Հայոց Շամախւոյ Դանիէլ արքեպիոկոպոս Շահնազարեանց Տարօնեցի, վախճանեցաւ 41 ամաց, ի 4 յուլիսի 1868 ամի»[94]:

Դանիել արքեպս. Շահնազարյանցին հաջորդած Անդրեաս արքեպս. Անդրեասյանը, (Պոլ-

---

[87] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 56, ց.1, մաս 3, գ. 3568, թ. 4, տե՛ս նաև «Արարատ», 1883, սեպտեմբեր, էջ 39:

[88] Տե՛ս «Նոր-Դար», Թիֆլիս, 1887, թիվ 66, էջ 3):

[89] Տե՛ս **Դանիել արքեպս.**, աշխ.., «Արարատ», 1870, դեկտեմբեր, էջ 258:

[90] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 56, ց. 1, գ. 4368, թ. 2, տե՛ս նաև **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 36:

[91] **Դանիել արքեպս.**, աշխ.., «Արարատ», 1871, փետրվար, էջ 258:

[92] Նույն տեղում:

[93] **Բարխուտարեանց Մ.**, Աղուանից երկիր և դրացիք, էջ 177:

[94] **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 75:

սեցի 1869-1874)[95] ևս զբաղվել է Սաղիանի վանքի վերականգնման աշխատանքներով: Վանքի վանահայր Սարգիս վրդ. Միրզաբեկյանցի նախաձեռնությամբ և թեմակալի թույլտվությամբ 1871 թ. վերականգնվում են պարսպապատի արևմտյան և հարավային հատվածները[96]:

Թադեոս եպս. Զյունականի (Սպահանցի) (1876-1887)[97], օրոք ևս շարունակվել են Սաղիանի վանքի վերաշինման աշխատանքները: Թադեոս եպիսկոպոսը նպատակադրվեց քանդել երկրաշարժից իսպառ ավերված վանքի քայքայված շինությունները և տեղում կառուցել նոր եկեղեցի[98]: Վանքի արագ վերաշինությունը կարևորվում էր նաև նրանով, որ Սաղիան գյուղին մերձակա հայկական Զարխու, Փախրաքուշ, Դվարի, Ղաջար և Թալիշ գյուղերի հայությունը այդտեղ էին կատարում եկեղեցական իրենց պաշտամունքները: Էջմիածնի Սինոդի՝ վանքի վերաշինման համար հանգանակած 2095 ռ. և թեմի հայության նվիրատվություններով թեմակալը Էջմիածնի Սինոդի թույլտվությամբ 1878 թ. սկսում է շինարարական աշխատանքները. «Յուսալով Ամենաբարձրելոյ օգնականութեան և բարեպաշտօն հայ ժողովրդոցս ջերմեռանդութեան վերայ՝ Բարձրագոյն հոգևոր իշխանութեան թոյլտուութեամբ 1879 թուականում՝ ձեռնարկեցի վերականգնել այս սուրբ ուխտը»[99],- գրում է Թադեոս եպիսկոպոսը:

Շինարարության ընթացքում նյութական միջոցների անբավարարության պատճառով նա հաճախ դիմել է բաքվաբնակ հայ մեծահարուստներին, որոնք միշտ էլ սիրով ընդառաջել և նյութական անհրաժեշտ միջոցներով օժանդակել են վերջինիս: Գումարներ հայթայթելու նպատակով թեմակալն երկու անգամ շրջագայում է թեմապատկան քաղաքներում և գյուղերում. «Գերշ. Սրբազանը շատ ու շատ աշխատել էր տաճարի շինութեան համար՝ բացի այդ շատ անգամ Բաքու էր գնացել օժանդակութիւն խնդրելու շինութեան համար և ստացել էր: Օրինեալ լինին Բագուեցիք, միշտ բարեպաշտ, միշտ առատաձեռն, և յիրաւի նոցա օժանդակութեամբն գերշ. Սրբազանը կարողացել էր շինութիւնը այնքան յառաջ տանել…»[100]:

Վանքի շինարարությանն անմիջական օժանդակություն ցուցաբերեց հատկապես Սաղիան գյուղի բնակչությունը՝ քահանա Հոնանյանցի գլխավորությամբ[101]: Վերջինս անգամ իր սեփական միջոցներից հատկացրել էր 150 ռ.[102]: Այդ իսկ առիթով եկեղեցու հյուսիսային ճակատի արևելյան կողմում, քանդակազարդ խորշի մեջ, սրբատաշ քարին արձանագրված է եղել. «Հիւսիսային որմն Սրբոյն Տաճարիս շինեցաւ օժանդակութեամբ Հասարակութեան Սաղիանի գեղջ ընդ վերակացութեամբ Սահակ քահանայի Յունանեանց ի թուին Հայոց 1335 եւ փրկչական 1886 ամի»[103]:

---

[95] Տե՛ս «Արարատ», 1869, փետրվար, էջ 276, տե՛ս նաև «Արարատ», 1874, նոյեմբեր, էջ 430:

[96] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 56, ց. 1, գ. 5848, թ. 1-2:

[97] «Արարատ», 1876, հունվար, էջ 114, տե՛ս նաև «Նոր-Դար», Թիֆլիս, 1887, նոյեմբերի 24, թիվ 202, էջ 1:

[98] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 56, ց.1, գ. 8337, թ.1:

[99] «Արարատ», 1884, փետրվար, էջ 50:

[100] **Սմբատեանց Մ.,** Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 18:

[101] Տե՛ս «Նոր-Դար», Թիֆլիս, 1887, նոյեմբերի 24, թիվ 202, էջ 1:

[102] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 56, ց.1, գ. 8337, թ.1:

[103] **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 20: Հմմտ. **Կարապետյան Ս.**, Բուն Աղվանքի վիմագրերը, էջ 62:

Թադևոս եպիսկոպոսը վանքի շինարարությունը հասցրեց կատարել միայն կիսով չափ, քանի որ 1887 թ. մայիսին նա ազատվում է թեմակալի պաշտոնից՝ Էջմիածնի Սինոդի նախանդամի պաշտոնում ընտրվելու պատճառով[104]: Վանքը դրսից կառուցվել էր մինչև լուսամուտների վերին շարքը, պատերից մնացել էին երեք շարքի կառուցումը, կամարները և տանիքը, իսկ ներսից՝ Ս. Սեղանն իր աստիճաններով: Թեև թեմակալի պաշտոնից ազատվելու պատճառով Թադեոս եպիսկոպոսը չկարողացավ ավարտին հասցնել վանքի շինությունը, այսուհանդերձ արևմտյան դռան ճակատից բացվող մուտքի բարավորի սրբատաշ քարին փորագրել տվեց հետևյալ արձանագրությունը. «Զքնաղ Տաճարս Աստուածային յանուն Սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի ի հիմնաց նորոգեցաւ ի Հայրապետութեան ամենայն Հայոց Տեառն Մակարայ Առաջնոյ. ջանիւք և աշխատութեամբ Առաջնորդին Շամախւոյ Տեառն Թադէոս Արքեպիսկոպոսի. արդեամբք բարեպաշտօն Հասարակութեան Բագու քաղաքի, եւ վիճակի նորին ի թուին Հայոց 1335, փրկչական 1886 ամի»[105]:

Վանքի շինարարական աշխատանքներն ավարտին հասցվեց Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի թեմակալության շրջանում, որը թեմակալի պաշտոնում հաստատվելուց ի վեր զբաղվել է ազգանվեր ու եկեղեցաշեն գործունեությամբ: Նորանշանակ թեմակալի առաջին ձեռնարկումը եղավ Սաղիանի վանքի շինարարական աշխատանքների ավարտումը: Վանական համալիրը բաղկացած է եղել մեկ եկեղեցուց, միաբանության ու տնտեսական բնույթի շենքերից, պարսպապատերից, դարպասից, աղբյուրներից և գերեզմանոցից: Միջոցների պակասի պատճառով հետաձգվեց միայն եկեղեցու Կաթողիկեի կառուցման աշխատանքները: 1887 թ. հոկտեմբերի 15-ի Հայոց Կաթողիկոս Մակար Ա Թեղուտեցին (1885-1891) կոնդակով թույլատրեց օծել նորակառույց եկեղեցին, որտեղ մասնավորապես ասված է. «Գերապատիւ առաջնորդի թեմին Հայոց Շամախւոյ՝ Սրբազան Մեսրովբ Եպիսկոպոսի սիրելոյ մերում՝ ի Տէր ողջոյն եւ օրհնութիւն: Ի յայտարար գրութենէ Ձերմէ ի 5-ն հոկտեմբերի ընդ համարաւ 65, տեղեկացեալ մեր աւարտման շինութեան հոյակապ տաճարի Սրբոյն Ստեփաննոսի՝ որ ի Սաղիան, ուրախացաք յոյժ, ուստի եւ տամք Ձեզ իրաւունս օծանելոյ զայն տուն Աստուծոյ ըստ ծիսի եւ արարողութեան Հայաստանեացս Սուրբ Եկեղեցւոյ»[106]: Նույն թվականի նոյեմբերի 8-ին Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը հանդիսավոր արարողությամբ օծեց նորակառույց եկեղեցին, ուր «ի մխիթարութիւն Սաղիանի ժողովրդոց և սուրբ նուիրատուաց» կատարվեց նաև ժամերգություն[107]:

Ս. Ստեփաննոս եկեղեցու հարավային ճակատից բացված մուտքի բարավորին այդ առիթով փորագրված է եղել հետևյալը. «Առաջնորդ Հայոց թեմին Շամախւոյ Մեսրովբ (Արք) եպիսկոպոս Սմբատեանց Նախիջեւանցի էօծ զտաճարս յետ բանալոյ զհարաւային նոր դուռս ի յիշատակ ծնողացն եւ յաւարտ ածելոյ զշինութիւն տաճարիս ի հայրապետութեան ամենայն Հայոց Տեառն Մակարայ. յամի Տեառն 1887 եւ Հայկական 437»8[108]: Մեսրոպ արքեպս.

---

[104] Տե՛ս «Նոր-Դար», Թիֆլիս, 1887, նոյեմբերի 24, թիվ 202, էջ 1:

[105] **Կարապետյան Ս.**, Բուն Աղվանքի վիմագրերը, էջ 62:

[106] **Սմբատեանց Մ.,** Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 22:

[107] Տե՛ս «Նոր-Դար», Թիֆլիս, 1887, նոյեմբերի 24, թիվ 202, էջ 1:

[108] **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 19-20: Հմմտ. **Կարապետյան Ս.**, Բուն Աղվանքի վիմագրերը, էջ 62:

Սմբատյանցը նպատակադրվել էր անգամ թեմի առաջնորդանիստը տեղափոխել Սաղիան, ինչպես որ դա եղել էր նախկինում. «Այս վանքն շատ յարմարութիւն ունի ամեն տեսակաւ,- գրում է թեմակալը,- ուսումնարանի և առաջնորդարանի: Այստեղ լինելով միջակէտ գիւղացւոց վիճակին Շամախւոյ, առաջնորդն տեղւոյն շատ շուտ կարող է այցելութեան ելանել իւր հօտին, և նոցա առանց նեղութեան հովուել և հոգևոր պիտոյքը հոգալ: ... Ունի իրան շրջակայքում բաւական վարելահողեր, այգետեղիք, և պարտիզատեղիք: Այսոքիկ յարմարութիւնք շարժում են իմ սիրտը, որ Շամախու վիճակի առաջնորդարանը փոխադրեմ ի Սաղիան»[109]: Սակայն, այդ մտադրությունը հանդիպելով մի շարք խոչընդոտների, այդպես էլ չիրականացավ:

Թեմակալի նախաձեռնությամբ 1888 թ. ապրիլի վերջերից Սաղիանի վանքին կից վանահայրերի համար սկսվեց նոր շինության կառուցումը, քանի որ, դեռևս Հովհան արքեպս. Գյուլիստանցու օրոք 1816 թ. կառուցված առաջնորդարանի շենքը երկրաշարժի պատճառած ճեղքվածքների հետևանքով գտնվում էր խիստ քայքայված վիճակում և արդեն վտանգավոր էր դարձել այնտեղ վանահայրերի բնակվելը: Բաքու քաղաքի եկեղեցական և դպրոցական գործերի բարեկարգման և այդ առիթով կուտակված խնդիրները տեղում լուծելու, ինչպես նաև Սաղիանի վանքի շինարարական ծախսերի համար լրացուցիչ գումարներ հայթաթելու նպատակով թեմակալը 1888 թ. մայիսին մեկնում է այդտեղ և բաքվաբնակ բարերարներ Բուդաղյան եղբայրների, Կարապետ աղա Լալայանի և այլոց կողմից նյութական անհրաժեշտ օժանդակություն ստանալով, հունիսի սկզբներին վերադառնում է Սաղիան՝ շարունակելով շինարարական անավարտ աշխատանքները[110]: Շինարարական աշխատանքներն ավարտվեցին հաջորդ տարվա մայիսին:

Երկհարկ շինությունը ունեցել է 17 մ երկարություն և 15 մ լայնություն, տանիքը եղել է թիթեղյա, իսկ հատակն ու առաստաղը՝ տախտակյա: Առաջին հարկը բաղկացած էր 6 սենյակներից, երկրորդ հարկում տեղավորված էր տնտեսատունը: Նոր շինության դռան ճակատին թեմակալի կողմից փորագրված է եղել հետևյալ արձանագրությունը. «Յամի տեառն 1888, եւ Հայկական 4380, ի Հայրապետութեան ամենայն Հայոց Տ. Մակարայ, եւ ի կայսրութեան ամենայն ռուսաց Գ. Աղեքսանդրի, տնօրէնութեամբ Առաջնորդի Հայոց թեմին Շամախւոյ Մեսրովբ Արքեպիսկոպոսի Սմբատեանց Նախիջեւանցւոյ եւ վերակացութեամբ վանահօր Սուրբ Ստեփաննոսի վանից Սաղիանի Ստեփաննոս քահանայի Աստապատցւոյ՝ շինեցաւ առաջնորդարանս արդեամբք Բագուաբնակ պ. Կարապետ աղայի Լալաեանց, և յարգոյ եղբարց Բուդաղեանց, Ադամեանց, Մելիքեանց, Ասլանեանց, Եղիազարեանց եւ այլոց»[111]:

Շարունակելով եկեղեցաշեն գործունեությունը՝ Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը 1893 թ. բաքվաբնակ Նիկոլայ Թադոսյանցի և Բաքվի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հանգուցյալ ավագ քահ. Թադևոս Բուդաղյանցի կտակով տրամադրած գումարներով կառուցում է նաև Ս. Ստեփաննոս Նախավկա եկեղեցու կաթողիկեն[112]: Եկեղեցու արևելյան ճակատին այդ մա-

---

[109] Նույն տեղում, էջ 39:

[110] Տե՛ս նույն տեղում, էջ 126:

[111] Նույն տեղում, էջ 127:

[112] Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1885, հուլիսի 21, թիվ 3, էջ 38, տե՛ս նաև «Արարատ», 1885, հունիս, էջ 268-269:

սին փորագրված է եղել. «Յամի Տեառն 1893, և հայկական 4385. ի հայրապետութեան ամենայն Հայոց Տ. Մկրտչի, տնօրէնութեամբ առաջնորդի թեմիս Մեսրովբ արքեպիսկոպոսի Սմբատեանց շինեցաւ կաթուղիկէն վանիցս վեց հարիւր ռուբլի տրօք բագուաբնակ պարոն Նիկոլայի Ստեփանեան Թադոսեանց ի յիշատակ հանգուցեալ Մարիամու դստեր հօրեղբօր իւրոյ հանգուցեալ Զաքարիայի Թադոսեանց»[113]: Կաթողիկեի գմբեթին ամրացվում է բաքվաբնակ գերմանացի Զեյց եղբայրների 1885 թ. նվիրած մեծադիր խաչը: Վանական շենքի շինարարական աշխատանքների ընթացքում թեմակալը նույն թվականին սալահատակում է նաև եկեղեցին[114]:

Այսպիսով, Սաղիանի վանքի վերաշինման աշխատանքները, որ սկսվել էին դեռևս Դանիել արքեպս. Շահնազարյանցի օրոք, Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի օրոք ավարտուն տեսք ստանալուց հետո վանքը նորից կյանքի վերակոչվեց և սկսեց շարունակել իր ազգաշահ գործունեությունը:

Հայտնի է, որ վանքերը, վանական տնտեսության, կրթական և այլ ձեռնարկումներից զատ, իրենց գոյության ամբողջ ընթացքում իրականացրել են նաև բարեգործական ձեռնարկումներ[115]: «Իւրաքանչիւր վանքը,- գրում է Կ. Կոստանյանը,- ոչ միայն աշխատանքի մի մեծ վարժարան էր, այլ և միևնոյն ժամանակ բարեգործութեան մեծ կրթարան: Կրօնաւորները գործում էին բարիք ոչ միայն մէկը միւսի համար կամ միայն իրենց հարևան շրջակայ կարօտեալների համար, այլ նոցա աջը հասնում էր ուղևորներին, ուխտաւորներին և ամէն մի պատահական նեղեալին»[116]: Վանքերին բնորոշ այդ ընդհանուր օրինաչափությունից, անշուշտ, դուրս չի մնացել նաև Սաղիանի վանքը, որը կրթական ու վանական գործունեությունից բացի բարեգործական ձեռնարկումներով հոգացել է նաև թեմի աղետյալների բազմապիսի հոգսերը: «Հայոց աղքատների, հիւանդների և ամէն տեսակ կարօտեալների ապաստաններն էին նոքա (վանքերը - Գ. Ստ.) այս աղցաւոր և վշտալի աշխարհիս երեսին միմիայն նոցա մէջ կենդանի հնչում էր աստուածային սփոփիչ ձայնը»,- գրում է Կ. Կոստանյանը[117]:

Թեև սկզբնաղբյուրները սակավ տեղեկություններ են հաղորդում Սաղիանի վանքի վանական կյանքի վերաբերյալ, այդուհանդերձ ենթադրելի է, որ նրանք կառավարվել են Գրիգոր Լուսավորչի սահմանած կանոնադրությամբ: Վանքերի հսկողությունը վերապահված է եղել վանքերի առաջնորդներին՝ վանահայրերին, որոնք տնօրինել են վանքապատկան հողերը, դրամական միջոցներն ու գործերը և հաշվետու են եղել հոգևոր բարձր իշխանությանը՝ թեմի առաջնորդին: Իսկ վանահայրերի ու մայրապետերի ընտրությունը կայացել է վանական միաբանության համաձայնությամբ[118]: Ըստ կարգի՝ ընտրվող վանահայրը պետք է լիներ առաքինի, անբիծ և արդար[119]:

---

[113] **Սմբատեանց Մ.,** Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 79:

[114] Տե՛ս նույն տեղում, էջ 78:

[115] Տե՛ս **Մելիք-Թանգեան Ն.**, Հայոց եկեղեցական իրաւունքը, հ. Ա, էջ 575:

[116] **Կոստանեան Կ.**, Հայոց վանքերը, էջ 15:

[117] Նույն տեղում, էջ 30:

[118] Տե՛ս **Մելիք-Թանգեան Ն.**, Հայոց եկեղեցական իրաւունքը, հ. Բ, էջ 167, տե՛ս նաև **Կոստանեան Կ.**, Հայոց վանքերը, էջ 47:

[119] Տե՛ս **Մելիք-Թանգյան Ն.**, Հայոց եկեղեցական իրաւունքը, հ. Ա, էջ 575:

Սաղիանի վանքի վանահայրերի կառավարման և նրանց ծավալած գործունեության վերաբերյալ մատենագրական և ձեռագիր աղբյուրներում պահպանվել են սակավ տեղեկություններ: Վանահայրերից տարբեր առիթներով հիշատակվում են Սարգիս վրդ. Միրզաբեկյանցը (1852-1871)[120], Ստեփաննոս վրդ. Աստապատցին (1888-1893)[121], Թովմա վարդապետը (1898)[122], Նիկողայոս աբեղա Ավետիքյանը (1899)[123], Եփրեմ վրդ. Սուքիասյանը (1900-1903), Ընձակ վարդապետը[124] և Մակար վրդ. Բարխուդարյանցը (1894)[125]:

Սաղիանի Սբ. Ստեփաննոս Նախավկա վանքի վանական դպրոցը - Սաղիանի վանքին կից վանական դպրոցը հիմնադրվել է 1869 թ. թեմի առաջնորդ Անդրեաս արքեպս. Անդրեասյանի օրոք՝ նախաձեռնությամբ վանքի վանահայր Սարգիս վրդ. Միրզաբեկյանի[126]: Առաջին ուսուցիչներից է եղել Ավետիս սրկ. Փինաջյանը: Դպրոցում դասավանդել են հայերեն, ռուսերեն, ընթերցանություն, վայելչագրություն, կրոնագիտություն, քերականություն և երգեցողություն[127]: 1873 թ. դպրոցն ունեցել է 25 աշակերտ[128]: Նյութական սղությունների և ուսուցիչների բացակայության պատճառով 1877 թ. դպրոցը չի գործել[129]: 1881 թ. այն շարունակել է իր գործունեությունը[130]: Սաղիանի դպրոցը փակվել է 1885 թ.: Դպրոցի կենսագործունեության երկրորդ շրջանը կապված է թեմի առաջնորդ Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի անվան հետ: Լինելով ուսումնական գործի ջատագով, վերջինս վանքի շինարարության ավարտից հետո, սկսած 1887 թ. նոյեմբերից, եռանդուն կերպով մեծ աշխատանք է ծավալում նաև վանքին կից վանական դպրոցի բացման և նյութական վիճակի բարելավման համար: Այդ նպատակով նա կազմում է ուսումնարանի գործունեության ծրագիրը և նյութական աջակցություն ստանալու ակնկալիքով դիմում նավթարդյունաբերության ընկերության խոշոր ձեռնարկատերեր, ծննունդով Սաղիան գյուղից բաքվաբնակներ Մովսես, Եղիա, Ենովք և նրանց եղբոր՝ Թադեոս ավագ քին. Բուդաղյանցի որդիներ Սմբատին ու Երվանդին:

Հարկ է նշել, որ վանական դպրոցի վերաբացման հարցում ժամանակին իր մտահոգությունն էր հայտնել նաև Թադևոս ավագ քին. Բուդաղյանցը: Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը Սաղիանի վանքին նվիրված իր աշխատության մեջ բերել է վանքի շինության տոմարում Տեր Թադեոսի կտակավանդությամբ թողած հիշատակագիրը, որում ասված է եղել հետևյալը. «Ըստ որում Սաղիանու վանքը արդէն շինուած վերջացած է…բայց այն հռչակաւոր վանքը մի մեծ պակասութիւն եւս ունի եւ անհրաժեշտ պէտք. այն է վանական դպրոց, ուր ինչպէս նախնումն է եղել, կրթել պատրաստել մեր հայ ժողովրդեան արժանաւոր քահանայա-

---

[120] Տե՛ս «Նոր-Դար», Թիֆլիս, 1887, թիվ 66, էջ 23, տե՛ս նաև «Արարատ», 1871, հոկտեմբեր, էջ 483:

[121] Տե՛ս **Սմբատեանց Մ.,** Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 544:

[122] Տե՛ս «Արարատ», 1898, հունիս, էջ 258, 476:

[123] Տե՛ս «Արարատ», 1899, հուլիս, էջ 220:

[124] Տե՛ս «Նոր-Դար», Թիֆլիս, 1903, թիվ 105, էջ 1:

[125] Տե՛ս «Արարատ», 1906, փետրվար, էջ 116-117:

[126] Տե՛ս «Արարատ», 1869, հունիս, էջ 80:

[127] Տե՛ս նույն տեղում, էջ 81:

[128] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 56, ց. 3, գ. 572, թ. 5:

[129] Տե՛ս «Արարատ», 1878, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 455:

[130] Տե՛ս **Խուդոյան Ս.**, Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին (Ժամանակագրությունը հավելյալ մանրամասներով), Երևան, 1987, էջ 460:

ցուք, որից խեղճ գիւղերը զուրկ են, ուստի մեծայոյս գոլով խնդրեմ Բուդաղեանց ազգատոհ-մի անունը աւելի փառաւորելոյ համար. նիւթական միջոցով օգնել եւ օժանդակել մեզ, որ կարողանանք այն վանական դպրոցը բանալ եւ կարգի դնել»[131]:

Բուդաղյան եղբայրներին վանական դպրոցին օժանդակելու խնդրանքով դիմում է նաև Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը: Սիրով ընդունելով արված առաջարկը, Բուդաղյան եղ-բայրները վանքի համար որպես դրամագլուխ պատրաստակամ տրամադրում են 10.000 ռ.: Վերջիններիս կողմից դեկտեմբերի 31-ին թեմակալին հասցեագրված նամակում այդ մասին ասված է. «Մեր այս նամակով վստահանում ենք միամտացնել Ձեզ, Սրբազան Հայր, եւ յոյս ունինք առ Աստուած, որ Սաղիանու վանքի դպրոցի վերաբերմամբ Ձեր բարի ցանկութիւնը կը կատարուի ժամանակին: Արդէն մենք մեր սեպհականութիւնից ուխտել ենք նիւթապէս ապահովել նոյն վանքում բացուելի վանական ուսումնարանը, իսկ նորա բարոյական և դէ-պի յառաջ նկրտելուն հոգացողութիւնը կխնդրենք ամենախոնարհաբար Սրբազան Հօրդ ստանձնել Ձեր վրայ»[132]: Բուդաղյան եղբայրների առաջարկությամբ բացվող վանական դպրոցը պետք է կրեր «Բուդաղեան վանական դպրոց Սաղիանի վանից» տիտղոսը, իսկ որ-քան ժամանակ, որ կգործեր դպրոցը, այդ տոհմից մեկը պետք է համարվեր նրա հիմնադիր խնամատար հոգաբարձուն:

Մակար Ա Թեղուտեցի Կաթողիկոսի կողմից 1888 թ. ապրիլի 6-ին հաստատված վանա-կան դպրոցի կանոնադրությունում ասվում է, որ վանական դպրոցը պետք է գործեր հայոց կաթողիկոսի իրավասության ներքո, նրա կողմից 1886 թ. հաստատված եկեղեցական ծխա-կան ուսումնարանների կանոնադրության և ծրագրերի համաձայն: Ուսումնարանը պետք է ունենար 5 հոգուց բաղկացած վանական վարչություն, որի նախագահը ի պաշտոնե վանա-հայրն էր լինելու, որը պարտավոր էր հսկելու ուսումնական ողջ գործընթացը: Ուշագրավ է ծրագրում աշակերտների ընտրության կարգի մասին կետը, որում ասված է, որ սովորողնե-րի մեծամասնությունը պետք է լինեին քահանաների երեխաները: Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի հրավերով Շուշիից 1888 թ. օգոստոսի վերջերին Սաղիան է գալիս Մակար վրդ. Բախուդարյանցը, որը պետք է դասավանդեր կրոն և հայոց լեզու, իսկ որպես ռուսաց լեզվի և թվաբանության ուսուցիչ հրավիրվում է Սահակ Տեր-Գրիգորյանցը[133]:

Վանքի վանահայրն ու միաժամանակ դպրոցի տեսուչն էր Ստեփաննոս վրդ. Աստա-պատցին: 1888 թ. սեպտեմբերից սկսել է գործել վանական երկդասյան արական դպրոցը՝ 41 աշակերտով: Դպրոցն իր բնույթով եղել է տարրական: Հետաքրքիրն այն է, որ դպրոցը նշված չէ 1896 թ. փակված դպրոցների ցանկում: Կարճ ժամանակ անց դպրոցի տեսչի պաշ-տոնը Ստեփաննոս վրդ. Աստապատցուց անցնում է Մակար վրդ. Բարխուդարյանցին[134]: Դպրոցը թեև նշված չէ նաև 1895 թ. փակված դպրոցների ցանկում, հայտնի է սակայն, որ վե-րաբացվել է 1905 թ.: 1907-08 ուս. տարում գործել է որպես միդասյան արական դպրոց: 1911-12 ուս. տարում եղել է երկսեռ 4-ամյա դպրոց՝ 38 աշակերտուհիներով[135]: 1988 թ. Սաղիան

---

[131] **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 89-90:

[132] Նույն տեղում, էջ 91:

[133] Տե՛ս նույն տեղում, էջ 103:

[134] Տե՛ս նույն տեղում, էջ 121:

[135] Տե՛ս **Խուդոյան Ս.**, Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, էջ 460:

գյուղում գործել է հայկական միջնակարգ դպրոց՝ սակավաթիվ աշակերտներով[136]:

Այսպիսով, ամփոփելով վերոասացյալը՝ անվերապահորեն կարելի է ասել, որ Սաղիանի Ս. Ստեփաննոս Նախավկա վանքի վանական կառույցներն իրենց ճարտարապետական հորինվածքով և շինարարական արվեստի բարձր մակարդակով արտացոլել են հայկական ճարտարապետության լավագույն ավանդները: Սաղիանի վանքի դերը, որպես առաջնորդանիստ և մշակութային օջախ, նշանակալից է եղել ոչ միայն Շամախու հայոց թեմի, այլև ամբողջ Այսրկովկասի հայության համար[137]:

---

[136] Տե՛ս **Կարապետյան Ս.,** Հայաթափված գյուղերը Ադրբեջանի հանրապետության կենտրոնական շրջաններում, «Հանրապետական», սեպտեմբերի 27, 1991, թիվ 3:

[137] Սաղիանի վանքի Ս. Ստեփաննոս Նախավկա եկեղեցին կանգուն է եղել մինչև 1988 թ.:

ՇՈՒՇԱՆԻԿ ԶՈՀՐԱՊՅԱՆ

ՄՈԴԵՌՆ ՈՃԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԴԳԵՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻ ԵՐԿԵՐՈՒՄ

«Գեղեցիկը հավերժական է, և բախտավոր է այն ժողովուրդը, որը գեղեցիկի պահանջն ունի»:

Վ. Սուրենյանց

XIX-XX դարերի սահմանագծին խորը հեղաշրջումներ տեղի ունեցան աշխարհայացքի ու մշակույթի ոլորտներում, որով էլ պայմանավորվեց նորաստեղծ մոդեռն ոճի ծնունդը: Այդ «փոփոխությունների ժամանակը» սպասված էր, քանի որ XIX դարը կուտակել էր այնպիսի հակասություններ, որոնք հեշտ ու խաղաղ չէին կարող լուծվել: Դրանցից մեկը 1871 թվականի Փարիզյան Կոմունան էր, որը ցնցել էր ամբողջ Եվրոպան: Այս շրջանում ստեղծված արվեստն ընդունված էր անվանել մոդեռն, ար-նուվո, յուգենդշտիլ, սեցեսսիոն, լիբերտի ոճ, տիֆանիի ոճ և այլն:

Ար-նուվոյի սկզբնավորումը սկսվեց XIX դարի 50-ական թվականներին, երբ մեկը մյուսի ետևից ի հայտ եկան մենագրություններ, կազմակերպվեցին ցուցահանդեսներ՝ նվիրված թե՛ առանձին վարպետներին, թե՛ ոճին ընդհանրապես:

Էապես փոխվեց արվեստի դերն ու նշանակությունը: Ստեղծագործական եռուն կյանքը կենտրոնացավ հիմնականում Եվրոպայում, որտեղ դեռ ապրում և աշխատում էին Սեզանն ու Գոգենը, Ռոդենն ու Հիլդերբրանդը, Ռեպինն ու Սուրիկովը: Նկարիչները փնտրում էին այլ միջոցներ աշխարհն իմաստավորելու համար: Բազմաթիվ վարպետների ստեղծագործություններում առկա էր ողբերգական երանգավորումը: Նրանց համար չափազանց անորոշ էր գեղագիտական իդեալի ուրվագիծը: Շատերը շփոթված էին՝ չգտնելով իրենց ճանապարհն արվեստի արագ և հակասական շարժման մեջ:

Մեծ համբավ ձեռք բերեց Էդուարդ Դյուժարդենի կողմից 1880 թվականին հրատարակած ,Fin de sieclet («Դարավերջ») ուղենշային գործը, որն անմիջապես դարձավ մոդեռն ոճի նշանաբանը: Եվ արվեստի մարտիկները, որոնք ցանկանում էին վերափոխել մշակույթը, մարտի նետվեցին՝ դառնալով սիմվոլիստներ, հեղափոխականներ, աստվածորոնողության հետևորդներ: Ինչպես նոր ոճի հիմնադիրներից մեկը՝ Անրի վան դե Վելդեն էր նշում, «Նկարիչները, որոնք մինչ այժմ համարվում էին «դեկադենտներ», այսօր վերածվել են նոր խոստումնալից կրոնի հոսքն ընկած մարտիկների»[1]:

Ըստ էության, յուգենդշտիլի պատկերագրությունը սկսվեց նոր ոճի ստեղծումից անմիջապես հետո: Եվ նորարարական որոնումներով բնորոշվող արվեստի դեմոկրատական ավանդույթները ծնունդ տվեցին նոր տիպի ստեղծագործությունների: Այդ նորարարության հանդես գալը կապված էր կյանքի նոր պայմանների հետ: Ար-նուվոյի նորարարությունն այնքան ակնհայտ էր, որ ժամանակի քննադատությունն իսկույն արձագանքեց նոր ոճի վարպետների՝ արվեստի ու կյանքի վերափոխմանն ուղղված գործունեությանը:

---

[1] **В. С. Турчин,** По лабиринтам авангарда, М., 1993, с. 29.

Առաջին խնդիրը, որն ի հայտ եկավ, մոդեռնի իրավունքն էր անվանվելու որպես ոճ, քանի որ XIX դարում ստեղծվել էր այնպիսի իրավիճակ, երբ արվեստում լիարժեք ոճի մասին չէր կարող խոսք լինել: Սեցեսսիոնը կասկածվում էր վատ ճաշակի, չափազանց լայն «սպառողի» պահանջարկը բավարարել ձգտելու և քաղքենիական ոգով տոգորված լինելու մեջ:

Ստեղծված ուղղության գլխավոր գաղափարներից մեկը սոփեստությունն էր, ըստ որի դասական արվեստը լավ էր միայն իր ժամանակի համար, իսկ ժամանակակից նկարիչը կարող էր հասնել նոր բարձունքների, եթե նա կարողանար փնտրել իր շրջապատում կատարյալն ու գեղեցիկը, ինչը փնտրում էին իրենց դարաշրջանում անցյալի վարպետները: Նկարիչն ասես միաժամանակ ստեղծում էր իր և աշխարհի դիմանկարը: Նա ընկալվում էր որպես դեմիուրգ, արարիչ:

Ընդհանուր առմամբ, տվյալ ոճը ծագում էր առանձնատներից, որոնց շինարարությունն ընթանում էր «Իմ տունն իմ ամրոցն է» նշանաբանով: Ճարտարապետներն սկսեցին դրսևորել շինարարական տեխնիկայի չոր ռացիոնալիզմը հաղթահարելու ձգտում: Նրանք դիմում էին քմաճաշակ դեկորատիվիզմին և խորհրդանիշներին՝ դեկորացիաների զարդանախշերում, ինտերիերների և ճակատների քանդակներում, ինչպես նաև շրջահոս և բոլորուն, սահող ձևերի ու գծերի միտումնավոր շեշտվածությանը: Հաստոցային նկարը, որպես ինքնուրույն ստեղծագործություն, կորցրեց իր դերը:

Գեղանկարչությունը պետք է դառնար բնակելի կամ հասարակական շինության ներքին տարածության ձևավորման բաղադրիչ մասը: Դեկորատիվությունը կայանում էր ճարտարապետական ձևերի գեղագիտական իմաստավորման մեջ՝ երբեմն ստիպելով մոռանալ նրա կիրառական նշանակությունը: Իրենք՝ ճարտարապետները, մերժում էին համաչափությունը և կանոնավոր կառուցման ընդհանուր կանոնները: Իսկական մոդեռնը ճարտարապետության մեջ երևան եկավ Բրյուսելում 1892-1893 թվականներին Վ. Օրտայի կառուցած Տասսելի առանձնատնում:

Ըստ էության մոդեռն ոճը գալիս էր Անգլիայից Դ. Ռյոսկինի և Վ. Մորիսի արվեստով: Անգլիան իր սոցիալական զարգացմամբ առաջ էր անցել մյուս երկրներից, ուստի այստեղ առավել պարարտ հող էր ստեղծվել դրա համար: Այդ ամենին նպաստել էին նաև նախառաֆայելականները՝ Գ. Ռոսետտի և Ու. Մորիսի գլխավորությամբ: Վերջինս ար-նուվո մտավ գրքային տպագրությամբ՝ հիմնելով Կելմսկոտյան տպարանը:

Յուգենդշտիլը կախված էր ժամանակի այնպիսի երևույթներից, ինչպիսին էր սիմվոլիզմը: Վերջինս գրական-գեղարվեստական ուղղություն էր, որը գրավել էր տարբեր եղանակներով աշխատող վարպետների: Ի տարբերություն սիմվոլիզմի, որն ավելի հակված էր դեպի կամերային պոեզիան, սեցեսսիոնն ի հայտ եկավ արվեստի այնպիսի տեսակներում, որոնք կապված էին հասարակական պահանջմունքների հետ, այսինքն՝ ճարտարապետության, կիրառական արվեստի, պատի ազդի: Ար-նուվոն դիմում էր սիմվոլիզմին նույնիսկ այն ժամանակ, երբ ձևավորում էր զարդանախշ և մշակում ճարտարապետական ձևեր:

Իսկ ոճի զարգացման համար մեծ դեր խաղացին սիմվոլիստների առաջ քաշած առասպելի խնդիրները, որոնք նրանք մեկնաբանում էին որպես «շարժվող խորհրդանիշ»: Մոդեռնն ու սիմվոլիզմը, ասես, հարաբերակցվում էին որպես «ձև» և «բովանդակություն», քանի որ մոդեռնի պատկերագրությունը խորհրդանշական էր, իսկ սիմվոլիզմի գեղարվեստական պատկերները մոդեռնիստական էին:

Հարկ է նկատել, որ և՛ սիմվոլիզմը, և՛ ար-նուվոն ծագում էին միևնույն «հոգևոր նախահայրենիքից»՝ ռոմանտիզմից: Ինչպես Դ. Սարաբյանովն էր նշում, դրանք միևնույն մեդալի երկու կողմերն էին[2], իսկ ըստ Վ. Տուրչինի՝ միևնույն երևույթի երկու բևեռները[3]:

Իսկ ինչ վերաբերում էր սիմվոլիզմի և յուգենդշտիլի համատեղելիությանը, ապա գեղանկարչության մեջ այդպիսի ստեղծագործություններ կարող էին համարվել «Նաբի» (եբրայերեն «մարգարե» բառից) խմբավորման վարպետների, Հոդլերի, Վրուբելի աշխատանքները, ինչպես նաև Սուրենյանցի «Սալոմեն»:

Մոդեռնը հակված էր դեպի սինթեզը, որի նպատակն էր կյանքը նմանեցնել արվեստին և վերացնել նրանց միջև եղած անջրպետը:

Մեծ համբավ ստացավ դեռևս ուշ ռոմանտիզմի դարաշրջանում ծնունդ առած «միասնական արվեստի ստեղծագործությունը», որի հեղինակը գերմանացի հայտնի երգահան Ռ. Վագներն էր:

Ի հայտ եկավ շարժում՝ միասնական ոճի ստեղծման համար՝ պահանջելով, որպեսզի արվեստը թափանցեր առօրյա կենցաղի բոլոր ոլորտները: Դրա վառ օրինակը հանդիսացավ Ա. Վան դե Վելդեի «Բլյումենբերֆը», որտեղ ճարտարապետությունը, քանդակագործությունը և գեղանկարչությունը միավորված էին ներդաշնակորեն և նույնիսկ կահույքի ձևերն աղերսվում էին ճարտարապետության հետ:

Արվեստի այդ սինթեզը հանգեցրեց նոր տիպի արվեստագետի երևան գալուն, որն իր մեջ էր միավորում գեղանկարչին, ճարտարապետին, գրաֆիկին, կիրառական արվեստի վարպետին, տեսաբանին:

Նոր ոճի ձևավորումը մեծ չափով պարտական էր ճապոնական արվեստին, որը Փարիզում մեծ համբավ ձեռք բերեց 1888 թվականից հետո՝ շնորհիվ Զինգֆրիդ Բինգի ‚Art nouveaue պատկերասրահի գործունեության: Արևելքի հետ երկխոսությունը սկսվել էր դեռևս ռոմանտիզմի ժամանակաշրջանում: Գեղանկարչության մեջ այն շարունակվել էր իմպրեսիոնիստների կողմից, բայց հատկապես զարգացել XIX դարի կեսերին, երբ «նորաձև» էին դարձել «չինական» և «ճապոնական» արվեստների հանդեպ հետաքրքրությունները: Ոճի վարպետները, կարծես իրենց «կազմի» մեջ ներառելով արևելյան տարրեր, կիրառում էին ճապոնական փորագրության գծային կառուցվածքը, միջնադարյան Իրանի զարդանախշային մոտիվները: Մոդեռնը գնահատում էր նաև նեոգոթական ավանդույթները՝ իր մեջ ներառելով նաև անգլիական նախառաֆայելիզմը:

Ար-նուվոյի բնորոշող հատկանիշներից էին դեկորատիվությունը, կորագծային գալարուն զարդանախշը, հոսուն, երերուն գծերը: Շնորհիվ արդյունաբերության ժամանակի տեխնիկայի, յուգենդշտիլն իր նախասիրած մոտիվներն ու զարդանախշերը տարածեց՝ ստեղծելով «արվեստ բոլորի համար» համակարգ: Դա XX դարի իրականացրած առաջին էական ծրագիրն էր: Մոդեռնը ժխտում էր այն ամենը, ինչը նախատեսված էր միայն անհատի համար: Այն ձգտում էր միասնականացնել մարդկանց գիտակցությունը: Եվ նոր ոճի պատմական ավանդը կայացավ նրանում, որ մոդեռնը ստեղծեց մարդկանց ընդհանրություն համաշխարհային մասշտաբով:

Մասնագիտական գիտելիքները խորացնելու նպատակով անվանի արվեստագետներից շատերն իրենց կրթությունն էին ստանում Մոսկվայում, Պետերբուրգում, Փարիզում, Բեռլինում, Մյունխենում:

---

[2] **Д. В. Саравьянов,** Русская живопись XIX века среди европейских школ, М., 1980, с. 205.

[3] **В. С. Турчин,** По лабиринтам авангарда, М., 1993, с. 37.

Ար-նուվոյի դրսևորումները եկան-հասան մինչև Կովկաս՝ իրենց արտացոլումը գտնելով տարբեր արվեստագետների երկերում, այդ թվում և Վարդգես Սուրենյանցի ուշ շրջանի ստեղծագործություններում:

Վարդգես Սուրենյանցը իր կրթությունը ստացել էր Մոսկվայի նկարչության և ճարտարապետության ուսումնարանում, այնուհետև ընդունվել Մյունխենի Գեղարվեստի ակադեմիայի սկզբում ճարտարապետության, այնուհետև գեղանկարչության բաժին: Ահա ինչու գրեթե ողջ ստեղծագործական գործունեության ընթացքում նկարիչն ու ճարտարապետը միշտ միասին էին հանդես գալիս նրա կտավներում:

Վարդգես Սուրենյանցի ստեղծագործությունների մեջ մեծ տեղ էին զբաղեցնում արևելյան թեմաներով պատկերները: Մոդեռնի վարպետների նման նա նույնպես տուրք տվեց ժամանակի «արևելյան հետաքրքրություններին»: Արևելքի հանդեպ հետաքրքրությունը նկարչի արվեստում նկատելի էր դարձել դեռևս 1885 թվականից հետո, երբ նա ուղևորվել էր Իրան:

Եթե Սուրենյանցի նախորդ տարիների կտավներում առկա զարդանախշը կապված էր պատկերված առարկայի կամ նկարի բովանդակության հետ, ապա այլ բնույթ էին կրում 1900-1910 թվականների Արևելքի կյանքն արտացոլող նրա ստեղծած պատկերները: Ար-նուվոյի ազդեցությունն առավել ցայտուն դրսևորվեց 1907 թվականին ստեղծված «Սալոմե» ստեղծագործության մեջ, որի վկայությունն էին հանդիսանում նրանում առկա դեկորատիվությունը, հարթապատկերայնությունը, ինչպես նաև հոսուն, երերուն գծերը: Անշուշտ, Սուրենյանցի «Սալոմեն» ստեղծվել էր Օսկար Ուայլդի համանուն դրամայի ազդեցության ներքո: Հատկապես, որ նկարիչը մինչ այդ արդեն առիթ էր ունեցել ծանոթանալու գրողի ստեղծագործություններին և նույնիսկ պատկերազարդել դրանք: Նկարը առանձնահատուկ էր նրանով, որ նկարիչը խախտել էր ավանդույթը և չէր պատկերել Հովհաննես Մկրտչի գլուխը՝ ողջ շեշտը դնելով Սալոմեի ներաշխարհի վրա:

Մոդեռնի դրոշմը նշմարելի էր նաև «Ֆիրդուսին կարդում է իր «Շահնամեն» Մահմուդ շահին», «Ասպետ կինը», «Վիշտը» և «Իդելսոնի դիմանկարը» կտավներում:

«Ասպետ կինը» նկարի հերոսուհին Անի քաղաքի պաշտպանության ժամանակ հերոսությամբ աչքի ընկած Այծյամն անունով աղջիկն էր: Ամբողջ կտավի մակերեսը, ասես, զբաղեցված էր և ոչ մի կողմից ազատ տարածություն չէր մնացել պատկերի մեջ: Այդ երևույթը բնորոշ էր 1907-1913 թվականների ընթացքում նկարչի ստեղծած թեմատիկ պատկերների համար: Թերևս, սա արդյունք էր XX դարում արվեստ մուտք գործած որոշ ազդեցությունների:

«Իդելսոնը» դեմքի մշակումներով կոնկրետացված էր այնքան, որ պահպանում էր դիմանկարին անհրաժեշտ կերպարային անհատականությունը: Եվ իրապաշտորեն արված դեմքին հակադրվում էր պայմանական ստեղծված ֆիգուրը: Վերջինս իր կերպարի մեկնաբանմամբ որոշակի նմանություն ունի ավստրիական սեցեսսիոնի ներկայացուցիչ Գյուստավ Կլիմտի «Գլխարկով տիկնոջ դիմանկար»-ի հետ:

Վարդգես Սուրենյանցի արվեստում մուտք գործած դեկորային նկարելակերպն իր առավելագույն զարգացմանը հասավ «Ֆիրդուսին կարդում է իր «Շահնամեն»...» նկարում:

Նկարչի ուշ շրջանի կտավների դեկորատիվությունը, թերևս, կապված էր նրա՝ դեպի թատրոնն ունեցած հետաքրքրության հետ: Շեքսպիրը Սուրենյանցի առջև բաց արեց բեմարվեստի հարուստ աշխարհ: Եվ նկարչի Շեքսպիրով հրապուրվելը և «Ռիչարդ III» թարգմանելը բոլորովին էլ պատահական չէր:

Սուրենյանցի՝ մեզ հայտնի թատերական ձևավորման էսքիզները վերաբերում էին 1900 թվականին, մինչդեռ Մյունխենում ուսանելու վերջին տարիներին, այսինքն՝ 1884-1885 թվա-

կաններին, նկարչի անթվակիր մի ալբոմից պահպանվել են հանդերձների էսքիզներ, որոնք վկայում են, որ դեռևս ուսանողական շրջանում թատերանկարչությունն իր տեղն էր գրավել նկարչի հետաքրքրություններում:

Որպես բեմանկարիչ՝ Վարդգես Սուրենյանցն աչքի ընկավ ռուս իրականության մեջ՝ հանդես գալով միմյանցից տարբեր ոճական ուղղություններ ունեցող՝ Պետերբուրգի Մարինյան, Մոսկվայի գեղարվեստական և Մեյերհոլդի թատրոններում:

Կ. Ստանիսլավսկին և Վլ. Նեմիրովիչ-Դանչենկոն, ծանոթ լինելով Վ. Սուրենյանցի թատերական աշխատանքներին Պետերբուրգի Մարինյան թատրոնում Ադանի «Ծովահեն» բալետի և Ռուբինշտեյնի «Դև» օպերայի բեմադրությունների ձևավորումներից, 1904 թվականին նկարչին հրավիրեցին բելգիացի հայտնի գրող Մորիս Մետերլինկի «Անկոչը», «Այնտեղ, ներսում» և «Կույրերը» մեկ գործողությամբ պիեսները ձևավորելու:

Կ. Ստանիսլավսկին առաջինն էր, որ մոսկովյան բեմահարթակում կյանքի կոչեց սիմվոլիստական դրամատուրգիան: Եվ Մետերլինկի պիեսները նշանակալիորեն կրում էին նրա սիմվոլիստական հայացքների կնիքը: Բելգիացի գրողի սիմվոլիստական թատրոնը հայտնի էր «Մահվան թատրոն» անվամբ: Նրա փիլիսոփայությունը հիմնված էր փիլիսոփայական իդեալիզմի բնորոշ մանրամասների վրա: Նախնական գաղափարը կայանում էր նրանում, որ ամեն ինչ տնօրինվում էր Անհայտի կողմից, իշխում էին ծածուկ և անխուսափելի ուժեր, որոնց մտադրությունները ոչ մեկին հայտնի չէին: Մարդը դառնում էր Անհայտի զոհը, անզոր և թշվառ մի էակ: «Մահվան թատրոնում» մարդը մնում էր մենակ առեղծվածի, այսինքն՝ Անհայտի հետ: Նրա կերպարներն ընդունակ չէին գործողության, նրանք բացարձակապես անօգնական անանուն, անդեմ, անխոս դերակատարներն էին: «Մահվան թատրոնը» «լռության թատրոն» էր, և նրա հերոսներն ավելի շատ լռում էին, քան խոսում:

Անցել էին այն ժամանակները, երբ թատերական նկարչից պահանջվում էր բեմական դեկորներով միայն ֆոն ստեղծել դերասանների համար: Դերասանների հագուստները, թատերական դեկորները, ամբողջը պետք է մտնեին գործողության մեջ և հանդիսատեսին նոր խոսք ասեին: Ինչպես Կ. Ստանիսլավսկին էր նշում՝ «Մի՞թե մենք՝ դերասաններս, մեր մարմնի նյութականության պատճառով դատապարտված ենք հավիտյան ծառայել՝ արտահայտելու համար ընդամենը կոպիտ իրականությունը: Մի՞թե մեզ վիճակված չէ ավելիին գնալ, քան երբեմնի իրենց գործը կատարած իրապաշտ գեղանկարիչները: Մի՞թե մենք բեմարվեստում ընդամենը «պերեդվիժնիկներ» ենք»:

Կ. Ստանիսլավսկին մեծ հեղաշրջում մտցրեց ոչ միայն թատերական արվեստի ողջ համակարգի մեջ, այլև լուրջ պահանջներ ներկայացրեց նաև բեմը ձևավորող նկարչին:

Վարդգես Սուրենյանցը, օժտված լինելով նուրբ ճաշակով և բեմի զգացողությամբ, հավատարիմ մնաց ժամանակի թատերական ոգուն և կարողացավ բավարարել Կ. Ստանիսլավսկու և Վլ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոյի նման խստապահանջ արվեստագետներին:

Վարդգես Սուրենյանցի սիմվոլիստական հայացքների կնիքը նկատելի էր նաև գրքային գրաֆիկայում: 1900-ականներին նկարիչն առհասարակ ոգևորված էր անգլիական գրականությամբ և գեղանկարչությամբ՝ հատկապես նախառաֆայելականների արվեստով: Եվ այս շրջանում կատարված նկարազարդումներում՝ Ռոբերտ Սիզերանի անգլիական գեղանկարչությանը նվիրված գրքի կազմում և հատկապես Օսկար Ուայլդի հեքիաթներում նշմարելի էին զուգահեռներ Ուիլյամ Մորիսի ձևավորած գրքի կոմպոզիցիոն հնարների և գեղարվեստական որոշ կերպարների հետ: «Պատանի արքան» և «Արքայադստեր ծննդյան օրը» հեքիաթների նկարազարդումներում առկա էր կոմպոզիցիայի անհամաչափության

սկզբունք, առարկաները պատկերված էին հարթ լուծումով, գրաֆիկական ոճավորումով, որոնք համազոր չէին հայկական հեքիաթների պատկերազարդումներին:

Լինելով բազմակողմանի զարգացում ունեցող փայլուն մտավորական՝ Սուրենյանցը մասնագիտական կրթություն ստացած, թերևս, հայ առաջին գեղանկարիչն էր, որ կռահեց հայ մանրանկարչության ավանդները կիրառելու կարևորությունը: Եվ նա հայ միջնադարյան մշակույթի փորձը սկսեց կիրառել նոր ժամանակներում: Ինչպես մոդեռնի եվրոպացի հետևորդները, Սուրենյանցը ևս զգաց և ըմբռնեց որմնանկարների ու ճարտարապետության օրգանական կապը: Այս հանգամանքը ևս պայմանավորում էր նրա գեղանկարչական ոճի ինքնատիպությունը:

Ար-նուվոյի հատկանիշները նկարչի արվեստում նշմարելի էին և՛ հեքիաթայնության, և՛ ավանդական մոտիվների կիրառման, և՛ վառ արտահայտված գծային ռիթմի ու զարդանախշի մեջ:

Շնորհիվ Սուրենյանցի՝ ազգային արվեստում ի հայտ եկան ժանրերի բազմազանություն և պատկերման նոր՝ եվրոպական մեթոդներ:

Սուրենյանցի կյանքի վերջին տասնամյակը համընկավ հայ ժողովրդի կյանքի ամենաողբերգական շրջանի հետ՝ նրա արվեստի մեջ բերելով հայ գաղթականության թշվառության պատկերներ:

Մոդեռնը նպատակ ուներ բուժել արվեստի հիվանդությունը գեղեցկությամբ և կյանքը վերափոխել գեղագիտական ներազդման միջոցով: Նոր ոճի համար գեղեցկության միակ կրողը ինքը՝ արվեստն էր, որի սկզբունքը պետք է լիներ օգտակարի և գեղեցկության միավորումը մեկ ամբողջի մեջ: Ինչպես Վրուբելն էր նշում. «Գեղեցկությունը, ահա դա է մեր կրոնը»:

Ար-նուվոն, ասես, արվեստի տարբեր ձևերում արտահայտված մի հոսանք էր, որն իր արտացոլումը գտավ ցուցահանդեսից ընդհուպ մինչև նորաձևության սրահ, թատրոնից մինչև կինոարվեստ, գրքից մինչև ճարտարապետություն: Այն ստեղծեց իր յուրատիպ «մաքրությունը» և աշխարհին տվեց գեղեցկության նոր, կախարդիչ ըմբռնումներ:

ԱՄԱՏՈՒՆԻ ՎԻՐԱԲՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ «ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆԸ

Վերջերս Հայաստանի ազգային արխիվ էր դիմել մի քաղաքացի, խնդրելով տեղեկություններ տրամադրել Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի մասին՝ ներկայացնելով դրանց լուսանկարները։

«Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանը (Երևան, 2002) հաղորդում է, որ «Սկզբնական շրջանում Հայ Եկեղեցին ունեցել է միայն «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան, որը շնորհվել է առաջին և երկրորդ կարգերով։ Սահմանվել է 1911 թվականին Գևորգ Ե Սուրենյանցի կողմից, պատրաստվել է արծաթից, եղել ոսկեջրած և տեղ-տեղ էմալով պատած, շքանշանների երկու եզրերին՝ «ԳԵ (Գևորգ Ե)» տառերը» (էջ 856)։

Արխիվային փաստաթղթերում ո՛չ 1911, ո՛չ էլ հետագա, մինչև 1919 թ. որևիցե տեղեկություն չհայտնաբերվեց այդ շքանշանի մասին։ Ավելին, լուսանկարի մանրազննումը և շքանշանի տարրերի մեջ ՀՀ եռագույն դրոշի առկայությունը մեզ բերեց այն վստահ համոզման, որ շքանշանը կարող էր պատրաստվել 1918 թ. հետո, և շքանշանի վրա 1911 թվականի առկայությունը Գևորգ Ե Կաթողիկոսի ընտրության թվականն է։

«Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանի մասին առաջին հիշատակումը հայտնաբերեցինք Ամենայն Հայոց Կաթողիկոսի 1919 թ. հոկտեմբերի 1-ի թիվ 607 կոնդակում, հանձնված Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի զինվորական ներկայացուցիչ, կապիտան Անտուան Մարի Ժոզեֆ Պուադրբարին։ Այդ օրը վերջինիս ընդունել է Գևորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսը և հանձնել հետևյալ կոնդակը.

«... Սէր ազնիւ որդւոյդ Մեծին Գաղղիոյ և ինում առ որդիս իմ հարազատս ի ժամ նեղսակիր վիճակի նոցա, որ ի սահմանս մանուկ Պետութեան Մերոյ և որ արտաքոյ, այլև յարգանաց ջերմն հաւաստիք առ Մ. Աթոռ Ս. Էջմիածնի և առ Վ. Գահակալ Նորին, սէր անկեղծ և յարգանց ի սէր Մեր սնուցին առ Ձեզ, ուստի ի նշան սիրոյ Մերոյ առ Ձեզ զոյգ ընդ Կոնդակիս ունիք ընկալնուլ ի յուշ յաւերժական շնորհսն Մեր Հայրապետական դրօշի առ ի կրել զայնս ի կուրծս քաջարի զօրականիդ ի յիշատակ այցելութեան Ձերոյ ի Մ. Աթոռս և ջերմ յարգանաց, որ առ Մեզ»[1]։

Ինչպես տեսնում ենք, Հայրապետական դրոշը դեռ անուն չունի, սակայն պարզ է, որ այն շքանշան է, քանզի պետք է կրել կրծքին։ Պահպանվել է այս կոնդակի առաջին տարբերակը, ստորագրված Գևորգ Ե Կաթողիկոսի կողմից, որտեղ «Ի յուշ յաւերժական մեր հայրապետական դրոշի առ ի կրել զայն ի կուրծս քաջարի զօրականիդ» բառերի փոխարեն այդ տարբերակում գրված է «դուզնաքեայ ընծայ, գաւաթ կիտուածա-

[1] ՀԱԱ, Ֆ. 57, ց. 2, գ. 521, թ. 67։

զարդ արծաթեայ ընդ դրգալոյն» բառերը, սակայն ջնջված և փոխված է հիշյալ բառերով։

1920 թ. հունվարի 24-ին Էջմիածին է այցելում Մեծ Բրիտանիայի անդրկովկասյան գլխավոր կոմիսարի Հայաստանի ներկայացուցիչ կապիտան Գ. Ֆ. Գրիսը, որին ևս հանձնվում է հար և նման կոնդակ, որտեղ, բնականաբար, բացի անունից և պաշտոնից, փոխված է երկրի անվանումը և ամենակարևորը, «Մեր Հայրապետական դրոշի» բառերից հետո ավելացված է «յանուն Ս. Գրիգորի Հայաստանեայց Լուսաւորչի» բառերը և ամբողջությամբ ունի այս տեքստը. «Սէր ազնիւ որդւոյդ Մեծին Բրիտանիոյ և ինում առ որդիս իմ հարազատս ի ժամ նեղսակիր վիճակի նոցա, որ ի սահմանս մանուկ Պետութեան Մերոյ և որ արտաքոյ, այլև յարգանաց ջերմն հաւաստիք առ Մ. Աթոռ Ս. Էջմիածնի և առ Վ. Գահակալ Նորին, սէր անկեղծ և յարգանաց ի սէր Մեր սնուցին առ Ձեզ, ուստի ի նշան սիրոյ Մերոյ առ Ձեզ զոյգ ընդ Կոնդակիս ունիք ընկալնուլ ի յուշ յաւերժական շնորհսն Մեր Հանրապետական դրօշի յանուն Ս. Գրիգորի Հայաստանեայց Լուսաւորչի առ ի կրել զայնս ի կուրծս քաջարի զօրականիդ ի յիշատակ այցելութեան Ձերոյ ի Մ. Աթոռս և ջերմ յարգանաց, որ առ Մեզ»[2]։

Շքանշանի մասին որևէ հիշատակում չկա մինչև 1920 թ. հոկտեմբերի 20-ը, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով Ամերիկահայ երեսփոխանական ժողովի ատենապետ դոկտոր Փառնակ Ադամյանը արժանանում է «զնշան Հայրապետական դրոշի յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորիչին մերոյ Ա աստիճանի ոսկեայ ականակուռ»։

Իսկ ի՞նչ էր եղել տասն ամիսների ընթացքում և որտեղից հայտնվեցին «Ա աստիճանի ոսկեայ ականակուռ» բառերը։

Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանձնարարությամբ, նաև ՀՀ կառավարության հրահանգներով 1920 թ. սկզբին Եվրոպայով Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանը մեկնում է Ամերիկա։ 1920 թ. մարտի 3-ին Բաթումից դուրս գալով, մարտի 9-ին հասնում է Փարիզ, իսկ մի քանի օր անց՝ Լոնդոն։ Տեղիս հոգևոր առաջնորդն էր Աբել վարդապետ Նազարյանը, որը, ինչպես իր նամակներից մեկում նշում է Խորեն եպիսկոպոսը, «ամենայն պատուով ներկայացնում է այս արժեքաւոր գաղութում հայ հոգևորականութիւնը»[3]։

Հենց Լոնդոնում Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանը և Աբել վարդապետ Նազարյանը որոշում են, թե ինչպիսին է լինելու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը, քանի աստիճանի է լինելու։ Ով է շքանշանի հեղինակը, առայժմ պարզել հնարավոր չեղավ, սակայն հայտնի է, որ այդ օրերին հայկական դրամանիշերը տպագրելու համար Լոնդոնում էր գտնվում նկարիչ Արշակ Ֆեթվաճյանը, և հնարավոր է՝ նա է հեղինակը շքանշանի ձևավորման։

Մայիսի 1-ին Խորեն եպիսկոպոսը Անգլիայից մեկնում է ԱՄՆ, նպատակ ունենալով «առ տեղեաւն գործը քննել և վերացնելով անհամաձայնութեանց և խռովութեանց պատճառները, միացնել բոլոր եկեղեցիները, համայնքները և համերաշխութեամբ կատարել առաջնորդական ընտրութիւն»։

---

[2] Ֆ. 57, ց. 2, գ. 521, թ. 92։

[3] Ֆ. 57, ց. 3, գ. 276, թ. 1 շրջերես։

ԱՄՆ-ում Խորեն եպիսկոպոսին հաջողվում է կատարել Վեհափառի հանձնարարությունը, ձեռք բերել համերաշխություն և համաձայնություն, որում նրան մեծ օգնություն ցուցաբերեց դոկտոր Փ. Ադամյանը: 1920 թ. օգոստոսի սկզբին Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանը վերադառնում է Անգլիա, իսկ հոկտեմբերի կեսերին՝ Հայաստան: Հոկտեմբերի 14-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսին զեկուցելով իր ճանապարհորդության արդյունքների մասին, նշում է նաև դոկտոր Փ. Ադամյանի ազգանպաստ գործունեության մասին, որին հետևում է Փ. Ադամյանին պարգևատրելու Վեհափառի կոնդակը: Ինչպես կտեսնենք հետագա էջերում, նա տեղեկացրել է նաև, թե քանի տեսակի է շքանշանը և քանի աստիճան ունի, ահա թե ինչու 1920 թ. հոկտեմբերի 20-ի կոնդակում կա «Ա աստիճանի» և «ոսկեայ ականակուռ» բառերը: Հաջորդ պարգևատրումները եղել են 1921 թ. օգոստոսի 1-ին՝ Գալուստ Գյուլբենկյանին, օգոստոսի 7-ին՝ Գրիգոր քահանա Մանդակունուն և Երվանդ քահանա Այվազյանին, սեպտեմբերի 9-ին՝ զորավար Անդրանիկին և 1919 թ. նրա ղեկավարած հայ կարոտյալների (սովյալների) օգնության Մանչեստրի հանձնաժողովի 7 անդամներին, Պողոս Նուբարին, Գաբրիել Նորատունկյանին[4]: Վերոհիշյալ և հետագա պարգևատրումների մասին կոնդակներում բացակայում է «Հայրապետական դրոշ» արտահայտությունը և ասվում է միայն «շքանշան Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորիչի»:

Անդրանիկ զորավարի ստացած շքանշանի վավերագրերի թվում այսօր էլ պահպանվում է այսպիսի մի ձեռագիր գրություն.

«Դիւանապետ Վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց

«7» հոկտեմբերի 1921 թ.

Ս. Էջմիածին

Հայրենասեր զորավար պ. Անդրանիկ, Մայր Աթոռի Լուսոյ խորանից ուղարկում եմ Ձեզ իմ օրհնութիւնը, յայտնելով միաժամանակ և իմ սրտագին շնորհաւորանքը Ս. Հայրապետական այն մեծ պատւի համար, որ Նորին Սրբութիւնը հաճեց պատւել Ձեզ Ս. Գրիգոր Լուսաւորիչի Ա աստիճանի ոսկեայ ականակուռ շքանշանով:

Մաղթում եմ, որ երկար տարիներ առողջութեամբ վայելէք:

Աղօթիւք և յարգանօք

Կորիւն եպիսկոպոս»[5]:

Երբ է շքանշանը հանձնվել զորավարին, հայտնի չէ, սակայն 1922 թ. մայիսի 15-ին, նրա պսակադրության լուսանկարներում այլ շքանշանների թվում երևում է նաև այդ շքանշանը:

Իսկ ե՞րբ է պատրաստվել շքանշանների առաջին խմբաքանակը:

Վերադառնալով արտասահմանից, Խորեն եպիսկոպոսը Վեհափառին ուղղված բազմաթիվ հայտարարություններում շքանշանի մասին ակնարկ չի անում, ինչպես նշեցինք, միայն բանավոր զեկուցում է տեսակների և աստիճանների մասին, իսկ Աբել վարդապետը 1920 թ. օգոստոսի 5-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսին գրած ընդարձակ նամակում, ներկայացնելով իր եռամյա գործունեությունը, շքանշանների մասին

[4] Ֆ. 57, ց. 2, գ. 606, թ. 1-2, գ. 521, թ. 176-179:

[5] Ֆ. 370, ց. 1, գ. 73, թ. 9:

դարձյալ ոչինչ չի ասում[6]:

1920 թ. հոկտեմբերին Տիրայր եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը նշանակվում է Ամերիկայի հայոց թեմի առաջնորդ և պատրաստվում է Եվրոպայով մեկնել ԱՄՆ: Նա կաթողիկոսական դիվանից ստանում է մի քանի նամակներ՝ ըստ պատկանելիության հանձնելու: Հոկտեմբերի 21-ի թվագրությամբ երկու, հոկտեմբերի 23-ի և նոյեմբերի 4-ի թվագրությամբ մեկական ծրարներ նախատեսված էին Աբել ծ. վարդապետի, իսկ հոկտեմբերի 21-ի թվագրությամբ մեկ ծրար՝ դոկտոր Փառնակ Ադամյանի համար[7]:

1921 թ. հուլիսի 16-ին Խորեն արքեպս. Մուրադբեկյանը հաղորդում է Գևորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ Աբել ծ. վարդապետից ստացել է մի պատահական նամակ, գրված ապրիլի 14-ին, որով վերջինս հայտնում է, որ Տիրայր եպիսկոպոսի ձեռքով ուղարկված կոնդակները և դիվանական գրությունները ստացել է 1921 թ. հունվար ամսվա սկզբին, երբ Տիրայր եպիսկոպոսը հասել է Փարիզ: Խորեն արքեպս. Մուրադբեկյանը հաղորդել է նաև, որ «Հայրապետական Ս. Գրիգոր Լուսաւորիչի շքանշանները պատրաստ են, դժբախտաբար Աբել ծ. Վարդապետ հնարաւորութիւն չունի ուղարկելու: Համաձայն Ձերդ Վեհափառութեան հրամանի առանձին հանդիսաւորութեամբ յանձնել է կապիտան Գրիսսին մի շքանշան, մի շքանշան ևս համաձայն Ձերդ Վեհափառութեան պատուգրի ուղարկուել է Տ. Տիրայր եպիսկոպոսի ձեռքով Ամերիկա:

Շքանշանները, ինչպես զեկուցել եմ, երկու տեսակի են՝ հոգևորականի և աշխարհականի, երկու տեսակներն էլ երկու աստիճան ունեն: Առաջին աստիճանը ոսկեայ է էմայլով ու քարերով, իսկ երկրորդ աստիճանը՝ արծաթեայ ոսկեջրած»[8]:

Ինչպես նշեցինք, 1921 թ. օգոստոսի 1-ին Հայրապետական կոնդակով Գալուստ Գյուլբենկյանը արժանանում է Ս. Գրիգոր Լուսավորիչի Ա աստիճանի շքանշանի[9]: Հաջորդ օրը կաթողիկոսական դիվանը գրություն է հղում Աբել ծ. վարդապետին, որտեղ նշված է. «Ուղարկելով Ձեզ Հայրապետական պատուական կոնդակը թ. 233 1 օգոստոսի, շնորհուած պ. Գալուստ Սարգսեան Գիւլբէնգեանին Ս. Գրիգոր Լուսաւորիչի Ա աստիճանի ոսկեայ ականակուռ շքանշանի հետ, յանձնարարւում է Ձերդ Բարձրապատուութեանը Ձեզ մոտ գնուած շքանշաններից մի հատ Ա կարգի ականառու պատուանշան Հայրապետական կոնդակի հետ յանձնել պ. Գիւլբէնկիանին»[10]:

1921 թ. օգոստոսի 13-ին կաթողիկոսական դիվանը Խորեն արքեպս. Մուրադբեկյանին ուղարկում է Աբել ծ. վարդապետի անունով թղթածրարը, որպեսզի այն Լոնդոն ուղարկվեր Ամերիկյան կոմիտեի միջոցով[11]:

1922 թ., մեկ տարի անց, Աբել ծ. վարդապետը հաղորդում է, որ «ապրիլի 30-ին ... կատարեցի Հայրապետական սրբատառ Կոնդակի և համապատասխան շքանշանի յանձնումն քաղաքիս Հայոց Ս. Սարգիս եկեղեցու հիմնադիր պարոն Գալուստ Գիւլ-

---

[6] Ֆ. 57, ց. 2, գ. 606, թ. 7-14:

[7] Նույն տեղում, գ. 519, թ. 100 շրջ. –102 շրջ.:

[8] Ֆ. 57, ց. 3, գ. 276, թ. 1 շրջերես :

[9] Նույն տեղում, ց. 2, գ. 521, թ. 165-166:

[10] Նույն տեղում, ց. 3, գ. 286, թ. 1:

[11] Նույն տեղում, գ. 276, թ. 4:

պէնկեանին իւր բնակարանի մէջ ընտանեկան սեղմ շրջանակի ներկայութեան»[12]:

Իսկ ե՞րբ է շքանշանների առաջին խմբաքանակը հասել Հայաստան: Ստույգ տեղեկություն չկա, հավանաբար 1921 թ. կեսերին: 1921 թ. օգոստոսի 7-ին Գրիգոր քահանա Մանդակունուն Գևորգ Ե Կաթողիկոսի ձեռքով գրված վկայականում խոսվում է առկա շքանշանի մասին. «Այս վկայականով ս. օծմանս տարեդարձի օրը շնորհում եմ Քեզ երկրորդ աստիճանի ոսկեայ շքանշան Սրբոյն Գրիգոր Լուսաւորիչի Հայաստան աշխարհի և այս շքանշանը կարող է կրել և քո սուրբ ամուսնութիւնիցդ ծնուած տղայ ժառանգը Քեզանից յետոյ»[13]:

Այդ մասին է վկայում նաև հետևյալը: Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը 1922 թ. հունվարի 10-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսին հայտնում է, որ նրա «բանաւոր պատուգրի համաձայն ամսոյս 8-ին բաւական հիւրերի (որոնց թւում Պոլսից եկածները) ներկայութեամբ հանդիսաւորապես Հարոլդ Բեքստոնի կրծքին ամրացրի Ս. Գրիգոր Լուսաւորիչի Բ կարգի նշանը»[14]:

Հաջորդ օրը այս Հարոլդ Բեքստոնը, որը Լոնդոնում գործող «Հայ փախստականների հիմնադրամի» քարտուղարն էր և Հայաստան էր ժամանել հայրենադարձների առաջին քարավանի հետ, ստացած շքանշանի համար նամակով իր խորին շնորհակալությունն է հայտնում Ամենայն Հայոց Կաթողիկոսին[15]:

1922 թ. հունիսի 2-ին Աբել ծ. վարդապետ Նազարյանը հաղորդում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ «մայիսի 1-ին Սրբազան պատրիարքին ուղարկեցի Հայրապետական շքանշանները մի ապահովագրեալ ծրարով, Ձերդ Վեհափառութեան հասցնելու համար...

Մայիսի 1-ին Սրբազան պատրիարքին ուղարկած շքանշանները հետևյալներն են՝

33 հատ աշխարհական՝ արծաթ, Գ աստիճան

19 հատ հոգեւորական՝ արծաթ, Գ աստիճան

10 հատ աշխարհական՝ ոսկի, Բ աստիճան

19 հատ հոգեւորական՝ ոսկի, Բ աստիճան

4 հատ աշխարհական՝ ոսկի, քարերով, Ա աստիճան

5 հատ հոգեւորական՝ ոսկի, քարերով, Ա աստիճան

Սրանցից զատ ինձ մօտ Բ եւ Գ աստիճանի դեռ մի քանի հատ մնում են, որոնք նոյնպէս կ'ուղարկեմ յարմար առթիւ»[16]:

Զավեն Պատրիարքը, հետագայում, 1926 թ. մայիսի 26-ին հայտնում է.

«Այս շքանշանները Կ. Պոլիս հասած օրերուն միստր Վիքրի, Ամերիկեան նպաստամատոյցին ընդհ. Քարտուղարը ճամբորդ էր դեպի Հայաստան, և զանոնք անոր յանձնեցի, որ տաներ և էջմիածին յանձներ»[17]: Այս Չարլզ Վիքրը 1926 թվականին ևս հաստատում է, որ շքանշանները հանձնել է «Նորին Վեհափառութեան ներկայա-

[12] Նույն տեղում, գ. 286, թ. 7:

[13] Նույն տեղում, ց. 2, գ. 641, թ. 1:

[14] Ֆ. 57, ց. 3, գ. 366, թ. 2:

[15] Նույն տեղում, թ. 1:

[16] Նույն տեղում, գ. 286, թ. 6:

[17] Ֆ. 409, ց. 1, գ. 878, թ. 5:

ցուցչին», սակայն որի անունը չի հիշում[18]:

Որ սրանք շքանշանների վերջին, երկրորդ խմբաքանակն էր, բացառությամբ այն մի քանի հատի, որ մնացել էին Աբել ծ. վարդապետի մոտ, հայտնում է նաև վերջինս:

Նա Կ. Պոլիս այցելության օրերին՝ 1922 թ. օգոստոսի 4-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսին գրած նամակում հույս է հայտնում, որ «վերջին գրութիւններս հասած են Ձերդ Վսեմափառութեան, ինչպէս և շքանշանների մնացորդները, զորս ուղարկած եմ Լոնդոնից ս. պատրիարքի միջոցով»[19]:

Շքանշանները, իրոք, Էջմիածին հասել էին, սակայն առանց Ա աստիճանի 9 հատի, քանզի ինչպես 1927 թ. փետրվարի 8-ին Գերագույն Հոգևոր Խորհրդից հայտնում են Կոստանդնուպոլիսի Հայոց պատրիարքի տեղապահ Գևորգ արքեպս. Արսլանյանին, «ստացված ծրարի մեջ ոչ մի հատ չկար Ա կարգի շքանշաններ»[20]:

Տարօրինակը այն է, որ ԳՀԽ ոչինչ չի ձեռնարկել Ա կարգի շքանշանները հայտնաբերելու ուղղությամբ, հավանաբար դրանք հասել են այլ ճանապարհով:

Անհրաժեշտ է անդրադառնալ մի հարցի ևս: Վերոհիշյալ ցուցակում խոսք է գնում Գ աստիճանի շքանշանների մասին: Ի՞նչ էին դրանք, քանզի փաստաթղթերում ընդամենը մեկ անգամ, 1938 թ.՝ հիշատակվում է Գ (երրորդ) աստիճանի շքանշանի մասին, առավել ևս, որ Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանը, ինչպես նշել ենք վերևում, 1921 թ. հայտնում է երկու՝ Ա և Բ աստիճանների շքանշանների մասին: Ենթադրում ենք, որ Բ աստիճանի շքանշանները, որոնք արծաթյա էին, մի մասը ոսկեջրած էր, մյուսը՝ ոչ: Այս վերջինները Աբել ծ. վարդապետը համարել է Գ աստիճանի:

1921 թ. դեկտեմբերին շքանշանով պարգևատրվեցին ամերիկայի նպաստամատույց կոմիտեի (Ամերկոմի) գլխավոր տնօրեն կապիտան Եարրոն («Ա» աստիճան) և նրա օգնական տիկին Վ. Հարիսը («Ա» աստիճան)[21], 1922 թ. հունվարին Քենթրբերիի արքեպիսկոպոս դոկտոր Ռանդոլ Դավիթսոնը («Ա» աստիճան)[22], 1925 թ. դեկտեմբերի 15-ին՝ եգիպտահայ մեծահարուստ բարերարներ Կարապետ Մելքոնյանը և Արմենակ Բեյ Կամսարականը («Ա» աստիճան)[23]:

Այժմ անրանդառնանք «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մի քանի հետաքրքիր դեպքերի (պատմությունների):

1923 թ. ապրիլի 12-ին Ամերիկայի հայոց թեմի առաջնորդ Տիրայր եպիսկոպոսը հայտարարությամբ դիմում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ Արշակ ու Միհրան Գարակոզյաններին և Պատրիկ ու Հարություն Գյուլբենկյաններին իրենց բարեգործությունների համար պարգևատրելու Ա կարգի շքանշաններով[24]: Երևան է հասնում վեց ամիս անց, հոկտեմբերի 12-ին, իսկ արդեն հոկտեմբերի 26-ին Կաթողիկոսի կոնդակով նրանք արժանանում են Բ աստիճանի շքանշանների: Մի քանի օրից, հոկտեմբերի 29-ին, կաթողիկոսական դիվանը Գարակոզյան և Գյուլբենկյան եղբայրներին հանձ-

[18] Նույն տեղում, թ. 15:

[19] Ֆ. 57, ց. 3, գ. 462, թ. 1:

[20] Ֆ. 409, ց. 1, գ. 878, թ. 13:

[21] Ֆ. 57, ց. 2, գ. 521, թ. 198, ց. 3, գ. 505, թ. 5:

[22] Նույն տեղում, թ. 201, ց. 3, գ. 286, թ. 7-8:

[23] Ֆ. 409, ց. 1, գ. 878, թ. 4, 9-10:

[24] Ֆ. 57, ց. 3, գ. 558, թ. 1:

նելու համար Տիրայր եպիսկոպոսին է ուղարկում երկու կոնդակ և «չորս հատ շքանշան Ս. Գրիգոր Լուսավորիչի Բ աստիճանի»[25]:

Հայրապետական կոնդակները Ամերիկա են հասնում 1924 թ. մարտի 27-ին առանց շքանշանների: Այդ մասին Տիրայր եպիսկոպոսը նույն օրը նամակ է հղում Էջմիածին: Միաժամանակ զարմանք է հայտնում, որ ինքը խնդրել էր, որ «շնորհուի Ա կարգի շքանշան, այն ինչ ըստ կոնդակի շնորհուած է Բ կարգի», որին ի պատասխան ասվում է. «Այդ շնորհը խնդրած էի այն հիմամբ, որ Ամերիկայի մէջ միակ անձը, որն արժանացած է այդ շնորհին (Ա կարգի), է Տօքդ. Փառնակ Ա. Ադամեանը եւ նկատի առնելով, որ Գարակէօզեան եւ Գիւլպէնկեան եղբայրները, իրենց հասարակական դիրքով, ազդեցութեամբ եւ արժանիքներով ոչնչով պակաս չեն, ինչպէս իրենց բարեգործական ու ազգային պիտանաւորութեամբ շատ ու շատ վեր են ամէնքից, ապա Բ կարգի նշանը փոխանակ մտքեր շինելու, պառճառ պիտի լինի աւելի եւս վրդովելու, պիտի խնդրէի ամենայն յարգանօք Ն. Սրբութեան առանձին հաճութիւնը շնորհել նոցա եւս Ա կարգի շքանշան:

Եթէ Բ կարգի շքանշան պատրաստել տրուի, ապա հնարաւոր չէ, քանի որ օրինակը չունեինք, այն ինչ Ա կարգին պատրաստել տալը հնարաւոր է, ըստ օրինակի Տօքդ. Ադամեանի:

Կը խնդրէի Փութացնել կամ նոր Կոնդակների առաքումը և կամ արտօնութիւն Բ կարգին փոխելու Ա-ով: Ցանկալի է ստանալ բուն Կոնդակներ, քան Փոփոխութիւն մտցնել Հայրապետական Կոնդակների մէջ»[26]:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը 1924 թ. հունիսի 23-ին, լսելով Տիրայր եպիսկոպոսի միջնորդությունը, որոշում է «ի նկատի ունենալով առաջնորդի միջնորդութիւնը, տալ Գարակէօզեանին ու Գիւլպէնկեանին (այսպես է տեքստում - Ա.Վ.) Ա կարգի շքանշան կոնդակով, առաջարկելով ստացած կոնդակները վերադարձնել»[27]:

1924 թ. օգոստոսի 14-ին Տիրայր եպիսկոպոսը հեռավոր Ամերիկայից հաղորդում է.

«Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհրդին

Ստացուած Գերագոյն Հոգեւոր Խորհրդիդ Դիւանի տարւոյս Յուլիս 7. թիւ 448 գրութիւնը, որի հետ նաև Վեհ. Հայրապետի, յանուն եղբարք Արշակ եւ Միհրան Գարակէօզեանի տարւոյս Յունիս 30 թիւ 433 եւ եղբարք Պատրիկ եւ Յարութիւն Կիւլպէնկեանների, Յունիս 30, թիւ 434 կոնդակները:

Գրութեանս հետ ներփակ վերադարձնում ենք Վեհ. Հայրապետի յանուն նոցա ուղարկած կոնդակները, անցեալ 1923 թ. հոկտ. 26, թիւ 316 (Գարակէօզեան)»[28]:

Անցնում է ութը տարի, այդ ընթացքում մահանում է Պատրիկ Գյուլբենկյանը:

1932 թ. նոյեմբերի 28-ին, Խորեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը օրհնագրեր և շքանշաններ է ուղարկում Միհրան և Արշակ Գարակոզյաններին, Հարություն Գյուլպեկյանին: Սակայն անհասկանալի պատճառով Ամերիկա են հասնում Ա. Գարա-

[25] Նույն տեղում, թ. 5:

[26] Ֆ. 409, ց. 1, գ. 3395, թ. 12:

[27] Նույն տեղում, թ. 13:

[28] Նույն տեղում, թ. 16:

կեոզյանի և Հ. Գյուլպենկյանի օրհնության գրերը և շքանշանները, որից հետո Ամերիկայի հայոց թեմի առաջնորդ Ղևոնդ արքեպս. Դուրյանը 1933 թ. փետրվարի 14-ին հայտնում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ չի հանձնել պատվանշանները, քանզի դրանով վիշտ կարող է պատճառել Միհրան Գարակեոզյանին «զանց առնուած ըլլալուն համար»: Ապա հայտնում է, որ եթե «ղրկուած օրհնութեան գիրերուն նման օրհնութեան գիր մըն ալ Միհրանի համար ղրկէք, հոս ես կը ջանամ շինել տալ պատուանշանը»[29]:

Հավանաբար թյուրիմացությունը պարզելուց հետո, Ղևոնդ արքեպս. Դուրյանը 1933 թ. օգոստոսի 28-ին հայտնում է, որ «Ս. Գրիգոր Լուսաւորիչի Պատուանշանը նոր կարելի եղաւ շինել տալ: Շատ սիրուն, յար եւ նման Ձեր ղրկածներուն»[30]: Նա 1933 թ. հոկտեմբերի 10-ին Խորեն Ա կաթողիկոսին գրում է, որ «Ձեր Վեհափառութիւնը Յովսէփ եպիս. Կարապետեանի ձեռամբ ղրկած էր Ա կարգի Ս. Գրիգոր Լուսաւորչի ականակուռ պատուանշաններ յանձնելու համար Ազգիս բարերար Տիարց Արշակ եւ Միհրան Գարակէօզեաններու եւ Տիար Յարութիւն Կիւլպէնկեանի»: Հոկտեմբերի 9-ին վերջապես «անձամբ պատուանշանները կախեցի յիշեալներու իւրաքանչիւրին կուրծքը եւ այս առթիւ յայտնեցի Ձեր Հայրապետական օրհնութիւններն եւ բարեմաղթութիւնները»[31]:

1935 թ. սկզբին Նյու Յորքի Ս. Խաչ եկեղեցու հովիվ Հովսեփ եպս. Կարապետյանը, այցելելով ամերիկահայ բարերար Հայկ Գավուքճյանին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունից իր մոտ եղած շքանշաններից մեկը նվիրում է նրան: Հ. Գավուքճյանը, հանդիպելով Ամերիկայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Մամբրե ծ. վարդապետ Գալֆայանին, հարցնում է, թե արդյոք առաջնորդարանը ստացել է այդ պատվանշանի վավերականությունը հաստատող կոնդակ[32]:

1935 թ. փետրվարի 21-ին Ամերիկայի հայոց թեմի առաջնորդական տեղապահը, այս մասին հաղորդելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին, խնդրում է, «որպէսզի շնորհ ընէիք պատուանշանի կոնդակը»[33]:

Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Գևորգ արքեպս. Չորեքչյանը 1935 թ. ապրիլի 12-ին հայտնում է Ամերիկայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Մամբրե ծ. վրդ. Գալֆայանին, որ «Ս. Գրիգոր Լուսավորչի պատուանշանների արժանանում են ազգային բարձրագոյն բարերարները, ինչպէս են – Պողոս Նուբար փաշա, Տիար Գալուստ Կիւլպենկեան, Մելքոնեան եղբայրք, Արշակ եւ Միհրան Կարակեոզեան եղբարք, Տիար Յարութիւն Կիւլպենկեան եւ նմանները, կամ նոքա, որոնք զոնէ եկեղեցի, դպրոց եւ այլ մեծարժէք բարենպատակ շէնքեր են կառուցում եւ կամ դրամական զգալի նուէրներ են տրամադրում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին Ազգային եւ Եկեղեցական նպատակների յատկացնելու համար եւ կամ հասարակական լայն գործունէութիւն ունեցող ազգային գործիչները:

Նորին Սրբութիւնը տրամադրութիւն ունի յարգելու Ձեր միջնորդութիւնը, սակայն

[29] Նույն տեղում, թ. 4:

[30] Ֆ. 409, ց. 1, գ. 3466, թ. 8:

[31] Ֆ. 09, ց. 1, գ. 3466, թ. 8:

[32] Նույն տեղում, գ. 3523, թ. 1:

[33] Նույն տեղում:

ցանկալի է, որ Դուք հաղորդէք, թէ Տիար Գավուքճեանը որպիսի ձեռնարկների հեղինակ է հանդիսացել, կամ որպիսի գործունէութիւն է ունեցել, որ ըստ այնմ էլ համապատասխան վերաբերմունք հետեւի»[34]:

Արժե նշել, որ գրության մեջ մի թյուրիմացություն կա. եթե Կարապետ Մելքոնյանը 1925 թ. արժանացել է շքանշանի, ապա Գրիգոր Մելքոնյանը մահացել է 1920 թ. փետրվարին և շքանշանի չի արժանացել:

1935 թ. մայիսի 29-ին Մամբրե եպիսկոպոս Գալֆայանը հայտնում է Ս. Էջմիածին, որ Հ. Գավուքճյանը առաքինի, հայրենասեր ազգային է և վերջին տարիներին տասը հազար դոլար է նվիրել Կ.Պոլսի ազգային հաստատությունների օգնության ընկերությանը[35]:

Սրան հետևում է կաթողիկոսի հուլիսի 24-ի կոնդակը Հ. Գավուքճյանին Ս. Գրիգոր Լուսավորիչի «Բ» աստիճանի շքանշան շնորհելու մասին[36]:

Խորեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը 1935 թ. որոշում է մասնակի փոփոխություն կատարել շքանշանի տեսքում: Նա 1935 թ. մարտի 24-ին հայտնելով Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Հուսիկ արքեպիսկոպոսին, որ ընդունել է նրա առաջարկությունը և պարգևատրել է Ռումինիայի աշխատանքի նախարար, հայազգի Գրիգոր Թրանքու Եաշին Ս. Գրիգոր Լուսավորիչի Ա աստիճանի շքանշանով, հանձնարարում է պատրաստել տալ շքանշանը կաթողիկոսական նվիրակ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի մոտ եղած օրինակի համաձայն, մի փոփոխությամբ միայն՝ «Ե տառի փոխարեն դնել տալով Լ»[37]:

Իսկ ինչքան գումար էր անհրաժեշտ շքանշան պատրաստելու համար: Այս հարցում մեզ օգնում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի նվիրակ և լիազոր ներկայացուցիչ Գարեգին արքեպս. Հովսեփյանի մի նամակը: Նա 1937 թ. դեկտեմբերի 10-ին Ամերիկայից հաղորդում է Խորեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ «քառասունը [դոլլար] ծախսել եմ Ձեր Վեհափառութեան հրամանով իրեն [Լևոն Բաբայանին] շնորհած առաջին կարգի շքանշանի պատրաստութեան համար»: Նամակի վերջում նաև հայտնում է, որ «35 դոլլար էլ այժմ առաջին կարգի մի շքանշան եմ պատրաստել տուել, որ նպատակ ունիմ մի բարերարի շնորհել Ձեր Վեհափառութեան անունով»[38]:

1936 թ. հոկտեմբերի 10-ին Խորեն Ա Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակով Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին աստիճանի ականակուռ շքանշան է շնորհվել Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Գուշակյանին[39]:

1937 թ. ընթացքում «Ա» աստիճանի շքանշանի արժանացավ կանադահայ մեծահարուստ բարերար Լևոն Բաբայանը, «Գ» աստիճանի՝ Բոստոնի Տ. Հարություն ավագ քահանան[40], «Բ» աստիճանի՝ բանասեր Ստեփան Մալխասյանը[41]:

---

[34] Նույն տեղում, թ. 2:

[35] Ֆ. 409, ց. 1, գ. 3525, թ. 1:

[36] Նույն տեղում, թ. 2 (Որով հապավումը դառնում է Գ Լ՝ Գրիգոր Լուսավորիչ):

[37] Նույն տեղում, գ. 5283, թ. 3:

[38] Նույն տեղում, գ. 3556, թ. 2:

[39] Նույն տեղում, գ. 220, թ. 26:

[40] Նույն տեղում , գ. 236, թ. 6:

[41] Նույն տեղում, գ. 229,թ. 1:

1938-1945 թթ. շքանշանով պարգևատրության մասին որևէ փաստ հայտնի չէ և չէր էլ կարող լինել, քանի որ շքանշանը շնորհվում է հայրապետական կոնդակով, իսկ այդ տարիներին կար միայն կաթողիկոսական տեղապահ, քանի որ խեղդամահ արված Խորեն Ա կաթողիկոսից հետո նոր հայրապետ չէր ընտրվել: 1945-1947 թթ. շքանշանով պարգևատրվեցին Ամերիկյան բանակի հայազգի զինվորականներ Հրանտ Չերազյանը, Ռեյ Մելիքյանը, Վիկտոր Մաղաքյանը[42], իրանահայ մեծահարուստ բարերարներ Ռոման Եսայանը, Հովհաննես Պետրոսյանը և Սիմոն Մանուչարյանը[43], լիբանանահայ մեծահարուստ Մկրտիչ Մսրլյանը[44], Լոնդոնի Քենթրբերիի տաճարի վանահայր Հուլեթ Ջոնսոնը, Լոնդոնի էջմիածնական հիմնադրամի կենտրոնական հանձնաժողովի նախագահ Կարապետ Դիլբարը և հանձնաժողովի գործադիր կոմիտեի նախագահ Հովհաննես Մելքումը[45], սիրիահայ մեծահարուստ Բագրատ Բաքալյանը[46], 1953 թ.՝ լիբանանահայ մեծահարուստ Երվանդ Հյուսիսյանը[47]:

1947 թ. ԽՍՀՄ Նախարարների խորհրդին առընթեր պաշտանմունքների խորհրդում քննարկելով ՀԽՍՀ կառավարությանն առընթեր Հայոց Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Հովհաննիսյանի հաշվետվությունը, ուշադրություն են դարձնում «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանի մասին տեղեկության վրա:

Եվ ահա 1947 թ. սեպտեմբերի 6-ին Մոսկվայից պահանջում են տեղեկություններ ուղարկել՝ երբ է հիմնվել շքանշանը, ինչպիսին է նրա կանոնադրությունը, ով է պարգևատրվում և այլն, որպեսզի ճշգրտվի շքանշանի օրինականությունը[48]:

Եվ քանի որ համապատասխան տեղեկությունները քիչ էին, պատասխանը ուշացվում է: Նույն թվականի դեկտեմբերի 13-ին կենտրոնը նորից է հիշեցնում իրենց պահանջի մասին[49], իսկ Հայոց Եկեղեցու գործերի խորհուրդը նորից դիմում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ արագացնել պատասխանի ներկայացումը[50]:

1948 թ. հունվարի 19-ին Գևորգ Զ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գրում է ԽՍՀՄ Նախարարների խորհրդին առընթեր կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահ Իվան Պոլյանսկուն, որտեղ հայտնվում է, որ շքանշանի մասին էջմիածնի արխիվում ոչ մի գործ չկա, սակայն շքանշանի վրա եղած թվականից և «Գ» ու «Ե» անվանատառերից երևում է, որ այն սահմանվել է 1911 թ., Գևորգ Ե Սուրենյան Կաթողիկոսի օրոք: Այնուհետև հայտնվում է, որ էջմիածնում եղած շքանշաններից երևում է, որ դրանք արծաթից են և ոսկեջրած: Շքանշանը ըստ ձևի երկու տեսակի է՝ մեկը հոգևորականներին տրվելիք, մյուսը՝ աշխարհականներին: Ապա տրվում է շքանշանների նկարագրությունը և որ ի տարբերություն երկրորդ կարգի, առաջին կարգը՝ մասնավորապես թագը, զարդարված է մանր ադամանդիկներով:

---

[42] Նույն տեղում, գ. 563, թ. 6:
[43] Նույն տեղում, գ. 4350, թ .6-8:
[44] Նույն տեղում, գ. 5010, թ. 4-5:
[45] Նույն տեղում, գ. 348, թ. 3:
[46] Նույն տեղում, գ. 370, թ. 1:
[47] Նույն տեղում, գ. 4494, թ. 1-5:
[48] Ֆ. 823, ց. 1, գ. 31, թ. 12:
[49] Նույն տեղում, թ. 18:
[50] Նույն տեղում, գ. 26, թ. 25:

Տեղեկություն է տրվում նաև, թե ինչի համար են պարգևատրվել, որի մասին արդեն մենք խոսել ենք վերևում։ Բնականաբար այն մտայնությամբ, որ շքանշանը հիմնվել է 1911 թ., նշվում է, որ մինչև խորհրդային իշխանության հաստատվելը այն տրվել է թե՛ Ռուսաստանում և թե՛ արտասահմանում, իսկ խորհրդային իշխանության հաստատումից հետո՝ միայն արտասահմանում, որը, բնականաբար, իրականությանը չէր համապատասխանում և անտեղյակության արդյունք էր։ Հայտնվում է նաև մտադրություն երկու տառերը՝ «Գ» և «Ե», փոխելու «ԳԼ»-ի, որ կնշանակի շքանշանի անունը։

Ներկայացնելով շքանշանի այս նկարագրումը և լուսանկարները, վերջում խնդրվում է շքանշանը ճանաչել պաշտոնապես և թույլատրել նրա պարգևաբաշխումը խորհրդային հանրապետություններում[51]։

Հիշյալ նամակը և երկու լուսանկարները ուղարկվում են ՀԽՍՀ Նախարարների խորհրդին կից Հայոց Եկեղեցու գործերի խորհրդին՝ այն Մոսկվա ուղարկելու համար[52]։

Հաջորդ օրը նամակը թարգմանվում է ռուսերեն և լուսանկարների հետ ուղարկվում ըստ պատկանելության[53]։

Մեկ ամիս անց Հայոց Եկեղեցու գործերի խորհրդում ստացվում է Ի. Պոլյանսկու պատասխան գրությունը։ Նախաբանում հայտնելով այն մասին, որ կաթողիկոսը չի կարողացել ներկայացնել շքանշանի սահմանման մասին կանոնադրությունը, այդ պատճառով չունենալով հնարավորություն այդ հարցը քննարկելու, հանձնարարվում է միջոցներ ձեռնարկել արխիվում կանոնադրությունը փնտրելու, միաժամանակ տեղեկացվում է, որ որոնումներ են իրականացվում նաև Լենինգրադում՝ Ռուսաստանի Կայսրության նախկին ներքին գործերի նախարարության արխիվում։

Միաժամանակ պահանջվում է հայտնել՝

1. Քանի մարդ է պարգևատրվել մինչև 1917 թ.։

2. Քանի մարդ է պարգևատրվել խորհրդային իշխանության տարիներին արտասահմանում, ինչպես նաև ԽՍՀՄ-ում։

3. Ներկայումս կաթողիկոսի տրամադրության տակ քանի պատրաստի շքանշան կա 1-ին և 2-րդ աստիճանի։

Վերջում տեղեկացվում է, որ հիշյալ տեղեկությունների և շքանշանի կանոնադրության առկայության դեպքում հնարավոր կլինի քննարկել և հարցը ներկայացնել Միութենական կառավարություն։

Հարցման պատասխանը չկարողացանք արխիվում հայտնաբերել, սակայն հարցման վրա կան մատիտով նշումներ, որից պարզ է դառնում, որ տեղեկություններ չկան, թե քանի մարդ է պարգևատրվել, ուստի և հարցումներ են ուղարկվել բոլոր թեմերը, չկա ոչ մի շքանշան կաթողիկոսի տրամադրության տակ, որը զարմանալի է թվում, քանզի մեկ ամիս առաջ շքանշանների նկարագրությունները և լուսանկարները արվել էին կաթողիկոսի տրամադրության տակ եղած օրինակներից։

---

[51] Ֆ. 409, ց. 1, գ. 777, թ. 7։

[52] Նույն տեղում, թ. 8։

[53] Ֆ. 823, ց. 1, գ. 40, թ. 2։

Արխիվային փաստաթղթերում վերջին հիշատակումը շքանշանի մասին վերաբերվում է 1955 թվականին։ Նորընտիր Վազգեն Ա Կաթողիկոսը նույն թվականին դիմում է Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի առաջնորդ Մամբրե արքեպս. Գալֆայանին, հայտնելով, որ բավարարել է նրա խնդրանքը և «ամերիկահայ մի քանի պատվարժան ազգայինների»՝ Մովսես (Պորթ) Մովսիսյանին, Հերի Թաթոսյանին, Պողոս (Պոլ) Ղուկասյանին և Տիգրան Ասմարյանին շնորհել է Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ադամանադակուռ շքանշան։ Միաժամանակ գրում է. «Շքանշաններից 200 օրինակ հաճեցեք ուղարկել Մայր Աթոռ անմիջապես, երբ պատրաստ լինեն։ Շքանշանները պատրաստելիս պիտի նկատի առնվի, որ կենտրոնի սկզբնատառերը հարկ է, որ լինեն Վ-Ա (Վազգեն Ա)»[54]։

Երկաստիճան «Ս.Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը շնորհվել է մինչև 1961 թ., որից հետո Վազգեն Ա Կաթողիկոսի նախաձեռնությամբ սահմանվեց շքանշանի անաստիճան նորացված տարբերակը։

[54] Ֆ. 823, ց. 1, գ. 87, թ. 5։

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ՀՈԳԵՎՈՐԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

Լույս է տեսել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան, Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի (Ներսես Վանական) բանաստեղծական նոր ժողովածուն, որն ընդգրկում է Սրբազանի 1986-2002 թթ. գրված բանաստեղծությունները: Հեղինակն այս հատորը նվիրել է ազգային բարերար Հակոբ Գաբրիելյանի հիշատակին:

Բանաստեղծական այս ժողովածուն, լինելով Ներսես Վանականի ստեղծագործական ընթացքի մի նոր աստիճանը, նախորդների նման թե՛ շարունակությունն է հայ հոգևոր բանաստեղծության ավանդների և թե՛ արձագանքը արդի աշխարհի հիմնախնդիրներին և 1980-ական թթ. կեսերից հայությանն ալեկոծող Արցախյան շարժման և մեր նորոգ պետականության՝ արտահայտելով հայության այս վերջին երկու տասնամյակների հավաքական հույսերն ու ազգային սպասումները և ակնկալիքները: Ինչպես գրքի առաջաբանում գրում է Սրբազանի կրտսեր հոգևոր եղբայր և գրչակից ընկեր Գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանը, «Վանական Սրբազանը, իր թիկունքին ունենալով նախնիների հազարամյա պոեզիայի ավանդույթները, չի երկնչել նրանց պատկառազդու և ճնշող ներկայությունից, այլ, յուրացնելով այդ ավանդույթները, ստեղծել է իր հոգևոր անդաստանը, բանաստեղծական մի աշխարհ, որը նման չէ ուրիշներին»:

Բանաստեղծը կյանքին այլ հայացքով է նայում, սովորականի մեջ տեսնում անսովորը, անսովորն էլ իր հերթին մի նոր իմաստավորման է ենթարկում, և եթե բանաստեղծը հոգևորական է, ապա այս ամենին գումարվում է նաև հոգևոր հայացքը, որով «Աղոթք» բանաստեղծությունում խաչքարը արվեստի գործ լինելուց առաջ քարեղեն մի աղոթք է դառնում: Հայ ժողովրդի համար խաչքարը սրբերի նման բարեխոս է և ապավեն: Խաչքարի՝ որպես բարեխոսի ու ապավենի այս ըմբռնումը Ներսես Սրբազանը արտահայտել է հետևյալ տողերով.

Որքա՞ն համբույր կա կնքված քո ճակատին,
Խաչքար խոհուն, քարե աղոթք ու սրբություն:
Որքա՞ն աղերս ու պաղատանք կա թաքնված
Քո խորշերում, խաչքար հույսի՝ սիրով ցողված[1]:

Այս գրքի՝ հոգևոր թեմաներով գրված բանաստեղծություններում իշխում են սերն ու խաղաղությունը:

«Առավոտ լուսո» բանաստեղծության մեջ հեղինակը Շնորհալի շարականագիր Հայրապետի հետևողությամբ սեր և խաղաղություն է հայցում աշխարհի, մարդկության և մեր երկրի համար.

Խաղաղության լույս թող ծագի
Մեր աշխարհում, մեր սրտերում,
Առատորեն թող բաշխվի
Աստվածային սեր, օրհնություն (էջ 26):

Միջնադարյան մեկնություններում մարդը համեմատվում է մոմի հետ և ասվում է, որ մարմինը բուն մոմն է, հոգին՝ պատրույգը, և բարի գործերը՝ այն լույսը, որով վառվում է մոմը: Այս

[1] **Ներսես Վանական**, Բանաստեղծություններ, Երևան, 2006 թ., էջ 7 (այսուհետև այս գրքից կատարված մեջբերումների էջերը կնշենք մեջբերման վերջում):

ըմբռնման նորօրյա գրական արտահայտությունն են «Մարդ» բանաստեղծության հետևյալ տողերը.

Կավից շինված ճրագ ես, ո՞վ մարդ,
Հավատն է քո պատրույգին՝ ձեթ.
Քեզ շնորհված այս Սուրբ Հոգին
Կայծ է անմար ճրագի շրթին (էջ 239):

Հոգևոր թեմատիկ առումով ներքին մի ամբողջություն են կազմում Հիսուսին և Տերունական տոներին նվիրված բանաստեղծությունները:

«Ո՞վ» բանաստեղծության մեջ թեև Հիսուսի անունը չի տրվում, սակայն բանաստեղծությունը տալիս է վերնագրի պատասխանը: Բանաստեղծության առաջին իսկ տան տողերով ընթերցողին է ներկայանում Փրկիչը.

Տե՛ս, ո՛վ է գալիս
Հանդարտ քայլերով,
Անձայն, անշշուկ
Հոգուդ մեջ իջնում (էջ 267):

«Պատարագվող գառն Աստուծո» բանաստեղծությունն էլ ներկայացնում է հանուն մարդկության փրկության պատարագված Վարդապետին.

Պատարագվող գառն Աստուծո,
Վասն մարդկան ամենայնի՝
Կենդանյաց և հանգուցելոց,
Ընդ ամենայն ժամանակի (էջ 273):

Փրկչական տնօրինությունների անդրադարձն են «Ավագ Հինգշաբթի», «Ծաղկազարդ», «Հարություն» և մի շարք այլ բանաստեղծությունները, որոնցում տրվում է տվյալ Տերունական դրվագի բանաստեղծական մեկնությունը: Այսպես, միջնադարյան մեկնություններում ասվում է, որ Երուսաղեմ մտնող Փրկչին ընդառաջ մարդիկ Տիրոջ առջև էին նետում իրենց հանդերձները, որպեսզի Փրկիչը, անցնելով դրանց վրայով, ջնջի նրանց մեղքերը: Համանման ձևով Ներսես Սրբազանը «Ծաղկազարդ» բանաստեղծության մեջ գրում է.

Ծաղկազարդի փառքի ճամփիդ փառավոր
Մեղքի ձորձերս ոտքերիդ տակ տարածեմ
Եվ Գողգոթա ճանապարհիդ ահավոր,
Շնորհաբաշխ ճամփիդ ես էլ թող կանգնեմ:

«Հարություն» բանաստեղծությունում էլ մահվանը հարությամբ հաղթելու և այդպիսով մարդկությանը կյանք պարգևելու խորհուրդը արտահայտվում է հետևյալ տողերով.

Այսօր Դու մահին մահվամբ հաղթեցիր,
Գերեզմանից զերթ ծաղիկ ծաղկեցիր,
Խավարի, չարի ահը ցրեցիր
Եվ Քո հարությամբ նոր կյանք մեզ տվիր (էջ 219):

Հռոմից հեռացվող Պետրոս առաքյալի եկեղեցական ավանդությամբ վկայված «Յո՞ երթաս» խոսքերը՝ ուղղված Հիսուսին, և Տիրոջ պատասխանը, թե քո փոխարեն Ես եմ գնում վերստին խաչվելու, գրական ամենատարբեր անդրադարձումներն են ունեցել համաշխարհային արվեստում և գրականության մեջ:

Այս թեման Ներսես Սրբազանը ներկայացրել է սյուժետային մեկ գիծ կազմող և իրար հաջորդող երեք բանաստեղծություններով, որոնցից յուրաքանչյուրում Պետրոս-Հիսուս երկխոսությունը գալիս-հասնում է մերօրյա պատմությանը՝ այն վերածելով հայ մարդ-Փրկիչ երկխոսության: Առաջինը՝ «Յո՞ երթաս», սկսվում է առաքյալի՝ Տիրոջն ուղղված զարմացական հարցումով.

Յո՞ երթաս, Տէր, դեպի ո՞ւր,
Չէ՞ որ այնտեղ կրակ է,
Չէ՞ որ այնտեղ ավեր է… (էջ 244):

Բանաստեղծության հաջորդող տողերում հալածանքների և բռնությունների նկարագրությունը, սակայն, Հռոմի փոխարեն մեր առջև ուրվագծում է Արցախյան շարժման և հաջորդող տարիների Հայաստանը՝ շրջափակմամբ և պատերազմական բռնություններով, որով և Հռոմը թողնող առաքյալի փոխարեն հայրենիքից հեռացող հայ մարդն է արդեն զարմացական իր հարցումը ուղղում Տիրոջը: Երկրորդ՝ «Քո տեղակ ես եմ գնում» բանաստեղծության մեջ Տիրոջ պատասխանը ևս զարգացման նույն ընթացքով առաքյալից աստիճանաբար ուղղվում է հայ մարդուն.

Դատաստանից մարդկային
Վախեցել եք, թուլացել,
Ձեր հավատն եք մոռացել:
Ձեր տեղակ Ես եմ գնում,
Որ տեր լինեմ ձեր հողին,
Մշակույթին, պատմության
Եվ դարավոր սրբության:

Շարքը եզրափակող երրորդ՝ «Դու իմ Փրկիչն ես» բանաստեղծությունը հիմնված է առաքյալի զղջման խոսքերի վրա.

Դու իմ Փրկիչն ես, Տեր իմ,
Մեկ անգամ ինձ փրկեցիր
Մահվան ահեղ խավարից.
Ո՛չ, չեմ թողնի, չեմ թողնի,
Որ դու խաչվես վերստին (էջ 247):

Մեր եկեղեցական կյանքում և գրականությունում ընդհանուր քրիստոնեականին միահյուսված է ազգային-եկեղեցականը: Նույնը վերաբերվում է նաև Ներսես Սրբազանի ստեղծագործություններին, այդ թվում և՝ բանաստեղծական այս ժողովածուին, ուր երկրորդ մեծ խումբն են կազմում Ս. Էջմիածնի ու Հայոց աշխարհի տարբեր սրբավայրերին, ինչպես նաև մեր Եկեղեցու և մշակույթի սրբերին ու նշանավոր գործիչներին նվիրված ստեղծագործությունները: Այս շարքում առանձնանում են հատկապես Ս. Էջմիածնին, Ս. Գրիգոր Լուսավորչին և Թարգմանչաց նվիրված գործերը:

Իր խոնարհումը առ Հայոց Հայրապետական Աթոռը և հայ ժողովրդի հոգևոր կենտրոնը հոգևորական բանաստեղծը արտահայտում է հետևյալ տողերով.

Ես մի ընծա քո խորանում
Մի կաթիլ խունկ քո բուրվառում… (էջ 18):

Ս. Էջմիածնի լուսո խորանից համայն հայությանը բաշխվող Սրբալույս Մյուռոնի մասին սրբազանը գրում է.

Օրհնյալ կաթսա՝ սուրբ մեռոնով առլեցուն,

Քողասքողյալ վեհ աղավնի, Սուրբ Հոգի,
Կանգնել է սուրբ, կենդանարար խորանում,
Ուսկից պիտի համայն հայոց բաշխվի (էջ 297):

Իրար հաջորդող նախորդ երկու բանաստեղծությունների հետ մի ամբողջություն է կազմում «Սաղմոս Շողակաթման» ստեղծագործությունը: Ագաթանգեղոսի Պատմության մեջ ասվում է, որ Գրիգոր Լուսավորչի տեսիլում Ս. Էջմիածնի Մայր Տաճարը գծագրվեց լույսի շողի կաթմամբ, որտեղից և «Շողակաթ» բառը: Շողակաթ այս լույսի ծավալումն ենք գտնում և վերը հիշված բանաստեղծության մեջ.

Շողն աստվածային, բազմաշնորհյան
Շողակաթում է այսօր երկնքից,
Լույսի և հույսի շողեր է սփռում
Եվ լուսազարդում երկիրը Հայոց (էջ 300):

«Յո՞ երթաս»-ի նման բանաստեղծական ևս երկու շարքեր կան այս գրքում: Առաջինը սկսվում է «Տեսիլք հավերժական» (էջ 324) և շարունակվում «Եվ մի գիշեր», «Խոսեց Արքան Տիեզերքի», «Այն օրվանից» բանաստեղծություններով: Այս շարքը ներկայացնում է Հայոց Դարձի պատմությունը Ս. Գրիգորի տեսիլքից մինչև Ս. Էջմիածնի հիմնադրումը: Շարքի վերջին բանաստեղծությունը որպես պատգամ է հնչում՝ պահպանելու հոգևոր այն գանձը, որը մեզ ավանդեցին Ս. Գրիգորն ու մեր Եկեղեցու հայրերը:

Հաջորդ շարքը, որն սկսվում է «Խոսք Դեր-Զորից ազատվածի» (էջ 153) բանաստեղծությամբ, ներկայացնում է հայ Գողգոթան և հայության վերհառնումը: Շարքը գրված է առաջին դեմքով՝ վերապրողի բանաստեղծական շարադրանքով:

Հոգևոր սպասավորության ընթացքում Ներսես Սրբազանը, ծառայության բերումով, եղել է աշխարհի շատ վայրերում, որոնցից յուրաքանչյուրը բանաստեղծական մի խոհ է պարգևել, որոնք ևս ներկայացված են այս ժողովածուի մեջ:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք ասել, որ Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի բանաստեղծական այս նոր ժողովածուն, շարունակելով հայ հոգևոր բանաստեղծության ավանդները, բանաստեղծական նոր արտահայտչամիջոցներով ու պատկերներով է գալիս հավելելու այդ ավանդները՝ միաժամանակ վկայելով թե՛ այդ թեմաների գեղարվեստական կենսունակությունը մեր օրերում և թե՛ հավաստելով, որ հոգևորական բանաստեղծը ևս պետք է լինի իր ժամանակի հույզերի և ապրումների արտահայտողն ու մերօրյա պատմության ընթացքի բանաստեղծական տարեգիրը:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԲԱՑՈՒՄԸ

Սեպտեմբերի 1-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի (Աստվածաբանական համալսարանի) 2006-2007 ուսումնական տարվա բացման հանդիսությունը:

Բացման խոսքով հանդես եկավ ճեմարանի նախկին տեսուչ Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանը: Տեր Հայրը շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը՝ ճեմարանի հանդեպ ցուցաբերվող մշտական ուշադրության ու հայրական հոգատարության համար: Արժանապատիվ Տեր Հայրը անդրադարձավ եկեղեցականների նոր սերնդի դաստիարակության կարևորությանը՝ հորդորելով սաներին՝ որպես երջանիկ սերունդ անկախ այս ժամանակաշրջանի, ամենայն զգաստությամբ, խոհեմությամբ և ուշիմությամբ պատրաստվել ծառայության հոգևոր անդաստանում: Տեր Եղիշեն իր գնահատանքը հայտնեց նաև տեսչական և դասախոսական կազմին՝ տարիների իր ծառայության ընթացքին մշտապես ցուցաբերված հարգանքի և համագործակցության համար:

Ճեմարանի տեսչի պաշտոնում յոթնամյա գործունեությունից հետո Տեր Հայրը Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական բարձր տնօրինությամբ կոչվել է այլ ծառայության, իսկ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ է նշանակվել Տ. Վազգեն աբեղա Նանյանը:

Հանդիսության ընթացքին ողջույնի խոսքով ներկաներին դիմեց նաև Հոգեշնորհ Հայր Վազգենը: □Գիտենք, այս հոգևոր հաստատության հետ առնչված ինչ երազանքներ ու տեսիլքներ ունեք, և կարելին պիտի անենք, որ դրանք իրականանան, որ մեր Եկեղեցին լինի այնպիսին, ինչպիսին մեր Հայրապետները, և Դուք երազել եք տեսնել այն□,- ասաց Հայր Սուրբը՝ շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը այս բարձր վստահության համար:

Գեղարվեստական կատարումներով հանդես եկավ ճեմարանի քառաձայն երգչախումբը, ապա օրհնության իր խոսքն ու պատգամը ճեմարանի սաներին ուղղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետը մասնավորաբար անդրադարձավ Եկեղեցու առջև ծառացած մարտահրավերներին: «*15 տարի է, ինչ անկախ է մեր Հայրենիքը, և հնարավորութ-*

յուն ենք ստացել վերականգնելու հոգևոր մեր կյանքը, վերազինելու մեր Եկեղեցին ոչ միայն որպես քարեղեն կառույց, այլ Եկեղեցին որպես առաքելություն: Դժվարությունների առջև ենք կանգնած, առավել չափով հոգևորականաց պակասի և անհամբեր սպասում ենք, որ Գևորգյան Հոգևոր Ճեմարանից դուրս գան շրջանավարտներ՝ նվիրյալ հավատքի մարդիկ, ովքեր կստանձնեն հոգևորականի քաղցր լուծը և իրենց ծառայությունը կբերեն մեր Եկեղեցուն: Անշուշտ, մեր սպասումն ու ակնկալությունն է, որ այդ հոգևորականները առաջին հերթին լինեն հավատի մարդիկ և իրենց կյանքն ամբողջանվեր ընծայեն իրենց առաքելությանը, սիրեն ժողովրդին և սիրով կատարեն իրենց ծառայությունը»,- նշեց Նորին Սրբությունը:

Հայոց Հովվապետը նաև անդրադարձավ հոգևորականների կոչմանն ու նվիրումին՝ ասելով, որ Քրիստոսի հետևորդ և աշակերտ լինելը նշանակում է ամբողջական կերպով զոհաբերել իր անձն ու կյանքը Քրիստոսի առաքելության, վարդապետության քարոզչության համար, որը տանում է անձի հոգու փրկության: «*Այսօր Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչությունից, դասախոսական կազմից և սաներից մեր սպասումն է, որպեսզի այս հարկի ներքո և ընդհանրապես մեր հոգևոր կրթական հաստատություններից ներս կրթվեն, կերտվեն, դաստիարակվեն այնպիսի անձեր, որ գիտակցեն, թե ինչ դժվարին հանձնառություն են ստանձնում և որոշում կայացնում ծառայել Քրիստոսին, Քրիստոսի Սուրբ Եկեղեցուն, Քրիստոսի հավատավոր հոտին՝ մեր ժողովրդին*»,- ասաց Գարեգին Բ Կաթողիկոսը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչական կազմը, դասախոսներ, սաներ և ծնողներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱԲԻԹԱԹ»-Ի ԿԱՄԱՎՈՐՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սույն թվականի ապրիլի 20-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և «Հաբիթաթ» քրիստոնեական բարեգործական կազմակերպության միջև ստորագրված համագործակցության համաձայնագրի արդյունքում սկիզբ առավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվան «Կառուցենք հավատով» ծրագիրը, որի շրջանակներում «Հայկական Հաբիթաթ»-ը այս տարվա ընթացքում կկառուցի 37 տներ կարիքավոր ընտանիքների համար: ԱՄՆ-ից ժամանած Եկեղեցիների Ազգային Խորհրդի անդամները, գլխավոր քարտուղար դոկտոր Բոբ Էդգարի առաջնորդությամբ, Միջազգային «Հաբիթաթ»-ի ներկայացուցիչ դոկտոր Քեննեթ Բենսոնը, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տնօրենների խորհրդի նախագահ Փոլ Էքելշոթը, միջազգային կամավորների այլ խմբեր կմիանան Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու թեմերի ներկայացուցիչներին և Մայր Աթոռի միաբաններին՝ սեպտեմբերի 5-9-ը ավարտին հասցնելու այս տարվա մայիսին Գեղարքունիքի Գավառ քաղաքում կառուցվող 24 բնակարաններից բաղկացած շենքի շինարարական աշխատանքները:

Սեպտեմբերի 3-ին Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում տարբեր երկրներից եկած կամավորները մասնակցեցին Սուրբ Պատարագին:

Պատարագի ավարտին Վեհարանի հարկի ներքո տեղի ունեցավ ընդունելություն: «*...Բարձրորեն գնահատում ենք «Հաբիթաթ»-ի նախաձեռնությունը Հայաստանում՝ Հայաստանի կարիքավորներին նեցուկ լինելու, օգտակար լինելու և նրանց օջախ ու հարկ պարգևելու: Շնորհակալ ենք, որ Հայաստանում իրագործվող այս ծրագիրը իրականացնում եք Մեր անունով. սա Մենք դիտում ենք որպես վառ արտահայտություն եղբայրական սիրո՝ հանդեպ Մեր Եկեղեցին և մեր ժողովուրդը*»,- նշեց Հայոց Հայրապետը՝ մաղթելով, որ Աստված հաջողություն պարգևի «Հաբիթաթ»-ի բոլոր բարի իրագործումներին և ծրագրերին: Գարեգին Բ Կաթողիկոսը հավաքվածներին կոչ արեց, որ իրենց աշխատանքով նպաստեն, որ աշխարհում քիչ լինեն կարիքավոր անձինք, և մարդիկ իրենց բարօր կյանքի գոհունակությամբ միշտ փառավորեն Տիրոջ անունը:

Շնորհակալական խոսքով Նորին Սրբությանը դիմեց նաև ԱՄՆ Եկեղեցիների Ազգային Խորհրդի գլխավոր քարտուղար դոկտոր Բոբ Էդգարը:

Սեպտեմբերի 4-ին «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ «Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կառուցենք հավատով» շինարարական ծրագրի բացման հանդիսավոր արարողությունը:

Բացման խոսքով հանդես եկավ «Հայկական Հաբիթաթ»-ի գործադիր տնօրեն Աշոտ Եղիազարյանը: Տիար Եղիազարյանը, ողջունելով ամենքին «Հաբիթաթ»-ի տնօրենների խորհրդի և աշխատակազմի անունից, շնորհակալություն հայտնեց կամավորներին և բոլոր այն աջակիցներին, ովքեր մաս են կազմում աստվածահաճո այս նախաձեռնությանը: Ապա «Հայկական Հաբիթաթ»-ի գործադիր տնօրենը հրավիրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ աղոթքով բացել հանդիսությունը և օրհնության իր պատգամն ուղղել բոլոր ներկաներին:

Տերունական միասնական աղոթքից հետո Նորին Սրբությունն իր օրհնությունը փոխանցեց աշխարհի տարբեր երկրներից Հայաստանում համախմբված կամավորներին, ովքեր իրականացնելու են գեղեցիկ այս ծրագիրը՝ Հայաստանի տարբեր կարիքավոր ընտանիքների ապահովելով բնակարաններով: Վեհափառ Հայրապետը անդրադարձավ մեկ տարի առաջ «Հաբիթաթ»-ի տնօրեն վարչությունից և Հայ Եկեղեցու թեմական առաջնորդներից ստացված առաջարկի հիման վրա Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և «Հաբիթաթ»-ի միջև կնքված համաձայնագրին՝ իր գնահատանքը հայտնելով «Հաբիթաթ Միջազգային»-ի ղեկավար վարչությանը՝ ի դեմս «Միջազգային Հաբիթաթ»-ի ներկայացուցիչ դոկտոր Քեննեթ Բենսոնի, ինչպես նաև ԱՄՆ Եկեղեցիների Ազգային Խորհրդի գլխավոր քարտուղար դոկտոր Բոբ Էդգարին, ովքեր սերտ համագործակցում են Հայ Եկեղեցու թեմերի, եկեղեցականների և համայնքների հետ:

Ամենայն Հայոց Հայրապետը մասնավոր իր գնահատանքը հայտնեց բոլոր նվիրատուներին, ծրագրի հովանավորներին ու մասնակիցներին՝ հորդորելով ժողովրդին մասնակցել այս ծրագրին և մաղթելով, որ Տերն օրհնի բարեսիրական այսպիսի նախաձեռնությունները:

«*Այս ծրագիրը մի առիթ է յուրաքանչյուր քրիստոնյայի համար՝ արտահայտելու իր ճշմարիտ ինքնությունը, Տիրոջ պատվիրաններին ու պատգամներին իր հավատարմությունը դրսևորելու: Մենք գիտենք, որ մեր հավատքը արժեվորվում է, երբ այն վերածվում է գործի և արդյունքի, և այս մի առիթ է, որպեսզի օգտվենք և մեր հավատի զգացումը գործի վերածենք՝ քրիստոնեական սերն ամբողջապես արտահայտելով մեզ նմանի նկատմամբ, ով կարիքի մեջ է և ակնկալում է մեր օգնությունը*»,- ասաց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ Եկեղեցու և «Հաբիթաթ»-ի այս համագործակցությունը շարունակականություն կունենա, և ավելի մեծ թվով բնակարաններ համատեղ կկառուցվեն Հայաստանում կարիքավոր հայորդիների համար:

Ելույթ ունեցան նաև «Միջազգային Հաբիթաթ»-ի ներկայացուցիչ դոկտոր Քեննեթ Բենսոնը և ԱՄՆ Եկեղեցիների Ազգային Խորհրդի գլխավոր քարտուղար դոկտոր Բոբ Էդգարը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ վարդապետական թեզերի բանավոր պաշտպանություն:

Հանձնաժողովը, որի կազմում էին Մայր Աթոռի միաբան Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը՝ որպես նախագահ, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը և Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, քննելով ներկայացված թեզերը, արտոնել էր բանավոր պաշտպանության:

Թեզեր էին ներկայացրել Մայր Աթոռի երեք միաբաններ՝ հունգարահայոց հոգևոր հովիվ Տ. Բարսեղ աբեղա Փիլավչյանը՝ «Հոգևոր մշակութային կյանքը հունգարահայ գաղութում», Տ. Դանիել աբեղա Թումանյանը՝«Ծննդոց գրքի Գ գլխի 1-7 համարները ժամանակակից մի շարք մեկնություններում և հայ պարականոն գրականության մեջ», և Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Վազգեն աբեղա Նանյանը՝ «Տյառնընդառաջի տոնի ներմուծումը հայոց Տոնացույցի մեջ և ծիսական կառուցվածքը»:

Երեք աբեղաները սեպտեմբերի 16-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, վարդապետական տվչության արարողության ժամանակ, արժանացան մասնավոր վարդապետության չորս աստիճանների՝ ձեռամբ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Տ. ԲԱՐՍԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ ՓԻԼԱՎՉՅԱՆ

Ծնվել է 1971 թ. նոյեմբերի 29-ին Էջմիածին քաղաքում:

1978-89 թթ. սովորել է Էջմիածին քաղաքի թիվ 9 միջնակարգ դպրոցում:

1989-1995 թթ. ուսանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանում:

1995 թ. հոկտեմբերի 22-ին, ձեռամբ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ: Պաշտպանել է ավարտաճառ «Հայ Եկեղեցին և սփյուռքահայության հայրենադարձությունը 1946-48 թթ.» թեմայով:

1995-96 թթ. աշխատել է ՔԴՔ Կենտրոնում:

1996 թ. նոյեմբերի 24-ին, ձեռամբ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1996-2001 թթ. ծառայել է Գուգարաց թեմում որպես Ստեփանավան և Տաշիր քաղաքների հոգևոր հովիվ:

2001 թվականից ուսանելու է մեկնել Բուդապեշտ, ապա շարունակել է ծառայությունը որպես հունգարահայոց հոգևոր հովիվ:

2006 թ. սեպտեմբերի 15-ին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Հոգևոր մշակութային կյանքը հունգարահայ գաղութում» թեմայով:

2006 թ. սեպտեմբերի 16-ին Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի, ստացել է մասնավոր վարդապետության չորս աստիճանները:

Տ. ԴԱՆԻԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ծնվել է 1976 թվականի նոյեմբերի 5-ին Երևան քաղաքում:

1982-1992 թթ. սովորել և ավարտել է Երևանի թիվ 106 միջնակարգ դպրոցը:

1993 թվականին ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան և 1999 թվականի մայիսի 23-ին՝ Հոգեգալստյան տոնին, ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանի, Մայր Տաճարում ձեռնադրվել է սարկավագ:

1999 թվականին, ավարտելով Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, ծառայության է անցել այնտեղ՝ որպես վերակացու:

2000 թվականի հոկտեմբերի 11-ին պաշտպանել է «Եղիազար Կաթողիկոս Այնթապեցի» թեմայով ավարտաճառը:

Նույն թվականի նոյեմբերի 5-ին, ձեռամբ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

2000 թ. նոյեմբերից մինչև 2001 թ. ապրիլ ամիսը աշխատել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնում:

2001 թ. մայիսից 2003 թ. նոյեմբեր ամիսը ուսանել է Վարշավայի Աստվածաբանական համալսարանում:

Ուսումնառությունը ավարտելով շարունակում է ծառայությունը Լեհաստանում որպես տեղի հայ համայնքի հոգևոր հովիվ:

2006 թ. սեպտեմբերի 15-ին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Ծննդոց գրքի Գ գլխի 1-7 համարները ժամանակակից մի շարք մեկնություններում և հայ պարականոն գրականության մեջ» թեմայով:

2006 թ. սեպտեմբերի 16-ին Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի, ստացել է մասնավոր վարդապետության չորս աստիճանները:



Տ. ՎԱԶԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱՆՅԱՆ

Ծնվել է 1976 թ. հոկտեմբերի 15-ին Երևանում:

1983 թ. ընդունվել է մայրաքաղաքի Ձերժինսկու անվան թիվ 20 միջնակարգ դպրոցը, ապա 1993 թ. ավարտել թիվ 114 միջնակարգ դպրոցը:

1993 թ. ուսանել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

1998 թ. Վիլեմովի Ուղղափառ Ակադեմիայում (Չեխիա) հետևել է անգլերեն լեզվի դասընթացներին:

1998-1999 թթ. ուսումը շարունակել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալֆաքյանի:

1999 թ. եղել է Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդի քարտուղար, ապա՝ Ազգային-Եկեղեցական Ժողովի կազմակերպման գրասենյակի գործավար-քարտուղար:

1999-2002 թթ. ծառայել է Վեհարանում որպես Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գավազանակիր:

1999-2000 թթ. մասնակցել է Հայաստանի Ամերիկյան համալսարանի կողմից եկեղեցականների համար կազմակերպված մենեջմենտի դասընթացներին:

2000 թ. Գևորգյան Հոգևոր Ճեմարանում պաշտպանել է ավարտաճառ՝ «Սուրբ Հոգու եզրաբանությունը և «Բխում» եզրի արտացոլումը հայ դավանաբանական աստվածաբանության մեջ» թեմայով:

2001 թ. հունվարի 14-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի:

2002-2005 թթ. սովորել է Հռոմի Պապական Գրիգորյան համալսարանի դավանաբանական աստվածաբանության ֆակուլտետում՝ որպես ավարտաճառ ներկայացնելով «Տյառնընդառաջի աստվածաբանությունը հայ մանրանկարչական ավանդության մեջ» աշխատությունը:

2005 թ. հուլիսի 18-ին ստացել է աստվածաբանական գիտությունների մագիստրոսի աստիճան:

2003-2004 թթ. հետևել է նաև Հռոմի Պապական քրիստոնեական հնագիտության համալսարանի դասընթացներին:

2004-2005 թթ. մասնակցել է Ֆրանսիայի Բեզանսոն քաղաքում կազմակերպված ֆրանսերեն լեզվի դասընթացներին:

2005 թ. սեպտեմբերի 1-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ նշանակվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի փոխտեսուչ և գիտխորհրդի քարտուղար, դասավանդել է «Վարդապետական աստվածաբանություն» Գևորգյան Հոգևոր Ճեմարանում և «Հովվական աստվածաբանություն»՝ Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2006 թ. սեպտեմբերի 1-ից նշանակվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ:

2006 թ. սեպտեմբերի 15-ին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Տյառնընդառաջի տոնը (ներառումը Հայոց տոնացույցի մեջ և ծիսական կառուցվածքը)» թեմայով:

2006 թ. սեպտեմբերի 16-ին Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի, ստացել է մասնավոր վարդապետության չորս աստիճանները:

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԼՈՐ ՍԵՂԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 25-ից 27-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կայացավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր Սեղան բարեգործական միջեկեղեցական հիմնադրամի տարեկան հերթական ժողովը՝ մասնակցությամբ հիմնադրամի միջազգային և Հայաստանյան գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչների: Ժողովը նախագահում էր հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը:

Ժողովի առաջին օրը Կլոր Սեղանի գործադիր տնօրեն դոկտ. Կարեն Նազարյանը և աշխատակիցները ներկայացրեցին հիմնադրամի տարեկան հաշվետվությունը: Հաջորդող երկու օրերի ընթացքում քննության առնվեցին հետագա գործունեության ռազմավարությունն ու ծրագրերը:

Սեպտեմբերի 27-ին, ժողովի ամփոփումից հետո, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց հիմնադրամի միջազգային գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ ուղեկցությամբ ԵՀԽ Հայաստանյան Կլոր Սեղանի հոգաբարձուների խորհրդի նախագահ Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի, գործադիր տնօրեն դոկտ. Կարեն Նազարյանի և խորհրդի անդամ Տ. Վահրամ քհն. Մելիքյանի: Նորին Սրբությունն իր գոհունակությունն ու գնահատանքը հայտնեց միջազգային կազմակերպություններին՝ Կլոր Սեղանի գործունեությանն աջակցելու և սատարելու համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԼՈՒՐԵՐ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐԸ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 5-ին Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանում հանդիսավորապես նշվեց Ուսուցչի օրը: Օրվա առիթով ճեմարանի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ ճեմարանականների պատրաստած հանդիսությունը, որին մասնակցում էին ճեմարանի աշխատակազմի անդամներ և ուսուցիչները:

Հանդիսության սկզբում ճեմարանի տնօրեն տիար Ջեյմս Դայասը ջերմորեն շնորհավորեց բոլոր ուսուցիչներին՝ ընդգծելով ուսուցչի առաքելության կարևորությունը հասարակության մեջ: Նա նաև հորդորեց նրանց առավել ուշադրություն դարձնել երեխաների ուսումնառությանը՝ անձնապես օրինակ դառնալով նրանց համար:

Այնուհետև ճեմարանականները ներկայացրեցին ժամանակակից պարերի մի քանի նմուշներ, ասմունքեցին, ճեմարանի սան Էջմին Շահիջանյանը երգեց ճեմարանի ուսուցիչ Շոն Մանուկի կիթառի նվագակցությամբ: Հանդիսությունը վարում էր ճեմարանական Անի Կարապետյանը: Տեղի ունեցավ նաև վիճակահանություն:

Գեղարվեստական մասից հետո աշակերտները հրավիրեցին ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանին՝ իր սրտի խոսքն ուղղելու ներկաներին: Հայր Սուրբը նույնպես շնորհավորեց ուսուցիչներին օրվա կապակցությամբ: Հայր Սուրբը նշեց և անդրադարձավ հայոց առաջին ուսուցիչ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի գործունեությանը՝ ճեմարանականներին հորդորելով ամեն ինչ անել՝ իրենց ուսումնառությամբ և կենցաղավարությամբ բարձր պահելու Մարդասիրական ճեմարանի անունը՝ դրանով իսկ պատիվ բերելով նաև իրենց ուսուցիչներին:

Ներկաներին իրենց սրտի խոսքն ուղղեցին նաև ճեմարանի ադմինիստրատոր Տիգրան սրկ. Բաղումյանը և նախկին ճեմարանավարտ Մայքլ Ստիվենը: Վերջում ուսուցիչների անունից շնորհակալական խոսք ասաց ճեմարանի բազմամյա ուսուցիչ Բրիտա Ռոյը:

Հանդիսության ավարտին տեղի ունեցավ միասնական ճաշկերույթ:

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՂՈԹՔ ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱՅԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՄՈՏ

Սեպտեմբերի 10-ին, Աստծուց՝ Մայր Թերեզայի ներշնչվելու 60-ամյակի կապակցությամբ, նրա գերեզմանի մոտ տեղի ունեցավ միջկրոնական և միջեկեղեցական աղոթք, որին մասնակցում էին Կալկաթայի քրիստոնեական եկեղեցիների, հինդու, բուդդայական, մուսուլմանական, զրադաշտական, հրեական և այլ համայնքների ներ-

կայացուցիչներ: Այս հանդիսությանը մասնակցում էին նաև հնդկահայոց հոգևոր հովիվ և Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանն ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան, Մարդասիրական ճեմարանի վարչական տնօրեն Տիգրան սրկ. Բաղումյանը:

Միջոցառման ընթացքում բոլոր բանախոսներն անդրադարձան Կալկաթայի Երանելի Թերեզայի կյանքին և գործունեությանը՝ շեշտելով նրա անսահման սերն ու նվիրվածությունը աղքատ և կարիքավոր մարդկանց նկատմամբ: Նրանք նաև ընդգծեցին, որ իր մարդասիրական գործունեության շնորհիվ Մայր Թերեզան սիրված է եղել ամենքի կողմից, քանզի կարիքավորներին և տնանկներին օգնելն աստվածային շնորհ է:

Ներկաներին իր սրտի խոսքն ուղղեց նաև Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը: Նա ժամագրքից աղոթք կարդաց Մայր Թերեզայի հոգու հանգստության համար՝ անդրադառնալով նրա կապվածությանը հայ ժողովրդի և Հայոց Եկեղեցու հետ:

«Իր գործունեության շնորհիվ Մայր Թերեզան դարձավ ճշմարիտ սիրո, Աստծուն բոլորանվեր նվիրումի և օրինակելի ծառայասիրության պատգամաբերը երկրի վրա՝ իր սրտի և հոգու ջերմությամբ պարուրելով աղքատներին, կարոտյալներին և կարիքավորներին: Նա իր իսկ կյանքով ցույց տվեց, որ ամենքս էլ ստեղծված ենք Աստծո պատկերով և նմանությամբ՝ դառնալով սիրո քարոզիչը հանուր մարդկության մեջ: Եվ այսօր, երկնքից մեզ նայելով, նա նույն ծառայասիրությունն ու սերն է ցանկանում տեսնել մեր մեջ»,- նշեց Օշական վարդապետն իր խոսքում:

Միջոցառումն ավարտվեց միասնական ընդհանրական աղոթքով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 21-ին Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանում հանդիսավորապես նշվեց Հայաստանի Հանրապետության անկախության 15-ամյակը: Ճեմարանի հանդիսությունների դահլիճում տոնական միջոցառումն սկսվեց միասնական Տերունական աղոթքով, որին հաջորդեց ՀՀ օրհներգը: Այնուհետև աշակերտներին ողջունեց և օրվա առիթով շնորհավորեց ճեմարանի տնօրեն Ջեյմս Դայասը՝ անդրադառնալով անկախության հասկացության նշանակությանը յուրաքանչյուր ժողովրդի կյանքում: Հայաստանի անկախության առիթով ներկաներին ուսանողության անունից ողջունեցին նաև ճեմարանականներ Սարինե Նիկողոսյանը և Արաբո Քեշիշյանը: Հանդիսությունը վարում էր Սիրանուշ Մուրադյանը:

ՀՀ անկախության ձեռքբերման պատմությանը և նրա նշանակությանը նվիրված բանախոսությամբ հանդես եկավ ճեմարանի հայ ժողովրդի պատմության ուսուցիչ Տիար Մարտիկ Սարգսյանը: Նա իր ոգեշունչ խոսքում հատկապես ընդգծեց, որ անկախությունը ձեռք է բերվել նվիրյալ հայորդիների արյան և մեր ժողովրդի հավաքական կամքի արտահայտման շնորհիվ, ուստի մեր պարտքն է պահպանել այն:

Երաժշտության ուսուցիչ Վաչագան Թադևոսյանի ղեկավարությամբ ճեմարանի երգչախումբը կատարեց ազգային-հայրենասիրական երգեր: Հատկապես նշանակալից էր Մարդասիրական ճեմարանի սաների ոգևորությունը և ազգային պատկանելիության բարձր գիտակցությունը բանաստեղծությունների արտասանման ժամանակ:

ՀՀ անկախության առիթով իր սրտի խոսքն ասաց նաև ճեմարանի վարչական տնօրեն Տիգրան սրկ. Բաղումյանը՝ հորդորելով ամենքին հավատարիմ մնալ հայ մարդու ինքնությանը, մեր անկախ Հանրապետությանը, մեր մայրենի լեզվին և Հայոց Եկեղեցուն, որոնց շնորհիվ ենք մենք հայ կոչվում և գոյատևում աշխարհում:

Մի քանի ճեմարանականներ ընթերցեցին *«Հայաստանի անկախությունն ինձ համար»* թեմայով իրենց գրած շարադրությունները, որոնք ներկաների կողմից ջերմ ընդունելության արժանացան:

Հանդիսության ավարտին եզրափակիչ խոսքով հանդես եկավ ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլզյուլյանը: Շնորհավորելով ամենքին՝ Հայր Սուրբը զուգահեռներ անցկացրեց անկախության համար երկար ժամանակ պայքարած հնդիկ և հայ ժողովուրդների անցած ուղու միջև՝ ընդգծելով, որ Մայր Հայրենիքի անկախության պահպանումն ու բարգավաճումը կախված է մեզանից յուրաքանչյուրից:

ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄՈՒՄ

ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԿՈՒԹԻՒՆ ՄԸ *«ՀԱՅԸ ԵՒ ԻՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ»*

Հեղինակ՝ Սիլվա Տէր-Ստեփանեան

Սիլվա Տէր Ստեփանեան վերջերս լոյս ընծայեց «***ՀԱՅԸ ԵՒ ԻՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ***» գիրք-երգարանը, որ կը պարունակէ 46 ինքնագիր ոտանաւորներ, իւրաքանչիւր ոտանաւորի վրայ յօրինուած երգեր եւ գունաւոր նկարներ:

Հայ մանուկներու եւ պատանիներու մօտ Հայերէն սորվելու հետաքրքրութիւնը խթանելու եւ երգով ու պարով հաճելի դարձնելու միջոցներէն մէկն է այս գիրք-երգարանը: Բազմաթիւ երգերու բառերը մենք սորված ենք երգերը յաճախակի կերպով ունկնդրելով: Այս նպատակին պիտի ծառայէ նաեւ յիշեալ գիրքը, ուր ութ տողնոց եւ շատ պարզ լեզուով գրուած ոտանաւորներով ու երգերով հայ մանուկին պիտի ծանօթացուի Հայաստանի աշխարհագրութիւնը:

Այս գիրք-երգարանը կրնայ գործածուիլ նաեւ որպէս ուղեցոյց: Իւրաքանչիւր ոտանաւոր-երգ կարելի է վերածել «Դէպի Հայաստան մէկ օրուան այցելութեան»՝ ստեղծելով միջավայրն ու խօսելով Հայաստանի հրաշալիքներուն մասին. չէ որ ըսուած է թէ Հայաստանը «բացօթեայ թանգարան մըն է»:

«ՀԱՅԸ ԵՒ ԻՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ» երգարանին մասին արտայայտուելով Ամերիկայի հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան հետեւեալը ըսած է. «*Մեզի համար անխառն ուրախութիւն է տեսնել որ Սիլվա Տէր Ստեփանեանը կը շարունակէ իր նուիրեալ աշխատանքը՝ իր ձիրքերը, տաղանդն ու կարողութիւնները ի սպաս դնելով հայ մանուկի կրթութեան ու դաստիարակութեան սրբազան առաքելութեան: Իր այս վերջին հրատարակութիւնը, ուր կան 46 ինքնագիր ոտանաւորներ եւ անոնց վրայ յօրինուած երգերն ու համապատասխան գունաւոր նկարներ, հայ մանուկը պիտի մղեն հայերէն կարդալու, հայերէն խօսելու եւ հայերէն երգեր ունկնդրելու: «**Հայը եւ իր Հայրենիքը**» գիրքը պիտի նպաստէ նաեւ Հայաստանի մասին գիտելիքներ փոխանցելու մատաղ սերունդին՝ անոր մէջ արթնցնելով ազգային ոգին ու ինքնագիտակցութիւնը»:*

«ՀԱՅԸ ԵՒ ԻՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ» գիրքի խմբագիրն է Նուպար Քիւփէլեան, երաժշտութիւնը յօրինողը՝ հայրենի ծանօթ երաժշտագէտ Վահէ Հայրապետեան, նկարիչը՝ տաղանդաւոր արուեստագէտ Նանա Մինասեան, ծրագիրը համակարգողը՝ հայրենի հասարակական գործիչ Մանուէլ Մանուկեան:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԵՀԽ ՆՈՐԸՆՏԻՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԺՆԵՎՈՒՄ

Սույն թվականի օգոստոսի 30-ից սեպտեմբերի 6-ը Շվեյցարիայի Ժնև քաղաքում տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի նորընտիր Կենտրոնական Կոմիտեի առաջին հանդիպումը:

Կենտրոնական Կոմիտեն կազմված է ԵՀԽ 348 անդամ Եկեղեցիների կողմից առաջադրված ներակայացուցիչներից: Այն հանդիսանում է էկումենիկ համաշխարհային այս կառույցի ղեկավար մարմինը, որը որոշումներ է կայացնում Խորհրդի անունից և ղեկավարում այն յոթ տարին մեկ տեղի ունեցող համաժողովների միջև ընկած ժամանակահատվածում՝ գործելով համաժողովի ընթացքում որդեգրված ուղեգծի շրջանակում, վերանայելու և վերահսկելու ԵՀԽ ծրագրերը, ինչպես նաև հաստատելու Խորհրդի բյուջեն:

ԵՀԽ նախագահներն ընտրվում են համաժողովի ընթացքում, որոնք հանդիսանում են Կենտրոնական Կոմիտեի անդամ: Գործադիր Կոմիտեն ընտրվում է Կենտրոնական Կոմիտեի կողմից, որի նիստերը սովորաբար գումարվում են տարին երկու անգամ:

Հանդիպման նորընտիր ատենապետն էր դոկտոր Վալտեր Ալթմանը, իսկ փոխատենապետերը՝ Սասիմայի մետրոպոլիտ Գերաշնորհ Գենադիոս Արքեպիսկոպոսը և դոկտոր Մարգարիտա Հենդրիկսը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին Խորհրդի հաջորդ յոթ տարիների գործունեության ծրագրերը և Խորհրդի կառուցվածքին առնչվող տարբեր հարցեր: Քննարկվեցին նաև Աֆրիկայում երեխաների վիճակին, ՄԻԱՎ/ՁԻԱՀԻ-ին, Ֆիլիպիններում տեղի ունեցող բռնություններին և Միջին Արևելքի ներկա իրավիճակին առնչվող մի շարք հարցեր:

Ժողովը Խորհրդի աշխատանքներն արդյունավետ դարձնելու նպատակով Խորհրդին կից նշանակեց նաև մի շարք խորհրդակցական մարմիններ և հանձնախմբեր: Միջազգային հարցերով զբաղվող եկեղեցական հանձնախմբում Հայ Առաքելական Եկեղեցուց ընտրվել է ԵՀԽ Հայաստանյան Կլոր Սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի աշխատակից օրիորդ Ծովինար Ղազարյանը:

Հանդիպման ընթացքում տեղի ունեցավ նաև մի խորհրդակցություն՝ նվիրված 1966 թ. Եկեղեցու և հասարակության խնդիրների վերաբերյալ ԵՀԽ-ի կազմակերպած միջազգային կոնֆերանսի 40-ամյակին:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուց ժողովին մասնակցում էին Ամերիկայի հայոց Արևելյան թեմի Միջեկեղեցական հարցերով պատասխանատու, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական և Գործադիր Կոմիտեներում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ Գերաշնորհ Տ. Վիգեն եպիսկոպոս Այքազյանը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ինտերնետային գրասենյակի տնօրեն և Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական Կոմիտեում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ երեցկին Փոլա Դևեջյանը, որոնք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից առաջադրվել էին որպես թեկնածուներ այս կառույցում և ընտրվել ԵՀԽ 9-րդ համաժողովի ընթացքում, որը տեղի ունեցավ սույն թվականի փետրվարի 13-24-ը Բրազիլիայի Պորտո Ալեգրե քաղաքում:

Որպես երիտասարդ սպասավոր՝ ժողովին մասնակցում էր նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի աշխատակից Բարեշնորհ Սուրեն սրկ. Գևորգյանը:

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԱԹՈԼԻԿ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ ԵՎ ԿԱՐԴԻՆԱԼ ՍԻԼՎԵՍՏՐԻՆԻ ԱՋԱԿԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 3-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստան ուխտի եկած կաթոլիկ եկեղեցականներին՝ գլխավորությամբ Պադովայի ճեմարանի տեսուչ մոնսենյոր Սանդրո Պանիցոլոյի և առաջնորդությամբ Անդրկովկասում պապական նվիրակ Կլաուդիո արքեպս. Գուջերոտտիի:

Ողջունելով ուխտավորների այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ նշեց երկու Եկեղեցիների միջև առկա ջերմ բարեկամական հարաբերությունների մասին, որոնք առավել ամրապնդվեցին երջանկահիշատակ Վազգեն Ա և Գարեգին Ա Հայրապետների օրոք: «*Այսպիսի այցերը, որ կազմակերպվում են դեպի Հայաստան, լավագույն վկայությունն են եղբայրական սիրո վրա խարսխված այդ հարաբերությունների զարգացման և մերձեցման*»,- ասաց Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը նաև տեղեկացրեց, որ Հայ Եկեղեցու բազում երիտասարդ եկեղեցականներ իրենց բարձրագույն կրթությունն են շարունակում Կաթոլիկ Եկեղեցու ուսումնական հաստատություններում:

«Մեզ համար մեծ պատիվ է լինել Հայաստանում և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, որպեսզի ճանաչենք արմատներն այն ազգի, այն պետության, որն առաջինն աշխարհում ընդունեց քրիստոնեությունը: ...Գրքերով ծանոթացել ենք հայ ժողովրդի պատմությանը և այժմ ականատեսն ենք ներկայիս պատմության արձանագրմանը»,- իր խոսքում նշեց Պադովայի ճեմարանի տեսուչ մոնսենյոր Սանդրո Պանիցոլոն՝ շնորհակալություն հայտնելով ընդունելության համար:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը պատասխանեց միջեկեղեցական, ինչպես նաև Եկեղեցի-պետություն հարաբերություններին վերաբերող հարցերի:

Հանդիպումից հետո ուխտավորները Մայր Տաճարում մասնակցեցին Սուրբ Պատարագի արարողությանը:

Հավարտ Սուրբ Պատարագի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց հոգևոր առաքելության մեջ կարդինալ Աքիլլե Սիլվեստրինիին աջակից եկեղեցասեր համայնքի անդամներին՝ գլխավորությամբ Անդրկովկասում պապական նվիրակ Կլաուդիո արքեպս. Գուջերոտտիի և տիար Պիեռսիլվերիո Պոցցիի: Կազմակերպությունն իր հիմնադրման 60-ամյակի առիթով ուխտագնացություններ է կազմակերպել Պաղեստին, ապա Հայաստան՝ որպես քրիստոնեությունը պետական կրոն հռչակած առաջին քրիստոնյա երկիր:

Վեհարանի հարկի ներքո ողջունելով Կաթոլիկ Եկեղեցու ուխտավորներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ Հայաստանյայց Առաքելական և Հռոմեակաթոլիկ Եկեղեցիների արդյունավետ համագործակցությանը՝ կարևորելով նաև նման փոխայցելությունների կազմակերպումը:

Նորին Սրբությանը շնորհակալական խոսքով դիմեց Կլաուդիո արքեպս. Գուջերոտտին՝ վերհիշելով Ամենայն Հայոց Հայրապետի հրավերով 2001 թ. Հովհաննես Պողոս Բ Պապի Հայաստան կատարած եղբայրական այցի օրերը և ուխտավորներին ներկայացնելով այն սերտ կապերը, որ առկա են երկու Եկեղեցիների միջև:

Ապա համայնքի անդամների անունից խոսք ասաց տիար Պիեռսիլվերիո Պոցցին՝ երախտագիտություն հայտնելով ընդունելության համար և ներկայացնելով կազմակերպության գործունեությունը, ապագայի ծրագրերը: Մասնավոր անդրադարձ կատարվեց իրականացվող աշխատանքներում երիտասարդների ներգրավվածությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Սեպտեմբերի 3-ին, կիրակի. - Դ. կիր. զկնի Վերափոխման:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եզնիկ արքեպս. Պետրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Սեպտեմբերի 8-ին, ուրբաթ. - Տօն Ծննդեան Սրբուհւոյ Կուսին Մարիամու յԱննայէ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովնան աբեղա Հակոբյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Սեպտեմբերի 10-ին, կիրակի. - Ե. կիր. զկնի Վերափոխման:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս վարդապետ Հովնանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Սեպտեմբերի 17-ին, կիրակի. - ԽԱՉՎԵՐԱՑ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Փայտ կենաց, որ փոխանակ մահացու պտղոյն զՔրիստոս պտղաբերեցեր» (Շարական) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 35):

Սեպտեմբերի 18-ին, երկուշաբթի. - Տօն է Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տրդատ քահանա Բոզիկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Տեր Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Սեպտեմբերի 24-ին, կիրակի. - Բ. կիր. զկնի Ս. Խաչին:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սահակ վարդապետ Մաշալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 37):

“ЭЧМИАДЗИН”
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ
ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(Сентябрь 2006)

1. Визит делегации, возглавляемой Муфтием Сирийской Арабской Республики, Шейхом Ахмедом Бадр Ал-Дин Хассуном, в Армению и Первопрестольный Святой Эчмиадзин, 2-5 сентября 2006 г. (с. 3-6).
2. **ДЬЯКОН ЭДУАРД ХАЧАТРЯН** – Визит Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, в Армянскую Епархию Австралии и Новой Зеландии, 8-10 сентября 2006 г. (с. 7-13).
3. **ДЬЯКОН ЭДУАРД ХАЧАТРЯН** – Второй Съезд предводителей традиционных и мировых религий в Астане, 11-12 сентября 2006 г. (с. 14-18).
4. Церемония приветствия в Кафедральном Соборе Святого Эчмиадзина, 16 сентября 2006 г. (с. 19-20).
5. Награждение Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, «Орденом Дружбы» Российской Федерации, Св. Эчмиадзин, 19 сентября 2006 г. (с. 21-22).
6. Слово Его Святейшества Гарегина II, Верховного Патриарха и Католикоса всех армян, на Третьем конференции «Армения-Диаспора», 18-20 сентября 2006 г. (с. 23-24).
7. Молебень о РА в Соборе Св. Григория Просветителя в Ереване, 21 сентября 2006 г. (с. 25-26).

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ

8. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну и г-же Петросу и Анне Орунджакчиелям по случаю их награждения орденом «Святой Григорий Просветитель», 1 сентября 2006 г., № 355 (с. 27-28).
9. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Левону Агароняну по случаю его награждения орденом «Святой Григорий Просветитель», 22 сентября 2006 г., № 358 (с. 29-30).
10. Патриаршие награды (пожалование в течение сентября 2006 г. энциклик, орденов «Св. Нерсес Шнорали», «Святой Саак – Святой Месроп» и благословений Его Святейшеством Гарегином II, Католикосом всех армян, группе духовных и светских лиц, оказавших большие услуги Армянской Церкви) – (с. 31).
11. Вручение ордена «Святой Григорий Просветитель» г-ну и г-же Петросу и Анне Орунджакчиелям, 3 сентября 2006 г. (с. 32).
12. Вручение ордена «Святой Григорий Просветитель» г-ну и г-же Левону и Белле Агаронянам, 23 сентября 2006 г. (с. 33).
13. Поздравительное послание Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю начала нового учебного года, 1 сентября 2006 г. (с. 34).

ПРОПОВЕДИ

14. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Нерсеса Позаполяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на праздник Воздвижения Св. Креста, 17 сентября 2006 г. (с. 35-36).
15. Проповедь Преподобного архимандрита Саака Машаляна в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 24 сентября 2006 г. (с. 37-42).

РЕЛИГИОЗНОЕ И ЦЕРКОВНОЕ ИССЛЕДОВАНИЕ

16. **ПРЕПОДОБНЫЙ ИЕРЕЙ АДАМ МАКАРЯН** – XIV Международная экуменическая ассамблея и вопрос причастия в церкви – (церковное исследование) – (с. 43-62).

Точка зрения

17. **АРХИМАНДРИТ КОМИТАС ОВНАНЯН** – Арарат или Санасар, Навасард или Навасар ? (исследование Священного Писания) – (63-72).
18. **ЧТЕЦ АРМЕН ХАЧАТРЯН** – Схоластика как философия религии в христианском средневековье (религиозное исследование) – (с. 73-82).

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

19. **НАРИНЕ ЭКЕКЯН** – Перифрастические сочетания, означающие Месроп Маштоц (лингвистическое исследование) – (с. 83-92).
20. **ГЕВОРК СРАПИОНОВИЧ СТЕПАНЯН** – Из истории Сагьянского монастыря Св. Степаноса Первомученика в Армянской Епархии Шамахи (историческое исследование) – (с. 93-115).
21. **ШУШАНИК ЗОГРАБЯН** – Средства выражения в стиле модерн в произведениях Вардкеса Суренянца (искусствоведческое исследование) – (с. 116-121).
22. **АМАТУНИ ВИРАБЯН** – Орден «Святой Григорий Просветитель» Армянской Церкви (историческое исследование) – (с. 122-133).

Рецензия

23. **ВАРДАН ДЕВРИКЯН** – Поэтическое выражение душевного (о сборнике «Стихи» архиепископа Нерсеса Позапаляна, Ереван, 2006) (с. 134-137).

В СВЯТОМ ПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

24. Открытие нового учебного года в Геворкянской Духовной семинарии, 1 сентября 2006 г. (с. 138-139).
25. Добровольцы «Армянского Абитата» в Первопрестольном Святом Эчмиадзине, 5-9

сентября 2006 г. (с. 140-141).

26. Защита архимандритских диссертаций в Первопрестольном Святом Эчмиадзине, 15 сентября 2006 г. (помещены также биографии архимандритов Барсега Пилавчяна, Даниела Туманяна и Вазгена Наняна) – (с. 142-147).
27. Ежегодное собрание Армянского Круглого стола в Первопрестольном Святом Эчмиадзине, 25-27 сентября 2006 г. (с. 148).

Новости из армянской общины Калькутты

28. День учителя в Филантропической Духовной семинарии, 5 сентября 2006 г. (с.149).
29. Межцерковная молитва у могилы Матери Терезы, 10 сентября 2006 г. (с.149-150).
30. Праздник Независимости Республики Армения в Филантропической Духовной семинарии, 21 сентября 2006 г. (с.150-151).

В Восточной Епархии Армянской Церкви США

31. Новое детско-юношеское издание «Армянин и его Родина» (с. 152).

МЕЖЦЕРКОВНЫЕ СВЯЗИ

32. **ГАЯНЭ АЛЕКСАНЯН** – Первая встреча новоизбранного Центрального Комитета ВСЦ в Женеве, 30 августа – 6 сентября 2006 г. (с.153-154).

АУДИЕНЦИЯ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ

33. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, католических паломников и членов общины поддержки кардинала Сильвестрини, 3 сентября 2006 г.. (с.155-156).

34. Краткие церковные новости. Информация о Святых Литургиях, проповедях и других церемониях в Кафедальном соборе и Первопрестольном Святом Эчмиадзине в течение сентября 2006 г. (с.157).

"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY REVIEW OF
HOLY ETCHMIADZIN
(September 2006)

1. Visit of the delegation headed by Sheikh Ahmad Badr Al-Din Hassoun, Mufti of the Republic of Syria to Armenia and the Mother See of Holy Etchmiadzin, September 2-5, 2006 (p. 3-6).
2. **DEACON EDOUARD KHACHATRIAN** – Visit of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the Armenian Diocese of Australia and New Zealand, September 8-10, 2006 (p. 7-13).
3. **DEACON EDOUARD KHACHATRIAN** – Second Congress of the Leaders of World Religions, in Astana, September 11-12, 2006 (p. 14-18).
4. "Hrashapar" Service in the Mother Cathedral of Holy Etchmiadzin, September 16, 2006 (p. 19-20).
5. The "Order of Friendship" of the Russian Federation granted to His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, September 19, 2006 (p. 21-22).
6. Message of His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, addressed to the Third "Armenia-Diaspora" Conference, September 18-20, 2006 (p. 23-24).
7. Service of Blessing for the Republic of Armenia in the Cathedral of Saint Gregory the Illuminator in Yerevan, September 21, 2006 (p. 25-26).

PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING

8. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. and Mrs. Bedros and Anna Oruncakciel on the occasion of their decoration with the Order of "Saint Gregory the Illuminator", September 1, 2006, no. 355 (p. 27-28).
9. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Levon Aharonian on the occasion of his decoration with the Order of "Saint Gregory the Illuminator", September 22, 2006, no. 358 (p. 29-30).
10. Pontifical Awards (Encyclicals, Orders of "Saint Sahak – Saint Mesrop", "Saint Nerses Shnorhali" and Letters of Blessing granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, during September 2006 to clergymen and laymen having been of great service to the Armenian Church) – (p. 31).
11. Granting of the Order of "Saint Gregory the Illuminator" to Mr. and Mrs. Bedros and Anna Oruncakciel, September 3, 2006 (p. 32).
12. Granting of the Order of "Saint Gregory the Illuminator" to Mr. and Mrs. Levon and Bella Aharonian, September 23, 2006 (p. 33).
13. Message of Congratulations of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the commencement of the school year, September 1, 2006 (p. 34).

SERMONS

14. Sermon delivered by His Eminence Archbishop Nerses Bozabalian in the Cathedral of Holy Etchmiadzin during the Feast of the Exaltation of the Holy Cross, September 17, 2006 (p. 35-36).
15. Sermon delivered by Very Rev. Fr. Sahak Mashalian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy, September 24, 2006 (p. 37-42).

RELIGIOUS AND ECCLESIOLOGICAL STUDY

16. **REV. FR. ADAM MAKARIAN** – The 14th International Ecumenical Assembly and the Issue of the Communion in the Church (ecclesiological research) – (p. 43-62).

Viewpoint

17. **VERY REV. FR. KOMITAS HOVNANIAN** – Ararat or Sanasar, Navasard or Navasar? (study of the Holy Scriptures) – (p. 63-72).
18. **ACOLYTE ARMEN KHACHATRIAN** – Scholastics as Philosophy of Religion in the Christian Middle Ages (religious research) – (p. 73-82).

HISTORICAL AND PHILOLOGICAL STUDIES

19. **NARINE HEKEKIAN** – Paraphrases Surrounding “Mesrop Mashtots” (linguistic research) – (p. 83-92).
20. **GHEVOND S. STEPANIAN** – History of the Saghian Monastery of Saint Stepanos the Protomartyr of the Armenian Diocese of Shamakhi (historical research) – (p. 93-115).
21. **SHUSHANIK ZOHRABIAN** – Modern Style Means of Expression in the Works of Vardkes Sureniants (art study) – (p. 116-121).
22. **AMATUNI VIRABIAN** – The Order of “Saint Gregory the Illuminator” of the Armenian Church (historical research) – (p. 122-133).

LITERARY REVIEW

23. **VARDAN DEVRIKIAN** – Poetical Expression of Soul Emotions (about the Collection of “Verses” by Archbishop Nerses Bozabalian, Yerevan, 2006) – (p. 134-137).

IN THE MOTHER SEE AND THE DIOCESES

24. Commencement of the new academic year in the Gevorkian Seminary, September 1, 2006 (p. 138-139).

25. “Habitat for Humanity - Armenia” in the Mother See of Holy Etchmiadzin, September 5-9, 2006 (p. 140-141).
26. Defense of Theses in the Mother See of Holy Etchmiadzin, September 15, 2006 (Biographies of new archimandrites Barsegh Pilavchian, Daniel Tumanian, Vasken Nanian) – (p. 142-147).
27. Yearly Meeting of the Armenian Round Table in the Mother See of Holy Etchmiadzin, September 25-27, 2006 (p. 148).

News from the Armenian Community of Calcutta

28. Teacher’s Day in the Philanthropic Academy, September 5, 2006 (p. 149).
29. Inter-ecclesiastical Prayer at the Tomb of Mother Theresa, September 10, 2006 (p. 149-150).
30. Independence Day of the Republic of Armenia in the Philanthropic Academy, September 21, 2006 (p. 150-151).

In the Diocese of the Armenian Church of America (Eastern)

31. New publication for children and youngsters “The Armenian and his Homeland” (p. 152).

INTER-CHURCH CONNECTIONS

32. **GAYANE ALEXANIAN** – First Meeting of the newly elected CEC (Conference of European Churches) Central Committee of the in Geneva, August 30 – September 6, 2006 (p. 153-154).

AUDIENCES IN THE MOTHER SEE

33. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Catholic pilgrims and members of the community accompanied by Cardinal Silvestrini, September 3, 2006 (p. 155-156).

34. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during September 2006 (p. 157).

"ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(Septembre 2006)

1. Visite de la délégation menée par Cheikh Ahmad Badr Al-Din Hassoun, Mufti de la République arabe de Syrie, en Arménie et au Saint-Siège d'Etchmiadzine, 2-5 septembre 2006 (p. 3-6).
2. **DIACRE EDOUARD KHATCHATRIAN** – Visite de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, au Diocèse arménien d'Australie et de la Nouvelle-Zélande, 8-10 septembre 2006 (p. 7-13).
3. **DIACRE EDOUARD KHATCHATRIAN** – Deuxième Congrès des primats des religions traditionnelles et mondiales à Astana, 11-12 septembre 2006 (p. 14-18).
4. Cérémonie de bienvenue à la Cathédrale de Saint-Etchmiadzine, 16 septembre 2006 (p. 19-20).
5. Distinction de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, de l' «Ordre de l'Amitié» de la Fédération de Russie, 19 septembre 2006 (p. 21-22).
6. Intervention de Sa Sainteté Garéguin II, Patriarche Suprême et Catholicos de tous les Arméniens, à la Troisième Conférence «Arménie-Diaspora», 18-20 septembre 2006 (p. 23-24).
7. Te Deum pour la République d'Arménie à la Cathédrale St. Grégoire l'Illuminateur d'Erevan, 21 septembre 2006 (p. 25-26).

ENCYCLIQUES PONTIFICALES ET MESSAGES DE BENEDICTION

8. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à M. et Mme Pétros et Anna Oroundjaktchiel à l'occasion de leur distinction de l'Ordre «Saint Grégoire l'Illuminateur», 1er septembre 2006, n° 355 (p. 27-28).
9. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à M. Lévon Aharonian à l'occasion de sa distinction de l'Ordre «Saint Grégoire l'Illuminateur», 22 septembre 2006, n° 358 (p. 29-30).
10. Distinctions pontificales (Encycliques pontificales, Ordres «Saint Sahak–Saint Mesrop», «Saint Nerses Chnorhali» et messages de bénédiction) accordées par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à des personnalités religieuses et laïques ayant rendu d'éminents services à l'Eglise arménienne au mois de septembre 2006) – (p. 31).
11. Remise de l'Ordre «Saint Grégoire l'Illuminateur», à M. et Mme Pétros et Anna Oroundjaktchiel 3 septembre 2006 (p. 32).
12. Remise de l'Ordre «Saint Grégoire l'Illuminateur», à M. et Mme Lévon et Bella Aharonian, 23 septembre 2006 (p. 33).
13. Message de félicitation de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à l'occasion de la rentrée des écoles, 1er septembre 2006 (p. 34).

SERMONS

14. Sermon prononcé par Son Eminence l'archevêque Nerses Pozapalian à la Cathédrale de

Saint-Etchmiadzine à la Fête de l'Elévation de la Sainte Croix, 17 septembre 2006 (p. 35-36).
15. Sermon prononcé par le Révérend archimandrite Sahak Machalian à la Cathédrale de Saint-Etchmiadzine pendant la Sainte Messe, 24 septembre 2006 (p. 37-42).

ETUDE RELIGIEUSE ET ECCLESIOLOGIQUE

16. **REVEREND ADAM MAKARIAN** – La XIVe Assemblée œcuménique internationale et la question de la Communion à l'église (recherche ecclésiologique) – (p. 43-62).

Point de vue

17. **ARCHIMANDRITE KOMITAS HOVNANIAN** – Ararat ou Sanassar, Navassard ou Navassar ? (recherche sur les Saintes Ecritures) – (p. 63-72).
18. **ACOLYTE ARMEN KHATCHATRIAN** – La scholastique comme philosophie de la religion au Moyen Age chrétien (recherche religieuse et ecclésiologique) – (p. 73-82).

ETUDES HISTORIQUES ET PHILOLOGIQUES

19. **NARINE HEKEKIAN** – Les paraphrases signifiant «Mesrop Machtots» (recherche linguistique) – (p. 83-92).
20. **GUEVORK S. STEPANIAN** – Histoire du monastère St. Stépanos Protomartyr de Saghian du Diocèse arménien de Chamakhi (recherche historique) – (p. 93-115).
21. **CHOUCHANIK ZOHRABIAN** – Les moyens d'expression de style moderne dans les œuvres de Vardkes Souréniants – (critique d'art) – (p. 116-121).
22. **AMATOUNI VIRABIAN** – L'Ordre «Saint Grégoire l'Illuminateur» de l'Eglise arménienne (recherche historique) – (p. 122-133).

CRITIQUE LITTERAIRE

23. **VARDAN DEVRIKIAN** – Expression poétique des émotions de l'âme (consacré au recueil « Poésies » de l'archevêque Nerses Pozapalian, Erevan, 2006) – (p. 134-137).

AU SAINT-SIEGE ET DANS LES DIOCESES

24. Ouverture de la nouvelle année d'études au séminaire Guévorkian, 1er septembre 2006 (p. 138-139).
25. Les volontaires de l'organisation « Habitat arménien » au Saint-Siège d'Etchmiadzine, 5-9 septembre 2006 (p. 140-141).
26. Soutenance de thèses pour la dignité d'archimandrite au Saint-Siège d'Etchmiadzine, 15 septembre 2006 (Biographies des archimandrites Barsegh Pilavtchian, Daniel Toumanian et Vazguen Nanian (p. 142-147).
27. Réunion annuelle de la Table Ronde d'Arménie au Saint-Siège d'Etchmiadzine, 25-27 septembre 2006 (p. 148).

Nouvelles de la communauté arménienne de Calcutta

28. Le Jour de l'Enseignant au Séminaire Philanthropique de Calcutta, 5 septembre 2006 (p. 149).
29. Prière interecclésiastique près de la tombe de la Mère Thérèse, 10 septembre 2006 (p. 149-150).
30. Le Jour de l'Indépendance de la République d'Arménie au Séminaire Philanthropique de Calcutta, 21 septembre 2006 (p. 150-151).

Au Diocèse Oriental de l'Eglise Arménienne des Etats-Unis d'Amérique

31. Nouvelle édition pour enfants et jeunes gens «L'Arménien et sa patrie» (p. 152).

RELATIONS INTERECCLESIASTIQUES

32. **GAYANE ALEXANIAN** – Première rencontre du Comité central nouvellement élu du CME à Genève, 30 août – 6 septembre 2006 (p. 153-154).

AUDIENCE AU SAINT-SIEGE

33. Audience accordée par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, aux pèlerins catholiques et aux membres de la communauté de soutien du Cardinal Silvestrini, 3 septembre 2006 (p. 155-156).

34. Brèves nouvelles ecclésiastiques. Information sur les Saintes Messes, les sermons et les autres services accomplis au Saint-Siège et à la Cathédrale de Saint-Etchmiadzine au mois de septembre 2006 (p. 157).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սիրիայի Արաբական Հանրապետության մուֆթի Շեյխ Ահմադ Բադր Ալ-Դին Հասսունի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին 3
ԷԴՈՒԱՐԴ ՍՐԿ. ԽԱՉԱՏՐՅԱՆ - Ամենայն Հայոց Հայրապետի այցը Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմ 7
ԷԴՈՒԱՐԴ ՍՐԿ. ԽԱՉԱՏՐՅԱՆ - Ավանդական և համաշխարհային կրոնների կրոնապետերի երկրորդ համագումարը Աստանայում 14
«Հրաշափառ»-ի արարողություն Ս. Էջմիածնի Մայր Տաճարում 19
Ռուսաստանի Դաշնության «Բարեկամության շքանշանը» Վեհափառ Հայրապետին 21
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը «Հայաստան-Սփյուռք» երրորդ խորհրդաժողովին 23
Հանրապետական մաղթանք Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցում 25

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը տեր և տիկին Պետրոս և Աննա Օրունջաքճիելներին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին 27
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Լևոն Ահարոնյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին..... 29
Հայրապետական գնահատություն 31

«Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան տեր և տիկին Պետրոս և Աննա Օրունջաքճիելներին 32
«Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրվեցին Լևոն և Բելլա Ահարոնյանները 33
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը նոր ուսումնական տարվա առիթով 34

ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի քարոզը՝ խոսված Խաչվերացի տոնին

Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին 35
Տ. Սահակ վարդապետ Մաշալյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին 37

ԿՐՈՆԱ - ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Տ. ԱԴԱՄ ՔԱՀԱՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ -14-րդ միջազգային էկումենիկ համաժողովը և Հաղորդության խնդիրը եկեղեցում 43

Տեսակետ

Տ. ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՆԱՆՅԱՆ - Արարա՞տ, թե՞ Սանասար, Նավասա՞րդ, թե՞ Նավասար 63
ԱՐՄԵՆ ԴՊԻՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ - Դպրականությունը (scholastica)՝ իբրև կրոնաիմաստասիրություն քրիստոնյա միջնադարում 73

ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՐԻՆԵ ՀԵՔԵՔՅԱՆ - Մեսրոպ Մաշտոց նշանակող շրջասական կապակցությունները 83
ԳԵՎՈՐԳ ՍՐԱՊԻՈՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ - Շամախու հայոց թեմի Սաղիանի Ս. Ստեփաննոս Նախավկա վանքի պատմությունից 93
ՇՈՒՇԱՆԻԿ ԶՈՀՐԱՊՅԱՆ - Մոդեռն ոճի արտահայտությունները Վարդգես Սուրենյանցի երկերում 116
ԱՄԱՏՈՒՆԻ ՎԻՐԱԲՅԱՆ - Հայ Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը 122

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ - Հոգևորի բանաստեղծական արտահայտությունը 134

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Տեղի ունեցավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի նոր ուսումնական տարվա բացումը 138
«Հայկական Հաբիթաթ»-ի կամավորները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 140
Վարդապետական թեզերի պաշտպանություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում 142
Տ. Բարսեղ վարդապետ Փիլավչյան 143
Տ. Դանիել վարդապետ Թումանյան 145
Տ. Վազգեն վարդապետ Նանյան 146

Հայաստանյան Կլոր Սեղանի տարեկան ժողովը Մայր Աթոռում 148

Լուրեր Կալկաթայի հայ համայնքից
Ուսուցչի օրը հայոց Մարդասիրական ճեմարանում 149
Միջեկեղեցական աղոթք Մայր Թերեզայի գերեզմանի մոտ 149
Հայաստանի Հանրապետության անկախության տոնը հայոց Մարդասիրական ճեմարանում 150

ԱՄՆ հայոց Արեւելեան թեմում
Մանկա-պատանեկան նոր հրատարակութիւն մը «Հայը եւ իր Հայրենիքը» 152

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ - ԵՀԽ նորընտիր Կենտրոնական Կոմիտեի առաջին հանդիպումը Ժնևում 153

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց կաթոլիկ ուխտավորներին և կարդինալ Սիլվեստրինիի աջակից համայնքի անդամներին 155

Եկեղեցական բեմ. լուրեր 157

“Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата 158
“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin 161
“Etchmiadzine” organe officiel du Saint-siège d’Etchmiadzine 164